ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ՊԵՏԱԿԱՆ ՀԵՌԱԿԱ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

59

891.71.09
Կ-53

Ղ. ԱՅՎԱԶՅԱՆ ԵՎ Զ. ՅԱՍԻՆՍԿԱՅԱ

ՍՏՈՒԳՎԱԾ Է 1961 Թ.

ԿԻԵՎՅԱՆ ՌՈՒՍԻԱՅԻ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

(XI—XIII ԴԱՐ)

П 26260

ԵՐԵՎԱՆ 1949

ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ

Հայկական բուհերի համար մինչև այժմ գրեթե գոյություն չունի որևէ հայերեն մի ձեռնարկ, որը սիստեմատիկ շարադրումով—մարքսիստական-լենինյան գրականագիտության ասպեկտով լուսաբաներ ամենահարուստ համաշխարհային նշանակություն ունեցող ռուս գրականությունը։

Ներկա աշխատությունը այդ նպատակը հետապնդող մի փորձ է։ Մենք չենք կասկածում, որ մեր այս առաջին փորձը հնարավորություն կտա հայկական մանկավարժական բուհերի ուսանողությանը որոշ գաղափար կազմել առայժմ միայն ռուս գրականության պատմության սկզբնական փուլի՝ Կիևյան Ռուսիայի գրականության (XI—XIII դ.) մասին։

Ռուս գրականության վերաբերյալ հրապարակում եղած ռուսերեն ձեռնարկների կամ դասագրքերի որոշ աննպատակահարմարությունները հայկական բուհերի պահանջի տեսակետից՝ մեզ ստիպեցին այդ աշխատություններից թեկուզ լավագույններից մեկի թարգմանությունը տալու փոխարեն՝ ինքնուրույն շարադրելու ռուս գրականության խիստ ուշագրավ ժամանակաշրջաններից մեկի՝ Կիևյան Ռուսիայի գրականության ամփոփ պատմությունը, օգտագործելով այդ շրջանի վերաբերյալ հրապարակում եղած ռուսերեն լավագույն հրատարակությունները։

Նկատի ունենալով, որ ռուս հին գրականության հիշատակարանները չեն թարգմանված հայերեն (բացառությամբ «Ասք Իգորի արշավանքի մասին» պոեմի), մենք մեծ ուշադրություն ենք նվիրել այդ երկերին, տալով այստեղ նրանց բովանդակությունը, կամ բնագրի թարգմանությունը։ Այդ նպատակով մենք օգտագործել ենք Ն. Գուդզիի «Ռուս հին գրականության քրեստոմատիան», «Ռուս հին գրականության պատմությունը» և

ՍՍՌՄ Գիտությունների Ակադեմիայի հրատարակությամբ լույս տեսած «Ռուս գրականության պատմության» I և II հատորները։

Ի տարբերություն ռուսական բուհերի համար կազմված դասագրքերի, որոնց մեջ ռուս հին գրականության պատմությունը տրված է մանրամասնորեն և ընդգրկված են մեծ թվով գրական հիշատակարանների տեքստեր, այս աշխատության մեջ, հայկական բուհերի ծրագրի հետևությամբ, ուշադրություն ենք դարձրել ռուս հին գրականության միայն հիմնական, առավել կարևոր երկերին։

Ռուս և հայ ժողովուրդները կապված են դարավոր բարեկամության և փոխադարձ աշխատակցության կապերով, և այդ առանձնապես իրենց արտահայտությունն են գտել վաղ անցյալի գրական հիշատակարաններում։

Կիևյան Ռուսիայի գրականության պատմությունը կազմելիս՝ մենք աշխատել ենք նաև օգտագործել մեր տրամադրության տակ գտնվող բոլոր նյութերը՝ բացահայտելու համար այդ կապերը։

Մեր աշխատանքի ընթացքում մեզ մշտապես ուղեկցել է մեր ձեռնարկած գործի բարդության և պատասխանատվության գիտակցությունը։ Բայց թե ինչ չափով հաջողվել է մեզ իրագործել մեր առաջ դրված խնդիրը, այդ ցույց կտա մեր գործի քննադատությունը։

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

I

Ռուս գրականության պատմության ուսումնասիրությունը հայկական բարձրագույն ուսումնական հաստատություններում ունի խոշոր գաղափարական-իմացական և գաղափարական-դաստիարակչական նշանակություն։ Ռուս գրականությունը, ըստ Ա. Մ. Գորկու, միշտ ուժեղ է եղել «սոցիալական երջանկության խնդիրները լուծելու իր բուռն ձգտումով, մարդկայնության քարոզով, ի պատիվ ազատության հյուսած երգերով, դեպի ժողովրդի կյանքը տածած խորը հետաքրքրությամբ»։

Ռուս ժողովրդի հերոսական պատմական անցյալը նախադրյալ ծառայեց ռուս գրականության ծաղկմանը իր հիասքանչ գծերով, այն է՝ ժողովրդայնությամբ, գործունեությամբ, անձնվիրությամբ, մարդկայնությամբ, ազգային սահմանափակվածության բացակայությամբ։ Պայքարը հանուն մարդկության առաջավոր իդեալների, բոցավառ սերը դեպի իր ժողովուրդն ու հայրենիքը՝ կարմիր թելի նման անցնում են ողջ ռուս գրականության միջով, մշտապես ոգեշնչելով ռուս և օտարազգի գրողներին, արվեստագետներին, հրապարակախոսներին և քաղաքական-հասարակական առաջավոր գործիչներին։

Ուսումնասիրելով ռուս գրականության պատմությունը, հայկական ԲՈՒՀ-երի ուսանողները կկարողանան յուրացնել ռուս մեծ ժողովրդի կուլտուրան, մի ժողովուրդ, որը, ինչպես ընկեր Ստալինն է ասել, «ամենաականավոր ազգն է Սովետական Միությունը կազմող բոլոր ազգերի մեջ»։

Իսկական սովետական հայրենասերը պետք է լինի իր հայրենիքի կուլտուրայի բազմակողմանիորեն զարգացած կրողը, իմանա նրա պատմությունը, գիտությունը, արվեստը։ Ռուս գրա-

կանություն գտնելը նրա մեջ առաջ կբերի սիրո վառ զգացմունք իր հայրենիքի հանդեպ, վստահություն ժողովրդի ուժի և հզորության նկատմամբ, ժողովրդի հետ սերտորեն կապված լինելու գիտակցություն, հանուն հայրենիքի բարօրության ազնըվորեն աշխատելու, արիաբար և անձնվիրաբար նրա համար պայքարելու պատրաստակամություն։ Ռուս գրականության միջոցով մեր ԲՈՒՀ-երի ուսանողները հաղորդակից կդառնան մարդկության համաշխարհային կուլտուրային, որովհետև ռուսերեն են ստեղծագործված ընդհանուր գրականության աշխարհի լավագույն կլասիկ երկերը։ Ռուս գրականությունը սովորեցնում է գնահատել գեղարվեստական խոսքը, հասկանալ և հուզականորեն վերապրել գեղարվեստի հրաշալի արտադրանքները։

Ռուս գրականությունն ունի հազարամյա պատմություն։ Նա անցել է զարգացման մի շարք էտապներ։ Ռուս ժողովրդի և նրա գրականության կարևորագույն շրջաններից մեկն է եղել Կիևյան մեծ պետության կազմավորման և ռուս ինքնուրույն գրականության ձևավորման շրջանը։ Այդ իսկ պատճառով գըրականության պատմության ուսումնասիրությունը պետք է սկսել հենց ակունքներից—Կիևյան Ռուսիայի գրականությունից, որն ունի գեղարվեստական և ռուս մեծ ժողովրդի անցյալի բացահայտման ճանաչողական մեծ արժեք։

II

Արևելյան Եվրոպայի տերիտորիայի վրա բնակվող արևելա-սլավոնական ցեղերը, տոհմային կարգերի քայքայման հետ մեկտեղ, X դարում, միավորվում են Կիևյան միասնական պետությամբ։

Կիևյան պետության կազմավորման շրջանում հասարակության հիմքը գյուղացիական համայնքն էր՝ մարկան, որը ծընվել էր նահապետական համայնքից։ Հասարակական արտադրանքի հիմքը համայնքի ազատ գյուղացիների աշխատանքն էր, գյուղացիներ, որոնք հետզհետե ճորտացվում են հարուստ և անվանի մարդկանց—իշխանի, նրա հարազատների, տեղական բոյարների և վաճառականների կողմից։

Արխեոլոգիական պեղումները և գրավոր աղբյուրներում պահպանված մի շարք հիշատակություններ վկայում են, որ արդեն IX—X դարերում Կիևյան պետությունը դասակարգա-

յին շերտավորման էր ենթարկվում. տեղի էր ունենում ֆեոդալական հարաբերությունների հասունացման պրոցես, որը շարունակվում է մոտավորապես մինչև XI դարը։

Սակայն, X դարում և ավելի ուշ դեռ պահպանվում են տոհմային սովորույթները, տոհմական կրոնը, շարունակվում են բնության երևույթների աստվածացումը։ Ամեն մի ցեղ ուներ աստվածների իր պաշտամունքը, իսկ կրոնական պաշտամունքի միավորումը տեղի է ունենում ժողովրդի ձևավորման հետևանքով։

Արևելյան սլավոնները հավատում էին հանդերձյալ կյանքին, պաշտում էին տոհմի հիմնադրի ոգին (նախնիների պաշտամունք)։ Տոհմի հովանավոր աստվածներն էին Տոհմը և Տոհմուհին (Род и Роженица)։

Տոհմային կարգերի քայքայման հետ միասին տոհմային հովանավոր աստվածները տեղի են տալիս նոր առանձին ընտանիքի աստծուն «Домовой»-ին (տան ոգուն)։ Ձևավորվում էր գլխավոր աստվածների պատկերացումը։ Դրանք տարբեր հզոր աստվածներն էին. որոտի և կայծակի աստվածը—Պերուն, քամիների աստվածը— Ստրիբոգը, երկնքի աստվածը— Սվարոգը, որն ուներ 2 որդի՝ արևն ու կրակը և ուրիշներ։

Արտադրողական ուժերի զարգացման և դասակարգային դիֆերենցիացիայի ուժեղացմանը համընթաց, տարբեր աստվածները դարձան առանձին արտադրության և հասարակական խմբերի հովանավորող աստվածներ։ Պերունը՝ որոտի և կայծակի աստվածը դարձավ դրուժինայի իշխանական աստվածը, Ստրիբոգը՝ զամբիկների հովանավորը, Վելեսը՝ հարստության և առևտրինը, իսկ արև՝ Դաժբոգի անունով են կոչվում «Ասք Իգորի արշավանքի մասին» էպոսում ռուս մարդիկ Դաժբոգի թոռները։

Մեծ քաղաքներում, ինչպես Կիևն էր, բարձրադիր վայրերում դրված էին կուռքերը և նրանց զոհեր էին մատուցվում հատուկ մարդկանց, քուրմերի՝ վոլխվների միջոցով։

X դարի վերջին իշխան Վլադիմիր I Սվյատոսլավիչը փորձեց հեթանոսությունը հարմարեցնել ֆեոդալական հասարակության ձևավորման նոր պայմաններին։ Վլադիմիրը միավորեց ցեղային աստվածներին մի միասնական պանթեոնի մեջ։ Սակայն հեթանոսությունը քիչ պետական դերս եկավ պետության միավորման համար։ Կիևյան պետության կազմավորումը,

տոհմային կարգերի քայքայումը և ֆեոդալական նոր հարաբերությունների աճը ամրապնդեցին դրուժիննիկների և տերունական իշխանության ազդեցությունը։

Ռյուրիկյան պետությունը հասել էր իր կազմավորման վախճանին։ Տոհմային կարգերի հին հեթանոսական կրոնը այլևս չէր կարող ծառայել զարգացող ֆեոդալական հարաբերությունների պահանջներին։ Այդպիսին կարող էր լինել քրիստոնեությունը, որը Ռուսիա էր ներթափանցել վաղուց. X դարի սկզբներում նա ճանաչված էր Կիևում։ Այսպես, մի տարեգիր պատմում է, որ Իգորի և հույների միջև դաշնագրի կնքման ժամանակ ռուսական պատվիրակների մի մասը երդվեց քրիստոնեական օրենքների համաձայն, իսկ մյուս մասը՝ հեթանոսական զենքերի վրա, Պերուն և Վելես աստվածներով։ Քրիստոնյա էր և X դարում ապրող իշխանուհի Օլգան, այնպես որ մինչև քրիստոնեության պետական կրոն ճանաչվելը, նա մուտք էր գործել Ռուսիա և գտել էր իր հետևորդները հասարակության իշխող խավերում։

Քրիստոնեական կրոնի ընդունումը (988—989 թվերին), նրա պետական կրոն ճանաչելը ունեցավ իր լուրջ հետևանքները Ռուսիայի համար։ Ուժեղացավ Ռուսիայի կապը արևմտա-եվրոպական երկրների և առաջին հերթին ուղղափառ Բյուզանդիայի հետ։ Քրիստոնեության ընդունումը իր ժամանակ նպաստեց Կիևյան Ռուսիայի կուլտուրայի բարձրացմանը, դպրության զարգացմանը, Արևմուտքի հետ կուլտուրական և քաղաքական ավելի սերտ կապերի հաստատմանը, բայց խիստ նշանակալից և կարևորն այն էր, որ քրիստոնեությունը իր ֆեոդալական սկզբունքներով կառուցված եկեղեցով արագացրեց Ռուսիայի պետական միավորման պրոցեսը, սրբագործեց ֆեոդալական հարաբերությունները և դարձավ ժողովրդի վրա ազդելու և իշխելու ուժեղ մի զենք։

III

Գրավոր դպրության սաղմերը Ռուսիայում եղել են տակավին վաղ շրջանում։ Այդ է ապացուցում այնպիսի արժեքավոր հուշարձանների գոյությունը, ինչպիսիք են Ռուսիայի և հույների միջև կնքված դաշնագրերը, որ գրված են սլավոնական լեզվով։ Հայտնի է նույնպես, որ իշխանուհի Օլգան եկեղեցական արարողությունների համար ուներ կրոնական գրքերի սլավոներեն թարգմանությունը։

Այսպիսով, Կիևյան Ռուսիայում գրականությունը սկզբնավորվել է համենայն դեպս ոչ ուշ, քան X դարի սկզբներում, քրիստոնեության հետզհետե ներթափանցման հետ մեկտեղ, իսկ ինքնուրույն գրականությունը ձևավորվել է մոտավորապես X դարի վերջին և XI դարի սկզբներին։ Արևելա-սլավոնական ցեղերի մոտ, դեռ գրականության սկզբնավորումից շատ առաջ գոյություն է ունեցել հարուստ ժողովրդական բանավոր պոեզիա, որը ստեղծվել է տոհմական կարգերի և հեթանոսության պայմաններում, ընդ որում, բովանդակության հարստությունը համապատասխանել է բարձր գեղարվեստական պոետական ձևի։ Ճիշտ է, մեզ չեն հասել Կիևյան Ռուսիայի բանավոր ստեղծագործության ճշգրիտ գրանցումները (այդ սկսվեց XVII դարից), քանի որ եկեղեցին պայքարելով մինչքրիստոնեական «հեթանոսական» աշխարհայացքի դեմ, թշնամաբար էր վերաբերվում նաև ժողովրդական ստեղծագործությանը, հայտարարելով այն «սատանայական»։ Այնուամենայնիվ ռուս գրականության մի շարք հուշարձաններում պահպանվել են բանավոր պոեզիայի հետքերը։

Կիևյան Ռուսիայի բանավոր պոեզիայի բարձր մակարդակի ապացույց են նաև XVII—XIX դարերում գրի առնված ֆոլկլորային ստեղծագործությունները, որոնք ավանդույթի շնորհիվ պահպանել են իրենց մեջ հնագույն շրջանի ստեղծագործության բազմաթիվ տարրերը։

X դարի վերջին և XI դարասկզբին Կիևյան Ռուսիայում արդեն իշխում էին ֆեոդալական կարգերը։ Հասարակությունը բաժանված էր երկու հակադիր դասակարգերի՝ խոշոր կալվածատիրական դասակարգը և նրանցից կախման մեջ գտնվող գյուղացիները, մանր արհեստավորության հետ միասին։ Կիևյան պետության գոյության ընթացքում ֆեոդալիզմի ամբողջ շրջանում այս երկու դասակարգերի միջև տեղի էր ունենում անընդհատ պայքար։ Այդ պայքարում երկու կողմերն էլ, իբրև պայքարի զորավոր միջոց, օգտագործում էին խոսքի արվեստը։

Ամբողջ գիրն ու գրականությունը կենտրոնացած էր իշխող դասակարգի, գլխավորապես հոգևորականության ձեռքում և դարձել էր նրա գաղափարախոսության արտահայտիչը։ Բանավոր ժողովրդական բանաստեղծությունը շարունակում էր պահպանվել ժողովրդի մեջ, նա նույնպես համակվում է դասակարգային բովանդակությամբ, դառնում է ժողովրդի «հերա-

ցանքների ու սպասումների արտահայտիչը» (Լենին)։ Այսպես, օրինակ, ռուսական բիլինաներում իշխանների և նրանց գործունեության բնութագիրը խիստ տարբերվում է տարեգրություններից։ Վլադիմիր I իշխանը, որն ըստ տարեգրությունների՝ տնտեսական, հասարակական և կրոնական նոր օրենքներ էր մտցրել, ժողովրդին քրիստոնյա էր դարձրել «հրով ու սրով», բիլինաներում ներկայացված է իբրև վախկոտ, դյուցազունների մոտ՝ երկչոտ, անազնիվ, ագահ, բռնակալ մի իշխան և այս նույնիսկ այն դեպքում, երբ բիլինայում նա անվանվում է «Կարմիր արեգակ»։ Աշխատավոր ժողովուրդը իր բանահյուսության միջոցով պայքարել է շահագործողների և ճնշողների դեմ, արտահայտելով իր ակտիվ, մարտական վերաբերմունքը տիրող իրականության նկատմամբ։ Ինչպես նշել է Գորկին՝ «Ֆոլկլորին միանգամայն օտար է պեսիմիզմը, չնայած, որ նրա հորինողները ապրել են դժվարին և տառապալի պայմաններում. ճորտական աշխատանքը անարդյունք էր շահագործողների առկայությամբ, նրանց անձնական կյանքը՝ անօգնական և իրավազուրկ։ Բայց չնայած այս ամենին, կոլեկտիվին հատուկ է անմահության գիտակցությունը և «հաղթանակի վստահությունը թշնամական ուժերի նկատմամբ»։

Ռուս հին գրականության լավագույն գործերի առանձնահատկությունները նրանց անքակտելի կապն է ֆոլկլորի հետ։ Ռուս հին գրականությունը իր բարձր գեղարվեստական արժեքներով պարտական է ռուս ժողովրդական ստեղծագործությանը, որը ստեղծվել է դարերի ընթացքում, ռուս ժողովրդի պատմության հետ զուգընթաց, սկսած տարեգրություններից, օտար բռնակալների դեմ մղված կռիվների հերոսապատումներից և վերջացրած համաշխարհային կոթող «Ասք Իգորի արշավանքի մասին» սքանչելի էպոսով։

Գրականությունը Ռուսիայում ծագեց իբրև զենք իշխող ֆեոդալական դասակարգի գաղափարների պրոպագանդայի համար։

Կիևյան Ռուսիայի հասարակության ֆեոդալական կառուցվածքը խորացրեց հասարակական-տնտեսական հակասությունները, հասարակական տարբեր շերտերում առաջացրեց տարբեր վերաբերմունք, տարբեր դասակարգային իդեոլոգիա տեղի ունեցող իրադարձությունների նկատմամբ։ Սոցիալ-քաղաքական սուր հակասությունները առաջացրին ժողովրդական զինված

ապստամբություններ ֆեոդալական շահագործման դեմ: XI—XII դարերում Նովգորոդում, Կիևում, Բելգորոդում տեղի ունեցած ժողովրդական ապստամբությունները իրենց արձագանքը գտան տարեգրական պատմվածքներում, նովելներում, Կիևո-պեչերյան պատերիկում և այլ ստեղծագործություններում: Այս գաղափարական միտումները արտահայտվում էին ոչ միայն ֆոլկլորում, այլև ռուս հին գրականության ստեղծագործություններում:

Ըստ որում, ռուս հին գրականությունը չպետք է պատկերացնել ինչ որ «միասնական» մի բան: Այնտեղ կան գործեր, որտեղ հեղինակը պաշտպանում է իշխող դասակարգի նեղ-էգոիստական, սահմանափակ շահերը, պաշտպանում և հաստատում է շահագործումն ու կեղեքումը: Նման հեղինակների ստեղծագործությունները աչքի են ընկնում իրենց հակաժողովրդականությամբ, սահմանափակ բովանդակությամբ և ոչ բարձր արժանիքներով: Սակայն այդ գործերի հետ մեկտեղ ռուս հին գրականության մեջ կան այնպիսի ստեղծագործություններ, որոնց հեղինակները հաղթահարելով իրենց դասակարգային սահմանափակվածությունը, մոտեցել են ժողովրդին և ավելի կամ նվազ չափով արտահայտել նրա շահերը: Պատմության մեջ նման երևույթի մենք հանդիպում ենք, երբ տիրող դասակարգերին պատկանող մի որոշ շերտ, կամ խումբ ներկայացնում է հասարակության զարգացման առաջադիմական՝ պրոգրեսիվ կողմը: Այսպես, ազնվականության և բոյարների պայքարի ժամանակ, XVI դարում, ռեակցիոն բոյարությունը իբրև իր գաղափարախոս առաջ քաշեց հայրենիքի դավաճան իշխան Անդրեյ Ա. Կուրբսկուն, իսկ ազնվականությունը, որ հանդես էր գալիս ռուսական երկրի միավորման, միապետական իշխանության ամրացման դիրքերում, իբրև իր գաղափարախոսի առաջ քաշեց հրապարակախոս Իվան Պերեսվետովին: Եթե Ա. Կուրբսկին իր նամակներում մեռնող բոյարության ռեակցիոն դիրքերից գնահատելով Իվան Ահեղի գործունեությունը, տալիս էր ռուս իրականության աղճատված պատկերը, և ոչ միայն հեռու էր ժողովրդից, այլև թշնամի նրան, ապա Իվան Պերեսվետովը հանդես է գալիս իբրև Իվան Ահեղի բարեփոխումների պաշտպան, այս կամ այն չափով արտահայտում էր ժողովրդական մասսաների խորապես շահագրգռող միասնական ռուս պետության ստեղծման իդեան, համառուսական տենդենցները: Այսպիսի ստեղ-

ծագործությունները ծառայելով հանդերձ սեփական դասակարգի ընդհանուր շահերին, արտահայտում էին ազգային շահեր և կապված էին ռուս ժողովրդի պատմական ճակատագրի հետ։

Ռուս ժողովուրդը դարեր շարունակ ստիպված է եղել ազատագրական հերոսական պայքար մղելու օտարերկրյա բռնակալների դեմ, պաշտպանելու համար իր անկախությունն ու ինքնուրույն գոյությունը։ Այսպիսի դեպքերում իշխող դասակարգերի շահերը հաճախ զուգադիպում էին ժողովրդի ձգտումներին։ Դասակարգային հակասությունները իհարկե չէին կարող վերանալ, սակայն առաջին պլանի վրա էր քաշվում հայրենիքի պաշտպանության ու անկախության համար մղվող պայքարի խնդիրը։ Եվ ռուս հին գրականության լավագույն հեղինակների համար ստեղծվում էին նախադրյալներ՝ հաղթահարելու դասակարգային սահմանափակվածությունը, մոտենալու ժողովրդական լայն մասսաներին և արտահայտելու իրենց ստեղծագործությունների մեջ ժողովրդային իդեաները։

Այսպիսով, ռուս հին գրականության մեջ որոշակիորեն նշմարվում է երկու հոսանք, մեկը պրոգրեսիվ, որը մոտենում է ժողովրդին, իսկ մյուսը ռեակցիոն՝ խորթ և թշնամի ժողովրդին։

Լենինը նախ ընդհանրացնելով և ապա կոնկրետացնելով հասարակական այդ երևույթը նախասովետական Ռուսաստանի օրինակով, ասում է. «Յուրաքանչյուր ազգային կուլտուրայի մեջ կա երկու ազգային կուլտուրա։ Կա Պուրիշկևիչների, Գուչկովների և Ստրուվեների վելիկոռուսական կուլտուրա, բայց կա նաև վելիկոռուսական կուլտուրա, որը բնորոշվում է Չերնիշևսկու և Պլեխանովի անուններով» (Լենին)։

Ռուս գրականության մեծությունը, նրա անգնահատելի առավելությունն այն է, որ իր սկզբնավորումից և իր զարգացման էտապներում գերիշխողը նրա մեջ եղել է պրոգրեսիվ սկզբունքը, և այս տեսակետից օրգանական կապ գոյություն ունի ռուս հին և նոր գրականությունների միջև։ Ռուս գրականության զարգացման էտապներում հին շրջանն ունի իր նշանակալից տեղը։ Այդ շրջանի ստեղծագործությունների ուսումնասիրությունը հնարավորություն տվեց բացահայտելու ռուս ժողովրդի և նրա գեղարվեստական գրականության պատմական անցյալը, այդ գրականության ունեցած խոշոր իմացական նշանակությունը՝ գեղարվեստական և գաղափարական մեծ ավյու-

նով ստեղծագործած այնպիսի ուշագրավ երկերի հիման վրա, ինչպիսիք են՝ տարեգրությունները, «Ասք Իգորի արշավանքի մասին» պոեմը, «XVII դարի վիպակները» և մի շարք այլ նշանակալից գրական հուշարձաններ: Հին գրականությունը, դեռևս իր զարգացման սկզբնական շրջանում, դրսևորեց այն առանձնահատկությունները, որոնք հատկանշում, առանձնացնում են ռուս գրականությունը, դարձնելով այն համաշխարհային կուլտուրայի մեջ նմանը չունեցող անմահ կոթող:

Իր զարգացման բոլոր շրջաններում ռուս գրականության լավագույն ստեղծագործությունների համար հատկանշական է եղել հումանիզմի, հայրենասիրության, պարտքի գիտակցության բարձր գաղափարները: Կիևյան Ռուսիայի գրականության բազմաթիվ հուշարձաններում առաջ են քաշվում ոչ թե անհատական, այլ սոցիալական շահերը, այն գիտակցությունը, որ անհատական երջանկությունը անբաժանելի է հասարակականից: Այդ գաղափարը բնորոշ է նաև հետագա մինչմոսկովյան շրջանի հին գրականության բազմաթիվ հուշարձանների համար: Այդ գաղափարը հետագայում դառնում է գերակշռող մոսկովյան գրականության մեջ, որն ակտիվ մասնակցություն ունեցավ համազգային իդեալի պրոպագանդային—ստեղծել մի միասնական ռուսական պետություն, պաշտպանելու ռուս ժողովրդի գոյությունն ու անկախությունն արտաքին թշնամիների դեմ մղվող պայքարում:

Տարեգրությունների շնորհալի հեղինակներից սկսած բոլոր ռուս մեծ գրողները բոցաշունչ հայրենասերներ են: Ժողովրդական ընչազուրկ զանգվածների հանդեպ տածած կարեկցանքը, բարձր քաղաքացիական զգացմունքը դեպի հայրենիքը՝ գրողին դարձրել էին ոչ միայն գեղարվեստագետ, այլև կյանքի ուսուցիչ: Գրականության ուսուցողական, դաստիարակչական մեծ նշանակությունը հասկացել էին դեռևս Կիևյան Ռուսիայի գրականության անանուն հեղինակները, և դա կազմում է հետագա գրականության աչքի ընկնող գիծը:

Հետաքրքրությունը դեպի ժողովրդի կյանքը, այդ կյանքով շահագրգռված լինելը՝ ստիպում էր ռուս լավագույն գրողներին լինել հասարակական կյանքի կենտրոնում, սրտին մոտ ընդունել ժամանակակից կյանքի հրատապ հարցերը, լինել առաջավոր գաղափարների արտահայտիչներ: Ռուսական գրականության այս հատկանիշների պատմական արմատները նույն-

պես գտնում ենք հին գրականության մեջ։ Վերջինս հիմնականում հրապարակախոսական, այժմեական բնույթ էր կրում և գրեթե բացահայտ գործնական միտումներ ուներ։ «Ասք Իգորի արշավանքի մասին» երկը սոսկ պատկերավոր արտացոլում չէ ռուս իշխանների կողմից պոլովցիների դեմ ուղղված արշավանքի, այլ պոետ-քաղաքացու ակտիվ միջամտությունն է կյանքին։ Դա հավաստում է այն առաջավոր գաղափարի, որն անհրաժեշտ է համարում միասնությունը հայրենի երկիրը պաշտպանելու գործում. դա արիության, խիզախության, հայրենիքին նվիրվելու գաղափարների, թշնամու վերաբերմամբ հաղթանակ տանելու կամքի արտահայտությունն է։

Ռուս գրականության բարձր գաղափարական բովանդակությունը մարմնացել է գեղարվեստական կատարյալ ձևի մեջ։ Իրենց բազմատեսակությամբ հարուստ ժանրերը, երկի մեջ կերպար ու կոմպոզիցիա ստեղծելու արվեստը, իր գեղեցկությամբ և կատարելությամբ հիասքանչ գրական լեզուն—այդ ամենը կազմում են ռուս գրականության հատկանիշները ոչ միայն նրա լիակատար ծաղկման շրջանում, այլ դրանք մենք տեսնում ենք իրենց ընդհանուր գծերով նաև Կիևյան Ռուսիայի դեռևս երիտասարդ, սակայն իր տաղանդավորությամբ ապշեցուցիչ գրականության մեջ։ Օգտագործելով մյուս ժողովուրդների ստեղծագործական նվաճումները, ռուս գրականությունն իր առաջին իսկ քայլերից կանգնեց այդ ժառանգությունը ինքնատիպ և լիարժեք գեղարվեստական փորձով հարստացնելու ուղու վրա, գնալով իր սեփական, ինքնուրույն ճանապարհով։

IV

Ռուս հին գրականության պատմության դասընթացը ընդգրկում է ռուս գրականության զարգացման այն շրջանը, որն ընկած է XI—XVII դարերի միջև։

Մինչև XIII դարի սկիզբը ռուս գրականության զարգացումը կապված է Կիևյան Ռուսիայի «Ռյուրիկովիչների կայսրության» հետ, այն ընդարձակ պետության հետ, որ ընդգրկում էր Հյուսիսային լճային երկրամասը, կենտրոն ունենալով Նովգորոդ քաղաքը և Դնեպրյան հարավը՝ Կիևի գլխավորությամբ։ XI դարի վերջերից «Ռյուրիկովիչների ծվենակազմ (лоскутная) կայսրությունը» (Մարքս) սկսում է մասնատվել անկախ իշխանությունների։ Կիևյան Ռուսիայի մասնատման պրոցեսը ավարտ-

վում է թաթարական արշավանքով, և XIII դարից սկսվում է ռուսական գրականության մարզային զարգացման դարաշրջանը, երբ «պետությունը մասնատվում էր առանձին-առանձին երկրամասերի, մասամբ նույնիսկ իշխանությունների, որոնք պահպանում էին նախկին ինքնավարության կենդանի հետքերը» (Լենին)։ Հին Ռուսիայի այդ առանձին մարզերում քաղաքական և կուլտուրական կյանքը ընթանում էր անջատված և կենտրոնանում աճող տեղական քաղաքական գոյացությունների շուրջը։

XV դարից սկսում է բարձրանալ Մոսկովյան իշխանությունը, իսկ XVI դարի սկզբներին Մոսկվան ավարտում է առանձին վոտչինա-ավատական մարզերի կենտրոնացումը մի միասնական ռուսական պետության մեջ։ Կազմավորվում է բազմազգ, կենտրոնացած Մոսկովյան պետությունը, որը հենվում էր կալվածատիրական ազնվականության ու քաղաքային բնակչության առևտրա-արհեստավորական շերտերի վրա և պայքարում ավատական մասնատվածության հին ձևերին վերադառնալու ամեն տեսակ փորձերի դեմ։

Մարզային գրականությունները կորցնում են իրենց առանձնահատկությունները և մտնում են ընդհանուր ռուս գրականության մեջ։ XVI դարում Մոսկովյան կենտրոնական պետության ձևավորումը և դասակարգային սուր պայքարը, որը ուղեկցվում էր ռուսական հողերի միացմանը Մոսկվայի շուրջը, նպաստում էին համառուսական կուլտուրայի զարգացմանը։ Առաջ է գալիս ընդհանուր ռուսական մոսկովյան գրականությունը, որը XVI—XVII դարերում կրում էր հիմնականում ազնվականական գրականության բնույթ, թեպետ և XVII դարի երկրորդ կեսից սկսում է զարգանալ նաև քաղաքի ներքնախավի և գյուղացիության գրականությունը։

Այսպիսով, ռուս հին գրականությունը բաժանվում է զարգացման երեք շրջանների՝ Կիևյան շրջանի գրականություն (XI—XIII դարի սկիզբը), մարզային գրականության ժամանակաշրջան (XIII—XVI դարի սկիզբը) և Մոսկովյան բազմազգ պետության կազմավորման շրջանի գրականություն (XVI—XVII դար)։

V

Ռուս հին գրականության պատմության ուսումնասիրության ժամանակ հարց է ծագում, թե ինչ ծավալ պետք ունենա

այդ ուսումնասիրության նյութը, ինչպիսի գրական երկեր կարող են գեղարվեստական համարվել և, հետևապես, դառնալ ուսումնասիրության նյութ գրականության պատմության դասընթացի մեջ։

Ռուս հին գրականությունը հիմնականում հրապարակախոսական, տենդենցիոզ բնույթ ուներ․ նա բացահայտորեն գործնական նպատակներ էր հետապնդում․ այնտեղ գրական և ոչ գրական տարրերը հանդես են գալիս ոչ իբրև առանձին, տարբերակված միավորներ, այլ որպես միաձույլ միասնություն։

Ռուս հին գրականության բազմաթիվ երկերից գրականության պատմության դասընթացի մեջ ուսումնասիրության առարկա կարող են դառնալ այն երկերը, որոնց մեջ պարզորոշ երևում է հեղինակի պատկերավոր արտահայտելու, երկը ոճի և ժանրի տեսակետից ամբողջական ձևավորելու ձգտումը։ Հին գրականության մեջ «գեղարվեստական գրականություն» հասկացողությունը ավելի լայն կիրառություն ունի, քան այդ ընդունված է արդի գրականության վերաբերյալ։ Պատմությունը, հռետորական արվեստը, մասամբ նաև փիլիսոփայությունը, գիտական և այլ տեսակի գրականությունը գրական ժանրեր էին համարվում և ուստի պետք է մտնեն նույնպես գրականության դասընթացի մեջ։

Ռուս հին գրականությունը սպասարկում էր ռուսական պետության իշխող շերտերին և իր բովանդակությամբ ու ձևով հիմնականում եկեղեցական էր, կրոնախրատական։ Այս դրսևորվում էր նույնիսկ սակավաթիվ աշխարհիկ թարգմանական երկերում։ Դրանց կողքին ռուս հին գրականության մեջ հանդես են գալիս այնպիսի երկեր, որոնց մեջ շեշտված է աշխարհիկ գաղափարախոսությունը։ Այդպիսիք են մի շարք վիպական-պատմողական երկերը, ինչպես, օրինակ, «Ասք Իգորի արշավանքի մասին» էպոսը, տարեգրությունները, ռազմական և կենցաղային պատմվածքները, պատմական երկերը և այլն։

Ռուս հին գրականության օջախ և կրթության կենտրոններ էին ծառայում վանքերն ու եկեղեցիները։ Կիևցիների մկրտությունից հետո, ինչպես տարեգրությունն է պատմում, Վլադիմիրը «վերցնում էր անվանի մարդկանց երեխաներին և նրանց ուսման էր տալիս»։

XII դարում Կիևյան Ռուսիայում գոյություն ունեին մոտ

յոթանասուն վանք։ Օրինակ, Մեծ Նովգորոդում ս. Հակոբի եկեղեցուն կից մոտավորապես մի հարյուրամյակ կազմում էին տարեգրային ժողովածուներ (своды)։ Եկեղեցիներից ու վանքերից զատ գիր ու գրականությունը տարածվում էր նաև իշխանների ու բոյարների դրուժինային միջավայրում։

Եկեղեցական-վանական միջավայրը ոչ միայն գրական տըրադիցիաների ստեղծողն էր, այլև նրա մենաշնորհյալ պահապանը, որը պահում-տարածում էր գրչագրերի միջոցով այն գրական երկերը, որոնք չէին հակադրվում քրիստոնեական ուսմունքին և հավանություն էին գտնում եկեղեցու կողմից։ Իսկ այն գրքերը, որոնք հավանություն չէին գտնում պաշտոնական եկեղեցու կողմից, արգելվում էին և կազմում էին այսպես կոչված «սուտ» կամ «մերժված» (ապոկրիֆային-անվավեր) գրականությունը։

Խոշոր վանքերն սկսեցին իրենց մոտ գրադարաններ հիմնել, որտեղ բացի քրիստոնեության եկեղեցական-պաշտամունքային գրքերից հավաքում էին նաև քրիստոնեական գրողների խրատական-ուսուցողական և պատմական երկերը։

Հին Ռուսիայում գիրքը շատ թանկ արժեր։ Գրում էին մագաղաթի վրա, պատրաստված հորթի կաշվից։ Գրում էին այնպիսի մի ձեռագրով, որ կոչվում էր ուստավ (устав), ինչպես երկաթագիրը հայ հին գրչության մեջ։ Խնամքով գծագրում էին յուրաքանչյուր տառը ուղիղ գծերով, կանոնավոր անկյուններով և ձվածիրներով։

Նյութի որակը և ձեռագրի (գրի) բնույթը բարձրացնում էին գրչագիր մատյանի գինը և դանդաղեցնում արտադրությունը։ XIV դարի կեսից սկսեցին թուղթ գործածել, և ուստավը փոխարինվում է կիսաուստավով (բոլորագիր՝ հայերի մոտ), որի մեջ ուղիղ գծերի փոխարեն գործ էին ածվում բեկված և թեք գծեր։ Անհետանում է անկյունների և ձվածիրների կանոնավորությունը, ինչպես նաև տառեր գրելու միօրինակությունը։ Այնուհետև երևան է գալիս արագագրությունը։

Հին ռուսական գրականության երկերը տարածվում էին բացառապես ձեռագրերով։ Ռուսիայում տպագրությունը երևաց միայն XVI դարի երկրորդ կեսին, և մինչև XVII դարի վերջերը համարյա տպագրվում էին միայն ժամասացության գրքեր։

Արտագրության ժամանակ, նայած պատմական իրադրու-

թյանը և սոցիալական միջավայրին, փոխվում էր գրական երկի տեքստը թե՛ ըստ բովանդակության և թե ըստ ձևի։ Գրիչը հանդես էր գալիս խմբագրողի դերում, հարմարեցնելով տեքստն իր ժամանակի և միջավայրի պահանջներին ու ճաշակին։ Այսպիսով երևան էին գալիս միևնույն գրական երկի տարբեր խմբագրություններ։ Ուստի ռուս հին գրականության պատմությունն ուսումնասիրելիս չի կարելի սահմանափակվել միայն այդ գրական հուշարձանների պատմությամբ, պետք է ուսումնասիրել նաև այդ հուշարձանների խմբագրությունների պատմությունը։

Հին գրականության, հատկապես նրա զարգացման առաջին դարերին պատկանող երկասիրությունների համար բնորոշ է ժամանակագրական ճշգրտության բացակայությունը։ Հին ռուս գրականության հուշարձանները մեզ հասել են ոչ թե ինքնագրերի, այլ գրչագիր օրինակների միջոցով, որոնք մեծ մասամբ ուշ ժամանակներում են գրված։ Հուշարձանների գրության վայրի ու ժամանակի որոշելը կատարվում է երկի մեջ պարունակած անուղղակի պատմական տվյալների, գրչագրի լեզվական վերլուծության հիման վրա, եթե միայն գրչագիրը պահպանել է բնագրի արխայիկ գծերը։

Ժամանակագրության ճշման դժվարությունը բարդանում է մի ուրիշ առանձնահատկությամբ, դա հին գրական երկերի անանուն կամ կեղծանուն լինելն է։ Նպատակ ունենալով գրըվածքին ավելի մեծ հեղինակություն տալ՝ ռուս հին գրողները հաճախ իրենց երկը վերագրում էին ժողովրդի կողմից սիրված սրբին կամ քարոզչին և կամ թե բոլորովին չէին նշում իրենց անունը։ Իսկ եթե հեղինակը տալիս էր իր անունը, ապա ամեն ինչ սահմանափակվում էր միայն հեղինակի անունով, չէր նըշվում նրա կենսագրությունը, ինչպես և նրա ստեղծագործության հանգամանքները։

Ռուս հին գրականության գրական լեզուն իր ակունքներով, իր կազմավորմամբ եղել է ռուսական լեզուն։ Ակադեմիկ Օբնորսկին իր «Ռուս լեզվի կուլտուրան» գրքում (Մ. 1948 թ.) համոզիչ կերպով ապացուցել է, որ ռուս գրական լեզուն իր ծագմամբ հին-սլավոնական համարող թեորիան—կեղծ է, աղավաղում է ռուս գրականության զարգացման իսկական ընթացքը, նրա օրիգինալությունն ու ինքնատիպությունը։ Գիր-գրականության ձևավորման ժամանակաշրջանում ռուսաց լեզուն Ռուսիայում արդեն ձեռք էր բերել բառապաշարի, արտահայտ-

չական միջոցների հարստություն, շարահյուսական պարզություն, որի մասին վկայում են բանավոր պոեզիայի ժանրերը։

Քրիստոնեության ներթափանցման հետ Բուլղարիայից Ռուսիա էր փոխադրված նաև թարգմանական գրականություն։ Բայց եթե X դարում հարուստ և լուսավորված Բուլղարիան օգտվում էր բյուզանդականից թարգմանված գրականությունից, որի պատճառը գուցե այն էր, որ Բյուզանդիան իր հեղինակությամբ ճնշում էր իր հարևան Բուլղարիային, ընդհակառակը, Կիևյան Ռուսիան հենց սկզբից և եթ ոտք դրեց ինքնուրույն, օրիգինալ գրականության ստեղծման ուղու վրա։

* * *

Ռուս, ինչպես և ամեն մի ժողովրդի հին գրականության զարգացումը մի բարդ, դիալեկտիկական պրոցես է։

Ասացինք, որ Ռուսիայում գրականությունը ծագեց որպես իշխող ֆեոդալական դասակարգի գաղափարախոսության պրոպագանդայի գործիք։ Այդ գրականության գերակշռող կրոնական բովանդակությունը, ինչպես և ձևը հետևանք էին միջնադարյան կրոնական մտքի տիրապետության, ինչպես միջնադարյան Եվրոպայի մասին ասում էր Ֆր. Էնգելսը իր «Գյուղացիական պատերազմները Գերմանիայում» աշխատության մեջ։

Ռուս հին գրականությունը իր բովանդակությամբ և ձևով հակադրվում էր ժողովրդական բանավոր պոեզիային—ֆոլկլորին, որ հեթանոսական էր իր բնույթով և արտահայտում էր հարըստահարված աշխատավորական զանգվածների գաղափարախոսությունը։

Չնայած այն հանգամանքին, որ հին ռուս գրականությունը չէր ընդունում ֆոլկլորը, մերժում և նույնիսկ պայքարում էր նրա դեմ, այնուամենայնիվ, ռուս հին գրականության սաղմնավորման և զարգացման հիմքում ընկած էր նույն ժողովրդական բանավոր պոեզիան, նրա սյուժեները, կերպարները, կերպավորման և արտահայտչական միջոցները և այլն։

Գրականությունը զարգանում էր ավելի ու ավելի իր մեջ ընդունելով ֆոլկլորի և կենդանի, խոսակցական լեզվի տարրերը։ Մոսկովյան գրականության մեջ ժողովրդական-բանաստեղծական տարրերը և կենդանի լեզուն սկսում են գերակշռել աշխարհիկ երկերում և XVII դարի երկրորդ կեսին հաստատուն կերպով մտնում են գրականության մեջ, նշանակալից չափով որոշելով նրա ոճը։

Հին գրականության զարգացման պրոցեսը, դա բանավոր պոեզիայի և գրականության փոխազդեցության պրոցեսն է. դա կենդանի խոսակցական լեզվի և գրքային լեզվի փոխազդեցության պրոցեսն է։

Մյուս աչքի ընկնող հատկանիշը հին գրականության զարգացման ընթացքում—դա վերացական, կրոնական-եկեղեցական թեմատիկայի և աշխարհիկ թեմատիկայի պայքարն է։ Հին գրականությունը իր զարգացման ընթացքում ավելի ու ավելի է մոտենում կյանքին և նրա մեջ սկսում են գերակշռել աշխարհիկ սկզբունքները, իսկ XVI դարում և առանձնապես XVII դարում այդ գրականությունը բուռն կերպով հարստանում է «աշխարհիկ» բովանդակությամբ ու ստեղծագործության «աշխարհիկ» ձևերով։ Նույնիսկ այնպիսի զուտ եկեղեցական մի ժանր, ինչպիսին է վարքագրությունը, քահանա Ավվակումի գրչի տակ (XVII դար) էվոլյուցիայի է ենթարկվում և թեքվում ռեալիզմի կողմը, համակվում կենցաղայնությամբ և դառնում ինքնակենսագրություն։

Ռուս գրականությունն իր ծագման շրջանում սերտ փոխհարաբերության մեջ էր բյուզանդական և սլավոնական գրականությունների հետ։ Արևմուտքից Թափանցող կաթոլիկությունը հանդիպում էր պաշտոնական ուղղափառ եկեղեցու բուռն դիմադրությանը։ Այդ պայքարը ուժեղանում է XV—XVI դարերում և հասնում է իր գագաթնակետին XVII դարում, երբ Մոսկվայում, Կիևի գիտնականների ծավալուն գործունեության կապակցությամբ, հարց էր դրվում, թե կրթության որ սիստեմը պետի մտցնել—հունական թե լատինական։ Հարցը պաշտոնապես լուծվեց հօգուտ հունական կրթության։ Սակայն ամբողջ ռուս կուլտուրայի և գրականության մեջ հարցն արդեն լուծված էր հօգուտ ռուսական ինքնուրույն ազգային կուլտուրայի բարենորոգման ու թարմացման՝ նոր ու պրոգրեսիվ ուղիներով։ Հին գրական տրադիցիաները կորցնում են իրենց նշանակությունը և նրանց տեղը բռնում են նոր տրադիցիաները, սակայն դրանք էլ ռուս գրականությունը յուրացնում է, ինչպես և առաջ, ոչ թե պասսիվորեն, այլ ակտիվ կերպով վերամշակելով, նայած, թե նրանք ինչ չափով են համապատասխանում ժամանակի հրատապ պահանջներին։ Միաժամանակ նա պահպանում և զարգացնում էր իր ինքնատիպ ազգային գծերը։

Հին գրականության մեջ էվոլյուցիայի ենթարկվեց նաև հեղինակը։ Նա, որ սկզբում անանուն էր, անդեմ, գրականության

զարգացման պրոցեսում ավելի ու ավելի է երևում առաջին պլանի վրա։ XV դարի գրականության մեջ արդեն հանդես են գալիս հեղինակներ իրենց կենսագրությամբ, իսկ XVII դարի գրականությունը գիտե նաև գրողներ այս բառի արդի իմաստով (Ս. Պոլոցկի, Ս. Մեդվեդև, Կ. Իստոմին և ուրիշներ)։

Հին ռուսական գրականության զարգացման պրոցեսում սաղմնավորվում և ձևավորվում են բանաստեղծական արվեստի բոլոր հիմնական ձևերը—էպոս, լիրիկա և դրամա. հիմք է դրվում կլասիկ ոճին, որ XVIII դարում ստանում է գերակշռող նշանակություն։ Սրանք են հին ռուս գրականության զարգացման ընթացքում եղած աչքի ընկնող հակասությունները, մի գրականություն, որ ուղիներ հարթեց նոր, XVIII դարի գրականության համար։

ՄԱՍ ԱՌԱՋԻՆ

ԿԻԵՎՅԱՆ ՌՈՒՍԻԱՅԻ ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Կիևյան պետության գրականությունն իր կոնկրետ պատմական հրատապ բովանդակությամբ, գաղափարական-քաղաքական պաթոսով և իր գեղարվեստական ձևի վառ գույներով ու արտահայտչականությամբ մի նշանակալից ներդրում է համաշխարհային միջնադարյան գրականության ընդհանուր գանձարանում։ Կարելի է համարձակ ասել, որ ռուս հին գրողները, շատ կարճ ժամանակաշրջանում առաջ անցան և գերազանցեցին բուլղար և հույն գրողներին, ստեղծելով Կիևյան Ռուսիայի ժամանակների համար փայլուն և վառ, խոր և հարուստ, բովանդակալից և ինքնուրույն կուլտուրա, մի կուլտուրա, որն իր հիմքում համադրել էր վելիկոռուսների, ուկրաինացիների և բելոռուսների կուլտուրաները։

Ռուս ինքնուրույն գրականության գեղարվեստորեն արագ հասունանալու այդ ապշեցուցիչ փաստը կարելի է բացատրել նրանով, որ ոչ միայն ժողովրդական բանավոր ստեղծագործության բնագավառում, այլև առհասարակ գեղարվեստական կուլտուրայի, բառիս լայն իմաստով՝ արվեստի բնագավառում, X դարի մոտերքը, ռուս ժողովուրդն արդեն ուներ իր մշակած գեղարվեստական տրադիցիաները։ Ճանապարհորդների պատմածներից, որոնք հաստատված են պեղումների տվյալներով և պահպանված նյութական կուլտուրայի հուշարձաններով, մենք տեղեկանում ենք, որ Կիև, Չերնիգով, Պերեյասլավլ, Պսկով, Նովգորոդ հնամենի քաղաքներում զարգացած էր փայտաշեն ճարտարապետությունը։ Այդ քաղաքներում կային հարուստ և գեղեցիկ իշխանական ապարանքներ (терема), աշտարակներով զարդարված քաղաքային պարիսպներ, գեղարվեստական մեհյաններ և հանրային բաղնիքներ։ Կիևյան Ռուսիայի քրիստո-

նեական շրջանի ճարտարապետությունը և կիրառական արվեստը մեծ զարմանք է պատճառում իր թարմությամբ, կենսուրախությամբ և ազգային ինքնագոյությամբ։ Մենք այստեղ երևան ենք բերում ռուս ժողովրդի հանճարի միացումը հարևան երկրների՝ ստեղծագործորեն վերամշակված գեղարվեստական բազմազան կուլտուրաների հետ։ Կիևյան պետությունը, որն ուներ եվրոպական երկրներին իր տարածությամբ գերազանցող տերիտորիա, հարավից հարևան էր հելլենական կուլտուրա ունեցող երկրներին (Ղրիմ, Բյուզանդիոն), հարավ-արևելքից Կովկասին, իսկ սրա միջոցով՝ Հայաստանին և Վրաստանին, արևմուտքից ռոմանական Եվրոպային, հյուսիսից՝ Սկանդինավիային, արևելքից Ասիայի բազմացեղ, փոփոխվող քոչվորներին։ Կիևը, որ գտնվում էր մեծ ջրային ճանապարհի վրա, «վարյագներից մինչև հույները», IX—XI դարերում որպես առևտրական կենտրոն մրցում էր Կոնստանդնուպոլսի հետ և վայելում էր շատ հարուստ քաղաքի հռչակ։

Ռուս ժողովրդի գեղարվեստական հանճարի զարգացման հիմքերը դրված էին դեռևս Կիևյան պետության մինչ-քրիստոնեական ժամանակաշրջանում, մի հանգամանք, որ իր բարեբար ազդեցությունը գործեց ինքնուրույն գրականության առաջացման և աճման վրա, երբ Ռուսիայում քրիստոնեությունն առաջ բերեց ու տարածեց գիր-գրականությունը։

Քրիստոնեությունը, արագացնելով ֆեոդալականացման պրոցեսը, ընդլայնեց և ամրապնդեց Կիևյան պետության միջազգային կապերը, բարձրացրեց նրա հեղինակությունը քրիստոնեական երկրների շարքում։ Սակայն Բյուզանդիան ձգտում էր քաղաքական գերիշխանության, ճնշում գործադրելով Ռուսիայի վրա իր կողմից նշանակված մետրոպոլիտի միջոցով, որը ղեկավարում էր Ռուսիայի ողջ եկեղեցական կազմակերպությունը, մի հանգամանք, որը Կիևյան պետությանը դնում էր քաղաքական անկախությունը կորցնելու սպառնալիքի տակ։

Բյուզանդիայի բռնակալական ճնշմանը Կիևյան իշխանները հակադրում էին իրենց հայրենասիրական քաղաքականությունը։ Հին ռուս գրականությունն իր գոյության առաջին իսկ դարերից բուռն իդեոլոգիական և քաղաքական պայքար ծավալեց Ռուսիայի ինքնուրույն կուլտուրայի համար։ Նրան վիճակվեց գեղարվեստական խոսքի միջոցով պաշտպանելու ազգային արժանապատվությունը և քաղաքական անկախության իրա-

վունքը: Այդ հանգամանքները բուռն վերելք ստեղծեցին ռուս հասարակական մտքի—Կիևյան գրականության համար, առաջ բերելով գրական բազմազան ժանրեր:

I. ԽՐԱՏԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

(Учительная литература)

Հին ռուս գրականության ամենահին ժանրը՝ դա եկեղեցական-կրոնական քարոզն է կենդանի «խոսք»-ի, ճառի ձևով, որը կարող է գրի առնվել: Այդօրինակ քարոզները կոչվում են նույնպես խրատներ: Մի անձնավորության կողմից մի խումբ մարդկանց ուղղված հեռակա քարոզը կոչվում է Թուղթ (послание)*:*

Ռուս քարոզիչները թողել են համեմատաբար մեծ թվով քարոզներ, որոնք տարբեր ձևով են կոչվում—խոսք, խրատական, ոգեշահ խրատ, քարոզ և այլն (համապատասխան հին հայկական՝ բան, ճառ, Թուղթ, խրատ կամ ոգեշահ խրատ, քարոզ): Կան եկեղեցական-կրոնական և վարքագրական-կենցաղային կամ աշխարհիկ բնույթի քարոզներ: Դրանք բոլորը հանդիսանում են կրոնական հրապարակախոսության երկեր, որոնց մեջ քաղաքական տենդենցը ամփոփված է կրոնական-քրիստոնեական ձևի մեջ:

Եկեղեցական-կրոնական, քրիստոնեական խրատները կարելի է բաժանել դիդակտիկ և ռիտորիկ կամ հանդիսավոր խրատների: Խրատների այդ երկու տեսակն էլ երևան են եկել Ռուսիայում արդեն XI *դարում: Նրանց մեջ կարելի է շոշափել տվյալ ժանրի համար բնորոշ կրկնվող սխեման, շաբլոնը: Քարոզիչը նախ և առաջ իրեն խնդիր է դնում տարածել քրիստոնեական կրոնի գաղափարները և արմատախիլ անել հեթանոսությունը: Ռուս հեղինակներից շատերը կարողացան դուրս գալ տրադիցիոն թեմատիկայի սահմաններից և գրեցին հետաքրքիր խրատներ, որոնց մեջ արտացոլվել են հին ռուս հասարակական մտքի պատմության այլ և այլ հետաքրքրական մոմենտները՝ կենցաղը, բարքերը, քաղաքական պայքարը և այլն:*

ա) Դիդակտիկական խրատներ

Դիդակտիկական խրատների թվին է պատկանում, օրինակ, մի անանուն հեղինակի դիդակտիկական խրատականը, որը կոչ-

վում է «Ճառ քրիստոսասերի և ճշմարիտ հավատի նախանձախնդրի»։ Քարոզիչը մերկացնում է նոր դարձի եկած այն քրիստոնյաներին, որոնք հավատում են հեթանոս աստվածներ՝ Պերունին, Խորսին, Մոկոշին, Սմարեգլին, անասունների աստված Վոլոսին, աղոթում են Ռոդին և Ռոժանիցային, ինչպես նաև Վիլաներին (սերբական հավատալիքներում՝ լեռնային աղջիկներ—կույս ոգիներ են)։ Քարոզիչն այնուհետև գրում է, որ տգետները որոշյալ տեղում այդ աստվածներին զոհ են մատուցում և ի պատիվ նրանց հավեր են մորթում։ Բացի այդ, նրանք աղոթում են կրակին, անվանելով այն Սվարոժիչ։ Երկրպագում են սխտորին, այն աստված անվանելով։ Քարոզիչը գրում է. «Եթե որևէ մեկը խնջույք է սարքում, սխտորը գցում են դույլերի և թասերի մեջ և զվարճանում իրենց կուռքերի առջև։ Եվ այդպես են վարվում ոչ միայն «տգետները» (այսինքն քրիստոնեության կողմից չլուսավորվածները), այլև «գիտունները», այսինքն՝ տերտերներն ու դպիրները։

Երկու կրոնների՝ հեթանոսության և քրիստոնեության այդօրինակ՝ միախառնումը ռուս հին քարոզիչները կոչում էին «երկհավատություն» և այդ տերմինը մտավ գրականագիտության մեջ։ Երկհավատությամբ էր տոգորված ժողովրդական բանավոր ստեղծագործությունը նույնիսկ մինչև Հոկտեմբերյան ռևոլյուցիան։

XI դ. խրատական-ուսուցողական գրականության երկերի թվին է պատկանում նույնպես «Խրատներ եղբայրությանը» („Поучение к братии“), որի հեղինակն է Լուկա Ժիդյատան (Лука Жидята)։ Նովգորոդի առաջին եկվոր հույն եպիսկոպոսի մահվանից հետո, Լուկա Ժիդյատան, որը ծագումով ռուս էր, Կիևի մեծ իշխան Յարոսլավի հրամանով զբաղեց եպիսկոպոսական աթոռը։ Նրա Ժիդյատա ազգանունը ծագում է ժիդիմլավ անունից։ Նա եպիսկոպոս ձեռնադրվեց 1036 թ. և 23 տարի շարունակ մնաց եպիսկոպոսի պաշտոնում։ Ինչ որ անախորժություններ էին ծագել նրա և ծագումով հույն միտրոպոլիտի միջև, և վերջինս նրան հեռացրեց եպիսկոպոսական աթոռից, հիմք ընդունելով Լուկայի ծառաներից մեկի մատնությունը։ Երեք տարի շարունակ, 1055—1058 թ. Լուկան գտնվում էր տարագրության մեջ, սակայն վերջ ի վերջո վերահաստատվեց Նովգորոդի եպիսկոպոսի պաշտոնում և դաժան դատաստանի ենթարկեց իր մատնիչ ծառային—կտրեցին նրա քիթն ու ձեռքը։ Ենթադրում

են, որ Լուկան բացահայտ ագիտացիա էր մղում Բյուզանդիայի կողմից 1054 թ. նշանակված հույն միտրոպոլիտի դեմ, որովհետև նրանից առաջ միտրոպոլիտի պաշտոնը վարում էր ռուս Իլարիոնը։ Այս միջադեպը արտացոլում է այն լարված պայքարը, որ տեղի ուներ ռուս և հույն եկեղեցականների միջև։

«Խրատներ եղբայրությանը» մի շատ պարզ գրվածք է ըստ իր բովանդակության և կոմպոզիցիայի։ Նովգորոդցիների ոճի համար բնորոշ ճշգրտությամբ և գործնականությամբ այստեղ շարադրվում են նոր դարձի եկած քրիստոնյաների համար վարքագծի տարրական կանոններ։ «Խարդախություն մի արեք, վրեժ մի լուծեք, մի դատապարտեք ուրիշներին»։ Լուկան համոզում է նորադարձ քրիստոնյաներին՝ հրաժարվել «արյան վրեժից», տոհմային կարգի այդ տրադիցիոն սովորույթից։ Քարոզիչը քրիստոնեաներին նույնպես խորհուրդ է տալիս չպճնվել հեթանոսական ծիսակատարությունների ժամանակ և չմասնակցել այդ ծեսերին։

«Խայտառակ խոսքերով մի հայհոյեք։ Հարգեցեք ծերերին և ձեր ծնողներին, աստծու անունով մի երդվեք, ոչ ոքի մի նզովեք և մի անիծեք։ Գոռոզ մի եղեք, կաշառք մի վերցրեք և շահով փող մի տվեք։ Մի շնացեք և, նույնիսկ, ստրկուհուն խնայեցեք։ Հարբելու աստիճան մի խմեք, այլ այնքան, որքան ձեզ անհրաժեշտ է։ Ողորմություն արեք ճանապարհորդներին, մուրացկաններին, բանտարկյալներին, ձեր «սրբերին», սմերդների (ռամիկների և ճորտերի) վերաբերմամբ ողորմած եղեք»։

Սմերդերի ու ճորտերի քաղցածության ու ցրտահար լինելու մոտիվն արտացոլում էր իր իրական կյանքի գծերը։ Հեռավոր ձևով արտացոլելով դասակարգային հակասությունները, քարոզը հենվում է եկեղեցու հեղինակության վրա և փորձում է մեղմել սոցիալական այդ հակասությունները։ Եվ այդ տեսակետից դավանաբանական քարոզը տիրող դասակարգի ձեռքին դասակարգային քաղաքականության մի գործիք էր դարձել։

Հանձնարարելով ողորմած լինել ստրուկների և ճորտերի նկատմամբ, այսինքն չվատթարացնել այդ ճնշված մարդկանց առանց այն էլ ծանր դրությունը, Լուկան ասում է. «Ստրուկներ, հնազանդ եղեք ձեր տերերին, հարգեցեք տերտերներին և եկեղեցու ծառաներին»։ Այլ կերպ ասած՝ հեղինակը հաստատում և սրբագործում է գոյություն ունեցող սոցիա-

լական անհավասարությունը: Բարոյը գլխավորապես նկատի ունի տիրող դասակարգի ներկայացուցիչներին և քաղաքացիներին: Այդ երևում է հետևյալ խորհուրդներից. «Կաշառք մի՛ վերցրեք, արդարադատ եղեք, շահով փող մի՛ տվեք, գոռոզ մի՛ եղեք» և այլն: Հրահանգներն ու արգելումները արտահայտված են շատ պարզորոշ և ուսալիտորեն և լավ նյութ են տալիս բնութագրելու XI դարի գույքային և սոցիալական հարաբերությունները առևտրական խոշոր կենտրոն՝ Նովգորոդում, իր գործունյա և նախաձեռնող բնակչությամբ հանդերձ:

Թեև այդ պատվիրանները փոխ են առնված Բիբլիայից, սակայն Լուկայի հանձնարարած վարքի նորմաները հիմնականում թելադրված էին կենցաղային պրակտիկայից և համապատասխանում են սովորութական իրավունքին և գոյություն ունեցող օրենքներին: Նրանք ունեն գործնական նշանակություն: Խրատականի մեջ կրոնական դոգմաների մասին խոսվում է շատ թռուցիկ և հակիրճ: Լուկա Ժիդյատայի լեզուն շատ մոտ է XI դարի կենդանի խոսակցական լեզվին: Համարյա թե չի զգացվում բուլղարական գրական լեզվի ազդեցությունը:

Մեզ հասել են մեծ թվով դիդակտիկ քարոզներ, որոնք առկա են XIV դարի գրչագրերում: Դրանցից մի քանիսը հետաքրքիր են կուլտուր-կենցաղային և սոցիալական տեսակետից: Դրանք հարբեցողների, կաշառակերների, չար կանանց, ծույլերի մասին եղած քարոզներն ու խրատներն են:

XI դարի գրող-քարոզիչների թվին է պատկանում Կիև-Պեչորյան վանքի հիմնադիր Ֆեոդոս Պեչորսկին (Феодосий Печерский, մեռել է 1074 թ. մայիսի 3-ին): Մեզ հասել են վանքի միաբանությանը ուղղված նրա հինգ «հոգեշահ» խրատները, Կիևի մեծ իշխան Իզյասլավ Յարոսլավիչի ուղղած երկու թուղթը և մի աղոթք:

Իր թեմայով հետաքրքիր, թեև նվազ գեղարվեստական հիշատակարան է «Թուղթ Իզյասլավ Յարոսլավիչին վասն լատինական հավատի», որը վերագրվում է Ֆեոդոսի Պեչորսկու գրչին: Երբ 1054 թվ. եկեղեցիները բաժանվեցին հռոմեականի (արևմըտյան) և հունականի (արևելյան), դեպի կաթոլիկներն իրենց վերաբերմունքը որոշելու հարցը առհասարակ սկսեց շատ հետաքրքրել ռուսներին: Այդ հարցը դարձավ ավելի գործնականորեն հրատապ և սուր 1069 թվ., երբ ի պատասխան Կիևում բռնկած ժողովրդական ապստամբության՝ մեծ իշխան Իզյասլավ Յարո-

սլավիչը Կիև բերեց լեհերին այդ ապստամբությունը ճնշելու համար։ Ահա այդ ժամանակ էլ երևան եկավ «Թուղթ վասն լատինական հավատին»-ը («Послание о вере латинской»)։ Հեղինակը հանձնարարում է ուղղափառ քրիստոնյաներին՝ հարաբերություն չունենալ լատինական հավատը դավանողների հետ, այսինքն կաթոլիկների հետ, չլսել նրանց ուսմունքը, չընդօրինակել նրանց սովորությունները, իրենց աղջիկներին նրանց կնության չտալ։

Հանրագումարի բերելով մեր ասածները, պետք է ասել, որ դիդակտիկ ճառերն ու խրատները, ինչպես նաև թղթերը, ունեն զուտ գործնական նշանակություն։ Նրանց հեղինակները չէին փորձում պարզաբանել քրիստոնեության դոգմաները, նրանք ուղղակի խոսում էին այն մասին, ինչ համարում էին լավ կամ վատ։ Նրանք գրում էին հասարակ ձևով և չէին ձըգտում ոճի գեղեցկության։

բ) Հանդիսավոր խրատներ

Հանդիսավոր ճառերը, խրատները և թղթերը, ընդհակառակն, խոսում են քրիստոնեության դոգմաների կամ նրա դերի և նշանակության մասին։ Դրանք աչքի են ընկնում իրենց կուռ, մտածված կոմպոզիցիայով և ոճի ճարտասանական զարդարվածությամբ, արվեստով։

Գեղարվեստական ճարտասանական քարոզի վարպետն էր միտրոպոլիտ Իլարիոնը (митрополит Иларион)։ Եվ որ ամենագլխավորն է, նա բոցաշունչ հայրենասեր էր և օժտված էր մարտական-քաղաքական խառնվածքով։

Յարոսլավ Իմաստունի իշխանության օրոք, 1043 թվ., Բյուզանդիայի հետ տեղի ունեցավ ռազմական ընդհարում։ Դրանից հետո ռուս և բյուզանդական եկեղեցիների հարաբերությունները լարվեցին։ Առաջին հույն միտրոպոլիտի մահից հետո մեծ իշխան Յարոսլավը նրա փոխարեն միտրոպոլիտ նշանակեց Իլարիոնին։ Նա առաջին ռուս միտրոպոլիտն էր։ Այս դեպքը կատարվեց 1051 թվ.։ «Իլարիոնի միտրոպոլիտ նշանակվելը մի շատ կարևոր ակտ էր ռուս պետականության և եկեղեցական քաղաքականության պատմության մեջ, որովհետև դա մի մտածված քայլ էր ազատագրելու ռուսական եկեղեցին բյուզանդական եկեղեցու վարչական միջամտությունից, մի

եկեղեցի, ուր իր միտրոպոլիտներն էր ուղարկում Ռուսիա» գրում է պրոֆեսոր Գուդզին («Հին ռուս գրականություն», էջ 87)։

Կիևյան սկզբնական տարեգրության մեջ մենք որոշ տեղեկություններ ենք գտնում Իլարիոնի կյանքի մասին։ Նա ապրում էր Կիևի արվարձան Բերեստովում, իշխանական գյուղում, որ գտնվում էր Կիև քաղաքից ցած, Դնեպր գետի վրա, և Առաքելոց եկեղեցու քահանաներից մեկն էր։ «Նա մի բարեհաճ, գրքասեր և ծոմապահ մարդ էր»—գրում է տարեգիրը։ Իլարիոնը Բերեստովից գնում է այն բլուրը, որտեղ այժմ կանգնած է Պեչորյան վանքը և այնտեղ աղոթում։ Բլուրը անտառապատ էր։ Նա այնտեղ փորեց երկու սաժենանոց մի քարայր, ու գալիս էր Բերեստովից «ժամ» ասելու և գաղտնի աղոթելու։ Այնուհետև աստված իշխանին միտք ներշնչեց՝ նրան նշանակելու սուրբ Սոֆիայի տաճարի միտրոպոլիտ։ Նա դարձավ միտրոպոլիտ, իսկ այն քարայրը այնպես էլ մնաց»։

Միտրոպոլիտ Իլարիոնին վերագրվում են մի քանի երկեր, որոնք մեզ հասել են XV դ. գրչությամբ, սակայն նրա գրչին, անկասկած, պատկանում է միայն մեկը, որը կոչվում է «Ճառ օրենքի և շնորհի մասին» («Слово о законе и благодати»)։ Ամենայն հավանականությամբ այդ երկը պետք է գրված լինի 1037—1050 թ.թ.։ Առաջին տարեթիվը մակաբերվում է այն հիման վրա, որ այստեղ հիշատակվում է Ոսկի դռների մոտ գտնվող Ավետման եկեղեցին, որը կառուցել է Յարոսլավը 1037 թվին։ Վերջին տարեթիվը, 1050 թիվը, սակայն, ոչ ավելի ուշ, սահմանվում է՝ դարձյալ ելնելով «Ճառի» տեքստից։ Այստեղ իշխանուհի Իրինան, Յարոսլավի կինը, հիշատակվում է որպես կենդանի, մինչդեռ նա մեռել էր 1050 թվականին։

«Ճառի» լրիվ վերնագիրը շատ ընդարձակ է, որովհետև հին գրականության տրադիցիաների համաձայն, վերնագիրը պետք է բացահայտեր երկի պլանը։ Ընդարձակ վերնագիրն է «Մովսեսի տված օրենքի մասին և Հիսուս Քրիստոսի բերած շնորհի և ճշմարտության մասին և թե ինչպես՝ երբ վերացավ Մովսեսի օրենքը, շնորհն ու ճշմարտությունը և հավատը տարածվեցին ամբողջ երկրով մեկ, ամեն տեսակ լեզուներով խոսող ժողովուրդների մեջ և հասան մեր ռուս լեզվին, և գովենք մեր կագան (իշխան) Վլադիմիրին, որից ստացանք մեր մկրտությունը, և մեր ամբողջ երկրի կողմից աղոթենք նրա համար»։

«Ճառը» բաղկացած է երեք մասից։ Առաջին մասում, որ վերաբերում է Մովսեսի տված օրենքին, զարգացրած է այն միտքը, որ քրիստոնեությունը բարձր է հրեական կրոնից, նոր կտակարանը՝ հին կտակարանից։ Հրեական կրոնի մեջ աստծու փոխհարաբերությունը մարդկանց հետ հաստատվում է հարկադրական սկզբունքի հիման վրա, այսինքն աստծու օրենքի, հրամանների և պատվիրանների միջոցով։ Ինչ վերաբերում է քրիստոնեական կրոնին, ապա այստեղ մարդկանց և աստվածության հարաբերությունները կառուցվում են կամավոր սկզբունքներով, այսինքն՝ հիմք են ընդունվում շնորհը, ազատ հավատը և աստծու նկատմամբ մարդու ազատ վերաբերմունքը։ «Շնորհը—ճշմարտություն է, իսկ օրենքը լոկ ստվեր է, ճշմարտության նմանությունը։ Առաջ օրենքն էր, ապա շնորհը, առաջ ճշմարտության նմանությունը, ապա իսկական ճշմարտությունը»,—գրում է Իլարիոնը։

Առաջին մասում, որը ներածություն է, Իլարիոնը զարգացնում է քրիստոնեական դավանաբանության դրույթներից մեկը. այն է՝ քրիստոնեությունը գերազանց է հուդայական կրոնի նկատմամբ։ Այստեղ ոչ մի նոր բան չկա։ Այս թեմայով շատ են գրել առաջին դարերի քրիստոնյա քարոզիչները։ Անտարակույս, Իլարիոնը ծանոթ էր կանոնական եկեղեցական երկերին։ Այդ երկերի մեջ նույնպես հաստատվում է այն, որ քրիստոնեությունը հաջորդականությամբ զարգացել է հուդայական կրոնից։

Որպես հիմք՝ Իլարիոնը ընդունում է այդ նույն դրույթները, սակայն նա մտցնում է ինչ որ ինքնուրույն, իրեն հատուկ մի բան, հաստատելով այն հին կտակարանից վերցրած լուսաբանություններով։ Այսպես, օրինակ՝ նա գրում է, որ Աբրահամ նահապետը պատանի ժամանակվանից ամուսնացած էր ազատ (ոչ ստրկուհի) Սառայի հետ։ Նրանք միասին ապրեցին մինչև խոր ծերություն, սակայն Սառան անզավակ էր։ Իմանալով, որ յուր ամուսինը բուռն կերպով ցանկանում է որդի-ժառանգ ունենալ, նա ասաց. «Աբրահամ, միացիր մեր ստրկուհի Հագարի հետ, և դու որդի զավակ կունենաս»։ Աբրահամը լսեց կնոջ խորհուրդը, և ստրկուհին ոչ իր ցանկությամբ, այլ ենթարկվելով օրենքին՝ մի որդի զավակ ծնեց, և կոչեցին նրան Իսմայել։ Դա ստրկութան որդին էր։ Սակայն շուտով Սառան, որին աստծու կամքով վիճակված էր ծերության ժա-

մանակ ծնել, որպես ամուսինների անակնկալ երջանկություն, Աբրահամի համար ծնեց մի զավակ, որին նա այնքան երկար սպասում էր։ Նրա. անունը դրին Իսահակ։ Դա ցանկալի որդի էր, ծնված ազատ կնոջից։ Նրա միջոցով օրհնությունն էր հայտնվում։ Իսահակը դարձավ սիրելի զավակը, իսկ Իսմայելը Հագարի որդին՝ ատելի։ Հին կտակարանի սյուժեն այստեղ շարադրված է ավելի մանրամասն, քան «Ճառի» մեջ, որպեսզի ժամանակակից ընթերցողը ավելի հեշտ պատկերացնի Աստվածաշնչի կերպարների այն իլուստրացիան, որ մեջ է բերում Իլարիոնը ապացուցելու համար իր դրույթը քրիստոնեության գերազանցության վերաբերյալ, այսինքն այն կրոնի, որի հիմքում ընկած է ոգու ազատ պաշտամունքը։ Շատ հավանական է, որ Իլարիոնը ծանոթ էր Պլատոնի փիլիսոփայությանը և անտիկ ճարտասանական արվեստի եղանակներին։

Իլարիոնը շատ տրամաբանորեն և կուռ կերպով է զարգացնում իր մտքերը։ Նա ընդգծում է, որ սկզբում ժողովուրդները հեթանոսներ էին, կուռքեր էին պաշտում, հետո աստված հրեաներին շնորհեց «օրենքը», որպեսզի նրանք կարողանան, իբրև «պղծված մի անոթ», լվացված «օրենքով և թլփատումով», նախապատրաստվել և ընդունել օրհնության և մկրտության «կաթը»։ «Օրենքը» շնորհված էր միայն հրեաներին և տարածված չէր մյուս ժողովուրդների մեջ։ Քրիստոնեությունն էլ թեև առաջ է եկել հրեաներից. սակայն նրանց մեջ չտարածվեց։ «Նոր գինին նոր տիկի մեջ պիտի ածվի»։ Եվ քրիստոնեությունը տարածվեց աշխարհի բոլոր երկրներում։ Օրհնյալ հավատը հասավ մեր ռուս ժողովրդին և «օրենքի լիճը ցամաքեց, իսկ ավետարանական աղբյուրը հորդեց, ծածկեց ամբողջ երկիրը և տարածվեց մեզ վրա»։

«Ճառ օրենքի և շնորհի մասին» աշխատանքի երկրորդ մասում, այսպես կոչված «գովքում» հեղինակը փառաբանում է մեծ իշխան Վլադիմիր Սվյատոսլավիչին, որը լուսավորեց ռուսական երկիրը քրիստոնեության միջոցով։

Նա Վլադիմիրին համեմատում է առաքյալների հետ։ Ուրիշ երկրներում քրիստոնեությունը տարածեցին առաքյալները, այդ պատճառով էլ Հռոմեական երկիրը փառաբանում ու պաշտում է Պետրոս և Պողոս առաքյալներին, Եգիպտոսը՝ Մարկոսին, Ասիան և Եփեսոսը՝ Հովհաննես Աստվածաբանին և այլն։ Իսկ մեր հեռավոր ռուսական երկիրը մուրացկանի շորերով,

ոտաբոբիկ առաքյալներ չեն եկել, որպեսզի մխիթարեն ստրուկներին, Քրիստոսի անունով դևեր չեն արտաքսել, ոչ ոք չի տեսել այդ առաքյալներին, չի տեսել նաև Վլադիմիրը: Հույն միտրոպոլիտները քաղաքական նպատակներով պնդում էին, որ Ռուսիան քրիստոնեություն ընդունելու համար պարտական է Բյուզանդիային: Իլարիոնը փաստերի հիման վրա պնդում է, որ Ռուսիան իր մկրտությամբ պարտական չէ Բյուզանդիային: Այդ հանգամանքը միշտ պնդում էին հույն միտրոպոլիտները և հունասեր եկեղեցականները: Իլարիոնը, ընդհակառակը, հավատացնում էր, որ քրիստոնեությունը ընդունվեց Վլադիմիրի նախաձեռնությամբ, Բյուզանդիայից միանգամայն անկախ: Մեծ իշխանը «միայն լսել էր հունական ուղղափառ երկրի մասին» և աստվածային ներշնչումով ցանկացել է ինքը մկրտվել և մկրտել իր երկրի ժողովրդին: Առավել ևս մեծ է Վլադիմիրի մատուցած ծառայությունը, որովհետև նա չի տեսել ոչ առաքյալներին և ոչ-էլ դրսից օգնություն է ստացել: Այս ձևով Իլարիոնը պաշտպանում էր ռուսական եկեղեցու անկախության գաղափարը բյուզանդական եկեղեցուց: Եկեղեցու անկախությունից բխում էր նաև Կիևյան պետության քաղաքական անկախությունը:

Իլարիոնի քաղաքական նկատառումներով է թելադրված Վլադիմիրի իդեալականացումը ոչ միայն իբրև քրիստոնեական լուսավորչի, որին հավասարեցրել է առաքյալներին, այլև իբրև արի և իմաստուն մի պետական գործչի: Այսպես, օրինակ՝ նա անհնազանդ երկրները նվաճեց սրով, իսկ մյուսները՝ խաղաղ ճանապարհով: Իլարիոնի նկարած Վլադիմիրի կերպարը տարբերվում է ռուս ժողովրդական բիլինաների մեղմ ու փաղաքշական իշխան «կարմիր արևի» կերպարից: Նա ընդունել է ավելի հանդիսավոր, խիստ և վեհապանծ գծեր: Վլադիմիրի գովքի մեջ ամփոփված է «Ճառի» գաղափարական բովանդակությունը, նրա քաղաքական տենդենցը, պաշտպանել Կիևյան Ռուսիայի անկախության իրավունքը բռնակալական Բյուզանդիայից:

Բառացի մեջ ենք բերում «Գովքի» եզրափակիչ խոսքերը, թեև դրանք շատ բան են կորցնում, նույնիսկ այն դեպքում, երբ թարգմանում ենք ժամանակակից ռուսերենի:

«Գովենք նաև մենք, որ չափով ներում են մեր ուժերը, փոքրիկ գովասանքներով գովենք մեծ և զարմանալի գործեր

կատարած մեր ուսուցչին և դաստիարակին, մեր երկրի մեծ «Կագանին» (իշխանին)՝ Վլադիմիրին, ծեր Իգորի թոռանը և փառապանծ Սվյատոսլավի որդուն, որոնք իրենց ժամանակ տիրաբար իշխելով՝ արիությամբ և քաջությամբ հռչակվեցին շատ երկրներում և հաղթություններով անսասանությամբ հիշվում են մինչև այժմ և փառաբանվում։ Ոչ թե վատ և անհայտ երկրում են նրանք իշխել, այլ Ռուսական երկրում, իսկ այդ երկիրը գիտեն, և նրա անունը լսվում է աշխարհի բոլոր ծայրերում»։

«Ճառի» երրորդ մասը՝ լիրիկական և հանդիսավոր դիմում է իշխան Վլադիմիրին և հավաստում այն բանի, որ նրա գործերը կենդանի են և շարունակվում են նրա որդի Յարոսլավի կողմից։ Հեղինակը Վլադիմիրին հորդորում է վեր կենալ դագաղից, սեփական աչքերով տեսնել և համոզվել, որ Յարոսլավը չի քայքայել, այլ հաստատել է և մեծացրել նրա ձեռնարկումները, չի աղարտել, այլ ավարտել է հորից անավարտ մնացածը։

Հենց ինքը՝ Վլադիմիրն էլ, նույնիսկ իր մահից հետո, մտածում է Ռուս երկրի մասին, մտահոգված է, որ աստված պահպանի նրա երկրի հարստությունը, ազատի ժողովուրդը ամեն տեսակ պատերազմներից և գերությունից, սովից և վըշտից։

Մոտիկ անցյալին դիմելով, հեղինակը ձգտում է ավելի վառ կերպով ընդգծելու կենդանի արդիականության ձեռք բերած նվաճումները և բնութագրելու Յարոսլավ Իմաստունի քաղաքականությունը որպես Վլադիմիրի գործունեության շարունակություն և զարգացում։ Այստեղ մենք տեսնում ենք, ինչպես ասում է ակադեմիկոս Ի. Ն. Ժդանովը, «ներկան անցյալում փառաբանելու ցանկությունը»։ Այս հանգամանքը քաղաքական տեսակետից չափազանց ակտուալ էր, որովհետև երկը ստեղծված էր Բյուզանդիայի հետ սուր լարված հարաբերությունների ժամանակաշրջանում, իսկ Բյուզանդական հունասեր կուսակցությունը եկեղեցականների շրջանում ուներ իր գործակալությունը (այդ մենք տեսնում ենք Լուկա Ժիդյատայի կենսագրությունից)։ Այդ կուսակցության ներկայացուցիչները Յարոսլավի հեղինակությունը գցելու նպատակով, Բյուզանդիայի դեմ մղվող պայքարի այս սուր միջոցին, պետք է հակադրեին Յարոսլավի քաղաքականությունը նրա հանգուցյալ հոր քաղաքականությանը։ Ընդհակառակն, Իլարիոնը, ինչպես երևում է, պոլեմիկական

նպատակներով պնդում էր, որ հոր և որդու՝ Վլադիմիրի և Յարոսլավի ձգտումները միասնական են:

Փառաբանելով Յարոսլավին, որպես Վլադիմիրի գործի շարունակողի, նա դիմում է հետևյալ գեղարվեստական եղանակին, նա դիմում է նրան որպես կենդանի մի մարդու, առաջարկելով ելնել գերեզմանից. «Վե՛ր կաց, ո՛վ ազնիվ գլուխ (պետ), վե՛ր կաց քո գերեզմանից, թոթափիր քունդ, չէ՞ որ դու մեռած չես, այլ միայն քնած ես մինչև բոլորի՝ ընդհանուրի արթնանալը: Վե՛ր կաց, չէ՞ որ դու մեռած չես, դու չէիր կարող մեռնել, հավատալով ի Քրիստոս, որն ամբողջ աշխարհին կյանք է տալիս: Թոթափի՛ր քունդ, համբարձի՛ր աչքերդ և դու կտեսնես, որ քեզնից աստված մեզ ի հիշատակ՝ թողեց քո որդի Գեորգիին (այսինքն Յարոսլավին): Վե՛ր կաց և նայի՛ր քո որդուն, տես քո զավակին, քո հոգյակը, տես քո սիրեցյալին, որ զարդարում է քո երկրի գահը (այսինքն գահանիստ Կիև քաղաքը) և ուրախացի՛ր, խնդա»:

Այսպես է նկարագրում Իլարիոնը գերեզմանից ելած հոր երևակայական և սրտառուչ հանդիպումը իր հարազատ որդու, Իրինա հարսի, թոռների և ծոռների հետ: Այդ ընտանեկան, մտերիմ հանդիպումն, սակայն, տեղի է ունենում ռուսական երկրի ու Կիև քաղաքը կերպարանափոխող շինարարական աշխատանքների ընդհանուր առաջադիմության ֆոնի վրա: «Նայի՛ր այս վեհափայլ քաղաքին. կտեսնես եկեղեցիները ծաղկող, քրիստոնեությունը բարգավաճող, կտեսնես քաղաքը սրբապատկերներով լուսավառ, որը լի է խնկի բույրով և թնդում է փառաբանությամբ և աստվածային օրհներգությամբ: Այս բոլորը տեսնելով՝ ցնծա և փառք տուր աստծուն»: Այսպես է վերջացնում հեղինակը իր խոսքը: Այնուհետև գալիս է ամբողջ ռուս երկրի անունից հորինած մի աղոթք, որը կարդացվում էր ոչ միայն Կիևյան պետության մեջ եղած եկեղեցիներում, այլև նույնիսկ XVI դարում՝ Մոսկվայում և այլ քաղաքներում:

Ինչո՞վ է ուշագրավ Իլարիոնի «Ճառը»:

Առաջին. նա ուշագրավ է որպես կրոնական-հրապարակախոսական և հայրենասիրական մի երկ, որն արտահայտել է Կիևյան Ռուսիայի քաղաքական ուժի և ամրության հպարտ գիտակցումը, Կիևյան Ռուսիայի, որի մասին «գիտեն և որի մասին լսում են երկրի բոլոր ծայրերում»: Նա պաշտպանում է Ռուսիայի քաղաքական անկախության գաղափարը Բյուզան-

գական կայսրության բռնակալական ոտնձգություններից, մի բան, որ այդ ժամանակ հանդիսանում էր պրոգրեսիվ տենդենց: Զուր չէ, որ «Ճառը» XIII դարում այնպիսի մեծ համակրանք գտավ Խիլանդարի վանքում (Хиландарский монастырь) սերբերի և բուլղարների մեջ, որոնք, կորցրած լինելով իրենց քաղաքական անկախությունը, շատ էին տուժում իրենց «հովանավոր» Բյուզանդիայի խարդախ բարեկամությունից:

Երկրորդ. Իլարիոնն իրեն հանդես է բերում որպես նշանավոր արվեստագետ. նա տալիս է XI դարի համար մի փայլուն նմուշ ճարտասանական, բարձր զարգացման հասած մի գրական ոճի, որը համապատասխանում է բովանդակության կենսահաստատ և մարտական բնույթին: Կոմպոզիցիան աչքի էր ընկնում իր ներդաշնակությամբ և տրամաբանականությամբ:

Բազմազան են հեղինակի կիրառած գեղարվեստական եղանակները: Հեղինակը անտիթեզ է մտցնում, համաչափորեն կառուցելով հետևյալ նախադասությունները՝ «առաջ օրենքը, ապա շնորհը, առաջ ստվերը, ապա ճշմարտությունը»... Նման վերջավորություն (հանգ) ունեցող համապատասխան բառերի ընտրության, ինչպես նաև կրկնությունների շնորհիվ հեղինակի ոճը ռիթմիկ է և երաժշտական, օրինակ՝ վերջին, երրորդ մասում հաճախ են կրկնվում «վեր կաց», «Թոթափիր քունդ», «Նայիր» բառերը և այլն: Հանդիպում են ճարտասանական բազմաթիվ հարցեր և ճայնարկություններ, որ խոսքին ավելի կենդանի և հուզական բնույթ են տալիս:

Իլարիոնի համեմատությունները, երբ նա խոսում է իրապես գոյություն ունեցող իրերի ու առարկաների մասին, գեղեցիկ են և ճշգրիտ, օրինակ՝ «Յարոսլավը պսակի նման պատել է Կիև քաղաքը վիթխարի պատերով»: Յուրահատուկ են նաև փոխաբերությունները (մետաֆորաները), որոնք առատորեն գործ է ածում մեր հնագույն գրողը: Այսպես, օրինակ՝ Վլադիմիրի մասին ասված է, որ նա «ողորմածության բույնն է», «իմաստության վայրն (անոթն) է»: Յարոսլավի մասին ասված է, որ նա «ցանել է մարդկային սրտերում գրքի խոսքեր»: Իլարիոնն ինքը դիմում է նրանց, «ովքեր առատորեն հագեցած են գրքի քաղցրությամբ»: Հնարամիտ-գրքային և այլաբանական-սիմվոլիկ մետաֆորների ընտրության միջոցով Իլարիոնը մի ամբողջ պատկեր է ստեղծում. «Կռապաշտական խավարը ցրվեց, ուղղափառ հավատի արշալույսը բացվեց, սատանայական

պաշտամունքի (այսինքն կռապաշտության) խավարը չքացավ, Ավետարանի արևը ամբողջ երկիրը լուսավորեց»։ Այստեղ մենք տեսնում ենք այն ոճի սաղմը, որն այնպիսի խանդավառությամբ զարգացնելու է Կիրիլ Տուրովսկին XII դարում։

Նշանակալից չափով հետաքրքրական են զուգահեռականության (պարալելիզմի) եղանակները, որոնք փոխ են առնված ֆոլկլորից և կառուցված են ըստ անալոգիայի՝ «առնել քաղաքը», «առնել աղջկան»։ Ընդ որին պետք է նկատել, որ ոչ միայն գրականության մեջ («Աստվածածնի շրջագայությունները տանջանքների միջով»—«Աստվածածնի տեսիլքը», ապոկրիֆը), այլ նաև եկեղեցական նկարչության և ճարտարապետության մեջ XI դարում տարածված էր աստվածածնի և Միքայել հրեշտակապետի նորաձև պաշտամունքը։ Այսպես, օրինակ՝ խոսելով Գլխավոր կամ Ոսկե դռների մասին, Յարոսլավի կառուցած Աստվածածնի մեծ եկեղեցու մասին («Десятинной церкви»—ինչպես այլ կերպ կոչում էին), հեղինակը մտցնում է պատկերների մի այսպիսի թվարկում. «Յարոսլավը քո փառապանծ Կիև քաղաքը պատեց, որպես պսակով, վիթխարի պատերով և քո մարդկանց ու քաղաքը նա հանձնեց աստվածածնի ապավինությանը, որի համար Մեծ կամ Ավագ դռների մոտ, հանուն առաջին տոնի՝ Ավետման տոնի նա եկեղեցի կառուցեց, ինչպես հրեշտակապետի համբույրը կույսին—այդ համբույրը թող լինի և այս քաղաքին։ Այն կույսին հրեշտակապետը դիմեց հետևյալ խոսքերով. «Ցնծա, երջանկացյալ, աստված քեզ հետ է», իսկ քաղաքին՝ «Ցնծա, ուղղափառ քաղաք, աստված քեզ հետ է»։

Նույնիսկ, երբ նա վերարտադրում է Հին կտակարանից կամ Նոր կտակարանից այնպիսի ավանդական սյուժեներ, որպիսին է աստվածածնի ավետումը կամ ծեր Աբրահամի ու Սառայի ջերմ ցանկացած որդու ծնունդը, նա հավատարիմ է մնում ինքն իրեն և դրսևորում է կենսախինդ և ուրախ տոն։ Նա ամբողջովին նվիրված է երկրային շահերին։ Նա ուզում է, որ մարդիկ աճեն ու բազմանան, քաղաքները ծաղկեն, եկեղեցիները կառուցվեն։ Նա ուզում է, որ գագաղում քնածները—մեռածները ուրախանան՝ տեսնելով, թե ինչպես են ապրողները շարունակում նրանց գործերը։

Կարելի է համարձակ պնդել, որ «Ճառ օրենքի և շնորհի մասին» աշխատության հեղինակին խորթ են ասկետիզմի և միստիցիզմի գաղափարները, որ այնչափ տարածված էին բյու-

ղանդական քաղաքիչների շրջանում։ Ազգային առաջադիմական գաղափարների գեղարվեստական արտահայտման ուժով Իլարիոնը որպես գրող զգալիորեն բարձր է կանգնած իրեն ժամանակակից հույն քարոզիչներից։

Երրորդ. Իլարիոնի երկը արժեքավոր է նրանով, որ նա որոշ համառոտ փաստական տեղեկություններ է հաղորդում XI դարում կառուցված տաճարների, Կիև քաղաքը շրջապատող պատի մասին։ Այսպես՝ այդ «Ճառից» տեղեկանում ենք, որ դեռևս Վլադիմիրն էր հղացել Կիևի հոչակավոր Սուրբ Սոֆիայի տաճարի կառուցման միտքը, մի տաճար, որ պահպանվել է մինչև մեր օրերը։ Կառուցումն ավարտել է Յարոսլավը․ «Այն, որ դու (այսինքն Վլադիմիրը) կիսավարտ թողեցիր, նա ավարտեց, ինչպես որ Սողոմոնն ավարտեց Դավթի սկսածը։ Նա մեծ և սրբազան իմաստության աստծու տուն հիմնեց և ամենայն գեղեցկությամբ զարդարեց այն ոսկով, արծաթով, թանկագին քարերով և ազնիվ անոթներով և դարձրեց այն ամենանշանավորը և զարմանահրաշ եկեղեցին բոլոր շրջակա երկրներում։ Նրա նմանը չկա հյուսիսային երկրներում և ոչ էլ արևմուտքից դեպի արևելք ընկած տերության վրա»։ Ըստ երևույթին առաջին ռուս միտրոպոլիտը շատ էր սիրում եկեղեցական-ֆեոդալական ճարտարապետությունը և միանգամայն արդարացի կերպով կարծում էր, որ արվեստի ծաղկումը երկրի հզորության, հարստության և կուլտուրայի ցուցանիշն է։

Իսկ այդ ծաղկումը տեղի ունեցավ արդեն Իլարիոնի ժամանակ։ 1037 թ. Կիևում հիմնադրվեց սբ. Սոֆիայի, այսինքն՝ «աստվածային գերիմաստության» հոյակապ տաճարը, որը պետք է Կիևյան պետության կրոնական կենտրոնը դառնար։

Դա մի հոյակապ և գեղեցիկ կառուցում է յուրահատուկ ճարտարապետությամբ։ Տաճարն ունի 13 գմբեթ. դրանցից մեկը, կենտրոնում գտնվողը, գլխավոր գմբեթն է, իսկ 12-ը տեղավորված են անկյունագծերի ուղղությամբ։ Այդօրինակ մի այլ տաճար երևան չի բերված ոչ Բյուզանդիայում և ոչ էլ Արևմուտքում։ Դեռևս Նովգորոդում, Վոլխով գետի վրա, 989 թվականին կաղնի փայտից կառուցված էր Ս. Սոֆիայի տաճարը, որը նույնպես ուներ 13 գմբեթ։ Ոչ միայն Սուրբ Սոֆիայի տաճարի ճարտարապետությունը, այլև նրա զարդարումը, որ է՝ օրնամենտներ ունեցող մարմարյա քարատապանները, մոզայիկան, որմանկարները, ֆրեսկոները և նույնիսկ պորտրետները,

զարմանք են պատճառում իրենց կատարելությամբ և կրում են գեղարվեստականորեն ավարտված ոճի հետքեր, ոճի, որը քրիստոնեական արվեստի հին տրադիցիաներ ունեցող մի շարք ժողովուրդների և ռուսների համագործակցության արդյունքն է։ Օրինակ, հայտնի է, որ Հայաստանն իր ճարտարապետ ուստադներն էր մատակարարում համարյա ողջ Եվրոպային։

Սոֆիայի տաճարի ֆրեսկոների թեմատիկան չափազանց բազմազան է։ Այստեղ մենք հանդիպում ենք ապոկրիֆային ծագում ունեցող սյուժեների. բացի այդ, կան որսի տեսարաններ, ռազմական սյուժեներ, ձիարշավ, խեղկատակների և լարախաղաց տղայի խաղերի պատկերը։ Տաճարի վերնամասը (хоры) զարդարված է Յարոսլավի կնոջ՝ Իրինայի և նրա երեք աղջիկների նկարներով, իսկ հակառակ պատին նկարված են Յարոսլավի տղաները։ Այս նկարները կանոնային եկեղեցական բնույթ չեն կրում։ Նրանք կրում են նույնպիսի կենսախինդ բնույթ, որպիսին է «Ճառ օրենքի և շնորհի մասին» երկը։

Իլարիոնը չի չափազանցնում, այլ միանգամայն ճիշտ է ասում, որ ամբողջ Եվրոպայում չկա Ս. Սոֆիայի նման մի այլ տաճար։ Բացի այդ, նա տալիս է մի ուրիշ եկեղեցու անուն, որ կառուցել է Յարոսլավը։ Դա աստվածածնի կամ „Десятинная" տաճարն է։ Այդ տաճարը նմանապես ուներ հին ռուսական ճարտարապետության ոգուն հատուկ բազմագագաթ ծածկ։ Տաճարը փուլ եկավ խան Բաթուի արշավանքի ժամանակ, ծածկի վրա փրկություն որոնող մարդկանց ծանրությունից։

Հանդիսավոր-ճարտասանական քարոզի երկրորդ խոշոր ներկայացուցիչը Կիևյան Ռուսիայում Կիրիլլ Տուրովսկին էր։ Նա ստեղծագործել է XII դարի մոտավորապես 30—80 թ. թ.։ Պրոլոգում համառոտ տեղեկություններ է տրվում նրա կյանքի վերաբերյալ։ Նա հարուստ ծնողների զավակ էր, ծնվել է Տուրով քաղաքում (այժմյան Բելոռուսիայում)։ Մանկությունից նա սիրում էր կրոնական գրքեր կարդալ և, դեռևս երիտասարդ, կուսակրոն դարձավ։ Նա երևան էր բերում բուռն հակումն դեպի ասկետիզմը և որոշ ժամանակ իր կյանքն անց է կացնում կատարյալ միայնության մեջ, տարվելով «սյունակեցությամբ»։

«Սյունակեցությունը», դա ինքնախոշտանգման մի առանձին տեսակն է, որ արվում է կրոնական նպատակներով և Ռուսիա է թափանցել Արևելքի վանքերից։ Ճգնավորը կամավոր

կերպով կամ թե վանահոր հրամանով մտնում է մի շատ փոքրիկ, ջրհորի նման խցիկ, «քարե տոպրակը», կամ թե կապում է իրեն մի սյունի կամ ժայռի։ Երկար տարիներ նա զրկված է լինում պառկելու հնարավորությունից։ Այդօրինակ մոլեռանդ տանջանքների է ենթարկում իրեն Տուրովսկին։ Նա դրանով հռչակ ձեռք բերեց և ժողովրդի ու Տուրովի իշխանի պահանջով եպիսկոպոս ձեռնադրվեց։ Ըստ երևույթին, այդ տարիներին սկսեց նա իր գրական գործունեությունը։ Մեր ձեռքն են հասել նրա երկերից շատերը՝ 12 ճառ ու խրատ և 22 աղոթք։ Նրանք պահպանվել են «Տոնական» („Торжественники“) կոչվող ժողովածուների մեջ։ Նրա երկերի մեծ մասը հանդիսանում է քրիստոնեական տոների սիմվոլիկ մեկնաբանում։ Նրանց ոճը լիրիկ և հանդիսավոր է։ Կան շատ աֆորիզմներ, այլաբանություններ, խրատական բնույթի շատ առակներ, կան նաև երկախոսություններ՝ դիալոգներ, տարվա եղանակների պատկերավոր նկարագրություններ, որոնք ունեն այլաբանական նշանակություն։ Այսպես, օրինակ, հնում շատ տարածված «Ճառ զատկից հետո եկող նոր շաբաթվա մասին» երկի մեջ (սբ. Թովմայի շաբաթ) նկարագրված է գարնան գալուստը, սակայն բնության յուրաքանչյուր երևույթ այլաբանություն է հանդիսանում։ «Այսօր գարունը փայլում է իր գեղեցկությամբ, կենդանացնելով երկրային ձմեռվա բնությունը»։ Ինքը՝ հեղինակը բացատրում է, որ գարունը— դա քրիստոնեությունն է, ձմեռը՝ հեթանոսությունը։ «Կատաղի քամիները, քնքշորեն փչելով, փայփայում են և աճեցնում պտուղները, և երկիրը, սնելով սերմերը, ծնում է կանաչ խոտ։ Գեղեցիկ գարունը քրիստոնեությունն է, որը մկրտությամբ վերածնում է մարդկային բնությունը։ Կատաղի քամիները—դրանք մեղսալից մտքերն են, որոնք ապաշխարանքի միջոցով վեր են ածվում առաքինության և աճեցնում նրա հոգեշահ պտուղները»։

Կիրիլ Տուրովսկու երկերը հեռու են իր ժամանակակից քաղաքական իրականությունից, գրքային են և վերացական։ Այդ տեսակետից նրանք հանդիսանում են միտրոպոլիտ Իլարիոնի և կենսասեր ստեղծագործությունների լիակատար հակադրությունը։

Կիրիլ Տուրովսկին ամենայն հավանականությամբ ապրել և գրել է այն տագնապալի ժամանակաշրջանում, երբ ըստ «Խոսք Իգորի արշավանքի մասին» երկի հեղինակի պատկերա-

վոր արտահայտության «Խորտակվում էր Դաժդ բոգի թոռան (այսինքն՝ Ռուսիայի) ուժը, երբ Պոլովցիները կատարում էին իրենց ավերիչ արշավանքները, իսկ իշխանները իրար դեմ կռիվ էին գալիս իրենց բաժնեկալվածքի (удел) համար, «միմյանց դեմ դավեր էին լարում»: Օրինակ՝ իշխան Անդրեյ Բոգոլյուբսկին 1159 թվականին հարձակվեց Կիևի վրա և կողոպտեց քաղաքը: Մեզ հասած երկերից և ոչ մեկում Տուրովսկին մի բառ անգամ չի ասում այդ անցքերի մասին:

Կիրիլլ Տուրովսկին պահանջում էր, որ լինի աշխատանքի որոշ բաշխում աշխարհիկ և եկեղեցական գրողների միջև: Առաջինները, այսինքն պատմաբանները, տարեգիրները, ճարտասանները, երգ հորինողները, ինչպես անվանում է նրանց Կիրիլլ Տուրովսկին, գովասանքներով պսակում են նրանց, ովքեր հանուն իրենց թագավորի քաջաբար կռվել են և փախուստի չեն դիմել, «իսկ մեզ վայել է, որ անդադար գովենք աստծու զորավարներին, որոնք քաջաբար պայքարել են հանուն աստծու որդու, իրենց թագավորի, մեր տեր Հիսուս Քրիստոսի»: Այսպիսով, մենք տեսնում ենք, որ քարոզիչը, ասես, գիտակցաբար հրաժարվում է կյանքից և մնում է «զուտ կրոնական քարոզչի» դիրքերում: Նրա խոսքերի կոմպոզիցիային պակասում է տրամաբանականությունը և ներդաշնակությունը: Թեմատիկան մեծ մասամբ փոխ է առնված հին բյուզանդական հեղինակներից: Նա բանաքաղ էր (կոմպիլյատոր): Ինչպես ասում է պրոֆեսոր Վ. Պ. Վինոգրադովը, «լինում է կոպիտ-մեխանիկական բանաքաղություն, բայց կարող է լինել նաև տաղանդավոր-գեղարվեստական բանաքաղություն: Տուրովսկու ստեղծագործությունը—դա մի գեղարվեստական մոզայիկա է»:

Ընդհանրապես հին կրոնական գրականության մեջ Տուրովսկին ուզում էր ապացուցել, որ ռուս եկեղեցական գրողները ընդունակ են մրցելու Բյուզանդիայի հետ, եկեղեցական ծիսակատարության մեջ երևան բերելով խորհրդավոր իմաստ, սիմվոլիկ ձևով զուգադրելով Ավետարանի միջադեպերը և սյուժեները կրոնական դավանանքի հետ: Տուրովսկին այդ չոր ու ցամաք աստվածաբանական թեմաներով գրելիս՝ հանդես է բերում պոետական ոգևորություն, մեղմ ու լիրիկ ձևով նա զանազան ոճական եղա-

նակներ է կիրառում: Նրա ժամանակ դրանք որոշ գրական նշանակություն են ունեցել ռուս գրական լեզվի զարգացման մեջ: Նրա խրատները սիրով կարդացվել են: Գուցե և այդ երկերն օգտագործվել են նաև ուսուցման նպատակով, աշխատելով նմանվել դրանց վերամբարձ-գրքային բարձր ոճին: «Խոսք Իգորի արշավանքի մասին» պոեմի և Գալիցյան-Վոլինյան տարեգրության հեղինակների լեզվի մեջ երևան են գալիս որոշ հետքեր, որոնք ապացուցում են, որ այդ հեղինակները ուսումնասիրել են Տուրովսկու ստեղծագործությունները:

գ) Վլադիմիր Մոնոմախի խրատը

[*Поучение Владимира Мономаха*]

Աշխարհիկ բնույթ կրող ուսուցողական գրականության են պատկանում նաև զանազան բարոյա-խրատական թղթերը, որ ուղարկել են հայրերն իրենց զավակներին: Ռուսական հին տարեգրության մեջ, 1054 թվի տակ, զետեղված է մահացող Յարոսլավ Իմաստունի խրատականն իր որդիներին: Դրա մեջ նշելով Կիևյան գահը ժառանգելու կարգը, նա ասում է. «Հեռանում եմ այս աշխարհից, զավակներս, սիրեցեք միմյանց, քանզի դուք եղբայրներ եք մի հորից և մի մորից» և այլն:

Մեզ հասած խրատներից ամենանշանավորն է «Վլադիմիր Մոնոմախի խրատն իր զավակներին»:

Վլադիմիր Մոնոմախը (ծն. 1059 թ., մհ. 1125 թ.) XII *դարի ականավոր գործիչների մեջ ամենանշանավորներից մեկն է: Նա մեծ հռչակ ստացավ իշխանների երկպառակությունների դեմ մղած իր հետևողական ու եռանդուն պայքարով և պոլովցիների վրա տարած իր բազմաթիվ հաղթություններով: Նա Կիևի մեծ իշխանն էր: Նրա ժամանակակից միտրոպոլիտ Նիկիֆորի ասելով՝ Մոնոմախը վարում էր խստաբարո, սպարտական կյանք: «Այս իշխանը մեծ մասամբ խոնավ հողի վրա է քնում, խուսափում տնից, հրաժարվում պայծառ զգեստներից, անտառները շրջում է գեղջկական շորերով և միայն քաղաք մտնելիս է հագնում իր իշխանավայել զգեստները»: Վլադիմիր,*

Մոնոմախի կենսագրականը շատ մանրամասն լուսաբանված է տարեգրության և մի շարք այլ գրական հիշատակարանների մեջ։

Մոնոմախի «Խրատը» պատկանում է խառն ժանրի։ Այդ «Խրատը» ձուլվում է հայրենասեր իշխանի կենսագրականի հետ։

Ինչպես ենթադրում են, այս խրատը գրված է 1117 թվին։ Եվ դա հիմնավորում են այն հանգամանքով, որ Մոնոմախը ոչինչ չի գրում իր այն արշավանքների մասին, որոնք տեղի են ունեցել 1118 թվից հետո։

Այդ հուշարձանը մեր ձեռքն է հասել միմիայն մի գրչագրով, որ մտցված է Լավրենտյան տարեգրության մեջ։ Գրչագրի մեջ, ցավոք, կան աղավաղումներ, բացթողումներ, վրիպակներ և տեքստի տեղափոխումներ։ Այս գրական հուշարձանի կոմպոզիցիան աղճատված է։ Բացի այդ՝ «Խրատի» մեջ առանց որևէ կապի մտցված է Մոնոմախի 1106 թվի նամակի տեքստը, որ ուղղված է եղել իշխան Օլեգ Չերնիգովսկուն (Այս Օլեգը «Ասք Իգորի արշավանքի մասին» պոեմի մեջ գործող հերոսների՝ Իգորի, Վսեվոլոդի և Սվյատոսլավ III պապն է եղել)։

«Խրատի» մեջ նկատված սխալներն ու բացերը բացատրվում են նրանով, որ Լավրենտի վարդապետը (տարեգրությունն էլ նրա անունով է Լավրենտյան կոչվում) շատ երիտասարդ և անփորձ լինելով, արտագրել է հին և մաշված գրքերից։ Իր արտագրության վերջում Լավրենտին խնդրում է «տերերին, հայրերին և եղբայրներին չնախատել նրան իր սխալների համար, քանի որ գրքերը քրքրված էին, իսկ իր միտքը դեռ թույլ է և տհաս»։

Լավրենտյան տարեգրությունը XVIII դարի վերջում ձեռք է բերում ռուսաց հին ձեռագրերի հավաքող, հայտնի գրաֆ Մուսին-Պուշկինը։ Նա էլ առաջին անգամ, 1793 թվին, լույս է ընծայում մեր այս ուսումնասիրության առարկա աշխատությունը հետևյալ խորագրով. «Մեծ իշխան Վլադիմիր Մոնոմախի «Կտակ» իր զավակներին, որը Սուզդալյան տարեգրության մեջ խրատ է կոչված»։

Ներածություն.—

«Խրատն» սկսվում է ներածականով, որտեղ Մոնոմախը տալիս է համառոտ տեղեկություններ իր մասին։ Նա ասում է, որ իր պապը եղել է «օրհնված» ու «պանծալի» Յարոսլավը,

այսինքն՝ Յարոսլավ Իմաստունը. որ մկրտության ժամանակ նա ստացել է Վասիլիյ անունը, իսկ ռուսերեն նրան անվանել են Վլադիմիր։ Եվ իր սիրելի ծնողների, հոր և մոր, հիշատակը հավերժացնելու համար նա կոչվել է μονομαχος, որ հունարեն նշանակում է մենամարտիկ, որ կարող է միայնակ մենամարտի դուրս գալ թշնամու հետ։ Այստեղ մի քանի տող բաց է թողնըված, որից հետո Մոնոմախը գրում է, որ «սահնակի մեջ նստած (сидя на санях) նա մտածելիս է եղել և փառաբանել է աստծուն, որ նա թույլ է տվել նրան ապրելու մինչև այդ օրերը։ «Սահնակի մեջ նստած» դարձվածքն այնքան էլ պարզ չէ։ Հետազոտողներից ոմանք ենթադրում են, որ պետք է հասկանալ բառացի, մանավանդ, որ քիչ ներքև Մոնոմախը նորից է կրկնում, որ նա հեռու ճանապարհ է գնացել և նստած էր սահնակի մեջ։ Շատերը կարծում են, որ այդ «սահնակի մեջ» դարձվածքը կենցաղային փոխաբերություն է, որը նշանակում է ծերություն, քանի որ հին Ռուսիայում սովորություն կար թաղման ծիսակատարության ժամանակ դագաղը հանգուցյալի դիակի հետ միասին եկեղեցու մեջ սահնակի վրա դնել։ Այս ծեսը հիշատակված է նախնական տարեգրության այն հատվածում, որ պատմում է Վլադիմիր Սվյատոսլավիչի թաղման ծեսը։ Այս սովորության արձագանքները պահպանվել են ռուսական ֆոլկլորում։ Այնուհետև Մոնոմախը դիմում է իր ընթերցողներին կամ իր ունկնդիրներին։ Այս դիմումից կարելի է եզրակացնել, որ հեղինակը գրել է ոչ միայն իր հարազատ զավակների, այլ ֆեոդալական հասարակարգի լայն խավերի համար։

Մեջ ենք բերում այդ հետաքրքիր դիմումը.

«Դուք զավակներս, կամ ուրիշ մեկը լսելով այս գրությունը, մի ծիծաղեք, իսկ եթե իմ զավակներից որևէ մեկին դուր կգա, թող նա իր սրտին մոտ ընդունի այն և չծուլանա, այլ աշխատի։

Նախ և առաջ, ի սեր Աստծո և Ձեր հոգու համար աստծու վախը Ձեր սրտերում պահեցեք և առատ ողորմություն արեք, քանզի դա է սկիզբն ամենայն բարյաց։

Իսկ ում որ այս գրությունը դուր չգա, թող չծիծաղի, այլ ասի այսպես. «Հեռու ճամփին և սահնակի մեջ նստած դրախոսեց»։

Մոնոմախը գրում է իր «Խրատը» իբրև աշխարհ տեսած

և շատ գործ կատարած մի մարդ։ Նա քաջ գիտակցում է այդ. և այդ գիտակցությունն է, որ նրան իրավունք է տալիս իր ծերության օրերին խրատել ուրիշներին, որպեսզի նրանք զուր չանցկացնեն իրենց կյանքը և չծուլանան, այլ աշխատեն։ Բայց իր մտքերը նա ոչ ոքի վզին չի փաթաթում։ Նման ժանրերի մեջ գրեթե անխուսափելի կրոնական էլեմենտը հասցված է մինիմումի։ Նա միայն խորհուրդ է տալիս իր զավակներին «Աստծու վախն» ունենալ, որը հավասար է խղճի հասկացողության, ինչպես և լինել առատաձեռն ու ողորմած, «քանզի դա է սկիզբն ամենայն բարյաց»։ Փոքր ինչ կանխելով ասենք, որ Մոնոմախն ընդհանրապես դեմ էր ամեն տեսակ ճգնակեցության։ Նա խորհուրդ է տալիս իր զավակներին փրկել իրենց հոգին ոչ թե ճգնավորությամբ վանքերում, մարմինը հյուծող պասերով, այլ մարդկանց բարիքներ անելով միայն։

Մոնոմախի «Խրատը» գերազանցապես աշխարհիկ հուշարձան է, թեև նրա հեղինակը մի հավատացյալ քրիստոնյա է։ Ելնելով իր անձնական կյանքի փորձից, Մոնոմախը սովորեցնում է, թե ինչպես պետք է պահի իրեն իշխանությամբ օժտված ֆեոդալը, ինչպես պատերազմի, այնպես էլ խաղաղ ժամանակ, և ինչ պիտի անի նա ռուս երկրի միասնությունը պահպանելու համար։

Ֆեոդալի վարքագծի այս բարոյական կանոնները նա մշակել է իր անձնական փորձի հիման վրա և դա նրա համար ամենագլխավորն է։ Քրիստոնեական բարոյագիտության պատգամներին նա դիմում է շատ չափավոր և այն էլ իր խրատականներն ավելի ծանրակշիռ դարձնելու նպատակով միայն։ Դա երևում է հետևյալ միջադեպից, որով բացվում է «Խրատի» առաջին մասը։

Մոնոմախի ուղևորության ժամանակ Վոլգայի վրա նրան հանդիպում են նրա հորեղբորորդիները և ասում. «միացիր մեզ հետ և մենք միասին կվռնդենք Ռոստիսլավիչներին և նրանց բաժին կալվածքը կխլենք։ Իսկ եթե մեզ հետ չգաս, մենք մեզ համար կլինենք, դու քեզ համար»։

Մոնոմախը մերժում է այդ առաջարկը, որից հետո վերցնում է Սաղմոսը ու մի բան մտքում պահելով՝ բաց է անում գիրքը։ Այն ժամանակ ընդունված էր Սաղմոսի վրա գուշակություններ անել։ Դուրս եկավ հետևյալ տեղը՝ «Ինչու ես տխուր, հոգիդ իմ, ինչու ես խռովում ինձ։ Ապավինիր Աստծուն» և

այն։ Սաղմոսի այս խոսքերը, կարծես, գալիս էին հաստատելու, որ իշխանը ճիշտ վարվեց, հրաժարվելով երկպառակություններից։

Բնորոշ է, որ Մոնոմախը մեջ բերելով Սաղմոսով գուշակելու այս միջադեպը, սկզբունքորեն լուծում է XII դարի համար շատ կարևոր մի հարց—իշխանների երկպառակությունների հարցը։ Այդ դեպքերին չմասնակցելն ու նրանցից զերծ մնալն այնքան էլ սովորական գործ չէր։ Շահախնդրությունից դրդված իշխանների այս մշտական ներքին բախումներն ու երկպառակությունները ժողովրդի քայքայման ու թշվառության ակունքներն էին հանդիսանում։

Իշխանների ներքին պառակտումներից հրաժարվելու իր այս որոշմանը խոր սկզբունքային բնույթ տալու համար Մոնոմախը առատ մեջբերումներ է անում Սաղմոսից։ Այս մեջբերումները հետևյալ թեմաների շուրջն են պտտվում՝ մի ընկնիր անզգամի վաստակի հետևից, մի ընկերանա անզգամ մարդկանց. պիղծ մարդը կկործանվի, իսկ շիտակ մարդը չի մնա մի կտոր հացի կարոտ, արարիչն ինքը պարտք կտա նրան։ Այս բոլոր մեջբերումները, կամ ինչպես ինքը Մոնոմախն է ասում, իրեն դուր եկած խոսքերը, որոնք նա շարադրել ու հերթով գրի է առել, հակված են փաստարկելու այն միտքը, որ իշխանների երկպառակությունները խոշոր սոցիալական չարիք են հանդիսանում և քիչ ուրախություն ու շահ են բերում խռովարարներին։

Դրա համար էլ Մոնոմախը խորհուրդ է տալիս պատանիներին լինել զուսպ, համեստ ու խոհեմ, ինչպես ուսուցանել է Բարսեղ մեծը (Կեսարացին)՝ չծուլանալ, մարդկանց վնաս չհասցնել։

Ապա Մոնոմախն իսկական պոետական ոգևորությամբ գովերգում է տիեզերական հրաշալիքներն ու այս աշխարհի գեղեցկությունները, տոգորված «Վեցօրյայքի» հովերով։

«Ի՞նչ բան է մարդը, երբ խորհում ես նրա մասին։ Մեծ ես դու, տեր աստված, և զարմանահրաշ են գործերը քո։ Բանականությունը մարդու անկարող է ըմբռնել հրաշքները քո։ Եվ կրկին ասենք՝ մեծ ես դու, տեր, և զարմանահրաշ են գործերը քո»։

Մոնոմախը հիանում է նրանով, թե որքան իմաստուն է ստեղծված երկինքը, «ինչպես արևը, լուսինը կամ աստղերը,

լույսն ու խավարը, և հողը ջրերի վրա դրված, և կենդանիները զանազան, և թռչունները, և ձկները պես-պես, քո,— արարչիդ մատն է այս ամենի մեջ, քո նախախնամությամբ է զարդարված այս ամենը։ Զարմանալի է թվում և այն հրաշքը, թե ինչպես հողից ստեղծեցիր դու մարդուն. որքան բազմազան տեսք ունեն մարդկային դեմքերը. արար աշխարհն էլ հավաքես, բոլորի դեմքերը մեկ չեն. ամեն մարդու դեմքն իր տարբեր տեսքն ունի աստծու կողմից շնորհված»։ Մոնոմախը միամիտ հիացմունքով նշում է, որ բնության մեջ այն ամենը, որ տեսնում ենք, ստեղծված է հօգուտ մարդուն՝ նրան սնուցանելու կամ ուրախացնելու համար։ «Մինչև իսկ թռչունները երկնային իմաստուն են ստեղծված։ Երբ հրամայում ես, նրանք երգում են և ուրախացնում մարդկանց. երբ հրաման չես տալիս, լեզուները բերաններում նրանք պապանձվում են»։

Հետևապես, եթե աշխարհն այսքան սքանչելի է ստեղծված և նրա հրաշալիքները կարող են ծառայել մարդու պահանջներին գոհացում տալու համար, և մարդը՝ ինքն էլ մի զարմանալի արարած է հանդիսանում, ապա կարիք կա՞ արդյոք զբաղվել պառակտումներով և եղբայրասպանությամբ, և նրա իշխան որդիները պետք է «չարչարվեն» ի բարօրություն իրենց հարազատ երկրի։

Այսպիսով, «Խրատի» առաջին մասը, ասես, մի տրամաբանական ներածություն է և արտահայտում է Մոնոմախի վարչական գործունեության ողջ պաթոսը, որն իր ամբողջ կյանքի ընթացքում բավական համառ և հետևողական պայքար է մղել իշխանների ներքին պառակտումների դեմ։ Այս առաջին մասը մի տեսակ ցուցադրություն է, որը նախապատրաստում է միաժամանակ և՛ որդիներին ուղղված գործնական խրատները, և՛ Մոնոմախի կենսագրությունը։ Առաջին մասից արդեն արտահայտվում են Մոնոմախի հատկանշական կողմերը, նրան, իբրև լայն մտահորիզոն ունեցող մարդու, բնութագրող հիմնական գծերը որպես կուլտուրական, երկրային շահերին կառչած, նվիրված, և ֆեոդալական իրականության շրջանակների մեջ կյանք կառուցող մի ակտիվ մարդու։

«Խրատի» երկրորդ մասում տրվում են մի շարք գործնական խորհուրդներ։ Սրանք ընդգրկում են նախ իշխանի պարտականությունները, իբրև կառավարողի, վարչական մարդու, իսկ երկրորդ՝ նույն իշխանի պարտականությունները իր տան, ընտանիքի և հասարակության հանդեպ։

Մոնոմախը շատ տիպիկ, իսկական ֆեոդալ է, որի համար քրիստոնեությունը մի միջոց է սրբագործելու և կանոնավորելու գոյություն ունեցող հարաբերությունները: Փոխհարաբերությունները աստծո հետ բարդ չեն՝ հարկավոր է միայն հիշել իր մեղքերի մասին. չհպարտանալ, աստծո վախն ունենալ սրտում, գիշերը քնելուց առաջ ծունր դնել, իսկ ձի նստած դաշտի միջով անցնելիս՝ եթե աղոթք չգիտես, թաքուն կրկնել՝ «Տեր, ողորմյա»: Դա ավելի լավ է, քան դատարկ բաներ մտածելը»:

Սոցիալական-քաղաքական ծրագրի էությունը արտահայտված է հետևյալ խոսքերով՝ «Իսկ ամենից առավել թշվառներին չմոռանաք, այլ որքան կարող եք խնամեցեք նրանց և պաշտպան կանգնեցեք որբերին և այրիներին, ինքներդ արդարացրեք ու մի թողեք ուժեղներին խորտակել մարդուն»: «Մեղք չունեցողին և հանցանք չգործողին մի սպանեք և մի տվեք հրաման սպանելու»:

1113 թ. Կիևում մի մեծ ապստամբություն բռնկվեց: Քաղաքի բնակչության ստորին խավերն աջակցություն գտան ճորտացած գյուղացիական մասսաների մոտ: Ունևոր դասակարգերը՝ գլուխը կորցրած՝ շտապով հրավիրեցին Վլադիմիր Մոնոմախին գրավելու Կիևի գահը այդ ժամանակ վախճանված իշխան Սվյատոպոլկ Իզյասլավիչի փոխարեն, որն իր անչափ ժլատությամբ, արծաթասիրությամբ և վաշխառուներին հովանավորելու քաղաքականությամբ արժանացել էր ժողովրդի բուռն ատելության:

Մոնոմախը, որ հրաժարվում էր Կիևյան մեծ իշխանի գահը ընդունելուց, 1113 թ. ապստամբությունից հետո, համաձայնվեց ընդունել մեծ իշխանի գահը:

Մոնոմախը, իրոք, ստիպված էր մի շարք բարեփոխումներ մտցնել գյուղացիների և քաղաքացիների ծայրահեղ ծանր կյանքը թեթևացնելու նպատակով: «Զակուպների» և նրանց այրիների նկատմամբ նա մի այնպիսի օրենք սահմանեց, որով «զակուպը» կարող էր դատվել իր տիրոջ հետ, նրանից հեռանալու իրավունք ստանալու համար, որպեսզի դրսում վաստակի իր փրկագինը և իրեն համար ազատություն ձեռք բերի: Մոնոմախն իր դրուժիննիկների հետ միասին բավական մեծ արտոնություններ սահմանեց նաև մանր վաճառականների

և առևտրականների համար, որոնք ընկնում էին խոշոր վաճառականների և վաշխառուների ճանկը և ստրկացվում նրանց կողմից։ Նրա «օրենսդրության» համաձայն այն պարտապանները, որոնք պարտք էին վերցրել տարեկան 50 տոկոսով, պետք է վճարեին միայն 2 տարի, իսկ 3 տարի շարունակաբար վճարողները ազատվում էին իրենց ամբողջ պարտքից։

Զակուպների և վաշխառուների (վաշխառուական տոկոսներն իջեցնելու) մասին ընդունած օրենքը Մոնոմախն իսկույն անցկացրեց Բերեստովի 1113 թ. խորհրդակցությունում։ Ակադեմիկոս Գրեկովը գտնում է, որ «զակուպների» մասին ընդունած օրենքի ռևոլյուցիոն ծագման հետքերը շատ ակներև են, այլ կերպ ասած՝ այդ օրենքն ընդունված է Կիևի ապստամբած ներքնախավի ճնշման ներքո, որոնց տրամադրությունների հետ 1113 թվին Մոնոմախն անշուշտ հաշվի էր նստում։

Ըստ երևույթին զակուպների և վաշխառուների մասին հրապարակած այս օրենքներն է նկատի ունենում Մոնոմախը, երբ հպարտությամբ ասում է, որ՝ «Թույլ չի տվել ճնշելու ոչ սմերդին, ոչ այրի կնոջը»։

Ինչպես Վլադիմիր Մոնոմախի «Խրատը», այնպես էլ 1113 թ. դեպքերի տարեգրային նկարագրությունը շատ թույլ կերպով արտացոլել են ժողովրդական մասսաների հուժկու ապստամբության թափն ու կոնկրետ արտահայտությունը։

Վլադիմիր Մոնոմախի սոցիալական օրենսդրությունն այլ բան չէր, եթե ոչ բարձր խավերի ձեռնարկած մի փորձ՝ ինքնասահմանափակման միջոցով պահպանելու և առավել ամրապնդելու ժողովրդական մասսաների ֆեոդալական շահագործման հետագա հնարավորությունները։

Ռուսական երկրի միասնության և իշխանների պառակտումները թուլացնելու ձգտումը, որ Մոնոմախի գործունեության գլխավոր հոգին ու նպատակն էր կազմում, թելադրել են այն կետը, որտեղ Մոնոմախն առանձնապես շեշտում է, որ իշխանները պետք է խստիվ կատարեն պայմանագրերը, վավերացված երդումով և խաչն համբուրելով, և պայմանազանց չլինեն։

«Խրատի» մեջ շատ ուշագրավ է նաև այն, թե որքան խելացի ու ճարպիկ կերպով է օգտվում Մոնոմախը կրոնական-եկեղեցական սովորություններից ու կանոններից, դրանք պետական գործնական նպատակներին ծառայեցնելու համար։

Մոնոմախը խորհուրդ է տալիս նաև երեխաներին հաշտ

ապրել եկեղեցական իշխանության հետ՝ «Սիրով ընդունեցեք եպիսկոպոսների, քահանաների, վանահայրերի օրհնությունը-մի խուսափեք նրանցից և, որքան կարող եք, սիրեցեք նրանց, մատակարարեցեք նրանց, թող աղոթեն աստծուն ձեզ համար»:

Ամեն ինչ ասված է «Խրատի» մեջ ամենայն ճշտությամբ, գործնականորեն, մինչև իսկ այն, որ հարկավոր է մատակարարել հոգևորականներին, որպեսզի նրանք աղոթեն իշխանության համար:

Մոնոմախի փոխհարաբերությունները ռուս եկեղեցական պաշտոնական վերնախավի ներկայացուցիչների հետ (այսինքն միտրոպոլիտի և Կիև-Պեչորյան վանքի վանահոր հետ) իմաստուն և դիպլոմատիկ էին, աչքի էին ընկնում նուրբ վարվելակերպով ու տակտով, սակայն կառուցված էին սոսկ քաղաքական հաշվի վրա: XI դարի վերջերում, երբ Կիևյան մեծ իշխանն էր Սվյատոպոլկ Իզյասլավովիչը, Մոնոմախը պաշտպանում էր Կիև-Պեչորյան վանքի պայքարը միտրոպոլիտի դեմ, բայց այն օրվանից ի վեր, երբ նա ստանձնեց մեծ իշխանի գահը, փոխեց իր վերաբերմունքը դեպի Պեչորյան վանքը և մինչև իսկ տարեգրությունները վարելը հանձնարարեց մի ուրիշ վանքի: Դա մի բարդ քաղաքական խաղ էր, որը Մոնոմախը վարում էր մեծ հաջողությամբ: Այնուամենայնիվ դա չէր խանգարում նրան իր հարուստ ներդրումներն անելու և թանկարժեք նվերներ տալու Կիևյան եկեղեցիներին (Վիշգորոդում) և Կիև-Պեչորյան վանքին, որը բարձրացնում էր նրա հեղինակությունը կիևցիների աչքում:

Այն խորհուրդներն ու խրատները, որոնք վերաբերում են իշխանի պարտականություններին, բնորոշում են նրան նաև ընդհանրապես իբրև մարդու և անձնավորության իր տանն ու ընտանիքում: «Խրատի» այդ մասում տեսնում ենք «Դոմոստրոյի» սկզբնավորումը, այսինքն այն գրքերի, որոնք երևան են գալիս XVI դարում, ռուս գրականության զարգացման մարդային ժամանակաշրջանում՝ Նովգորոդում, Վոլխովում և Մոսկվայում:

Այդ խորհուրդները նմանապես շատ հետաքրքրական են, օրինակ՝

«1. Ձեր տան մեջ մի ծուլանաք, այլ ամեն բանի հետեվեցեք ինքներդ. հույս մի դրեք ո՛չ տիունի (ստորին կառավարիչներ, գյուղ. դատավորներ), ո՛չ օտրոկի (отрок—պատանի կըրտ-

անը դրուժինիկ) վրա, որպեսզի հյուրերը չծիծաղեն ոչ Ձեր տան, ոչ էլ ճաշերի վրա»:

«2. Սիրեցեք Ձեր կանանց, բայց թույլ մի՛ տաք նրանց իշխել Ձեզ վրա»:

«3. Ճանապարհին, կամ այլ տեղ, կանգ առեք, ուտացրեք, խմացրեք աղքատին, մանավանդ հարգեցեք հյուրին, որտեղից էլ որ նա գա ձեզ մոտ, լինի դա մեծազարմ, թե հասարակ մարդ, կամ դեսպան, և եթե չեք կարող որևէ բանով պարգևատրել նրան, գոնե լավ պատվեցեք: Ճանապարհորդելով՝ նրանք տանում են երկրից երկիր մարդու լավ կամ վատ համբավը»:

«4. Հիվանդին այցելեցեք և մեռածի մոտ գնացեք, քանզի ամենս էլ մահկանացու ենք, մարդ բաց չթողնեք առանց ողջունելու, ամեքին մի բարի խոսք ասացեք»:

«5. Հարգեցեք ծերերին իբրև հայր, երիտասարդներին՝ իբրև եղբայր»:

«6. Խուսափեցեք սուտ խոսելուց, հարբեցողությունից և անառակությունից: Այս արատների մեջ կործանվում են մարդու հոգին և մարմինը»:

«7. Ինչքան լավ բան գիտեք, մի՛ մոռանաք, իսկ ինչ որ չգիտեք, սովորեցեք: Ահավասիկ իմ հայրը, որը տանը նստած հինգ լեզու սովորեց: Այս է, որ հարգանք է ներշնչում օտար երկրներին: Վասն զի ծուլությունն է մայրն ամենայն չարյաց. մարդն ինչ որ գիտե, մոռանում է, իսկ չգիտցածը չի սովորում...»:

Այս խորհուրդների հարակցությունից ստեղծվում է մարդու իդեալը՝ քաղցրաբարո, սիրալիր, ազնիվ, աշխատասեր, խելացի և հյուրընկալ: Դա ռուսական ազգային բնավորության իդեալն է: Ընդորում նա հարուստ, ծառաներ և տիուններ ունեցող մի մարդ է և վարում է բավական շռայլ կյանք: Ճոխ խնջույքներն ու պարգևները, մանավանդ օտարերկրացիներին, իշխանի համար ֆեոդալական միջավայրում, ստեղծում են հասարակական մեծ հեղինակություն, իսկ դա շատ կարևոր է գործնական հարաբերությունների ժամանակ:

Նկարագրելով այդ սիրալիր իշխանի տիպիկ կերպարը կենցաղային, ընտանեկան մթնոլորտում, Վլադիմիր Մոնոմախը հիմնականում նկարում է իր պատկերը (իր պորտրեն):

Միտրոպոլիտ Նիկիֆորը, որ ազգով հույն էր և շփման մեջ էր գտնվում Մոնոմախի հետ 1096 թվից մինչև 1121 թիվը,

պատմում է, որ Մոնոմախը սիրում է ճոխ ճաշկերույթներ սարքել ուրիշների համար, ամեն բան իր ձեռքով էր պատրաստում և ինքն էր սպասարկում հյուրերին, իսկ երբ իր հպատակները ուտում, խմում, հարբանում, չափից անցնում էին, նա նստած նայում էր նրանց, իսկ ինքը բավականանում՝ պարզ և սակավ ուտելիքով ու ջրով։ Նա պատմում է նաև, որ Մոնոմախը ծածուկ չէր պահում իր գանձերը, բաժանում էր ոսկին ու արծաթը, սակայն նրա գանձարանը երբեք չէր դատարկվում։ Հետևապես, կարելի՞ է հավատալ, որ Մոնոմախը միանգամայն անկեղծ է, երբ կոչ է անում իր որդիներին՝ ժլատ չլինել, ասելով՝ «հարստությունը հողի տակ պահելը մեծ մեղք է»։

Մոնոմախը հարուստ էր և նյութական հաշիվների մեջ շատ գործնական։ Ամբողջ Բալթիկ-Դնեպրովյան ջրային ճանապարհը նրա ձեռքին էր գտնվում։ Նա համամիտ չէր իր ժամանակակիցներից շատերի նախապաշարմունքներին ու կարծիքներին և չէր վախենում գործնական կապերի մեջ մտնել օտարերկրացիների հետ՝ «պիղծ լատինների հետ», ինչպես անվանում էր նրանց Թեոդոսին՝ Պեչորյան վանքի հիմնադիրն ու քարոզիչը։

Հունական արքայադուստր՝ Բյուզանդական Կոնստանդինոս Մոնոմախի աղջիկը Վլադիմիրի մայրն էր։ Ինքը Վլադիմիրը ամուսնացած էր Անգլիայի վերջին թագավորի դստեր՝ Հիլդա Հարոլդովնայի հետ։ Շատ հնարավոր է, որ Մոնոմախն իր հոր նման օտար լեզուներ գիտեր, բայց այդ մասին մենք ստույգ տեղեկություններ չունենք։

Մոնոմախի այն կարծիքը, որ անհրաժեշտ է օտար լեզուներ սովորել «տանը նստած», գալիս է ապացուցելու այն բարձր կուլտուրան, որին կարողացել է հասնել Կիևյան պետությունը XII դարում։ Ռուս մարդիկ, հանձինս ղեկավար վերնախավի, քաջ տեղյակ էին Եվրոպայի իրադարձություններին։

Մոնոմախի «Խրատի» երրորդ մասը պարունակում է նրա 1072—1118 թ. թ. ընթացքում կատարած բազմաթիվ արշավանքների ու որսորդությունների թվարկումը։ Այստեղ գերակշռողը կենսագրական իրական տարրն է։ Պատանեկան տարիներից սկսած Մոնոմախը մասնակցել է հեռավոր արշավանքներին։ 50 տարվա ընթացքում նա կատարել է 83 մեծ արշավանք, իսկ փոքր արշավանքների մասին նույնիսկ ավելորդ է

համարում հիշատակել: Ծայրից ծայր շրջել է նա ամբողջ Ռուսական հողը, եղել է Լեհաստանում, Չեխիայում: Հիշում է նա իր առաջին արշավանքը վյատիչների հողի վրա, որոնք հեթանոսներ էին և ապրում էին ֆիննական ցեղերի մեջ, չճանաչելով ոչ մի իշխանության, վայրի անտառների երկրում, իրենց «գազանային» սովորությունների համեմատ: Ավելի հաճախ նա կռվում էր պոլովցիների դեմ: Մոնոմախը թվում է բոլոր այն խաների ռամիկ անունները, որոնց նա գերի է վերցրել: Մի անգամ էլ, դեռ պատանի ժամանակ, հոր հրամանով նա նվաճում է Մինսկ քաղաքը, որի մեջ չեն թողնում «ոչ ռամիկ, ոչ անասուն»:

Շատ պատկերավոր ու գեղեցիկ է Մոնոմախի որսորդության դուրս գալու նկարագիրը: Չերնիգով քաղաքի տակ Մոնոմախը բռնում է վայրի ձիեր և իր ձեռքով 10—20 ձի միմյանց կապկպում: Երկու վայրի ցուլ պոզահարել են նրան, վայրի վարազը պոկել է նրա կողքից կախված սուրը, արջը հարձակվել է նրա վրա ու «դաժան գազան»—հովազը նրան գետին է գլորել ձիու հետ միասին: Մոնոմախն ասում է, որ նա չի խնայել իր կյանքը, իր գլուխը թե՛ պատերազմի, թե՛ որսորդության մեջ և թե՛ տանը: Ձմեռ թե՛ գարուն, և ցրտին, և տոթին ինքն է խնամել իր ձին, իր բազեներին ու ճուռակներին, չվստահելով իր դրուժիննիկներին ու ծառաներին: «Աստված ինձ ծույլ չի ստեղծել, այլ ընդունակ ամենայն գործի»,—գրում է Մոնոմախը վերջաբանում և խորհուրդ է տալիս զավակներին կարդալով իր գրությունը՝ ձգտել դեպի լավ գործեր, չվախենալով մահից ո՛չ պատերազմի մեջ, ո՛չ էլ որսորդության ժամանակ, ամենուրեք տղամարդկանց վայել գործը կատարել:

Վլադիմիր Մոնոմախի «Խրատը» մեծ հետաքրքրություն է առաջացնում իբրև դարաշրջանի մի վավերագիր, որը պատկերում է XII դարի, խոշոր պետական հայրենասեր-գործչի ինքնանկարը:

Դարաշրջանի բնորոշման տեսակետից «Խրատը» ոչ սակավ հետաքրքրական է, քան «Ասք Իգորի արշավանքի մասին» գրական հուշարձանը:

«Խրատը» գրված է խոսակցական լեզվի մոտ, պարզ և հասկանալի լեզվով: Նրա մեջ տեղ են գտել առածային դարձվածքներ, ինչպես օրինակ՝ «Ծուլությունն է մայրն ամենայն

Հոլյաց», որը կարելի է համեմատել՝ «Ծուլությունը մայրն է բոլոր արատների»։

Մոնոմախը մեծ հոգեկան ջերմություն է մտցնում իր խրատների մեջ։ Խստաբարո ռազմիկ, հզոր իշխան և զգաստ քաղաքագետ Մոնոմախին օտար չեն նուրբ զգացմունքներն ու հիացումը բնության սքանչելիքներով, որը նա արտահայտում է իսկական գրական վարպետությամբ։

II. ՎԱՐՔԱԲԱՆԱԿԱՆ-ՎԿԱՅԱԲԱՆԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ
(Житийная литература)

Սրբերի վարքերը ձևականորեն հանդիսանում են կենսագրություններ, բայց տարբերվում են ժամանակակից ռեալ կենսագրություններից իրենց անպայման ֆանտաստիկայով և կրոնական նպատակասլացությամբ։ Եթե մի կողմ դնենք վարքերի, իբրև քրիստոնեության ամրապնդման նպաստող եկեղեցական ժանրի կրոնական կեղծ նպատակամիտությունը և դիտենք դրանք իբրև անցյալի գրական հուշարձան, ապա դրանց մեջ մենք կգտնենք պատմական իրողության մեզ համար թանկարժեք տարբեր, շատ հետաքրքիր տվյալներ ռուս մարդկանց հասկացությունների, կենցաղի և վարքուբարքի մասին հեռավոր անցյալում։

Կիևյան պետության ամրապնդման համընթաց՝ ռուս պետականությունն աշխատում էր ստեղծել իր սեփական եկեղեցական կազմակերպությունը։ Այս կապակցությամբ, բացի այն սրբերը, որոնց պաշտամունքը սահմանված էր հույն եկեղեցու կողմից, նրանք ցանկացան իրենց տեղական սրբերն ու սեփական սրբություններն ունենալ։

Դա քաղաքական և ազգային շահերից բխող ժամանակի պահանջն էր։

Առաջին ռուս ազգային սրբերը Վլադիմիր I Սվյատոսլավիչի որդիներ՝ Բորիս և Գլեբ եղբայրներն էին։ Նրանց հոր մահից հետո շատ չանցած՝ 1015 թվին, նրանց սպանում է իրենց հարազատ եղբայր՝ Սվյատոպոլկ Վլադիմիրովիչը, որ գրավում է Կիևյան մեծ իշխանի գահը և իրեն հզոր իշխան հռչակում։ Նովգորոդի իշխան Յարոսլավ Վլադիմիրովիչը պատերազմի է ելնում նրա դեմ, արտաքսում նրան և ինքը դառնում Ռուսիայի մեծ իշխանը (1019—1054 թ.թ.)։ Յարոսլավը իր խելացի

քաղաքականության հետևանքով ստանում է «Իմաստուն» մականունը։

Արդեն 1021 թվին Բորիս և Գլեբ եղբայրները «սրբերի կարգը դասվեցին», իսկ եղբայրասպան Սվյատոպոլկը մտավ պատմության մեջ Սվյատոպոլկ «Անիծյալ» անունով։

Ռուս եկեղեցական գործիչները շատ ջանք թափեցին, որպեսզի իրավունք ստանան բյուզանդական եկեղեցական իշխանությունից «սրբերի կարգը դասելու» իբրև առաջին ռուս սրբերի՝ Բորիս և Գլեբ եղբայրներին։

Ռուսները հպարտանում էին իրենց այդ ազգային սրբերով։ Եկեղեցին տարեկան վեց անգամ տոնում էր Բորիսի և Գլեբի հիշատակը։

Բորիսի և Գլեբի հնագույն գրավոր վարքերը երևան են եկել XI դարի վերջերին կամ XII դարի սկզբներին։ Դրանց ժամանակագրությունը դեռևս ճշտգրտված չէ։ Բորիսի և Գլեբի նահատակության պատմությունը ամենից վաղ արձանագրված է Տարեգրության մեջ։ Բացի այս պատմությունից՝ մեզ հասել են նաև Նեստորի «Ճառ Լուսահոգի (երանելի) մարտիրոսներ՝ Բորիսի և Գլեբի կյանքի և նահատակության մասին» գրվածքը և մի այլ երկ՝ «Պատմություն չարչարանաց և գովք սուրբ նահատակներ Բորիսին և Գլեբին», („Чтение о жизни и гибели блаженных мучеников Бориса и Глеба“), որի հեղինակությունը ենթադրաբար վերագրվում է կրոնավոր Իակովին, բայց դա տակավին հաստատված չէ։ Այս վերջին գրվածքն ունի խոշոր գեղարվեստական արժանիքներ, շատ գնահատված է եղել ռուսների կողմից և մեծ ժողովրդականություն է վայելում։ Այս երկից մեր ձեռքն է հասել 170 գրչագիր։ Այդ վարքի մեկ վարիանտն էլ, աննշան փոփոխություններով, հասել է Հայաստան «Վկայաբանություն Ռոմանի և Դավթի» խորագրով։ Այս բանը մեզ չպետք է զարմացնի, քանի որ Բորիսի երկրորդ (մկրտության) անունը Ռոման էր, իսկ Գլեբինը՝ Դավիթ։ Նախկին Սուզդալյան Ռուսիայում կար և մինչև այժմ էլ մնում է Վոլգա գետի վրա մի բնակավայր, որը կոչվում է՝ Ռոմանով-Բորիսոգլեբսկ։

1. «ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ՉԱՐՉԱՐԱՆԱՑ ԵՎ ԳՈՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԲՈՐԻՍԻ ՈՒ ԳԼԵԲԻ»

(„Сказание о страданиях и похвала Борису и Глебу“)

«Պատմության» ներածության մեջ հեղինակը, փառաբանելով հզոր իշխան Վլադիմիր Սվյատոսլավիչին, որը «մկրտությամբ լուսավորեց ողջ ռուսական երկիրը», թվում է նրա 12 որդիների անունները, որոնք ծնված են եղել տարբեր կանանցից: Այստեղ շեշտված է, որ Բորիսն ու Գլեբը ծնվել են մի մորից, որը բուլղարուհի էր, իսկ եղբայրասպան Սվյատոպոլկ «Նզովյալը» մութ ծագում ունի: Նա «երկու հորից» էր և դրա համար Վլադիմիրը նրան չէր սիրում ու իր որդին չէր համարում: Սրանից հետո համառոտ շարադրված է այդ եղեռնական պատմությունը: Նրա գեղեցկուհի մայրը հույն էր և ուխտյալ միանձնուհի: Նա դուր է գալիս Վլադիմիրի եղբորը՝ Յարոպոլկ Սվյատոսլավիչին, որը վերցնում է նրան վանքից և իր կինը դարձնում «նրա դեմքի գեղեցկության համար»:

Վլադիմիրը դեռ հեթանոս եղած ժամանակ, պատերազմելով իր եղբոր՝ Յարոպոլկի հետ, սպանում է նրան, տիրանում նրա իշխանական կալվածքին և կնության վերցնում նրա հղի կնոջը: Սրանից ծնված զավակին՝ Սվյատոպոլկին նա չէր կարող իր հարազատ որդին համարել: Այդ կրկնակի հանցանքի համար հեղինակը չի մեղադրում Վլադիմիրին, որովհետև այն ժամանակ նա «պիղծ», այսինքն՝ հեթանոս էր: Սվյատոպոլկն էլ իր վրա կրում էր նզովքի կնիքը դեռ մոր արգանդում:

«Պատմության» առաջին մասում խոսվում է հզոր իշխան Վլադիմիրի մահվան հաջորդող ծանր հիվանդության մասին, որ տեղի ունեցավ Ռուսիայի մկրտության 28-րդ տարում, այսինքն 1015 թվին, Վլադիմիրի մահվան, թաղման և Սվյատոպոլկ «Նզովյալի» իշխանական գահին ինքնագլուխ տիրանալու մասին: Վլադիմիրը իշխան էր կարգել՝ Սվյատոպոլկին՝ Պինսկում (այժմյան Բելոռուսիայի մի մասն է), Յարոսլավին՝ Նովգորոդում (Վոլխով գետի վրա), Բորիսին՝ Սուզդալյան Ռոստովում, իսկ Գլեբին—Մուրոմում, նույն Սուզդալյան երկրում:

Այստեղ միտումնավոր ընդգծվում է Բորիսի հանդեպ Վլադիմիրի ցուցաբերած սերն ու վստահությունը, իբրև մի հնազանդ, խիզախ, ռազմասեր որդու, որը կարող էր փոխարինել հզոր իշխանին ռազմի գործերում:

Ծանր հիվանդության պատճառով Վլադիմիր իշխանը զամ-

ված էր իր մահճին, երբ լուր ստացվեց, որ պեչենեգները ամեն կողմից հարձակվել են ռուսաց երկրի վրա։ Մռայլվեց իշխանը, և մեծ էր վիշտը նրա, քանի որ ինքն անկարող էր գլխավորել իր զորքերն ու հակահարված տալ պեչենեգներին։ Երբ Բորիսը վերադարձավ Ռոստովից, հայրը նրան իսկույն ուղարկեց անօրեն պեչենեգների դեմ։ Հնազանդ որդին ճանապարհվելիս ասում է նրան՝ «Պատրաստ եմ անել այնպես, ինչպես քո սիրտն է թելադրում»։

«Պատմության» մեջ կան հետաքրքիր մանրամասնություններ Վլադիմիրի թաղման ծիսակատարությունների մասին, որոնք առկա են նաև տարեգրային պատմվածքի մեջ։ Սվյատոպոլկը ուզում է ծածկել եղբայրներից հոր մահը, որ տեղի էր ունեցել Բերեստովում՝ մեծ իշխանների մշտական նստավայրում, Կիև քաղաքի մոտերքը։ Գիշերով նա քանդում է պատը, և, ըստ ռուսական հին սովորության, փաթաթելով Վլադիմիրի մարմինը գորգերի մեջ՝ պարանով իջեցնում, դնում է սահնակի վրա և դնում Աստվածածնի տաճարը։

«Պատմության» երկրորդ մասում պատմվում է, թե ինչպես Բորիս իշխանը, ոչ մի տեղ չհանդիպելով պեչենեգներին, վերադառնում է իր դրուժինայի հետ և հանդիպում է սուրհանդակին, որը գուժում է նրան հոր մահը։

Լսելով այս տխուր լուրը՝ Բորիսը ընկճվում է հոգով ու մարմնով և արտասվելով գոչում։

«Վա՜յ ինձ, իմ աչքի լույս, փայլն ու ճաճանչն իմ դեմքի, սանձն իմ պատանեկության. խրատն իմ տհաս բանականության։ Ավա՜ղ, հայր իմ, և տեր իմ։ Ո՞ւմ մոտ գնամ և ո՞ւմ դիմեմ, ո՞ւմ ապավինեմ։ Խավարեց արևն իմ, իսկ ես այստեղ չէի և չկարողացա անձամբ զգեստավորել ազնիվ մարմինը քո և դագաղի մեջ դնել քեզ իմ սեփական ձեռքերով։ Չկրեցի փառավոր և առնական մարմինը քո, չարժանացա վերջին համբույրս դրոշմել հոյակապ գլխիդ ալեհեր։ Ով, դու, երանելի՛, հիշիր ինձ քո հավիտենական հանգստի աշխարհում։ Այրվում է սիրտն իմ, խռովահույզ հոգիս շփոթում է միտքս և չգիտեմ ո՞վ կսփոփի ինձ իմ այս դառնագին վշտի մեջ։ Մեծ եղբորս դիմեմ (այսինքն Սվյատոպոլկին), բայց նա զբաղված է ունայնությամբն աշխարհի և մտադիր է սպանել ինձ... Եթե նա ուզենա սպանել ինձ, մարտիրոսաբար կընդունեմ մահն Արարչիս, բայց չեմ ընդդիմանա։ Անկեղծ սերը վախի համար տեղ չունի։ Կգնամ եղբորս

մոտ ու կասեմ.— «Դու եղբայրն ես իմ, և ավագն ես ինձնից, ինչ կհրամայես, որ անեմ, տեր իմ»։

Բորիսի այս մենախոսությունը, հարկավ, հեղինակի հնարանքի արգասիքն է։ Նա հագեցված է լիրիկական պաթոսով և գրված շատ գեղեցիկ լեզվով։ Մի շարք դարձվածքներ, որոնք գործածական են ռուս ժողովրդական բանավոր ստեղծագործության, այն է՝ հուղարկավորության և սգո ողբերի մեջ, օրինակ՝ «Լույսն իմ աչքերի խավարեց» կամ «Արևը մայր մտավ»—հաջող զուգորդվում են գրքային նուրբ ճարտասանության հետ, օրինակ՝ «Այրվում է սիրտն իմ և խռովահույզ հոգիս շփոթում է միտքս», կամ՝ «որտեղ պիտի կարողանամ հագենալ այսպիսի շնորհալի ուսմունքով»։ Ճարտասանական, հարցական և բացականչական հակիրճ նախադասությունները դրսևորում են Բորիսի հոգեբանական կացությունը, նրա թախիծն ու խոր վիշտը հոր անսպասելի մահվան առթիվ. նրա մտատանջությունը՝ ինչպես վարվել տվյալ դեպքում—«ի՞նչ պիտի ասեմ, կամ ի՞նչ անեմ»։

Բորիսը հանգում է այն որոշման, որ պիտի մեռնի, իբրև նահատակ, որպեսզի եղբայրական սիրո ու հնազանդության օրինակ դառնա ռուս իշխանների համար։ Բայց նա ճգնավոր չէ. նա ապրել է ուզում։ Տրտմությամբ է մտածում նա այն մասին, որ այլևս չի տեսնելու իր արյունակից եղբորը՝ Գլեբին. աղի արցունք է թափում իր երիտասարդ մարմնի ուժի և գեղեցկության մասին խորհելիս։

Բորիսը պաշտպանում է ռուսական երկրի միասնության քաղաքական գաղափարը, այդ պատճառով էլ նա սկզբունքորեն դեմ է եղբայրական արյունահեղ երկպառակություններին և ներքին խռովություններին։ Նա այլևս չի ուզում վերադառնալ Կիև և խփում է իր վրանները Ալտա գետի ափին։ «Եթե ես գնամ հորս տունը,—խորհրդածում է նա,—ինձ կարող են հարկադրել, որ քշեմ, հեռացնեմ եղբորս, ճիշտ այնպես, ինչպես հայրս վարվեց իր մկրտությունից առաջ։ Բայց ի՞նչ կվաստակեմ ես դրանով ապագա կյանքի համար»։

Իր ընդունած սկզբունքային որոշման ճշտությունը, կռվի չելնել եղբոր դեմ, ապացուցող փաստարկները Բորիսը քաղում է քրիստոնեական վարդապետությունից, որը պնդում է, որ աշխարհի բոլոր հարստությունները հավիտենականության հետ համեմատած «ունայնություն ունայնությանց» են։ Նա հարց է

տալիս ինքն իրեն՝ ուր մնացին այժմ իր հանգուցյալ հոր կամ եղբայրների փառքն ու հարստությունը։ «Ոսկին ու արծաթը, խնջույքները ճոխ և ձիերը արագավազ, տները մեծ ու շքեղ և տուրքերն անթիվ... այդ ամենը կարծեմ չեն էլ եղել երբեք։ Ամենայն ինչ անհետացավ նրանից հետ և ոչ մի տեղից փրկություն չկա նրանց... Փրկությունը միայն բարի գործերից է, ճշմարտի հավատքից և անկեղծ սիրուց»։

Սվյատոպոլկը մահ է նյութում Բորիսին, բայց թաքցնելով իր մտադրությունը, շողոքորթ խոսքերով համոզում է նրան վերադառնալ Կիև։

Դրուժինան պնդում է, որ Բորիսն անպայման գնա Կիև, արտաքսի եղբորը ու գրավի Կիևյան գահը։ «Բոլոր ռազմիկները քո կողմը կանցնեն»—ասում են նրանք։ Բորիսը հրաժարվում է, դրուժինան թողնում է նրան ու հեռանում։ Նրա մոտ մնում են կրտսեր դրուժիննիկներից մի քանի պատանիներ և նրանց թվում նրան նվիրված՝ պատանի Գեորգին (Կարպատում ծնված հունգարացին)։

Ամբողջ գիշերը աղոթում է նա ռազմական վրանում ու սաղմոսերգությամբ պարապում. Սվյատոպոլկից կաշառված Պուտիշ, Տալց, Յալովիչ և Լյաշկո վարձու մարդասպանները գաղտագողի մոտենում են վրանին և նիզակներով խոցոտում նրա մարմինը։ Թիկնապահը՝ պատանի Գեորգին, կամենում է իր մարմնով պաշտպանել իշխանին։ Անձնազոհ պատանի Գեորգին ընկնում է և իշխանի առաջ շունչը փչում։ Իշխանը ծանր վերքեր է ստանում։

Թանկարժեք ոսկյա զարդը, մանյակը, որ կախված էր նրա վզից շղթայով, մարդասպանները չկարողացան պոկել դիակի վրայից. նրանք կտրեցին նրա գլուխը և այնպես այլանդակեցին դիակը, որ անճանաչելի դարձավ։

Ծանր վիրավոր Բորիսին մարդասպանները փաթաթեցին վրանի մեջ և տարան Սվյատոպոլկի մոտ։ Երբ նրան ցույց տվեցին Սվյատոպոլկին, վերջինս հրամայեց երկու վարյագներին վերջ տալ Բորիսին, սուրը նրա սիրտը խրելով։

Կողոպտել մեռածներին, սպանել վիրավորներին, նույնիսկ թշնամուն—ռուսները համարում էին ամոթալի, պիղծ ու անբնական գործ։ Բորիսի սպանության այս մանրամասնությունները շարադրելով՝ հեղինակը նպատակ է ունեցել ուժեղացնել Սվյատոպոլկ «Նզովյալի» և վարձկան, զազրելի մարդասպաննե-

րի բացասական բնութագիրը։ Ասված է, որ Սվյատոպոլկը գործում էր սատանայի սադրանքով։

«Պատմության» երրորդ մասը պատմում է Մուրոմի իշխանապատանի Գլեբի վշտի մասին, որին միաժամանակ են գուժում հոր մահվան և եղբոր դավաճանական սպանության բոթը և պատմում, թե ինչպես է Սվյատոպոլկը սպանել նրա հարազատ եղբորը՝ Բորիսին։

Յարոսլավ եղբայրը սուրհանդակի միջոցով նախազգուշացնում է Գլեբին, որպեսզի նա չգնա Սվյատոպոլկի մոտ։ «Մի գնա եղբայր իմ, հայրդ վախճանվեց, իսկ եղբորդ սպանեց Սվյատոպոլկը»։

Այնուհետև մեջ է բերված Գլեբի սրտաճմլիկ ողբը հոր և Բորիս եղբոր վրա։ Գլեբը համեմատում է իրեն հասկի հետ, որը հնձում են և չեն թողնում, որ հասնի. խաղողի վազի հետ, որը չորանում է, նախքան պտուղ տալը, մի անմեղ գառան հետ։ Գլեբը նույնպես պատրաստվում է նահատակ դառնալու։ Սվյատոպոլկ «նզովյալի» կողմից կաշառված Գլեբի խոհարարը, որի անունն էր Գորյասեր, տորքերի ցեղից, խոհանոցի մեծ դանակով մորթում է Գլեբին ինչպես մի գառնուկ, ինչպես անարատ, մաքուր և անուշաբույր մի ողջակեզ։

«Պատմության» չորրորդ մասում գլխավոր գործող հերոսը Յարոսլավն է։ Նա վրեժխնդիր է լինում իր Բորիս ու Գլեբ եղբայրների սպանության համար։ Ալտա գետի վրա, ուր սպանվել էր Բորիսը, հանդիպում են իրար Յարոսլավի և Սվյատոպոլկի զորքերը։ Վերջինս բազմաթիվ պեչենեգներ էր կանչել, բերել ռուսաց հողը։

«Դաժան էր կռիվը», երեք անգամ իրար հանդիպեցին հակառակորդների զորքերը։ Երեկոյան դեմ Յարոսլավը հաղթեց, իսկ Սվյատոպոլկ նզովյալը փախավ։ Այստեղ դևը մտավ նրա ընդերքը. թուլացան նրա ոսկորները այն աստիճան, որ նա չկարողացավ հեծնել իր ձին և նրան պատգարակով տարան։ Լյախերի (լեհերի) ու չեխերի հողերի մեջ, ամայի դաշտում, «Սվյատոպոլկը փչեց իր հոգին»։ Պատժվեց աստծուց իր գործերի համար, զրկվելով ոչ միայն իշխանությունից, այլ և կյանքից, իսկ հանդերձյալ աշխարհում նրան սպասում էին գեհենի հավիտենական տանջանքները։ Նրա գերեզմանից մինչև այժմ էլ գարշահոտություն ու ժահահոտ է գալիս «ի ցույց և ի խրատ ամենայն մարդկանց»։

«Պատմության» հինգերորդ և վերջին մասը նվիրված է Բորիսի ու Գլեբի գովասանությանը, նրանց բնութագրությանը և նրանց շիրիմների վրա տեղի ունեցած հրաշագործությունների հիշատակությանը։

Բորիսը թաղվել է Վիշգորոդում, ուր գտնվում էր Կիևի իշխանի պալատը։ Յարոսլավի հաղթանակից հետո այնտեղ փոխադրեցին նաև Սմոլենսկու հողում սպանված Գլեբի մարմինը։

Երբ նրա գերեզմանի վրա տեսել են մի բոցավառ սյուն, երբեմն մոմեր էին վառվում և լսելի էր լինում հրեշտակների երգեցողությունը։ Դրա համար էլ նրա գերեզմանը անհայտ չմնաց։

Փառաբանելով ու գովերգելով եղբայրներին, հեղինակը տարակուսում է, թե ինչպես անվանի նրանց, հրեշտակ երկնային, թե՞ հողեղեն արարած, թագավո՞ր, թե՞ հասարակ մարդիկ։

Բորիս ու Գլեբ եղբայրները «կուռ վահան» ու երկսայրի սուրն են ռուս երկրի, նրանց օգնությամբ է, որ ռուս իշխանները հաղթում են իրենց թշնամիներին, օտարազգի զավթիչներին և կասեցնում «սատանի ցնցումները», այսինքն իշխանների երկպառակությունները։

«Պատմությունը» իր ժամանակի համար շատ նշանավոր ու գեղեցիկ մի գեղարվեստական երկ է։ Նա ուրույն է և խիստ տարբեր Բյուզանդիայում մշակված վարքագրական ոճից։ Ձևականորեն պահելով վարքագրական գրականության շարքը՝ այս «Պատմությունը» հիմնականում քաղաքական և զինվորական վիպական մի պատմվածք է։ Նրա գլխավոր իդեան ռուս երկրի միասնության հաստատումն է և իշխանների ներքին երկպառակությունների ու եղբայրական կռիվների դատապարտումը։

Այստեղ Բորիսի և Գլեբի գերեզմանների վրա կատարվող հրաշքների հիշատակություններն ու Սվյատոպոլկի կողմից ռուսաց երկիրը ցնցելու և սատանայի դրդմամբ չարիքներ գործելու հանգամանքների ընդգծումներն են միայն, որ այս «Պատմությանը» կրոնական-վարքաբանական երկի բնույթ են տալիս։

Ռուս «Վարքաբանությունների» հերոսների գերակշիռ մասը ոչ թե ճգնավորներն ու մենակյացներն են, որոնք մտածում են միայն իրենց հոգու փրկության մասին, այլ աշխարհիկ մարդիկ՝ ֆեոդալական գործիչներ և զորավարներ, ինչպես օրինակ՝ Ալեքսանդր Նևսկին (XIII դար), Դմիտրի Դոնսկոյը (XIV դար),

որը մեծ հռչակ էր վաստակել իր խիզախ պայքարով ռուս երկրի թշնամիների դեմ և այլն։

Դա է ռուս վարքաբանության էական տարբերությունը բյուզանդական վարքագրություններից (օրինակ՝ «Ալեքսեյ աստծու մարդու մասին» «Ծուռ Անդրեյի մասին» և այլն)։

Նեստորի գրած՝ «Ընթերցված լուսահոգի մարտիրոսներ Բորիսի ու Գլեբի մասին» երկը գեղարվեստական տեսակետից սակավ հետաքրքիր է։ Նա հասել է մեզ 30 գրչագիր օրինակով։ Հեղինակը՝ Նեստորը ավելի մոտ է այն սխեմային, որով կառուցվում էին վարքաբանությունները։ Նա խոսում է եղբայրների բարեպաշտ ծնողների մասին, որոնք սիրում էին հոգեփրկիչ աստվածային գրքեր կարդալ։ Անցյալի պատմական կոնկրետ գծերը և Վլադիմիր իշխանի կենդանի կերպարը «Ընթերցվածի» մեջ նսեմացած են։ Բայց շատ օրիգինալ է Նեստորի, իբրև ֆեոդալական պատմագրի այն տեսակետը, որով նա Բորիսին ու Գլեբին ռուսական պետության հովանավորներն է համարում։

Նեստորը գտնում է, որ համաշխարհային պատմության մեջ բախվում են երկու սկզբունք՝ չարն ու բարին։ Սատանան դրդեց Ադամին ու Եվային մեղք գործել։ Դրա համար նրանք արտաքսվեցին դրախտից, իսկ նրանց սերունդները, երբ երկրպագեցին կուռքերին, հեթանոս դարձան։ Աստված օգնեց Վլադիմիրին Քրիստոսի վարդապետությամբ լուսավորել ռուս երկիրը։ Քրիստոնեական եկեղեցու գիրկը հրավիրվածների մեջ ռուս ժողովուրդը վերջինն էր։ Իբրև այդպիսին, իբրև կրտսերը բոլոր քրիստոնյա ժողովուրդների մեջ, միաժամանակ և նշանավորն իր հզորությամբ, ռուս ժողովուրդը ձգտում է հասնել մյուս քրիստոնյա ժողովուրդներին։ Այդ բանը դուր չի գալիս սատանային։ Վլադիմիրի ընտանիքում, իբրև «երկու լուսավոր աստղ», փայլում էին Բորիսն ու Գլեբը։ Վրեժ լուծելով Վլադիմիրից, որը մկրտությամբ լուսավորեց ռուս երկիրը, սատանան դրդում է Սվյատոպոլկին սպանել Բորիսին ու Գլեբին, կարծելով, որ Վլադիմիրի որդիների մեջ սկսվող երկպառակությունները կկործանեն ռուս երկիրը և դրա հետ միասին կգա քրիստոնեության վախճանը։ Բայց Բորիսն ու Գլեբը չեն ենթարկվում սատանայի նենգություններին և անձնական հերոսական մահով հաստատում են, որ բարին է հաղթանակում և իշխում աշխարհի վրա։ Սատանայի դավադրությունները խորտակվում են։

Նեստորի հայացքները պետությունն ամբողջող քրիստոնեական կրոնի նշանակության և Կիևյան Ռուսիայի առաջավոր դերի մասին՝ բավականաչափ մոտ է միտրոպոլիտ Իլարիոնի հայացքներին։ Մյուս կողմից, նա մոտ է նաև Վլադիմիր Մոնոմախին, երբ դատապարտում է իշխանների երկպառակությունները, որոնք թուլացնում և ավերում են Ռուսիան։

Ի դեպ, նշենք, որ Վլադիմիր Մոնոմախը Բորիս և Գլեբ եղբայրների պաշտամունքի ջերմ հետևորդն է եղել։

Դարերի ընթացքում Բորիսն ու Գլեբը ռուս իշխող ֆեոդալական վերնախավի համար ոչ միայն առաջին ազգային սրբերն են համարվել, այլ նրանց մեջ մարմնավորվել է քաղաքական պարտքին հավատարիմ լինելու գաղափարը, որ առանձնապես կարևոր է։

2. ԿԻԵՎ ՊԵՉՈՐՅԱՆ ՊԱՏԵՐԻԿ

(„Киево-Печерский патерик“)

Ռուս ինքնուրույն սրբագրական գրականության հուշարձանների մեջ կան ոչ միայն ռուս «սրբերի» կյանքն ու նրանց գործերը փառաբանող երկեր, ինչպես օրինակ՝ «Ընթերցվածը» կամ «Պատմություն Բորիսի և Գլեբի», «Ֆեոդոսի Պեչորսկու վարքագրությունը», այլ և հատուկ ժողովածուներ «սուրբ» հայրերի մասին, որոնց նպատակն է փառաբանել ազգային սրբությունը։ Ռուսական ազգային այդ սրբությունը Կիև-Պեչորյան վանքն էր, որի պետական և քաղաքական նշանակության մասին արդեն ասվել է առաջին գլխում։

Մեր ձեռքն է հասել մի ժողովածու, որը կազմված է եղել Կիև-Պեչորյան վանքում և կոչված է «Կիև-Պեչորյան պատերիկ»։ Իր կազմությամբ պատերիկը բավականաչափ բարդ հուշարձան է։ Թեև նա կազմվել է XIII դարում, բայց նրա մեջ խոսվում է կրոնավորների ճգնակյաց կյանքի և XI—XIII դարերում տեղի ունեցած իրադարձությունների մասին. հենց այդ պատճառով էլ այս հիշատակարանը մենք կարող ենք վերագրել Կիևյան Ռուսիայի գրականության։

Ժողովածուն բաղկացած է զանազան պատմվածքներից, որոնց նպատակն է գովերգել ու փառաբանել Կիև-Պեչորյան վանքը, որն այն ժամանակ ուներ պետական խոշոր նշանակություն և կարևոր դեր էր խաղում երկրի քաղաքական կյանքում։

Հիմնականում այս պատմվածքները բաժանվում են երկու խմբի. 1. Վլադիմիրյան եպիսկոպոս Սիմոնի Թղթերը Պոլիկարպին, որը Կիև Պեչորյան վանքի կրոնավորներից էր և 2. հիշյալ Պոլիկարպի Թղթերը Կիև-Պեչորյան վանքի վանահայր Ակինդինին։

Պոլիկարպ կրոնավորն ուզում է ստանալ Սուզդալյան Յուրևայի եպիսկոպոսի աթոռը և գործում է իր հովանավորուհի Վերխուսլավա (մկրտության անունը՝ Անաստասիա) իշխանուհու միջոցով, որի ամուսինը հայտնում է Պոլիկարպի խնդիրը Վլադիմիրի եպիսկոպոս Սիմոնին։ Այս վերջինն իբր թե զայրանում է փառամոլ վարդապետի վրա, գրում է նրան պատասխան Թուղթ, համոզում է նրան մնալ վանքում. «հասկացիր, ինչպիսի փառք ու պատիվ ունի այն վանքը։ Ամաչիր, զղջա և սիրիր հանգիստ ու անխռով կյանքդ, որին կոչել է քեզ տերը»։ Այնուհետև Սիմոնը գրում է, որ ինքը ուրախ կլիներ թողնել Վլադիմիրի եպիսկոպոսությունը և այդ փառքն ու պատիվը ոչինչ կհամարեր, «միայն թե իբրև մի ցից տնկված մնար դարպասի ետևը, իբրև աղբ թափված մնար Պեչորյան վանքում, կամ դառնար մեկն այն աղքատներից, որոնք ողորմություն են խնդրում մայր վանքի սուրբ դռների մոտ»։ Ապա իրար հետևից շարադրվում են մի շարք պատմվածքներ այն հրաշքների մասին, որոնք տարբեր ժամանակներում իբր թե տեղի են ունեցել Կիև-Պեչորյան վանքում։

Կիև-Պեչորյան պատերիկի պատմվածքները արտացոլում են ոչ միայն ճգնակյաց վանականների, այլ և վանքի հետ առնչություն ունեցող մի քանի աշխարհիկ և պատմական գործիչների վարքն ու բարքը։

Այսպիսով, Պեչորյան պատերիկը կազմվել է XI դ. ոչ վաղ արդեն պատրաստի հիշատակարաններից։ Հետագայում, XIV դ., նա լրացվել է, ներառնելով Պեչորյան վանքի հիմնադիրներից մեկի՝ Թեոդոսի Պեչորսկու վարքը։

Այդ հիշատակարանն ունի երկու խմբագրություն. մեկը՝ հնագույնը պատկանում է 1406 թ. և Տվերի եպիսկոպոս Արսենիի անունով կոչվում Արսենյան խմբագրություն, իսկ մյուսը, որ խիստ տարբերվում է վերջինից, պատկանում է Պեչորյան վանքի կրոնավոր Կասյանին և վերաբերվում է 1462 թ.։

Խմբագրություններից ամենից տարածվածը Կասյանականն է։ Սա սկսվում է Պեչորյան վանքում եկեղեցու հիմնադրության պատ-

մությամբ, ապա զետեղված է մի զրույց այն մասին, թե ինչու վանքը Պեչորյան է կոչվում, մանրամասն տրված է Թեոդոսի Պեչորսկու վարքը։ Այս բոլորից հետո՝ գալիս են մի շարք նյութեր՝ Պեչորյան առաջին կրոնավորների պատմությունը, Սիմոն եպիսկոպոս Վլադիմիրսկու Թուղթը Պոլիկարպին և վերջինիս Թուղթը Ակինդինոսին։

Բերում ենք այդ պատմվածքներից մի քանիսի բովանդակությունը։

ա) Պեչորյան Աստվածածնի եկեղեցու հիմնադիր՝ Շիմոնը

(Պոլիկարպի Թղթերից)

(Об основателе Печерской церкви богородицы Шимоне. Из посланий Симона к Поликарпу)

Վարյագ Շիմոնը հոր մահից հետո աքսորված եղավ թողնել իր հայրենիքն ու փախչել Ռուսիո իշխան Յարոսլավ Իմաստունի մոտ, որի դրուժինայի մեջ մի ժամանակ ծառայել էր նաև նրա հանգուցյալ հայրը։

Յարոսլավը նրան ուղարկում է ծառայության իր որդու՝ Վսեվոլոդի մոտ, որը սիրեց նրան ու ավագի կոչում տվեց։ Իզյասլավ Յարոսլավիչի օրոք, երբ պոլովցիները հարձակում գործեցին ռուս երկրի վրա, Յարոսլավի երեք որդիները՝ Իզյասլավ, Վսեվոլոդ և Սվյատոսլավ Յարոսլավիչները միացրեցին իրենց զորքերն ու արշավեցին պոլովցիների վրա։ Շիմոնը նրանց հետ էր։ Նրանք մտնում են Պեչորյան վանքը Անտոնի վանահոր մոտ և խնդրում նրա օրհնությունը։ Սուրբ ծերունին նախազգուշակում է, որ նրանք պարտություն են կրելու պոլովցիներից։ Շիմոնն ընկնում է նրա ոտքներն ու աղերսում ազատել իրան այդ արհավիրքից։ Այն ժամանակ Անտոնիյն ասում է. «Շատերը կզոհվեն, երբ դուք ձեր թշնամիների առաջ փախուստի կդիմեք, ձեզ կկոխկռտեն, վերքեր կհասցնեն ու ջրի մեջ կխեղդեն։ Բայց դու, Շիմոն, կազատվես ու կթաղվես այն եկեղեցում, որն այստեղ պիտի կառուցվի»։

Ալտա գետի վրա, 1068 թվին, շատ ռուսներ կոտորվեցին պոլովցիների դեմ մղված մարտերում։ Դա առաջին ճակատամարտն էր պոլովցիների դեմ։ Վիրավոր Շիմոնը ընկած էր պատերազմի դաշտում։ Եվ ոչ մի կենդանի էակ նրա շուրջը։ Նա սարսափեց։ Շարժվել չէր կարող։ Նա նայեց դեպի երկինքն ու

հանկարծ մի հսկայական, գեղեցիկ եկեղեցի տեսավ, որը նա մեկ անգամ էլ էր տեսել ծովի վրա, փոթորկի ժամանակ, երբ նա թողեց իր հայրենիքն ու փախավ Ռուսիա։ «Փրկիր ինձ, տեր, աղոթքներովը քո մոր և բարեկրոն Անտոնիի ու Ֆեոդոսիի» (սրանք Կիև-Պեչորյան վանքի հիմնադիրներն են) աղերսում է Շիմոնը։

Նույն վայրկյանին մի ինչ որ գերբնական ուժ դուրս է քաշում նրան ալիքների միջից․ Նա ապաքինվում է վերքերից, գալիս Կիև-Պեչորյան վանքը, պատմում իր երկու տեսիլքները՝ իր աղոթքի հրաշքով փրկվելու և ապաքինվելու մասին։

Նա նվիրում է Անտոնիին իր ծանրաքաշ ոսկյա գոտին, իբրև «չափ ու հիմք» իր տեսած տաճարի, քանի որ վիրավորված, դաշտում պառկած ժամանակ, երբ նա տեսիլքի մեջ տեսավ հոյակապ տաճարը՝ Շիմոնը մտքի մեջ հաշվեց նրա բարձրությունը, լայնքն ու երկայնքը, ելնելով իր գոտու երկարությունից, չափ ընդունելով իր գոտին։ Հայր Անտոնին վճռում է կառուցել տաճարը Շիմոնի տեսած տաճարի նման և նույն չափով։ Գոտուց զատ՝ Շիմոնը նվիրում է հ. Անտոնիին նաև ոսկյա պսակը։ Այդ երկու թանկարժեք իրերը՝ գոտին ու պսակը Շիմոնը բերել էր Սկանդինավիայից և հանել էր Հիս. Քրիստոսի խաչարձանի վրայից, որը կանգնել էր դեռ ևս նրա հայրը։

Շիմոնի ցուցումներով, 1073 թվին, Պեչորյան վանքում կառուցվում է Աստվածածնի տաճարը։ Ինքը Շիմոնը հրաժարվում է լատինական կրոնից և, ընդունելով ուղղափառություն կոչվում է՝ Սիմոն։ Նա հարուստ նվերներ է տալիս վանքին և առաջինն էր, որ թաղվեց նոր եկեղեցում։ Սիմոնը ծառայում էր Մոնոմախովիչներին, իսկ նրա Գեորգի որդուն Վլադիմիր Մոնոմախն ուղարկեց իր որդի Յուրիյ Դոլգորուկու մոտ իբրև հազարապետ։

Սրանից հետո գալիս է այն պատմությունը, թե ինչպես Կիև են ժամանում չորս հույն ճարտարապետներ, որոնք իրենց հետ բերում են շատ ոսկի և օգնում են շինելու Աստվածածնի Պեչորյան եկեղեցին։ Անտոնին դժվարանում էր, թե որտեղ պիտի շինել եկեղեցին, բայց աստված երազի մեջ ցույց է տալիս այն վայրը, որտեղ պիտի կառուցվի, ասելով՝ «ամբողջ գետինը չոր կլինի, իսկ այն տեղը, որտեղ պիտի կանգնի եկեղեցին, շաղով պատած»։

Տեղը որոշելուց հետո Անտոնին վերցնում է Շիմոնի նվիրած ոսկի գոտին և չափում նրանով տաճարի ենթադրական լայնքը, երկայնքը և բարձրությունը։ Աստվածածնի տաճարը շինվել է այն ճարտարապետական նախագծով, որը երկու անգամ տեսել է երկնքում իր տեսիլքի մեջ վարյագ Շիմոնը։ Տաճարի պատերը մնում են առանց որմանկարի ու գեղարվեստական նախշերի, և միայն տասը տարի անց Ցարգրադից նկարիչներ են գալիս տաճարը նախշելու համար։ Տաճարը նրանց շատ մեծ է թվում, որն, ըստ երևույթին, նախատեսնված չի եղել պայմանագրով։ Նկարիչները չեն ուզում աշխատել ոչ ձեռնտու պայմաններով, նավ են նստում և ուղեվորվում Դնեպրի վրայով դեպի տուն։ Սակայն կատաղի փոթորիկը նրանց երկու անգամ հետ է դարձնում։ Նավակները լողում էին հոսանքին հակառակ, դեպի վեր։ Նկարիչները հասկանում են, որ այդ հրաշքը Աստվածածնի կամքի արտահայտությունն է և ձեռնամուխ են լինում տաճարը նախշելու աշխատանքներին։ Երբ նրանք աշխատում էին, հրաշալի և շլացուցիչ մի լույս ճաճանչեց Աստվածածնի դեմքից, իսկ նրա բերանից դուրս թռավ աղավնին ու սկսեց ճախրել տաճարի գմբեթի տակ։

Աստվածածնի Պեչորյան տաճարի կառուցման այս լեգենդի մեջ ընդգծվում են վանքի կուլտուրական կապերը, մի կողմից՝ Արևմտյան Եվրոպայի՝ Սկանդինավիայի, մյուս կողմից էլ Բյուզանդիայի հետ։

Շատ հետաքրքրական է մեկ ուրիշ Թուղթ։ Դա պոլիկարպի Թուղթն է Ակինդինին, որից մենք իմանում ենք, որ Վլադիմիր Մոնոմախը և նրա հայրը՝ Վսեվոլոդ Յարոսլավիչը, պաշտպանում էին ոչ միայն վարյագ եկվորներին, առենք՝ Սիմոնին, այլև կապ ունեին հայ բժիշկների հետ, որոնք մշտապես բնակվում էին Կիևում և նույնիսկ մրցում հիվանդներին դարմանելու արվեստի մեջ Կիև-Պեչորյան վանքի վանականների հետ։

բ) Պեչորյան վանքում գտնվող սուրբ կրոնավորների մասին։ Ագապիտ բժիշկը և հայը

(О черноризуах святых, бывших в Печерском монастыре об Агапите лекаре и об армянине)

Կիև-Պեչորյան վանքում ապրում էր ծեր կրոնավոր Ագապիտը, որը հիվանդներ էր բուժում խոտաբույսերով կամ զանա-

ղան բանջարեղենից պատրաստած սովորական խորտիկներով։ Բացի դրանից, Ագապիտը աղոթում էր իր հիվանդների համար։ Նա երբեք դրամ չէր վերցնում նրանցից և ուխտել էր երբեք դուրս չգալ վանքի պարիսպներից։ Ագապիտի մոտ հիվանդներ էին գալիս քաղաքից, և շատերին էր նա բուժում։ Կիևում այդ ժամանակ ապրում էր ինչ որ մի հայ, որը մրցում էր Ագապիտի հետ։ Նրա մասին այսպես է ասված. «Նա հայ էր ծագումով ու կրոնով, հմուտ էր բուժման մեջ. Նրա նմանը դեռ չէր եղել մինչ այն։ Հիվանդին տեսներ թե չէ՝ հիվանդությունը կհասկանար ու կասեր մահվան օրն ու ժամը։ Եվ երբեք արդեն չէր փոխվի նրա խոսքը։ Այդ հիվանդներին այլևս ոչ մի կերպ չէր բուժում»։

Մի օր վանք են բերում մի անհույս հիվանդ, որը ամենաականավոր մարդն էր համարվում իշխան Վսեվոլոդ Յարոսլավիչի մոտ։ Հայ բժիշկը հրաժարվում է նրան բուժել, հուսահատեցնում է նրան, ասելով, որ նա ութերորդ օրը կմեռնի, իսկ Ագապիտը բժշկեց նրան կանաչեղեն կերակրով, որը ինքը պատրաստում էր իր համար։ Այս լուրը տարածվեց ամբողջ ռուս երկրով մեկ։ Հայ բժիշկը դիտմամբ ուղարկում է Ագապիտի մոտ մահվան դատապարտված մի հիվանդի, որին նա վաղօրոք թույն էր խմացրել, որպեսզի նա կրոնավորի մոտ գալով՝ մեռնի նրա աչքի առաջ։ Բայց ագապիտը մեռնողին կերակրում է, աղոթում և բժշկում դժբախտին։ Հայ բժիշկը Ագապիտին փորձելու համար թույն է ուղարկում։ Ագապիտը խմում է թույնը, բայց չի վնասվում։ Ապա հիվանդանում է ինքը, իշխան Վլադիմիր Վսեվոլոդովիչ Մոնոմախը։ Խնամքով ու փութաջանությամբ բուժում էր նրան հայը, սակայն առանց որևէ հաջողության։ Ուղարկեցին վանահոր մոտ, որպեսզի նա ստիպի Ագապիտին գնալ Չերնիգով քաղաքը, որտեղ այդ ժամանակ իշխում էր Մոնոմախը։ Երբ վանահայրը կանչում է Ագապիտին և կարգադրում նրան մեկնել Չերնիգով, նա պատասխանում է. «Եթե ես իշխանի մոտ գնամ, ուրեմն բոլորի մոտ էլ պիտի գնամ։ Չեմ կարող ես հանուն մարդկային փառքի վանքի դարպասից դուրս գալ, քանի որ երդվել եմ Աստծու և մարդկանց առջև, որ չպիտի կոխեմ վանքի շեմքը մինչև վերջին շունչս։ Եթե բռնությամբ ինձ ուղարկես, ապա ես կգնամ ուրիշ երկիր և կվերադառնամ միայն այն ժամանակ, երբ փորձանքն անցած կլինի»։ Իշխանի ուղարկած մարդը տեսնելով, որ չի կարող համոզել

համառ ծերունուն, սկսեց աղերսել նրան, որպեսզի նա գոնե գեղորայք ուղարկի հիվանդ իշխանի համար։ Վանահոր ստիպումով Ագապիտը իր բուսեղեն կերակրից բաժին հանեց հիվանդին։ Իշխանը կերավ և իսկույն առողջացավ։

Առողջանալով՝ Մոնոմախն ինքը շտապում է գալ վանք, որ տեսնի իրեն ապաքինողին և առատ վարձատրի նրան։ Իսկ Ագապիտը փառքի հետևից չէր ընկնում, դրա համար էլ նա թաքնվում է։ Ագապիտի համար բերված նվերները իշխանը տալիս է վանահորը։ Բացի դրանից, Վլադիմիր Մոնոմախը իր բոյարներից մեկին ուղարկում է Ագապիտի խուցը բազմաթիվ նվերներով։ Այս բոյարինը գտնում է Ագապիտին իր խցի մեջ միայնակ և դնում է նրա առաջ իշխանական նվերները։—«Օ՜, զավակս,—գոչեց ծեր կրոնավորը,—երբեք ոչ ոքից ոչինչ չեմ վերցրել ես։ Մի՞թե պիտի դրժեմ ես իմ ուխտը և կորցնեմ հոգիս ոսկու համար, որ ես չեմ էլ խնդրել»։ Բոյարինը աղերսում է վանականին չվշտացնել իշխանին և նրան մխիթարելու համար ընդունել նվերները թեկուզ աղքատներին բաժանելու համար։ Ագապիտն առաջարկում է, որ նվերներն աղքատներին բաժանի ինքը, իշխանը։ Բերած նվերները նա դուրս է հանում խցից ու թողնում վանքի դարպասի մոտ, իսկ ինքը հեռանում ու պահվում։ Իշխանը լսում է ծեր կրոնավորին և բոլոր նվերները բաժանում չքավորներին։

Մոնոմախի հետ տեղի ունեցած միջադեպը մտցված է նրա համար, որպեսզի ավելի ցայտուն ընդգծվի Ագապիտի անշահախնդրությունն ու սկզբունքայնությունը։ Ռամիկ թե իշխան, միևնույն է նրա համար, ոչ ոքի սիրուն նա չի լքում վանքի պատերը, նա բժշկում է մարդկանց աստծու հրամանով, դարմանում է նրանց աղոթքով, խոտաբույսերով, մինչև իսկ իր պարզ կերակուրներով։ Հիվանդին չտեսած նա դեղեր է ուղարկում նրան, և նրա դեղորայքը կենսատու են ու բուժիչ հիվանդների համար։ Ահա թե ինչ մոգական զորություն ունի վանքը և հավատն առ աստված։

Վանքը մեծարելու և փառաբանելու տենդենցը, ինչպես նաև ապացուցելու այն, որ հիվանդների բուժման գործը պետք է կենտրոնացվի այդ սրբավայրերում, արվում է շատ բացահայտ ու շեշտակի։ Մասնագետ բժիշկը, իհարկե, պետք է անարգվի և պարտություն կրի Ագապիտի կողմից ոչ թե այն բանի համար, որ նա հայ է, այլ որովհետև նա աշխարհիկ մարդ է և քաղաքի

մասնավոր բժիշկ։ Նա պարսավանքի պիտի ենթարկվի և կամ մտնի վանք, որովհետև ամեն տեսակի տաղանդները, աստղերի նման պետք է շողան միայն վանքում։

Պատմության վերջում մենք իմանում ենք, որ հայը սկսում է մեծ հետաքրքրություն ցուցաբերել դեպի Ագապիտը այն օրվանից, երբ վերջինիս հաջողվում է բուժել նրա ազդեցիկ հիվանդներին և նույնիսկ Վլադիմիր Մոնոմախին։ Բժիշկն սկսում է այցելել վանքը և մրցակցել Ագապիտի հետ «հեքիմական գաղտնիքների մեջ», այսինքն՝ բժշկական գիտությունների մեջ։ Եվ առանձնապես հետամուտ է լինում այն հարցի պատասխանին, թե՝ «ինչ դարմանով պետք է բուժել այս կամ այն ցավը»։ Բժշկի հարցերը միանգամայն տրամաբանական են։ Հիշեցնենք, որ ազդեցիկ հիվանդները, երկուսն էլ բուժվեցին հեռակա, առանց Ագապիտի կողմից քննվելու, նրանց միայն դեղորայք և վանքի կերակուր ուղարկելով։

Ագապիտը, այդ համառ ծերուկը, գուցե և տիրապետում էր ժողովրդական բժշկության ինչ-ինչ գաղտնիքներին, բայց նա, ինչպես ասում է ռուսը՝ «Իր բանը գիտի», երբեք իր գաղտնիքները ուրիշին չի ասել և իրեն հարց ու փորձ անող հայի բոլոր հարցերին պատասխանում է, որ աստված է բուժում իր հիվանդներին։ Մեկ անգամ, երբ հայ բժշկի ներկայությամբ Ագապիտի մոտ հիվանդ բերեցին և նա տվեց նրան իր սովորական «դարմանը», հայը նայեց և ասաց. «Սա մեր դարմաններից չէ, բայց, կարծում եմ, որ դա բերված պիտի լինի Ալեքսանդրիայից»։ Ագապիտը ծիծաղեց նրա տգիտության վրա։

Հայ բժիշկը հաճախակի էր այցելում Պեչորյան վանքը, և դա համընկնում է այն ժամանակի հետ, երբ Ագապիտը հիվանդանում է։ Հայը վերցնելով Ագապիտի ձեռքը, ըստ երևույթին զարկերակը շոշափելու համար, նախազգուշացնում է, որ նա երրորդ օրը կմեռնի. «Իսկ եթե իմ խոսքը չհաստատվի, ես ինքս ձեր վանքում կրոնավոր կդառնամ»։ Ագապիտը վիճում է նրա հետ և ասում, որ ինքը երեք ամսից կմեռնի։ Իրավ, որ նա վախճանվեց երեք ամսից հետո։ Հայը ներկայանում է վանահորը և խնդրում, որ նրան կուսակրոն ձեռնադրեն։ «Ես խոստացել եմ Ագապիտին կրոնավոր դառնալ,— ասաց նա,— երանելի Ագապիտը տեսիլքի մեջ երևաց ինձ և ասաց. «Դու խոստացար կրոնավոր դառնալ, եթե խոստումդ չկատարես, կմեռնես և հոգիդ կկորսվի»։ Հայը կրոնավոր է ձեռնադրվում, փոխարինելով հան-

գուցյալ Ագապիտին։ Այստեղ, ցավոք, պատմությունն ընդհատվում է։

Հայտնի է միայն, որ հայ բժշկի մահից հետո՝ նա սրբերի շարքն է դասվել։ Նույնիսկ այժմ Կիև-Պեչորյան վանքի այրում, ի թիվս բազմաթիվ «հրաշքների», հաճախորդներին ցույց են տալիս «սուրբ» հայ-բժշկի ամփոփման վայրը։

Ըստ երևույթին Կիև-Պեչորյան վանքը ոչ միայն հավաքում էր իր հարկի տակ կուլտուրայի առավել տաղանդավոր գործիչներին, այլև «հոգին» փրկելու խոստումներից զատ նրանց նաև ինչ որ ռեալ ձեռնտու պայմաններ էր խոստանում։

գ) Պատկերագիր-կրոնավոր Ալիմպին
(Об иконописце-монахе Алимпии)

Այստեղ պատմվում է այն մասին, թե ինչպես պատկերագիր կրոնավորը նկարել է 7 սրբի նկար, բայց այդ պատկերները, ինչպես հետագայում պարզվում է, «աստվածանկար» են դուրս գալիս։

Ահռելի հրդեհի ժամանակ Կիևի Պոդոլ թաղամասում (քաղաքի գետափնյա, հարթավայր թաղամասն է) այրվում են բոլոր շենքերը, ներառյալ և եկեղեցին, բայց 7 սրբերի պատկերները զերծ են մնում կրակից։ Վլադիմիր Մոնոմախը իմանում է այդ բանը, վերցնում է աստվածածնի այդ սուրբ պատկերներից մեկը և ուղարկում Սուզդալյան-Ռոստով։ Պատկերը կպցնում են եկեղեցու պատին, իսկ երբ եկեղեցին հնանում է ու փուլ գալիս՝ սուրբ պատկերը կրկին անվնաս է մնում։ Սուրբ պատկերը տեղափոխում են փայտաշեն մի եկեղեցի, որը նույնպես այրվում է, իսկ սուրբ պատկերը դարձյալ անվթար է մնում։

13. ԿԻԵՎՊԵՉՈՐՑԻ ԱԲԵՂԱ ԳՐԻԳՈՐ-ՀՐԱՇԱԳՈՐԾԸ
(Об киевопечерском иноке Григории-чудотворце)

Գրիգորը Դնեպրի ափին ինչ որ կեղտոտ անոթ էր լվանում։ Նրա մոտով անցնում էին եղբայրներ Ռոստիսլավ Վսեվոլոդովիչ և Վլադիմիր Վսեվոլոդովիչ Մոնոմախը իրենց դրուժինայով։

Պոլովցիների վրա արշավելուց առաջ (1093 թիվ) Մոնոմախը գալիս է Կիև-Պեչորյան վանք օրհնություն խնդրելու։

Ռոստիսլավի դրուժինայի պատանիները ծաղրում են Գրիգորին, որը նեղանալով նրանցից ասում է. «Դուք բոլորդ էլ ջրի տակը կանցնեք ձեր իշխանի հետ միասին»։ Ռոստիսլավը լավ լողորդ էր. նա բարկանում է և հրամայում իր պատանիներին կապոտել Գրիգորի ձեռք ու ոտքը և քարը վզից կապելով՝ նրան ջուրը նետել։ Սակայն ջրախեղդ Գրիգորի մարմինը ինչ-որ հրաշքով տեղափոխված էր նրա խուցը։ Վլադիմիր Մոնոմախը գնում է վանք մարտից առաջ օրհնություն ստանալու, իսկ Ռոստիսլավը բարկացած էր և չուզեց վանք մտնել։ Ճակատամարտի ժամանակ ռուսները պարտություն են կրում պոլովցիներից և փախուստի դիմում։ Վլադիմիրը անցնում է Ստուգնա գետը և ազատվում, իսկ երիտասարդ Ռոստիսլավը խեղդվում է գետում իր բոլոր զինվորների հետ մեկտեղ։

4. ԱՆՁԱՎԱՓՈՐ ՄԱՐԿՈՍԸ

(О марке могильщине)

Մարկոս կրոնավորը անձավափոր էր։ Կրոնավորներին թաղում էին ընդերկրյա խորշերում, քարանձավներում, որտեղ գետինը շատ պինդ է։ Մի անգամ քարանձավը փորելիս նա հոգնում և չի կարողանում աշխատանքը վերջացնել։ Բերում են ննջեցյալին, բայց նրա դագաղը չէր տեղավորվում գերեզմանի մեջ։ Կրոնավորները հանդիմանում են Մարկոսին գերեզմանը նեղ փորելու համար։ Հանձն առնելով իր մեղքը՝ Մարկոսը թախանձանքով դիմում է ննջեցյալին. «Ճիշտ է, եղբայր, տեղդ նեղ է, դե դու էլ մի քիչ սիղմվիր, մի կողմ քաշվիր, վերցրու յուղը և ինքդ քեզ օծիր»։ Ննջեցյալն ամեն ինչ կատարում է, ինչպես որ խնդրել էր Մարկոսը, և դագաղը տեղավորվում է նեղ քարանձավում։

Մեկ ուրիշ անգամ Մարկոսը դեռ չէր վերջացրել իր աշխատանքը, երբ բերին ննջեցյալին։ Դեռ շատ բան էր մնում անելու։ Մարկոսը դիմում է ննջեցյալի բարեկամին հետևյալ խոսքերով. «Խնդրիր ննջեցյալին, որպեսզի նա հարություն առնի և քիչ էլ ապրի։ Տեսնում ես, տեղը պատրաստ չէ։ Մի օր էլ թող ապրի, ապա առավոտյան մեռնի, երբ տեղը պատրաստ կլինի»։

Առավոտյան, երբ ամեն ինչ պատրաստ էր թաղման համար, կենդանացած ննջեցյալին ասացին, որ նորից մեռնի, և նա անխոս հնազանդվում է։

5. ՊՐՈԽՈՐ-ԹԱՅԼԱԿԵՐ ԿՐՈՆԱՎՈՐԸ

(О монахе Прохоре-лебеднике)

Պրոխոր կրոնավորը սնվում էր միայն թայլով (մի տեսակ բույս)։ Նա թայլից հաց էր պատրաստում, որ մեղրից էլ քաղցր էր, իսկ մոխիրը աղ էր դարձնում։

Այն ժամանակ, երբ մեծ իշխան Սվյատոպոլկ Իզյասլավիչի և Դավիթ Իգորևիչի միջև տեղի էին ունենում երկպառակություններ ու կռիվներ, ռուս երկիրն են ներխուժում պոլովցիների հրոսակախմբերը. բնակչությունը կողոպուտի էր ենթարկվում։ «Սաստիկ էր սովն ու անլսելի աղքատությունը՝ ռուսաց բովանդակ աշխարհի վրա։ Մարդիկ մեծ վշտի մեջ էին և տանջվում էին սովի ու պատերազմի արհավիրքներից. չունեին ոչ ցորեն, ոչ աղ»։

Շատ ռեալ են նկարագրվում XII դարի առաջին տասնամյակների դեպքերը, որոնք 1113 թվին վերջացան Կիևի բնակչության ստորին խավերի ապստամբությամբ։

Այդ բոլորով հանդերձ՝ դասակարգային կատաղի կռիվը, որ վերածվեց ժողովրդական հուժկու ապստամբության, Պատերիկում միակողմանի է նկարագրված։ Նկարագրության հեղինակը նպատակ է ունեցել բարձրացնելու Կիև-Պեչորյան վանքի հարգը։

Ժողովրդի համար այդ ծանր օրերին մեծ իշխան Սվյատոպոլկ Իզյասլավիչը սկսեց աղի առևտուր անել, այն էլ շատ բարձր գներով։ Կրոնավոր Պրոխոր-Թայլակերը սկսեց ժողովրդին աղ բաժանել. նա ձրի աղ էր բաշխում բոլոր նրանց, ովքեր գալիս էին Պեչորյան վանքը։ Այսպիսով աղի գինը շուկայում շատ է ընկնում։ Աղ վաճառողները, որոնք ուզում էին այդ օրերին հարստություն դիզել, գնացին Սվյատոպոլկի մոտ գանգատի, որ այդ կրոնավորը «բոլորին ձրի աղ է բաժանում, իսկ մենք դրանից աղքատանում ենք»։ Սվյատոպոլկը խոստանում է վաճառականներին խլել աղը վանքից։ Բայց, խորհրդակցելով իր խորհրդատուների հետ, Սվյատոպոլկը որոշում է չարաշահել վանքի աղով։ Նա խլում է վանքից ամբողջ աղը, բայց աղը հրաշքով մոխիր է դառնում։ Իշխանը զայրանում է և կարգադրում է թափել մոխիրը, որը Պրոխորի մեկ խոսքով նորից աղ է դառնում և կիևցիներն իրար մեջ են բաժանում։

Այս պատմության մեջ կենդանի կերպով արտացոլվում է Կիև-Պեչորյան վանքի և Կիևի մեծ իշխանի ու քաղաքի վաճա-

ականության միջև կատարվող մրցումը: Վառ գույներով ներկայացված է քաղաքի մասսաների ծանր, կախյալ դրությունը, ժողովրդի աղքատացումն ու տառապանքը կռիվների և երկպառակությունների ժամանակ:

Կիև-Պեչորյան Պատերիկում կան մի շարք նովելներ: Դրանց բոլորի թեմատիկան պատկերում է XI—XII դ. դ. պատմական իրադարձությունների կենտրոնում գտնվող Կիև-Պեչորյան վանքի պատմությունը: Պատերիկի մեջ բազմաթիվ տեղեկություններ կան այնպիսի պատմական իրադարձությունների մասին, որոնք բավականաչափ արտացոլված չեն տարեգրությունների մեջ կամ բոլորովին անհայտ են, օրինակ՝ մի պատմություն Նիկոլայ Սվյատոշի մասին, որը կուսակրոն էր ձեռնադրվել Կիև-Պեչորյան վանքում, կամ Մոյիսեյ Ուգրինի (Մովսես Հունգարացու) մասին, որը գերվել էր և տարվել Լեհաստան և այլն:

Պատերիկում հետաքրքրական տեղեկություններ կան ռուսների և պոլովցիների հարաբերությունների, ինչպես և վանքերի ու մեծ իշխանների փոխհարաբերությունների մասին: Այստեղ նկարագրված են իշխանական երկպառակությունները, եկեղեցական հեղինակի ըմբռնմամբ դասակարգային կռվի փաստերը, ժողովրդական դժգոհության արձագանքները և այլն:

Պատերիկից ենք իմանում, որ Կիևում հայկական և ասորական գաղութներ կային: Կան նաև կարևոր տեղեկություններ, որոնք բնութագրում են XI—XII դ. դ. Կիևյան Ռուսիայի տնտեսությունն ու կուլտուրան:

Հիմնվելով այդ պատմությունների վրա՝ կարելի է բավական վառ պատկերացում կազմել այն դերի մասին, որ խաղում էր Կիև-Պեչորյան վանքը ռուսաց պատմության մեջ:

XI դարի 60-ական թվականներին հիմնարկված այդ վանքը սահմանեց խիստ ճգնակեցական կանոններ, որոնք պահպանեցին իրենց ուժը նաև XII դարում: Այդ ժամանակաշրջանում բյուզանդական կրոնավորների բարոյական և կուլտուրական դեմքը միանգամայն նսեմացել էր:

Բյուզանդիայի միջազգային դրությունը XII դարում շատ խախուտ էր: Հարավից նրան ճնշում էին թուրքերը, իսկ հյուսիսից գրոհող քոչվորների հարձակումներից նրանց ազատում էր Կիևյան Ռուսիան: Այս կապակցությամբ Կիև-Պեչորյան վանքը, պաշտպանելով ռուս եկեղեցու ավտոնոմիան ու հեղինակությու-

նը, ավելի համարձակ է մտնում պայքարի մեջ հույների դրածու՝ միտրոպոլիտների հետ։ Կիև-Պեչորյան վանքը միջամտում էր երկրի քաղաքական գործերին։ Իշխանները, նույնիսկ Վլադիմիր Մոնոմախի նման հզոր իշխանը, ռազմարշավ մեկնելուց առաջ գալիս էին այս վանքի օրհնությունն առնելու։ Այստեղ էին հավաքվում իշխանները ժողովի և խորհրդակցությունների համար։

Պատերազմի դաշտում զոհված իշխանը, կամ ռազմական անհաջողությունների հանդիպածները, որոնք բավականաչափ չէին հարգել «Կիևի սրբություններն» ու կրոնավորներին, գրական ձևավորում էին ստանում այդ նովելլաների մեջ, նման այն պատմվածքին, որի մեջ նկարագրված է Ռոստիսլավի միջադեպը։

Ինքնըստինքյան հասկանալի է, որ վանքն այցելող բոլոր իշխանները իրենց հարուստ ներդրումներն էին անում կամ մեծ նվերներ տալիս վանահորը։

«Պատերիկներից» մենք իմանում ենք, որ մեծ ընծաներ է նվիրել վանքին ոչ միայն Վլադիմիր Մոնոմախը, այլ և վարյագ Շիմոնը։ Շիմոնի պատմության մեջ նույնիսկ ագիտացիա է մղվում նման նվիրատվություններ անելու, քանի որ դրանք ծախսվում էին եկեղեցիների շինարարության և տաճարի զարդարանքի վրա։

Շիմոնը ոսկի գոտին ու պսակը բերել է Սկանդինավիայից այն կաթոլիկ եկեղեցուց, որը շինել էր նրա հայրը։ Կաթոլիկներին, ինչպես տեսնում ենք պեչորցի հին կրոնավորի «Խրատից», թեև համարում են «պիղծ լատին», սակայն, ոսկին «հաչունի» և նման նվերները սուրբ մասունք էին դառնում վանքի համար։ Շիմոնի ոսկի գոտով փաթաթում էին հիվանդ Մոնոմախի մարմինը։ Շիմոնի մասին գրված նույն պատմությունից մենք իմանում ենք, որ վանքը որոշ կարյերա էր ստեղծում հարուստ նվիրատուների ժառանգների համար, ինչպես օրինակ Սիմոնի որդին Գեորգին նվիրաբերությունից հետո ծառայության է անցնում Վլադիմիր Մոնոմախի մոտ։

Վանքի կանոնադրությունը խիստ էր։ Տեր Ագապիտը, որ անվարձ բուժում էր բոլորին և սնվում բույսերով ու բանջարեղենով, երդվել էր դուրս չգալ սուրբ վանքից. Նա մի տիպիկ կրոնավոր է, XII դարի ճգնավոր։ Այդ կրոնավորների վարքով հպարտանում էին, նրանց գովաբանում էին և նրանց հռչակը տարածում։

Սակայն կրոնավորների վերնախավը կազմում էին հարուստ և ազդեցիկ մարդիկ՝ նախկին իշխաններ, բոյարներ, վաճառականներ ու զորավարներ, որոնք դեռ պահպանում էին դրսի աշխարհի հետ իրենց ազգակցական կապերը և նույնիսկ կարողությունը։ Աշխարհիկ գործերը օտար չէին նրանց սրտին, քաղաքականության մեջ նրանք մեծ եռանդ էին ցուցաբերում։ Իշխանի հաստատվելը Կիևի գահի վրա ու նրա հեղինակությունը մեծ չափով կախված էր Կիև-Պեչորյան վանքից։ Այդ հանգամանքը արտահայտվել է նաև Պատերիկի մեջ։ Մինչև 1115 թիվը Վլ. Մոնոմախը սերտ կապ էր պաշտպանում վանքի հետ, և նրա անունը հիշատակված է բազմաթիվ պատմվածքների մեջ։ Անգամ հասարակ վեղարավոր Ագապիտի խոսքը Մոնոմախի համար օրենք է։ Նա չի համարձակվում զանց առնել նրա հրամանը։ Շատ անգամ է ընդգծվում Վլադիմիր Մոնոմախի և նրա հոր՝ Վսեվոլոդի առատաձեռնությունը։

Միևնույն ժամանակ նրա վերաբերմունքը բացասական է Սվյատոպոլկ Իզյասլավիչի հանդեպ։ «Պրոխորի պատմության» մեջ Պոլիկարպը գրում է, որ «նա շատ բռնություններ գործադրեց մարդկանց վրա»։ Այդ ընչաքաղց իշխանը ծիծաղաշարժ է ներկայացված, նա «խլեց վանքից աղը, որպեսզի թանգ գնով վաճառի, իսկ աղը մոխիր դարձավ»։ Սվյատոպոլկին չփրկեց նույնիսկ այն հանգամանքը, որ նա 1108 թվին նախաձեռնեց վանքի հիմնադիր Ֆեոդոսիոսին «սրբոց շարքը դասելու» գործը։ Սվյատոպոլկի որդու՝ Մստիսլավի մասին Պոլիկարպը պատմում է, թե նա ինչպես է տանջել Ֆյոդոր կրոնավորին, որպեսզի իմանա, թե որտեղ է թաքված գանձը, կամ ինչպես է նա հարբած վիճակում նետահարել Վասիլի կրոնավորին։

Մեծ իշխանների գործունեության այսպիսի գնահատականը բացատրվում է նրանով, որ «Պատերիկը» կազմելիս նկատի են ունեցել ոչ միայն վանքի բանավոր ավանդությունները, այլ և ժողովրդական լայն խավերի կարծիքները, որոնք մեծ ակնածությամբ էին վերաբերվում դեպի Վլադ. Մոնոմախը։

Կիև-Պեչորյան վանքը մշակութային մի կենտրոն էր և ուներ մեծ տնտեսություն։ Այսպես, օրինակ, նա մրցում էր աղի առևտրի մեջ մեծ իշխանի և վաճառականների հետ։

Վանքն ուներ ոչ միայն իր գրողներն ու տարեգիրները (Նեստոր, Պոլիկարպ, Սիմոն և ուրիշները), այլ և իր նկարիչները (պատկերագիր Ալիմպին) և իր բժիշկները (Ագապիտը, իսկ հե-

տաղայում հայ բժիշկը), այլ և այնպիսի շնորհալի մարդիկ, որոնցից մեկը հաց էր թխում, նույնիսկ Թայլից Պրոխորը կարողանում էր մեղրից էլ անուշ հաց պատրաստել, աղ պատրաստել, կամ գերեզմանափոր Մարկոսը, որը հորդորում էր «եղբայրներին» դեպի հանդերձյալ աշխարհը:

Կային նաև այնպիսի կրոնավորներ, որոնք անօգուտ գործերով էին զբաղվում, ինչպես Ֆեոդոսին, որը գնել էր մի հատուկ սափոր, որի մեջ հավաքում էր այն արցունքները, որ ինքը թափում էր աղոթելու ժամանակ:

Նա մանրամասն հաշվառման էր ենթարկում իր թափած արցունքները, որպեսզի իրավունք ստանա մտնելու երկնային արքայություն: Այդ ապիկար Ֆեոֆիլը ծաղրի և ենթարկված. հրեշտակը հաշվի է առնում միայն նրա այն արցունքները, որոնք պատահաբար չէին ընկել սափորի մեջ:

Տատերին էլ հետապնդում էին դևերն ու քաջքերը, պղտորում նրանց միտքն ու բորբոքում արյունը, արթնացնելով նրանց մեջ մեղսալի հիշողություններ դրսի աշխարհի կյանքի ու վայելքների մասին: Ֆյոդորը կարոտով էր հիշում այն ամբողջ հարստությունը, որ նա բաժանել էր աղքատներին: Մովսեսը վանք փախավ իր սիրած կնոջ՝ գեղեցիկ լեհուհու կրքոտ հալածանքներից:

Ժլատ, բայց դիպուկ, արտահայտիչ և նուրբ գծերով են նկարագրված վանականների տարբեր բնավորությունները:

Ահա կանգնում է մեր առաջ պարզամիտ ու նաիվ, աշխատանքով ծանրաբեռնված, հավիտյան հոգնած գերեզմանափոր Մարկոսը, որին լսում են մինչև անգամ մեռելները. ինչպես նման չէ նա դյուրաբորբոք ու զայրացկոտ գուշակ Գրիգորին, որին ծաղրի ու ծանակի ենթարկեց Ռոստիսլավ Վսեվոլոդովիչի դրուժինան և վերջինի հրամանով քարը վզից կապած ջուրը նետվեց:

Սրբապատկերներ նկարող Ալիմպին հանդես է գալիս իբրև մի հիացած պատանի, որը զմայլվում է իր ստեղծած պատկերների «աստվածայնությամբ» և տարածում է իր ձեռքերը դեպի այն աղավնուն, որը դուրս է թռչում իր նկարած աստվածածնի բերնից ու ճախրում տաճարի մեջ: Երբ նա ծանրաբեռնված է լինում պատվերներով, նրա փոխարեն աշխատում է հրեշտակը:

Ա. Ս. Պուշկինը գնահատում էր ռուս օրիգինալ «Պատերի-

կը» Նրա «պարզ ու միամիտ հրապույրի և հնարքի» համար։ Այդ մասին նա գրում է իր 1831 թվին Պլետնևին ուղղած նամակում։ Դա գլխավորապես վերաբերում է Պոլիկարպի նովելներին, որոնք մի շարք առանձին բնորոշ միջադեպեր են բովանդակում։ Դրանք դրամատիկ են, կրում են կենդանի, կոնկրետ-պատմական գծեր, իսկ նրա նկարագրած «հրաշքներն» ունեն ինչ որ գործնական նշանակում, ինչպես, օրինակ՝ անձավափոր Մարկոսի կամ մոխրից աղ պատրաստող Պրոխորի մասին գրած պատմությունները։ Դա ռուս ժողովրդական հեքիաթների և ոչ թե թարգմանական «Պատերիկների» «հրաշքներն» են։

Բացի գրանից՝ ամեն մի սուրբ հայր հրաշքներ է գործում, որոնք գործնականորեն կապված են իր արհեստի կամ աշխատանքի բնույթի հետ։

Վանքը նմանվում է մրջյունանոցի, որտեղ աշխատանքը մշտական եռուզեռի մեջ է։

Քաջքերն ու հրեշտակները օգնում են մարդկանց, քաջքերը սովորեցնում են հունարեն ու լատիներեն, Ֆյոդորի համար փայտ են կրում։

Այստեղ պարզ զգացվում է սրանց սերտ կապը ռուս ժողովրդական անեկդոտների հետ։

Սիմոնի պատմությունները կրում են ավելի էֆեկտավոր և գրական բնույթ։ Եվ իրենց ոճով ավելի մոտ են կանգնած հունական և ասորական պատերիկների (հարանց վարքերի) թարգմանություններին։ Այստեղ բովանդակությամբ ավարտված պատմվածքը հանկարծ ընդհատվում է հրաշքի բնույթ կրող միջանկյալ միջադեպով։ Տեսիլքներ, ձայներ, որոնք երբեմն կրկնվում են, ինչպես օրինակ՝ «Վարյագ Շիմոնի պատմության» մեջ, երազներ, նրանց սիմվոլիկ մեկնաբանությունը, աղոթքները, հերոսների խոստումներն աստծուն և այլն։ Դա դանդաղեցնում է պատմության զարգացումը ու զրկում հետաքրքրականությունից։ Սիմոնի մոտ չարքերը հաճախ հանդես են գալիս իբրև կասկածների ու արատների կենդանի մարմնացումներ, նրանք կապ չունեն կենցաղային պայմանների հետ, ինչպես այդ տեսնում ենք Պոլիկարպի մոտ։

Սիմոնը և մանավանդ Պոլիկարպը Կիևյան ագիոգրաֆիկ (սրբագրական) գրականության վերջին ներկայացուցիչներն են։ Հասարակական կյանքի հետ սերտ կապված, ասկետիզմից ազատ,

ռուսական երկրի միասնության հայրենասիրական գաղափարներով տոգորված կիևյան սրբագիրների այս դպրոցը տվեց ձևով օրիգինալ, լեզվի և կերպարների արտահայտչության տեսակետից թարմ և հյութալի գեղարվեստական երկեր։

Այնուամենայնիվ, չնայած հարուստ բովանդակությանը, Պեչորյան Պատերիկը միակողմանի հուշարձան է։ Նա բոլոր իրադարձությունները նկարագրում է եկեղեցական տեսագծով, հետապնդելով, գլխավորապես, Կիև-Պեչորյան վանքի բարձրացումն ու փառաբանությունը և կրում է կրոնական-դիդակտիկական բնույթ։

III. ՈՒԽՏԱԳՆԱՑՈՒԹՅՈՒՆ ԿԱՄ ՈՒՂԵՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

(Хождения или путешествия)

XI—XII դ. դ. են վերաբերվում նաև ռուսների դեպի անծանոթ երկիր կատարած ճանապարհորդությունների նկարագրությունները, այսպես կոչված «ուղեգրությունները» («Хождение»)։

Ռուսները գնում էին Ցարգրադ (Կոստանդնուպոլիս), իսկ ավելի շատ նրանք ուղևորվում էին դեպի Պաղեստին։ Ռուս ուխտավորները ցանկություն ունեին տեսնել և՛ Երուսաղեմ քաղաքը, և՛ Հորդանան գետը, որոնց մասին ասված է բիբլիայում։ Քրիստոնյաները միամտաբար հավատում էին Քրիստոսի, աստվածածնի և առաքյալների պատմական եղելությանը և ուզում էին անձամբ երկրպագել «աստվածային նվիրական խաչին» և լողանալ Հորդանան սուրբ գետում։ Ուխտագնացությունները ժողովրդի մեջ այնպիսի լայն ծավալ էին ստացել, որ ռուս ժողովուրդը մինչև անգամ բիլինա է հորինել՝ «Քառասուն կալիկաների մասին»։ Կալիկա (հունական «կալիգա»—կոշիկ բառից) էին կոչում ճանապարհորդներին, պանդուխտներին, ուխտավորներին, որոնք մեծ խմբերով Պաղեստին էին գնում։ XII դարում ուխտագնացությունն այնպիսի մասսայական բնույթ էր ստացել, որ Նովգորոդի Նիֆոնտ եպիսկոպոսը կարգադրեց արգելել հասարակ մարդկանց ուխտագնացությունը դեպի Պաղեստին, քանի որ նրանք թողնում էին հողերն անմշակ և արհեստները խափան։

Առաջին ուխտավոր-գրողը Դանիիլ վանահայրն էր, որը 1106 թվից մինչև 1108 թիվը ճամփորդեց Պաղեստին։ Մեր ձեռքն է հասել նրա ուղեգրությունը «Դանիիլ վանահոր ուխտա-

գնացությունը դեպի Սուրբ երկիր» („Хождение игумена Даниила в сватую землю“): Այդ ուղեգրությունը կազմված է 1113 թվից ոչ ուշ, քանի որ Սվյատոպոլկ Իզյասլավիչը նրա «Ուղեգրության» մեջ հիշվում է ողջ և կենդանի:

Վանահայր Դանիիլի մասին կենսագրական տեղեկություններ չունենք:

Նրա «Ուխտագնացությունը» կրկնակի հետաքրքրություն է առաջացնում. նախ Դանիիլն ազնվորեն ու մանրամասն նկարագրում է այն ամենը, ինչ նրան հաջողվել է տեսնել ճանապարհին և Երուսաղեմի մեջ. երկորդ՝ Դանիիլն իր երկասիրությունը համեմում է ապոկրիֆային և առասպելական պատմություններով, որոնք նա լսել է նրանցից, ովքեր նրան ցույց էին տալիս «Սուրբ երկրի արժանատեսիլ վայրերն ու իրերը»: «Ուխտագնացությունը» գրված է պարզ, գրեթե խոսակցական լեզվով: Դա շարադրված է ժողովրդական լայն մասսաների համար և շատ տարածված է եղել ժողովրդի մեջ, որի մասին վկայում է այն փաստը, որ այդ երկը մեզ հասել է 100 գրչագիր օրինակներով, գրված տարբեր դարաշրջաններում: Սակայն չկան XV դարից վաղ արտագրություններ: Տեքստն աղավաղված է գրիչների կողմից: Երկասիրության հիմքում Դանիիլը ամենայն հավանականությամբ դրել է իր իսկ ճանապարհորդական նոթերը, որոնք հետագայում ստեղծագործորեն վերամշակվել են: Առաջաբանի մեջ Դանիիլն իրեն անվանելով «ռուսաց երկրի անարժան վանահայր ու ամենանվաստ բոլոր կրոնավորների մեջ», մանրամասն շարադրում է այն բոլոր շարժառիթները, որոնք դրդել են նրան կատարել այդ ճանապարհորդությունն ու մանրամասն նկարագրել այն: Նա կամեցել է իր «մեղավոր աչքերով» տեսնել այն տեղերը, որտեղ Քրիստոսն է անցել իր ոտքերով: Նա գրում է իր տպավորությունները այն բարի մարդկանց համար, որոնք հետաքրքրվում են սուրբ տեղերով: Նա կպատմի նրանց այն ամենի մասին, ինչ նրանք չեն տեսել իրենց աչքերով: Դանիիլը մխիթարում է իր ընթերցողներին, ասելով, որ փրկություն է գտնում ոչ միայն նա, ով իր աչքով է տեսել սուրբ տեղերը, այլ և նա, ով իմացել է նրանց մասին ուրիշներից, մինչդեռ ինքը, տանը հանգիստ նստած, բարի գործեր է կատարել: Կան այնպիսի գոռոզներ, որոնք, Պաղեստին գնալով, խրոխտացել են խելքով: Այդպիսիներն իզուր ծախսեր են արել, քանի որ Պաղեստինում նրանք շատ բարիքների կողքով անցել են միայն և ոչինչ չեն տեսել:

Երուսաղեմի ճանապարհին Դանիիլը անտեսք-ուշով նկատում է, թե որչափ արգավանդ է կամ անբերրի հողը, ինչով է զբաղվում ազգաբնակչությունը. նշում է, որ Եփեսոսը «լի է ամենայն բարիքով», Սամոս կղզին «առատ է ձկներով», Իկոս կղզին «հարուստ է մարդկանցով և անասուններով»։

Երուսաղեմի մոտ Դանիիլը տեսնում է ցորենի, գարու և այլ հացահատիկների արտեր, խաղողի և պտղատու ծառերի այգիներ, ձիթենիներ և թզենիներ։ Այդ բերքառատ հողերը զարմացնում են ռուս մարդուն, մանավանդ որ «այդ վայրն անջրդի էր, Երուսաղեմի մոտ չկար ոչ գետ, ոչ ջրհոր, ոչ աղբյուրներ»։

Մանրամասն նկարագրված է նաև Հորդանան գետի «շատ պղտոր, բայց խմելու համար անուշ ջուրը», գետի ափերի ռելեֆը, բուսականությունը։

Դանիիլը շատ պատկերավոր նկարագրում է Սոդոմի մեռյալ լիճը, որտեղ չկա ոչ ձուկ, ոչ խեցգետին, նաև ձկներով առատ Տիբերիական ծովը, Ջրառատ Գենեսարեթի լիճը։ Սրա հետ միասին Դանիիլն առասպելական տեղեկություններ է տալիս, թե որ ձուկն էր սիրում Քրիստոսը, որ քարանձավում է բնակվել Մաթուսաղան, որն ապրել է 900 տարուց ավելի, որտեղ է եղել դրված հայր Աբրահամի զոհասեղանը և այլն։

Դանիիլը շատ մանրամասն չափել ու նկարագրել է Երուսաղեմի «Հարության» եկեղեցին, որը քանդվել է խաչակիրների երկրորդ արշավանքի ժամանակ։ Այդ վերջին հանգամանքը Դանիիլի աշխատությանը հնագիտական արժեք է տալիս։

Միաժամանակ Դանիիլը հաղորդում է երևակայական և ապոկրիֆային պատմություններ, որ լսել է նա «սուրբ տեղերն իրեն առաջնորդող կրոնավորներից», որը տեղի սուրբ Սաքքա վանքի միաբաններից էր։ Այսպես, օրինակ, նա պատմում է, թե «Հարության եկեղեցում», Քրիստոսի մասունքներից 12 քայլ հեռու, գտնվում է «երկրի պորտը» (երկրագնդի կենտրոնը), իսկ նրա տակ թաղված է Ադամի գլուխը, ապա մեջ է բերում շատ տարածված թարգմանական ապոկրիֆներից մեկը «Ադամի գլխի և խաչափայտի մասին», որի վրա խաչել են Քրիստոսին։

Պաղեստինում 16 ամսվա ընթացքում Դանիիլն ամեն տեղ իրեն ամբողջ ռուսաց երկրի ներկայացուցիչն էր համարում. «Վկա է աստված և Քրիստոսի սուրբ գերեզմանը, որ ես ամեն

տեղ հիշել եմ ռուս իշխաններին, իշխանուհիներին, նրանց զավակներին, եպիսկոպոսներին, վանահայրերին, բոյարներին ու նրանց զավակներին և իմ հոգևորդի զավակներին ու բոլոր քրիստոնյաներին, երբեք չեմ մոռացել, այլ բոլոր սուրբ տեղերում աղոթել եմ նրանց համար»—գրում է նա, միշտ պահպանելով իր հայրենիքի հանդեպ հպարտության և հայրենասիրական զգացմունքները:

Զատկի նախօրյակին Դանիիլին հաջողվում է մտնել Երուսաղեմի տաճարը և ներկա գտնվել Զատկի առավոտյան ժամերգությանը: Բալդվին թագավորը անց է կացնում նրան ուխտավորների միջով և բերում Քրիստոսի գերեզմանի մոտ, որտեղից կարելի էր տեսնել ամբողջ տաճարի ներսը: Առավոտյան ժամերգության ժամանակ (Ավագ շաբաթ լույս կիրակի գիշերը), շնորհիվ կանթեղների բարդ դասավորությանը Քրիստոսի գերեզմանի շուրջը, ժամերգության վերջում, երբ երգում են «Քրիստոս հարյավ ի մեռելոց», կանթեղներն այնպես էին վառվում, որ տաճարում ներկա գտնվողները չէին տեսնում այն մփրգուն, որը ղեկավարում էր այդ արարողությունը, և դա համարվում էր «հրաշք»: Ոմանք ասում էին, որ նույնիսկ տեսել են աստծու հոգին, որը աղավնու կերպարանք ստացած, կամ կայծակ դարձած վառում էր կանթեղները: Դանիիլը հերքում է աղավնու և կայծակի պատմությունները, թեև մոմերի ինքնաբերաբար վառվելը համարում է «հրաշք»: Նա ինքը կանթեղ է վառում ռուսաց երկրի համար և շատ է ուրախանում, որ ուղղափառների կանթեղները մինչև վերջը վառվում են Քրիստոսի գերեզմանի առաջ, իսկ ֆրանկների (իտալացի կաթոլիկների) կանթեղներից ոչ մեկը չի վառվում: Դանիիլը հայրենասեր էր: Նա գտնում է, որ ռուսաց երկրի համար վառած այս կանթեղները նախագուշակում են հաջողություն: Դա իր հայրենիքի ապագա բարգավաճման սիմվոլն է:

«Ուղեգրության» մեջ արտացոլում է հեղինակի անձը: Հետաքրքրասեր, ուշիմ, դիտող և պրակտիկ ռուս մարդ է Դանիիլը, որը կարող է ընդհանուր լեզու գտնել և իրեն չկորցնել օտարազգիների ամբոխի մեջ: Նրան ծանոթ է Ֆեոդոսի Պեչորսկու Թուղթը «պիղծ լատինականների» մասին, որով արգելվում էր ուտել և խմել կաթոլիկների հետ: Բայց Դանիիլն ավելի լայն հայացքների տեր մարդ էր: Նա նույնիսկ չի վախենում գրել, թե ինչպես ճանապարհին նրա ուղեկիցները՝ իտալացի կաթոլիկ-

ները («ֆրյագները»), «ֆրանկները» հյուրասիրել են նրան լավ գինով, ուտելիքներով և ամեն ինչով։ Բայց եկեղեցու ժամասացությունը, լատիներեն էր. «երբ լատինները սկսում են տոնալ իրենց լեզվով», դա նրան ընավ դուր չի գալիս։ Բայց և այնպես եպիսկոպոսի և Բալդվին թագավորի մասին, որոնք նույնպես կաթոլիկներ էին, Դանիիլը գրական է արտահայտվում, որովհետև ինքը տեսել է, թե ինչպիսի հարգանքով են վերաբերվում նրանք դեպի ռուս մեծ երկիրը։

IV. ՀԻՆ ՌՈՒՍԱԿԱՆ ՏԱՐԵԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

(Русские древние летописи)

Ամենակարևոր և լայնորեն տարածված ժանրը Կիևյան Ռուսիայի գրականության մեջ եղել է տարեգրությունը—յուրաքանչյուր տարվա ընթացքում տեղի ունեցող կարևոր պատմական դեպքերի գրանցումը։ Տարեգրության մեջ դեպքերի ամեն մի խմբավորում գրված է որոշ տարեթվի տակ և բոլոր գրառումները դասավորված են ժամանակագրական հաջորդականությամբ։

Տարեգրությունները իրենց ծագման հենց առաջին շրջանից սկսած կրում էին որոշ դասակարգային երանգներ։ Տարեգրությունների հեղինակները պատկանում էին ֆեոդալական հասարակության վերնախավին։ Նրանք կազմվում էին խոշոր վանքերում, մեծ իշխանի մերձավոր շրջանում։

Տարեգրությունների մեջ կենտրոնական դեմքերն են խոշոր ֆեոդալները, նախ և առաջ իշխաններն ու եպիսկոպոսները, հետևաբար տարեգրություններն ամենայն մանրամասնությամբ պատմում են այն քաղաքական դեպքերի ու իրադարձությունների մասին, որոնք վերաբերում են աշխարհիկ և հոգևոր ֆեոդալներին։ Միջիշխանական պատերազմները, եպիսկոպոսների ու միտրոպոլիտների ձեռնադրություններն ու կարգադրությունները, իշխանական ժողովները, իշխանների գերդաստաններում տեղի ունեցող նշանավոր դեպքերը՝ ծնունդ, ամուսնություն, մահ և այլն,—այդ ամենը մեծ տեղ է գրավում տարեգրությունների մեջ։ Դրան հակառակ ֆեոդալական հասարակության լայն խավերի կյանքը քիչ է հետաքրքրում տարեգիրներին։ Աշխատավոր ժողովրդի դրությունը, ինչպես և ժողովրդական ապստամբությունները չնչին և կցկտուր արտացոլում են գտել այդ

հուշարձանների մեջ: Այսպես, տարեգրություններից մեկը՝ Իպատյան տարեգրությունը միայն յոթ անգամ է հիշում սմերդներին, մինչդեռ անվերջ արձանագրում է «իշխան» բառը: Կան այնպիսի հասարակական շերտեր, օրինակ՝ իզգոյներն ու զակուպները, որոնք բնավ չեն հիշատակված: Այդ տարեգրության մեջ կարելի է գտնել իշխանական ապարանքի արտաքին տեսքի մանրամասն նկարագրությունը, մինչդեռ զուր է այդտեղ որոնել սմերդների ու զակուպների խրճիթների թեկուզ անցողակի հիշատակությունը:

Տարեգրությունների մեջ համեմատաբար հաճախ է խոսվում քաղաքային բնակչության մասին, այն էլ կապված քաղաքական իրադարձությունների հետ, օրինակ՝ քաղաքում բռնկված ապստամբության մասին պատմելիս, կամ երբ շեշտվում է քաղաքացիների մասնակցությունն իշխաններ փոխելիս կամ նրանց դերը ֆեոդալական պատերազմներում: Տարեգրությունները պատմում են քաղաքային ապստամբությունների մասին, որոնք տեղի են ունեցել Կիևում՝ 1068, 1113 և 1147 թ. թ., Նովգորոդում՝ 1136 և 1209 թ. թ. և այլն:

Այդ ապստամբությունների գնահատության մեջ տարեգիրը ելնում է տիրող դասակարգի կամ ֆեոդալական այս կամ այն խմբավորման քաղաքական շահերից: Այսպես, օրինակ, 1147 թ. ապստամբության ժամանակ Իգոր Օլգովիչի սպանությունը մեծ դժգոհություն է առաջ բերում տարեգրի մեջ, որը կիևցիներին անօրեն ու պիղծ է անվանում, չնայած այն հանգամանքին, որ ապստամբությանը առիթ է տվել ինքը՝ Իգոր իշխանը, վիրավորանքներ հասցնելով Կիևի ու նրա արվարձանների բնակիչներին:

Տարեգրությունների հեղինակները, հիմնականում, պատկանում էին կրոնավորների դասին: Դրանով է բացատրվում այն, որ իրադարձությունների նկարագրության մեջ մեծ դեր է խաղում կրոնական հանգամանքը: Երևույթներից շատերը տարեգիրը տրամադիր է բացատրելու սատանայական նենգ բանսարկությամբ, կամ աստծու առաքած պատուհասով մարդու կատարած մեղքերի համար: Այնուամենայնիվ ռուս տարեգրությունների, ինչպես և ռուս հին գրականության բազմաթիվ այլ երկասիրությունների մեջ քաղաքական շահերը շատ ավելի բարձր են, քան բարեպաշտ խորհրդածությունները: Նրանք նույնպես տոգորված են հրապարակախոսական մոտիվներով (տենդենցներով):

«Տարեգրի ձեռքը,— գրում է ակադ. Ա. Շախմատովը,— մեծ մասամբ առաջնորդվում էր ոչ թե կյանքից ու աշխարհի ունայնությունից հեռացած բարեպաշտ ճգնավորի բարձր բղձալով, մի ճգնավորի, որը կարող է իր շուրջը ծավալված իրադարձություններին և այդ իրադարձությունները ղեկավարող անձանց ճշմարտացի գնահատությունը տալ — գնահատություն այնպիսի կրոնական մտածողի, որը սպասում է, որ աստծու արքայությունը հաստատվի աշխարհիս հովտում,— տարեգրի ձեռքը վարում էին քաղաքական կրքերն ու երկրային շահերը։ Եթե տարեգիրը կրոնավոր էր, ապա նա առավելագույն ազատություն էր տալիս իր կանխակալ գնահատությանը, երբ նա զուգադիպում էր հարազատ մենաստանի և այստեղ բնակություն հաստատած սևազգեստ մարդկանց շահերին»։

Իր ամբողջ միակողմանիությամբ հանդերձ, տարեգրությունները տնտեսական, կուլտուրական և մասամբ սոցիալական պատմության ամենաթանկարժեք գրական գործերն են։ Ռուս տարեգրությունների հիմնականների հենց այդ դասակարգային սահմանափակվածությունը հաղթահարվում էր շնորհիվ ռուս ժողովրդի պատմական բախտի, որը դարեր շարունակ հերոսական պայքար էր մղում իր գոյության և անկախության համար։ Ուստի հնագույն շրջանից սկսած՝ ռուս տարեգրությունների հիմնական քաղաքական տենդենցը եղել է ռուս երկրի միասնության գաղափարը, հավատարմությունը հարազատ երկրին ծառայելու, նրա բարեկեցության համար երևան եկած հոգատարությունը։

Տարեգրությունը պատմական շատ կարևոր աղբյուր լինելով հանդերձ, նաև գրական կարևոր հուշարձան է։

Կիևի պետության ռուս տարեգրությունն իր խորը հայրենասիրական բովանդակությամբ, ժողովրդականությամբ, սեղմ ու հղկված գեղեցիկ ոճով, հետաքրքրական միջադեպերով, կենդանի ու վառ երկխոսությունների ճոխությամբ համաշխարհային մասշտաբով առաջնակարգ տեղ է գրավում այդ ժանրին պատկանող գրականության մեջ։

Տարեգրությունները պատմական գիտելիքների պատկերավոր ու գրականորեն ձևակերպված հանրագիտարան են։ Այստեղ մենք գտնում ենք հնագույն բանավոր ավանդություններ, ռազմական պատմություններ, պետության քաղաքական կյանքին մասնակցած իշխանների և «սրբերի» կենսագրություններ, խրատներ, ճանապարհորդություններ, զանազան պայմանագրերի քաղվածք-

ներ, տեղեկություններ տեղի ունեցած հրդեհների, սովի, երկնային աստղաբաշխական երևույթների մասին և այլն։

Տարեգրություններն ավելի քան որևէ մի այլ գրական ժանր արտացոլել են ռուս կյանքը, իշխող ֆեոդալական դասակարգի քաղաքական գաղափարները և դասակարգային պայքարը ֆեոդալական հասարակության մեջ։ Հաստատակամորեն պաշտպանելով Կիևյան պետության ինքնուրույնությունն ու նրա քաղաքական անկախության գաղափարը, պայքարելով ռուս երկրի միասնության համար, քննադատելով իշխանների երկպառակությունները և ջատագովելով նրանց, ովքեր զենքը ձեռքին պայքարել են օտարազգի զավթիչների դեմ,—Տարեգրությունը մի զենք էր հասարակության քաղաքական դաստիարակության համար։ Այս իմաստով՝ Կիևյան Տարեգրությունը շարունակում էր պահպանել իր նշանակությունը ռուսաց պատմության նաև երկրորդ ժամանակաշրջանում, երբ Մոսկվան վարում էր իր միավորական քաղաքականությունը։ Ռուսաց պատմության Մոսկովյան ժամանակաշրջանում, Իվան III-ի և Իվան IV-ի օրով, Կիևյան Տարեգրությունը նպաստում էր ռուս ժողովրդի ազգային գիտակցության ձևավորմանը։ Այսպիսով, Տարեգրությունը շատ մեծ նշանակություն ուներ ռուս կուլտուրայի, գրականության, արվեստի և քաղաքականության զարգացման համար։

* * *

Տարեգրությունները սիստեմատիկ կերպով գրի էին առնվում վանքերում և քաղաքներում։ Ի մի հավաքված, խմբագրված և միևնույն ընդհանուր գաղափարներով հագեցված տարեգրությունները կազմում էին մի ժողովածու։

Ե՞րբ են առաջացել առաջին հնագույն ժողովածուները։

Մեզ ձեռքն է հասել Կիևյան Տարեգրությունների միայն վերջին ժողովածուն, որը կրճատված կոչվում է՝ «Անցած տարիների պատմություն» („Повесть времянных лет“)։

XI դ. և XII դ. սկզբներին Կիևյան Ռուսիայի հնագույն իրադարձությունները պատմող ռուս տարեգրությունների մեծ մասի հիմքն են կազմում այն տեղեկությունները, որոնք ավելի լավ և ավելի հավաստի շարադրված են «Անցած տարիների պատմության» մեջ։

«Անցած տարիների պատմություն» անունն այս տարեգրու-

թյունն ստացել է իր վերտառությունից, այն է՝ «Այս պատմությունն անցյալ տարիների...»։

«Անցած տարիների պատմության» տարբեր խմբագրություններն ունեն հար և նման տեքստեր մինչև 1110 թ. իրադարձությունները, որից հետո տարեգրության տեքստերը տարբերվում են իրարից։ Այստեղից արդեն ենթադրում են, որ «Անցած տարիների պատմությունը» վերջանում էր 1110 թ.։ Այս գրական հուշարձանն օգտագործել են հետագա բոլոր տարեգիրները։

«Անցած տարիների պատմությունը» մեր ձեռքն է հասել երկու խմբագրությամբ՝ ա. Լավրենտյան և բ. Իպատյան։ Այդ խմբագրությունների հիմքում դրված է եղել մի հուշարձան, այն է՝ «Անցած տարիների պատմության» սկզբնական բնագիրը, որից իրենց սկիզբն են առնում մեր ձեռքը հասած երկու հարյուրից ավելի ընդօրինակությունները։

«Անցած տարիների պատմության» հնագույն ընդօրինակությունը պատկանում է Լավրենտի կրոնավորին (Լավրենտյան խմբագրություն), որը գրել է այն 1377 թ. Սուզդալի իշխան Դմիտրի Կոնստանտինովիչի համար։ Այս ընդօրինակությունը որոշ դեֆեկտներ ունի։ Լավրենտին ասում է, որ նա տարեգրությունն ընդօրինակել է մի հին օրինակից և մի շարք բառեր ի վիճակի չի եղել վերծանելու։

Լավրենտյան խմբագրությունից մեր ձեռքն են հասել նաև երկու տարբեր ընդօրինակություններ՝ Կյոնիգսբերգի (XV դ.) և Տրոյիցկու (XV դ.)։ Դրանցից առաջինը զարդարված է բազմաթիվ մանրանկարներով (604 մանրանկար), որոնք կարևորագույն աղբյուրն են հին Ռուսիայի կենցաղի պատմության համար։

«Անցած տարիների պատմության» երկրորդ խմբագրությունը՝ Իպատյանը իր անունն ստացել է Կոստրոմայում գտնվող Իպատևսկի վանքից, որտեղ պահպանվելիս է եղել այդ ընդօրինակությունը։

Համեմատելով «Անցած տարիների պատմության» հնագույն խմբագրությունները՝ կարելի է գաղափար կազմել «Անցած տարիների պատմության» սկզբնական բնագրի մասին։ Իպատյան և Լավրենտյան խմբագրությունների մեջ եղած հար և նման տեքստերը հաստատում են «Անցած տարիների պատմության» հիմնական սկզբնական տեքստը, իսկ տարբերությունները ցույց

են տալիս այն վերամշակումները, որ կատարել են խմբագրողները։

Այնուամենայնիվ «Անցած տարիների պատմություն» տարեգրությունը կարդալիս՝ կարելի է կռահել, որ այդ Տարեգրության հիմքն են կազմում արդեն XI դարում մի քանի տարեգրական ժողովածուներ։ Իսկ XII դարի սկզբում վերջին ժողովածուն երեք անգամ խմբագրական մշակումների է ենթարկվել։

Տարեգրական ավելի հին ժողովածուների, «Անցած տարիների պատմության» կազմավորման հարցը զբաղեցրել և զբաղեցնում է ռուս գիտնականներին XVIII դարի սկզբից ի վեր։

Այդ հարցով զբաղված է եղել տակավին Պյոտր I-ի ժամանակակից՝ ռուս պատմաբան Տատիշչևը, որը պնդում էր, որ Տարեգրության հեղինակը հիմնականում եղել է Կիև-Պեչորյան վանքի վանական Նեստորը։ Միայն XX դարի գիտնական ակադեմիկոս Շախմատովը Տարեգրությունների ձեռագիր տեքստերի երկարատև ուսումնասիրության և մանրակրկիտ համեմատությունների հիման վրա, տվեց մի վայելուչ և բազմաթիվ նկատառումներով հիմնավորված «Անցած տարիների պատմության» ծագման, ինչպես և ռուսական վաղեմի Տարեգրության պատմության թեորիան։

1037—39 թվականներին, երբ Յարոսլավ Իմաստունին հաջողվեց հիմնարկել Կիևյան միտրոպոլիտությունը, Կիևում կազմվեց առաջին ռուսական Տարեգրությունը՝ Կիևյան հնագույն ժողովածուն։ Անկախ դրանից, Նովգորոդ քաղաքում, որ գտնվում է Վոլխով գետի վրա, 1050 թվին կազմեցին Նովգորոդյան հին ժողովածուն։ XI դարի 60-ական թվականներից Կիև-Պեչորյան վանքի վանահայր Նիկոնը, շարունակելով տարեգրությունների գործը՝ 1073 թվին կազմեց Առաջին Կիև-Պեչորյան ժողովածուն։ Նույն Կիև-Պեչորյան վանքում 1093—95 թվականներին կազմվեց Երկրորդ Կիև-Պեչորյան կամ Սկզբնական ժողովածուն։

XII դարի սկզբում, ամբողջ նախընթաց աշխատանքի հիման վրա, Կիև-Պեչորյան վանքի վարդապետ Նեստորը կազմեց «Անցած տարիների պատմության» առաջին հիմնական խմբագրությունը (1112 թվին)։

Պեչորյան վանքի վանական Նեստորի անունը պահպանվել է «Անցած տարիների պատմության» մի քանի գրչագիր օրի-

նակների մեջ։ Բացի դրանից, Կիև-Պեչորյան պատերիկի, Պոլիկարպի կողմից Սիմոնին ուղղված թղթի մեջ հիշվում է Նեստոր վանականի անունը, «որը գրել է տարեգրությունը»։ Հիշեցնենք, որ Նեստորը հեղինակել է նաև «Պատմություն Բորիսի և Գլեբի մասին» երկը։ Նա երևելի գրող էր, իսկ նրա պատմական հայացքների մասին, որոնք շատ մոտ էին Իլարիոնի կոնցեպցիային, մենք արդեն խոսել ենք։

Նեստորն իր աշխատությունն ավարտել է այն ժամանակ, երբ Կիևի մեծ-իշխանն էր Սվյատոպոլկ Իզյասլավիչը։ Չնայած այն բանին, որ վերջինս բացասական բնութագիր է ստացել Կիև-Պեչորյան պատերիկի մեջ («Պատմություն Պրոխորի մասին») և հեղինակություն չէր վայելում ժողովրդի մեջ, Նեստորը, ամենայն հավանականությամբ, չէր կարող դրական բնութագիր չտալ Սվյատոպոլկին։ Այլ կերպ չի կարելի բացատրել այն փաստը, որ Վլադիմիր Մոնոմախը, Կիև-Պեչորյան վանքի այդ մշտական, խանդավառ պաշտպանը, 1113 թվին ստանձնելով մեծ իշխանի գահը, խլում է վանքի ձեռքից տարեգրությունների գրելու գործն ու հանձնում Սիլվեստր քահանային, որը Մոնոմախի հոր հիմնադրած նվազ հայտնի Վիդուբիցկի վանքի վանահայրն էր։ Սիլվեստրը, հավանական է, 1116 թվին վերամշակման է ենթարկել գլխավորապես «Անցած տարիների պատմության» վերջին մասը, որտեղ նկարագրվում էին վերջին տարիների, այսինքն 1093—1113 թ. թ. դեպքերը։ Նա բացասաբար է բնութագրում իշխան՝ Սվյատոպոլկ Իզյասլավիչին և ընդհակառակն դրական է ներկայացնում Վլադիմիր իշխանի կերպարը, որի մասին գրված պատմությունները շատ տարածված էին։ Սկզբի մասում նա զետեղել է Անդրեաս առաքյալի ռուս երկիրն այցելելու միջադեպը։ Սիլվեստր վանահայրը վերջում դրել է իր անունը և աշխատությունն ավարտելու թվականը՝ 1116 թ., բայց թողնելով վերնագրի մեջ Նեստորի անունը։ Այսպես կազմվեց 1116 թվի երկրորդ խմբագրությունը։ Եվ այսպես, արդիական ընթացիկ քաղաքականության հարցերը անմիջականորեն ազդեցություն էին ունենում տարեգրությունները կազմելու վրա՝ փաստերը լուսաբանվում էին մեծ իշխանի վարած քաղաքականության ոգով։

«Անցած տարիների պատմության» երրորդ խմբագրությունը (դարձյալ Կիև-Պեչորյան) 1118 թվին կազմվում է Մոնոմախի ավագ որդի՝ Մստիսլավ Վլադիմիրովիչի նախաձեռ-

նությամբ։ Տեքստը շատ ավելի է լրացվում մանրամասնություններով, որոնք վերաբերում էին Մոնոմախովիչների քաղաքական գործունեությանը և նրանց ընտանեկան կյանքի իրադարձություններին։ Երրորդ խմբագրության մեջ նույնպես տեղ է գտել «Վլադիմիր Մոնոմախի խրատը»։ Հենց այս հիման վրա հնարավոր եղավ որոշել դրա գրության մոտավոր թվականը՝ 1117 թիվը։ Ոմանք ենթադրում են, որ երրորդ խմբագրության հեղինակը Իշխան Մստիսլավ Վլադիմիրովիչի խոստովանահայրն է եղել, իսկ ընտանեկան քրոնիկայի որոշ մասերը գրել է ինքը՝ իշխանը։

Այսպիսով, «Անցած տարիների պատմությունը» կազմված և խմբագրված են զանազան հեղինակների կողմից ութսուն տարվա ընթացքում՝ 1039 թվից մինչև 1118 թիվը։ Այդ գրական հուշարձանը պարունակում է մոտ վեց շերտ։

Ակնառության համար ստորև բերում ենք «Անցած տարիների պատմության» կազմավորման համառոտ սխեման։

Վաղեմի Կիևյան ժողովածու
1037 թիվ
Հին Նովգորոդյան ժողովածու
1050 թիվ
Առաջին Կիևյան ժողովածու
1073 թիվ
Երկրորդ Կիևյան ժողովածու
1095 թիվ
Նեստորի՝ «Անցած տարիների պատմությունը»
առաջին հիմնական խմբագրություն
1113 թիվ
Սիլվեստրի երկրորդ խմբագրությունը
1116 թիվ
Կիևո-Պեչորյան երրորդ խմբագրություն
1118 թիվ

Վերոհիշյալից երևում է՝ եթե առաջին տարեգրական ժողովածուն կազմվել է 1037—1039 թ. թ., այսինքն Յարոսլավ Իմաստունի իշխանության օրոք, ապա ուրեմն այդ թվից է, որ նա իսկապես սիստեմատիկորեն գրի է առնվել և դարձել ժամանակակից իրադարձությունների տարեգրություն։ Բոլոր այն դեպքերը, որ տեղի են ունեցել այդ թվականից առաջ, գրի

են առնված այն աղբյուրներից, որոնց մեջ գերիշխողը բանավոր ավանդություններն են։

Եվ իրոք, Կիևյան տարեգրության երկրորդ մասը, սկսած XI դարի կեսից մինչև XII դարի առաջին տասնամյակի վերջը, բաղկացած է իրար հետ շաղկապված, միօրինակ ոճով գրված պատմություններից, իսկ ժամանակագրությունը տրված է ճիշտ ու անսխալ։ Առաջին մասը հագեցված է ֆոլկլորով, մինչև իսկ Վլադիմիր իշխանի մասին գրված պատմությունների մեջ մեծ տեղ են գրավում ժողովրդական ավանդությունները։ Դրանք ավելի շատ են հեթանոս իշխանների մասին հյուսված պատմությունների մեջ։ Թվականների մեջ կան որոշ սխալներ. դրանք, հավանականորեն, գրված են ավելի ուշ, թերևս Նեստորի կողմից։ Թվագրումը սկսվում է 852 թվից։ Ի դեպ՝ այս թվագրությունը չի համապատասխանում ներկայումս ընդունված ժամանակագրությանը, որը ստանալու համար պետք է հանել 5508 տարի, այսինքն, այն ժամանակաշրջանը, որ իբր թե անցել է արարչագործությունից մինչև նոր դարաշրջանը՝ Քրիստոսի ծնունդը։

«Անցած տարիների պատմության» լրիվ վերնագիրը այսպես է՝ «Այս է պատմությունը անցած տարիների, որտեղ ասված է, թե ինչպես է գոյացել Ռուս երկիրը, ով է ամենից առաջ Կիևում իշխել և ինչպես է կազմվել և այժմ կա Ռուս երկիրը»։

Տարեգիրը լայն ծրագիր է ունեցել։

Ռուսական երկրի ծագման հարցը դնելով՝ նա ձգտել է իր պատասխանի մեջ կապել հայրենի երկրի պատմությունը համաշխարհային պատմության հետ։ Տարեգիրը լուծում է այդ խնդիրն իբրև միջնադարյան աշխարհայացք ունեցող մի մարդ, բայց յուրահատուկ ձևով, ոչ բյուզանդական քրոնիկոնների օրինակով, այլ ռուսական ազգային հայրենասիրության ոգով։

Տարեգիրը սկսում է ոչ թե աստվածաշնչի ընդարձակ վերապատմումից, թե ինչպես աստված ստեղծեց երկիրը և առաջին մարդուն՝ Ադամին, այնպես ինչպես սկսվում է Գեորգի Ամարտոլի Բյուզանդական քրոնիկոնը, այլ շատ համառոտ մի պատմությամբ այն մասին, թե ինչպես Նոյ նահապետը ջրհեղեղից հետո բաժանեց ամբողջ երկիրը իր երեք որդիների՝ Սեմի, Քամի և Հաբեթի միջև։ Արևելքն ընկավ՝ Սեմին, ամբողջ հա-

րավային մասը՝ Քամին, հյուսիսային կողմն ու արևմուտքը՝ Հաբեթին։

Այսպիսով, տարեգիրը ցույց է տալիս, որ ռուս ժողովուրդը, ինչպես և մյուս ժողովուրդները առաջացել են մի ընդհանուր նախահորից՝ Հաբեթից։ Աշխարհի բաժանման մասին վիպող այս ֆանտաստիկ պատմությունից հետո՝ տարեգիրն անմիջականորեն անցնում է սլավոնների պատմության։ Նա հաստատում է, որ սլավոնները ապրել են Դանուբի ափերին, որտեղից ցրվել են այս ու այն կողմ։ Սլավոնական ժողովուրդներին են պատկանում նաև լեհերը, չեխերը, սերբերը, բուլղարները։ Ապա տարեգիրը հաղորդում է առաջին տեղեկությունները Կիևի մասին։

Տարեգիրն իր տարեգրության ժամանակագրության համար ելակետ է ընդունում 852 թիվը, ըստ երևույթին կամենալով ակնարկել այն հանգամանքը, որ այդ թվից է սկսել իր գահակալությունը Բյուզանդիայում Միքայել կայսրը, որի օրով Ռուսիան արշավել է Ցարգրադի վրա։ Այլ խոսքերով, տարեգիրը վկայում է, որ Ռուս երկրի մասին նա առաջին անգամ կարդացել է 852 թվի տակ, երբ ռուսները հարձակում են գործել Ցարգրադի վրա։

Ապա տարեգիրն իր պատմությունը շարադրում է, բաժանելով ըստ տարիների։ Յուրաքանչյուր տարին սկսվում է հետևյալ բառերով՝ «Այս տարում...»։ Երբ տարեգիրը համապատասխան նյութ չունի գրի առնելու համար, նա ոչինչ չի դնում կամ նշում է միայն տարեթիվը՝ «Ի թիվս 6361, ի թիվս 6362, ի թիվս 6363» և այլն։

Նշանակելով առաջին տարեթիվը՝ «Ի թիվս 6360 (852 թ.), «Անցած տարիների պատմությունը» թվարկությունը շարունակում է մինչև Սվյատոպոլկի մահը՝ 1113 թ.

«Անցած տարիների պատմության» ամբողջ ժամանակագրությունը պայմանական է։ IX—X դ. դ. վերաբերող տարեթվերը, մեծ մասամբ, տարեգիրն ստացել է զանազան հաշվարկություններ կատարելով։

IX—X դ. դ. համար տարեգիրը սակավ նյութ է ունեցել և իր պատմությունը լրացրել է՝ նյութեր քաղելով բանավոր ավանդություններից և զրույցներից։

Տարեգիրը տալիս է Ռուսիայի ջրային ճանապարհների շատ ակնառու աշխարհագրական նկարագրությունը, ընդգծելով, թե որքան մեծ տնտեսական նշանակություն ունի «Վարյագներից գնալի հույները» տանող մեծ ճանապարհը, որ անցնում էր ռուսական երկրի վրայով: Նա թվարկում է մի շարք ռուս ցեղերի անունները՝ պոլյաններ, դրևլյաններ, սևերյաններ, դրեգովիչներ, կրիվիչներ, պոլոչաններ, ռադիմիչներ, սլավոններ և այլն, առույգ մատնանշելով՝ որտեղ, ինչ գետերի մոտ էին ապրում նրանք և ինչ սովորություններ ունեին: Տարեգիրը դրանց մեջ նախապատվությունը տալիս է Կիևի և Չերնիգովի շրջակայքում ապրող պոլյաններին, իբրև ամենից ավելի կուլտուրական ցեղի, ի միջիայլոց, նաև այն պատճառով, որ նրանք չէին փախցնում կանանց, այլ ամուսնանում էին նրանց համաձայնությամբ, սիրահոժար: «Փեսան չէր գնում հարսի ետևից, այլ բերում էին նրան երեկոյան, իսկ առավոտը հասցնում էին օժիտը: Նրանց սովորությունները հեզ էին ու խաղաղ: Նրանք հարգում էին քույրերին, մայրերին, ծնողներին. հարսները մեծ ակնածանքով էին վերաբերվում իրենց սկեսուրների և տագրների հետ:

«Անցած տարիների պատմության» առաջին մասում բոլոր պատմությունները կարելի է բաժանել երկու խմբի՝ ժողովրդական բանաստեղծական պատմվածքներ առաջին հեթանոս իշխանների մասին, և մի պատմություն քրիստոնեությունը Ռուսիայում սկզբնավորելու մասին: X դարից՝ քրիստոնեությունն ընդունելու պատմությունից սկսած՝ տարեգիրը, ըստ երևույթին, ավելի ամուր հողի վրա է կանգնած: Նա ավելի ճշգրիտ և ավելի մանրամասն տեղեկություններ է հաղորդում: Բայց և այնպես «Անցած տարիների պատմության» մեջ ժամանակակիցը նկատված է միայն XI դարի կեսից:

1. «ԱՆՑԱԾ ՏԱՐԻՆԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ» ԱՌԱՋԻՆ ՄԱՍԸ

Առաջին հեթանոս իշխանների մասին հյուսած պատմությունները ծագում են ավանդական բանավոր ակունքներից:

ա) ԿԻՅ, ՇՉԵԿ, ԽՈՐԻՎ ԵՎ ՆՐԱՆՑ ՔՈՒՅՐ ԼԻԲԵԴԸ

(Кий, Щек, Хорив и сестра их Лыбедь)

«Պոլյաններն ապրում էին իրենց տոհմերով առանձին վայրերում: Երեք եղբայր էին եղել, մեկի անունը Կիյ, մյու-

սինը՝ Շչեկ, իսկ երրորդինը՝ Խորիվ և նրանց քույրը՝ Լիբեդը։ Կիյն ապրում էր լեռան գլխին (որտեղ այժ Բորիչև բարձունքն է Կիև քաղաքում), Շչեկը՝ այն լեռան վրա, որն այժմ կոչվում է Շչեկովիցա (նույնպես Կիևում, այդ անունը մնացել է մինչև օրս), իսկ Խորիվը երրորդ լեռան վրա, որի անունով և կոչվել է լեռը՝ Խորիվիցա։ Եվ կար քաղաքի մոտ մի հսկայական անտառ ու եղևնուտ և գազաններ էին որսում այնտեղ։ Այր մարդիկ կային այնտեղ՝ իմաստուն և խելամիտ, և պոլյաններ էին կոչվում նրանք։ Եվ կառուցեցին մեծ եղբոր անունով մի քաղաք, և նրա անունը դրին Կիև։ Ուրիշները, որոնք տեղյակ չէին իրողությանը, ասում էին, որ Կիյը լաստավար է եղել։ Եթե իրոք լաստավար է եղել, ապա նա չէր գնա Ցարգրադ, որտեղ մեծ պատվի է արժանացել թագավորից։ Վերադարձին նա եկավ, Դանուբ հասավ, սիրեց այդ վայրը, մի փոքրիկ քաղաք շինեց և ուզեց իր տոհմի հետ միասին այնտեղ հաստատվել (մինչև օրս էլ այդ քաղաքը կոչում են Կիևեց), բայց մոտակայքում ապրողները չթողեցին։ Կիյը վերադարձավ Կիև, որտեղ և ապրեց մինչև իր կյանքի վերջը։ Նրա Շչեկ և Խորիվ եղբայրները և Լիբեդ քույրն էլ այստեղ մեռան։

Բոլոր ժողովուրդների ֆոլկլորի մեջ հանդիպում են պատմություններ քաղաքների հիմնադրման մասին։ Դրանք կոչվում են հիմնադիրների անունով։ Բայց այս փոքրիկ առասպելը առանձնահատուկ հետաքրքրություն է առաջ բերում, որովհետև հայերը մի նույնանման պատմվածք ունեն երեք եղբայրների մասին, որոնք շինել են Կուառ քաղաքը։ VII դարի հայ պատմաբան Հովհան Մամիկոնյանի (Զենոբ Գլակի) պատմության մեջ ասվում է այն մասին, որ Գրիգոր Լուսավորիչը հարկադրված է եղել կռիվ մղել երկու կուռքերի պաշտամունքի դեմ։ Կուռքերի ծագումը բացատրվում է այսպես. Դեմետր և Գիսան իշխանները իրենց թշնամիների քսությունից դրդված՝ հեռանում են հայրենիքից և ապաստան գտնում թագավոր Վաղարշակի մոտ, որը տալիս է նրանց Տարոնի աշխարհը, որտեղ փախստական իշխանները հիմնադրում են Վիշապ քաղաքը։ Հետո թագավորը սպանում է երկու իշխաններին և իշխանությունը տալիս է նրանց որդիներին՝ Կուառին, Մեղտեսին և Հոռեանին (Հոռյին)։ Նրանցից ամեն մեկը շինում է մի-մի ավան, որը կոչում է իր անունով։ Հոռը շինում է իր ավանը Պալունի գավառում։ Շինարար եղբայրները բարձրանում են Քարքե լե-

ար և Դաստակերտ են շինում, որտեղ հաստատում են երկու կուռք՝ մեկը Գիսանեի անունով, մյուսը՝ Դեմետրի։

Այս կուռքերին երկրպագելու համար էր, որ Գրիգոր Լուսավորիչը հալածում էր հեթանոս բնակիչներին։

Ակադեմիկ Ն. Յա. Մառը ուշադրություն է դարձրել հայկական և ռուսական գրքային առասպելների այս նմանության վրա*։ Հայկական առասպելը ծագել և գրի է առնվել ռուսականից շատ ավելի առաջ։ Այս երկու տարբեր ազգությունների պատկանող լեգենդների մեջ էլ հերոսների հատուկ անունները՝ Կիյ—Կուառ, Խորև—Հոռեան, լրիվ համընկնում են, եթե դեն գցենք վերջավորությունները։ Շչեկ և Մեղտե անունները նույնպես միանման են, եթե ստուգաբանվեն դրանք Ն. Մառի լեզվաբանական-հաբեթաբանական մեթոդով։ Հայկական լեգենդի մեջ չկա եղբայրների քույր՝ «Լիբեդը», բայց, ինչպես ապացուցում է Ն. Մառը, քրոջ անունը հայկական «Կարապ» բառի միջոցով ելնում է դեպի Хорев անունը. կարապն էլ, ռուսերեն թարգմանությամբ, ինչպես գիտենք, նշանակում է լեբեդ-лебедь։

«Պալունի» գավառը, որ հիշատակվում է հայկական լեգենդի մեջ, նույն «պոլյանե» ցեղային անունն է, որ տեսնում ենք ռուս լեգենդի մեջ։

Այդ երկու լեգենդների մեջ էլ եղբայրները հանդիսանում են քաղաքների հիմնադիր-շինարարներ, որոնք կոչվել են նրանց անուններով։ Նրանք քաղաքներ են շինում լեռների վրա, անտառներով հարուստ ու ծառախիտ վայրերում, որտեղ շատ են գազանները, հետևաբար կարելի է որսով զբաղվել։

Ն. Յա. Մառը ուշադրություն է դարձրել նաև մի շատ հետաքրքիր փաստի՝ palúa-paló անվան վրա։ Palúni-pal'ua (pol-ua) հանդիպում ենք խալդական Կիմմերյան արձանագրության մեջ VIII դար մ. թ. ա.։

Այս երկու լեգենդի նմանությունը ապացուցում է հնագույն էթնիկական կապի առկայությունը Կիևյան Ռուսիայի և Հայաստանի տերիտորիայի վրա (Վանի ավազան) բնակություն հաստատած ցեղերի միջև։

Ապա տարեգիրը պատմում է, նորից հիմք ընդունելով ավանդությունները, որ այդ երեք եղբայրներից է սկսվում պոլ-

---

* Н. Я. Марр. Книжные легенды об основании Куара в Армении и Киева на Руси. Скифский язык. Яфетические зори на украинском хуторе. Собр. соч. том V.

ջանների իշխանական տոհմը, բայց չի հիշատակում նրանց անունները։

ՌՅՈՒՐԻԿԸ ԵՎ ՆՐԱ ԵՂԲԱՅՐՆԵՐԸ
(Призвание Рюрика и братьев)

862 (6370 թ.) թվականի տակ գրված է այն լեգենդը, որ պատմում է, թե ինչպես նովգորոդցիները հրավիրում են ռուս երկրի վարյագ իշխաններ, երեք եղբայրներ, Ռյուրիկին, Սինեուսին և Տրուվորին։ Ռյուրիկը, ըստ տարեգրության, նստում է Նովգորոդում, Սինեուսը՝ Բելոզերոում, Տրուվորը՝ Իզբորսկում։ Եղբայրների մեռնելուց 2 տարի անց Ռյուրիկը «ամբողջ իշխանությունը մենակ է վարում»։ Այս լեգենդն ավելի ուշ ժամանակների միջարկություն է Նեստորի տարեգրության մեջ և, հավանական է, բխում է Յարոսլավիչների դինաստիայի վաղեմությունը ապացուցելու ցանկությունից և ամբողջ Ռուսիան մեծ իշխանի ձեռքի տակ միացնելու անհրաժեշտությունից։

Վարյագներին հրավիրելու այս պատմությունը կեղծ և միամիտ մի լեգենդ է։ Արևմտա-եվրոպական քրոնիկոնների մեջ հանդիպում ենք անալոգիկ պատմություններ այն մասին, թե ինչպես ֆեոդալական մասնատումների ժամանակ բրիտները— անգլիացիները կամ դանիացիները կանչում էին օտարազգի իշխաններին՝ իրենց երկրում կարգ հաստատելու։ Նորմանները, այսինքն վարյագները, IX—XI դարերում զբաղվում էին առևտրով և կողոպուտներով եվրոպական առափնյա երկրներում՝ Անգլիայից մինչև Սիցիլիա։ Իբրև վարձու զինվորներ, նրանք ընդունվում էին դրուժինաների մեջ, բայց իրենց կուլտուրայով նրանք ռուսներից ավելի ցածր էին։ Տեղափոխվելով ուրիշ երկիր՝ նրանք շուտով կորցնում էին իրենց լեզուն ու սովորությունները, ինչպես օրինակ՝ «Կիև-Պեչորյան պատերիկի» մեջ հիշված վարյագ Շիմոնը։ Հետևապես նրանք չէին կարող «ռուսական պետության հիմնադիրները» լինել և այս բանը լավ էին հասկանում և գրող Շչեդրինը, և ռուս նախառևոլյուցիոն պատմաբաններ՝ Կլյուչևսկին, Վլադիմիրսկի-Բուդանովը և ուրիշները։

Իշխանների հրավիրելու պատմությունից սկսած՝ ժամանակագիրը իր պատմությունը հարմարեցնում է յուրաքանչյուր առանձին իշխանի իշխանության տարիներին, նշելով նրանց իշխանության սկզբի և վերջի տարեթվերը։

գ) ԻՇԽԱՆ ՕԼԵԳԸ

(КНЯЗЬ ОЛЕГ)

Օլեգ իշխանը պատմական անձնավորություն է, որի մասին վկայություններ կան բյուզանդական և բուլղարական պատմական աղբյուրներում։ Օլեգը պատերազմել է խազարների հետ, արշավանք կատարել Ցարգրադի վրա (Կոստանդնուպոլիս)։ Նա կնքել է Բյուզանդիայի հետ 911 թվին մի պայմանագիր, որը, Մարքսի ասելով, բովանդակում է «Արևելյան հռոմեական կայսրության արժանապատվության համար խայտառակության ամոթալի պայմանները»։ Նովգորոդյան և Կիևյան պետությունները Օլեգ իշխանի օրոք միացան, կազմելով հսկայական Կիևյան պետությունը։ Տարեգրության մեջ մի ավանդություն կա, թե ինչպես օլեգը Նովգորոդի իշխան եղած ժամանակ իր դրուժինայի հետ միասին նավակներով իջնում, հասնում է Կիև։ Օլեգն ու իր դրուժինիկները վաճառականներ ձևանալով՝ խաբեությամբ կանչում են քաղաքից Կիևի իշխաններ Ասկոլդին և Դիրին, ապա դրուժինայի մի մասը, որը թաքնվել էր նավակների տակ, հարձակվում է Ասկոլդի և Դիրի վրա ու սպանում նրանց, որից հետո Օլեգը դառնում է Ռուսիայի միահեծան տերը։ Բայց Օլեգից հետո, որը մեռավ իր ձիան գանգի մեջ բույն դրած օձի մահացու խայթոցից, Դրևլյանները անջատվեցին Կիևից։

դ)ԻՇԽԱՆ ԻԳՈՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

(КНЯЗЬ ИГОРЬ)

941 թվի Իգորի արշավանքը Ցարգրադի վրա անհաջողությամբ է վերջանում։ Երեք տարուց անց՝ նա նորից է գնում հույների վրա, հասնում է մինչև Դանուբ և այս անգամ նոր պայմանագիր է կնքում Բյուզանդիայի հետ, սակայն ձեռնտու պայմաններով, որոնք արձանագրված են տարեգրության մեջ։ Դրևլյանների երկրում Իգորին սպանում են հարկ հավաքելու ժամանակ, նրա ոտքերը կապում են ծառերի մինչև գետին կացրած կատարներին և, երբ ծառերը բաց են թողնում, Իգորը պատառ-պատառ է լինում։

ե) ԻՇԽԱՆՈՒՀԻ ՕԼԳԱՆ

(КНЯГИНЯ ОЛЬГА)

Իգոր իշխանի այրին՝ Օլգան ամուսնու մահից հետո դառնալով մեծ իշխանուհի՝ դաժանորեն վրեժ է լուծում Դրևլյաններից Իգորի սպանության համար և նրանց կրկին հպատակեցնում իրեն։ Ըստ տարեգրության, իշխանուհի Օլգան չորս տեսակ է վրեժ լուծում Դրևլյաններից։ Դրանցից մեկը պատմում է, թե ինչպես Դրևլյանների գլխավոր քաղաք Իսկորոստենը վառվեց։ Մեծ իշխանուհի Օլգան Դրևլյաններից հարկ է պահանջում ամեն տնից մեկական աղավնի ու ճնճղուկ։ Խորամանկ Օլգան հրամայում է իբրև հարկ բերած թռչունների ոտքերին կապել ծծումբի մեջ թաթախած լաթեր, որոնք վառում է և թռչուններին բաց թողնում։ Աղավնիները ու ճնճղուկները թռչում գնում են ամեն մեկը իր բունը, տների տանիքների տակ։ Այրվում են տների կտուրներն ու խոտանոցները։ Չկար մի գավիթ, որտեղ կրակ չլիներ և հնարավոր չէր մարել, որովհետև ամեն ինչ բռնված էր կրակով։ Իշխանուհին գրավում է այրվող քաղաքը, բնակիչների մի մասը կոտորում են, մի մասը ստրկացնում, մի մասն էլ հարկատու դարձնում։

Օլգան պատկերացված է իբր մի քաջարի, ռազմասեր ու խորամանկ կին։ Նրա խորամանկության, դաժանության, խելքի ու գեղեցկության մասին տարեգիրը պատմում է ակընհայտ հիացմունքով։ Հեթանոս Օլգան իր կյանքի վերջին օրերին քրիստոնեություն է ընդունում և մկրտվում է։ Շարադրելով այս միջադեպը՝ տարեգիրը մտցնում է շատ ուրույն ու հետաքրքիր պատճառաբանություն։

Երբ Օլգան Ցարգրադում է լինում, Բյուզանդիայի Կոնստանդիանոս կայսրը, հմայված նրա խելքով ու գեղեցկությամբ, ուզում է նրա հետ ամուսնանալ։ Կռահելով ցարի մտադրությունը՝ Օլգան շատ խորամանկ է գտնվում և ասում է նրան. «Ես հեթանոս եմ։ Եթե ուզում ես ինձ քրիստոնյա դարձնել, մկրտիր ինձ քո ձեռքով, այլապես ես չեմ մկրտվի»։ Նրա կնքահայրն ինքը կայսրն է դառնում։ Այսպես էր կամեցել Օլգան։

Մեջ բերենք տարեգրությունից մի հատված։

«Մկրտությունից հետո՝ ցարը հրավիրում է նրան իր մոտ ու ասում. «Ուզում եմ քեզ կնության առնել»։ Իսկ Օլգան պա-

պատասխանում է՝ «Ինչպես ես ուզում դու ինձ կնության առնել, քանի որ ինքդ ես ինձ մկրտել ու քո դուստրն անվանել։ Քրիստոնյաների մոտ այդպիսի օրենք չկա, դու այդ լավ գիտես»։ Եվ ասում է թագավորը՝ «Խաբեցիր ինձ խորամանկությամբդ, Օլգա»։ Եվ նա տալիս է նրան բազմաթիվ նվերներ, ոսկի ու արծաթ, մետաքս ու բեհեզ, և անոթներ սիրուն ու բազմատեսակ և արձակում նրան, անվանելով իր դուստրը»։

Օլգայի մկրտվելու պատճառաբանության մեջ դրեթե չեն զգացվում պատմիչի քրիստոնեական աշխարհհայացքի հետքերը։ Օլգայի քրիստոնեությունն ընդունելու պատճառաբանությունը ոչ թե գաղափարական, այլ զուտ կենցաղային, պրակտիկ բնույթ է կրում։ Օլգան պատվով է դուրս գալիս այդ անհարմար դրությունից, խաբում կայսրին, որին գայթակղեցնում էր ոչ միայն Օլգայի գեղեցկությունը, այլև ռուս երկրի հարստությունը։ Օլգան դրեթե պատահաբար է քրիստոնյա դառնում և միանգամից հարուստ նվերներ ստանում։ Ի դեպ, հույների կայսրը, ըստ երևույթին, ափսոսալով իր առատաձեռնության համար, հետո է ուղարկում իր դեսպաններին, և խնդրում պարգևատրել նրանց ստրուկներով, մորթիներով, մեղրամոմով և զինվորներով։ Ի պատասխան դրան, Օլգան առաջարկում է նրան անձամբ գալ նվերները ստանալու համար։ Պատասխանը քաղաքավարի էր, բայց ոչ զուրկ գործնական իմաստությունից։ Օլգայի մկրտության պատմությունը հյուսված է ժողովրդական, դեռևս հեթանոսական միջավայրում, իսկ նրա մահվան պատմությունը՝ կրում է գրքային բնույթ և ավելի ուշ է կազմված ու կցված տարեգրությանը։

դ) ՍՎՅԱՏՈՍԼԱՎ

(СВЯТОСЛАВ)

Ռազմատենչ հեթանոս իշխանների կերպարները բոլորում է իշխան Սվյատոսլավ Իգորևիչի զարմանալի պայծառ, մեծագոր ու վսեմ կերպարը։

Այս ամբողջական կերպարը ազդեցություն է ունեցել գրական մի շարք երկերի վրա։

Պատմվածքներից մի քանիսը նմանվում են ժողովրդական էպոսի հատվածներին։ «Երբ իշխանը մեծացավ ու արիացավ, նա սկսեց զորքեր հավաքել բազմաթիվ ու քաջարի,

հովազի պես թեթևաշարժ՝ նա շատ մարտեր մղեց։ Արշավանքի մեջ չէր տանում իր հետ ոչ գումակ, ոչ կաթսա. խորտիկներ չէր եփում, այլ բարակ կտրատելով ձիու, գազանի, կամ տավարի միսը խորովում էր կրակի վրա և այնպես ուտում։ Նա վրան չուներ և քնում էր ձիու տապճակի վրա, իսկ գլխի տակ դնում էր թամբը։ Այսպես էին նրա բոլոր ռազմիկները։ Նա սուրհանդակներ էր ուղարկում ամեն տեղ ասելով՝ «Ուզում եմ գալ Ձեզ վրա»։

Այնուհետև տարեգիրը պատմում է, թե ինչպես Սվյատոսլավը ազատում է Վյատիչներին, որոնք հարկ էին տալիս խոզարներին, ինչպես է կռվել նա խոզարների, օսերի, չերքեզների հետ։ Ապա գնում է դեպի Դանուբ, որտեղ կռվում է բուլղարների հետ, գրավում 80 քաղաք և նստում է իշխելու Պերեյասլավեցում, հույներից հարկ է վերցնում։ Սվյատոսլավն ուզում է այստեղ տեղափոխել իր մայրաքաղաքը և հանձնարարում է ասել իր մորն ու բոյարներին՝ «Հաճելի չէ ինձ Կիևում ապրել, ուզում եմ ապրել Պերեյասլավեցում, Դանուբի վրա, որովհետև դա իմ երկրի կենտրոնն է, չէ՞ որ այստեղ են հավաքվում բոլոր բարիքները. հույներից՝ ոսկի, մետաքսյա գործվածքներ, գինի և զանազան մրգեր, չեխերից և հունգարացիներից՝ արծաթն ու նժույգները, Ռուսիայից՝ գազանների մորթիներ, ձուկ, մեղր ու մեղրամոմ»։

Հույները կանչում են Սվյատոսլավին բուլղարների դեմ կռվելու, բայց երբ բուլղարներին հաղթելուց հետո ռազմասեր ռուս իշխանն իր զորքով ամուր հաստատվում է Պերեյասլավեցում, այդ ահարկու իշխանի հարևանությունը դուր չի գալիս հույներին։ 971 թվին նրանք հավաքում են մի հսկայական զորք և 100.000 հոգով դուրս են գալիս Սվյատոսլավի 10.000-անոց ջոկատի դեմ։ Այստեղ գալիս է տարեգրության այն հռչակավոր խոսքերը, որոնք բազմիցս կրկնվել են մեջբերումների կարգով, գրեթե հազար տարվա ընթացքում։

«Գնաց Սվյատոսլավը հույների վրա, իսկ նրանք դուրս եկան Ռուսիայի դեմ։ Տեսնելով այդ, Ռուսիան վախեցավ մեծաքանակ զորքից։

Եվ ասաց Սվյատոսլավը։ «Այլևս մենք ո՞ւր գնանք, կամա ակամա պետք է դեմ կանգնենք. արդ, չխայտառակենք ռուս երկիրը, դնենք մեր գլուխը այս կռվում, մեռածներն ամոթանք չեն զգում, իսկ եթե փախչենք, ամոթանք կգա մեզ վրա.

չփախչենք ուրեմն, այլ ամուր կանգնենք, և ես կգնամ ձեր առջևից։ Իսկ եթե ես ընկնեմ, դուք ինքներդ մտածեցեք Ձեր մասին»։

Եվ ասացին մարտիկները՝ «Որտեղ քո գլուխն ընկնի, այնտեղ էլ մենք մեր գլուխները կդնենք»։

Եվ Ռուսիան մարտի պատրաստվեց... Եվ անեղ էր կռիվը և հաղթեց Սվյատոսլավը, և հույները փախուստի դիմեցին, և հետապնդեց նրանց Սվյատոսլավն ու գնաց մինչև Ցարգրադ կռվելով ու ավերելով քաղաքները, որոնք մինչև օրս էլ մնում են ամայի»։

Ուշագրավ է ամբողջովին երկախոսություններով կառուցված այն պատմությունը, թե ինչպես հույները, անկարող լինելով դիմադրել Սվյատոսլավին՝ խաղաղության պայմանագիր են կնքում նրա հետ, ուսումնասիրելով նրա բնավորությունը։

«Կանչեց հունաց թագավորն իր բոյարներին և ասաց. «Ի՞նչ անենք, երբ մենք չենք կարող դիմադրել նրան»։

Եվ ասացին նրան բոյարները՝ «Նվերներ ուղարկիր նրան. փորձենք նրան՝ սիրում է նա, արդյոք, ոսկի կամ մետաքսյա գործվածքներ»։

Եվ ուղարկեցին նրան ոսկի և մետաքսյա գործվածքներ և մի մարդ իմաստուն և հանձնարարեցին նրան. «Հետևիր նրա հայացքին և դիտիր արտահայտությունը նրա դեմքի»։ Դեսպանը վերցրեց նվերներն ու եկավ Սվյատոսլավի մոտ։ Եվ Սվյատոսլավին ասացին, որ հույներ են եկել նրան երկրպագելու։ Նա ասաց՝ «Ներս բերեք նրանց»։ Ներս մտան, խոր բարև բռնեցին, դրեցին նրա առաջ ոսկի ու մետաքսյա գործվածքներ։

Եվ ասաց Սվյատոսլավն իր դրուժիննիկներին, հայացքն ուրիշ կողմ շրջելով՝ «Պահեցեք»։ Սվյատոսլավի դրուժիննիկները վերցրին ու պահեցին նվերները։ Դեսպանները վերադարձան թագավորի մոտ։ Հավաքեց թագավորն իր բոյարներին և դեսպանները ասացին. «Երբ մենք եկանք նրա մոտ և մատուցեցինք նվերները, նա նույնիսկ չնայեց նրանց վրա և կարգադրեց պահել»։ Բոյարներից մեկն ասաց՝ «Մեկ էլ փորձենք նրան, ուղարկենք նրան զենք ու զրահ»։

Հույները լսեցին նրան և ուղարկեցին Սվյատոսլավին սուր և այլ զենքեր։ Զենքերը բերեցին, իսկ նա ընդունեց և սկսեց գովել ու հիանալ և շնորհակալ եղավ թագավորից»։ Եկան

թագավորի մոտ և պատմեցին ինչ որ եղել էր, և ասացին բոյարները՝ «Անագորույն է այդ մարդը. հարստությունն արհամարհում է, իսկ զենքերը—ընդունում, հարկ տանք նրան»:

Սվյատոսլավն, ինչպես ասացինք, քիչ մնաց, որ հասներ Ցարգրադ: Բյուզանդիայի հետ կնքած պայմանագիրը զետեղված է ամբողջությամբ: Սվյատոսլավն ու նրա դրուժինան երդվում են չխախտել խաղաղության պայմանագիրը, իսկ ով կդրժի երդումը, «նրան կանիծի այն աստվածը, որին հավատում ենք՝ Պերունը, կամ անասունների աստված՝ Վոլոսը, և թող մենք ոսկի դառնանք, ինչպես այս ոսկին, և թող սպանվենք մեր իսկ սրերով»:

Տարեգիրը պատմում է, որ երբ իշխանուհի Օլգան խորհուրդ է տալիս իր որդուն քրիստոնեություն ընդունել, Սվյատոսլավը մերժում է մկրտվելու առաջարկը՝ ասելով, որ դրուժինան կծիծաղի նրա վրա:

Տարեգիրը, որ հրճվում է Սվյատոսլավի արիությամբ, այնուամենայնիվ դատապարտում է նրան այն բանի համար, որ նա քիչ է ապրել Կիևում և չի զբաղվել իր իշխանության գործերով: Երբ 968 թվին առաջին անգամ պեչենեգները հարձակվեցին ռուսական երկրի վրա, պաշարված Կիևում միայն իշխանուհի Օլգան էր մնացել իր թոռների հետ միասին, իսկ Սվյատոսլավը ապրում էր Դանուբի ավազանում: Կիևցիները խորամանկությամբ փախցրեցին պեչենեգներին. Նրանք լուր տարածեցին, որ Սվյատոսլավը վերադարձել է: Սվյատոսլավի միայն անունը լսելով թշնամին սարսափահար փախչում է, իսկ կիևցիները մարդ են ուղարկում նրա մոտ ասելով՝ «Դու օտար երկիր ես որոնում ու պաշտպանում, իսկ քո երկիրը թողել ես անտեր, քիչ մնաց, որ պեչենեգները տանեին մեզ, քո մորն ու քո զավակներին»:

Փոքր դրուժինայով, Բյուզանդիայից վերադառնալու ժամանակ Սվյատոսլավը սպանվում է պեչենեգների կողմից Դնեպրի սահանքների մոտ 972 թվին: «Հարձակվեց նրա վրա պեչենեգների իշխանը՝ Կուրյան և սպանեց Սվյատոսլավին. Նրա գլուխը տարան և գանգից գավաթ շինեցին ու գինի էին խմում նրանով*: Նրա իշխանությունը 28 տարի տևեց»:

---

* Համանման մի պատմվածք կա Գեորգիյ Ամարտոլայի մոտ. Բուլղարական իշխանը իր ձեռքով սպանած հունական Նիկիֆոր թագավորի գանգից թաս է պատրաստում:

Հեթանոս իշխանների մասին գրված բոլոր պատմվածքների մեջ անց է կացվում այն միտքը, որ Ռուսիան ունեցել է իր պատմությունը քրիստոնեությունն ընդունելուց շատ առաջ, դեռ լեգենդար Կիյի «Ռուսական քաղաքների մայր»—Կիևի հիմնադիրի ժամանակներից: Առանձնապես մեծ տեղ է տրված Բյուզանդիայի վրա արշավող իշխաններին՝ Օլեգին, Իգորին, Սվյատոսլավին: Նրանց արշավանքները, տասնյակ հազարավոր զինված զորքով պատմական իրողություններ են, որոնք հաստատված են բյուզանդական և այլ տվյալներով: Շատ մոտիվներ վերցված են ֆոլկլորից. զինվորները հանդես են գալիս որպես ծպտված վաճառականներ, Օլեգի նավերը գրվում են անիվների վրա ուղենպաստ քամու ժամանակ: Օլեգը մեռնում է իր ձիան պատճառով (այս սյուժեն ներշնչել է Պուշկինին գրելու իր «Երգ իմաստուն Օլեգի մասին», թարգմ. Հովհ. Թումանյան), Օլգայի բոլոր չորս տեսակ վրեժխնդրությունները և այլն: Բոլոր միջադեպերը դրամատիկ են գործում: Իշխանների կերպարները ռոմանտիկական են և հերոսականացված, որով նրանք նմանվում են բիլինային բոգատիրներին, մի տարբերությամբ, որ դրանց մեջ բացակայում են քրիստոնեական մի քանի գծեր, այն է՝ անշահախնդրություն, խղճահարություն, զղջում: Օլեգի, Իգորի, Սվյատոսլավի, Օլգայի անկապտելի հատկություններն են ռազմական արիությունը, անվեհերությունը, սերը դեպի դրուժինան, իր ձին, զենքն ու զրահը, զարմանալի հնարամտությունն ու հնարիմացությունը վտանգի րոպեին:

Սրա հետ միասին իշխանների արժանիք է համարվում դաժանություն, խորամանկություն, անողոքություն, պրակտիկություն, հրապուրվելը ավարով ու նվերներով, այն ամենը, ինչ դատապարտում է քրիստոնեությունը: Հեթանոս իշխաններին անվանում են իմաստուն, խորագետ: Սակայն ռազմասեր ու իմաստուն Օլեգը մեռնում է նրա համար, որ նա թերահավատ է գտնվել դեպի գուշակի խոսքերը: Սա ևս հակասում է քրիստոնեական բացասական հայացքներին հեթանոս կախարդների ու գուշակների հանդեպ: Բայց տարեգիրն առանց փոփոխությունների է պատմում ժողովրդի հնագույն ավանդությունները: Հեթանոս ժողովուրդն այն կարծիքին է, որ գուշակի լեզվով խոսում է ժողովուրդը, իսկ իշխանը թեև հեռացրել է ձին, բայց կասկածի ենթարկեց նախագուշակությունը, երբ տեսավ ձիու գանգը, և դրա համար էլ ստացավ իր պատիժը՝ գանգի մի-

ջից դուրս սողաց օձը, խայթեց Օլեգի ոտքը, և նա մեռավ։

Միջադեպերի հակիրճությունը, թարմությունը, պարզությունը անմիջական կախումը ժողովրդի բանավոր պոետական տրադիցիայից, օրգանական կապը կենցաղի հետ՝ այս ամենը տարեգրության արժանիքներն են և ունեն խոշոր գեղարվեստական նշանակություն։ Այս տեսակետից «Անցած տարիների պատմությունը» անհամեմատ ավելի բարձր է դասվում արևմտա-եվրոպական ու բյուզանդական քրոնիկոններից։

Անհրաժեշտ է այստեղ ընդգծել նրա տարբերությունը ժողովրդական պոեզիայից։ Տարեգրության մեջ իշխանները, բոյարները, զորավարները, վաճառականները առաջին պլանի վրա են դրված և ժողովրդից բարձր են կանգնած։ Տարեգիրը մտահոգված է Կիյի ծագումով, որպեսզի նրան հասարակ լաստավար չհամարեն, այլ անպայման ազնվական։

«Անցած տարիների պատմության» երկրորդ տարբերությունը, դա՝ վարպետորեն մշակված երկխոսությունների առատությունն է։ Երկխոսությունները ռուսական հնագույն տարեգրությունների մեջ համառոտ են, այստեղ կարելի է գտնել երեք կամ չորս տեսակ երկխոսություններ։ Շատ հաճախ այդ երկխոսությունները գալիս են ժողովրդական հեքիաթներից և բխում են նրա բովանդակությունից։ Այսպես օրինակ՝ Օլգայի առաջին վրեժխնդրության պատմությունը՝ երբ նրա ամուսնուն—Իգորին սպանող Դրևլյանները խնամախոս են գալիս նրա մոտ՝ նրան ուզում են իրենց իշխան Մալալյի համար։ Նենգամիտ Օլգան ասում է խնամախոսներին՝ «Հաճելի է ինձ Ձեր խոսքը. այլևս ես չեմ կարող հարություն տալ իմ ամուսնուն, միայն թե ուզում եմ մեծարել Ձեզ վաղը իմ մարդկանց առաջ։ Գնացեք նավ և պառկեք նավի մեջ և մեծարանքի սպասեցեք։ Ես առավոտյան մարդ կուղարկեմ Ձեր հետևից, իսկ դուք կասեք «Չենք գար ոչ ձիով, ոչ էլ ոտքով, տարեք մեզ նավակով»։ Եվ Ձեզ նավակով կտանեն»։ Օլգայի խոսքերը՝ «Ձեզ նավակով կտանեն»—խորհրդավոր են։ Նավակով տանում էին ինչպես հարսնյաց, այնպես էլ թաղման ծեսերի ժամանակ։ Օլգան ակնարկում է, որ «խնամախոսներին» մահ է սպառնում, բայց նրանք այդ չեն հասկանում։ Խնամախոս-դեսպաններին նավակներով Օլգան հրամայում է նետել խոր փոսը և կենդանի թաղել։

Հանելուկը՝ դա չլուծված փոխհարաբերություն է։ Օլգայի—«բոլոր մարդկանցից ամենաիմաստուն» մարդու այդ խոսքերը կառուցված են փոխհարաբերությունների համեմատ։

Օլգայի երկրորդ վրեժի պատմության հիմքը կազմում է հանելուկը բաղանիքի մասին։

Հարսանիքի ծեսի ժամանակ հարսնացուի ընկերուհիները նրան բաղանիք են տանում, բայց ըստ ռուսների սովորության, ննջեցյալին նույնպես բաղանիքում էին լողացնում։

Օլգայի երրորդ վրեժխնդրության հիմքում նույնպես տեսնում ենք «խնջույքի» և «մահվան» համադրումը։

«Պատրաստեցեք ինձ համար առատ մեղրախմիչքներ այն դամբարանների մոտ, որտեղ իմ ամուսնուն սպանեցիք»,—ասում է Օլգան։

Ֆոլկլորային դիալոգը մոտ է կենցաղային խոսակցական լեզվին, նրա մեջ մենք հանդիպում ենք փոխաբերություններ, սիմվոլներ, հոգեբանական բաղդատություններ, համեմատություններ, դա ազդել է տարեգրության վրա։

Երկրորդ տարեգրության մեջ ուղղակի խոսքի վրա ազդել է դիվանագիտական լեզվի բավականաչափ զարգացած պրակտիկան, նույնիսկ գիր-գրականությունն ընդունելուց մի քանի դար հետո՝ ռուս իշխանները իրենց դեսպաններին որևէ տեղ ուղարկելիս հրահանգում էին բանավոր խոսքով հայտնել գործի էությունը, ընտրելով դրա համար դիպուկ և դյուրըմբռնելի արտահայտություններ։ Իշխանի խոսքը, որ հակիրճ էր լինում, դեսպանն անգիր էր անում։ Դիվանագիտական ճարտասանական այդ արվեստի հետքերը նույնպես գտնում ենք տարեգրության մեջ։ Այսպես օրինակ՝ Կիևցիները դեսպանի միջոցով ասում են Սվյատոսլավին՝ «Դու օտար երկիր ես որոնում ու պաշտպանում, իսկ քո երկիրը թողել ես...»։

Այդ միևնույն սկզբունքով է կազմված տարեգրության այն հատվածը, թե ինչպես բյուզանդական կայսրը խաղաղության բանակցություններ է վարում Սվյատոսլավի հետ։

Երրորդ՝ իշխաններն ու զորավարները ճառ են ասում իրենց զորքի և դրուժինայի առաջ։ Սվյատոսլավի «Այլևս մենք տեղ չունենք գնալու, կամա ակամա պետք է դեմ կանգնենք, արդ՝ չխայտառակենք ռուս երկիրը...» պատմական խոսքերը հիանալի նմուշներ են, որոնք վկայում են ճարտասանական արվեստի բարձր կուլտուրայի մասին։

Ուղղակի խոսքի այս երեք տիպերը կյանքի թելադրանքի արդասիք են։ Սրանց հանդիպում ենք տարեգրության ամբողջ

ընթացքում։ Այնտեղ, որտեղ խոսքը քրիստոնյա իշխաններին է վերաբերում, սրան միանում է աղոթքը, ողբը մահացածների վրա։

է) ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ՎԼԱԴԻՄԻՐԻ ՄԱՍԻՆ
(Сказания о Владимире)

Մանրամասն կանգ առնենք տարեգրական պատմվածքների վրա, որոնք բնութագրում են Սվյատոսլավի որդի մեծ իշխան Վլադիմիր I-ին։

Տարեգրության մեջ նրա մասին շատ պատմություններ կան և երևում է, որ նրանք ստեղծվել են տարբեր ժամանակ, ըստ երևույթին տարբեր հեղինակների կողմից, բայց ժողովածուն կազմողը միացրել և ամբողջականացրել է դրանք։

Այդ պատմվածքները բաժանվում են երկու խմբի։ Պատմվածքների առաջին խումբը պատկերացնում է հեթանոս Վլադիմիրին (մինչ 988 թ.), իսկ երկրորդը՝ քրիստոնյա Վլադիմիրին։

Հեթանոս-Վլադիմիրը նկարագրված է իբրև բարբարոսների իշխան, անսանձ իր վայելքների մեջ, դաժան, կնամոլ, սակայն հմուտ և լավ զորավար, ձեռներեց տիրակալ։

Քրիստոնյա-Վլադիմիրը վերափոխվում և դառնում է մի սիրալիր, հյուրընկալ, բարի և աղքատասեր իշխան։ Վախենալով «մեղք» գործել, նա մի ժամանակ նույնիսկ դադարում է մահապատժի ենթարկել ավազակներին։ Եպիսկոպոսներն անգամ ստիպեցին կշտամբել նրան այդ բանի համար։

Ժողովրդական էպոսի հետքերը ակներև են «Վլադիմիրը և նրա կինը՝ Ռոգնեդան» բանաստեղծական պատմվածքի մեջ։

Երբ Յարոպոլկը, իր Օլեգ եղբորը հաղթելուց հետո, տիրացավ ամբողջ Ռուսիային, այսինքն դարձավ հարավի՝ Կիևյան պետության իշխանը, Վլադիմիրը իր հերթին տիրացավ Նովգորոդին։ Վլադիմիրը դեսպան ուղարկեց իշխան Ռոգվոլոդի մոտ՝ Պոլոկ քաղաքից* այսպիսի խոսքերով՝ «Ուզում եմ քո դստերն ինձ կնության առնել»։ Ռոգվոլոդ իշխանը հարցնում է իր դստեր Ռոգնեդային՝ ուզում է արդյոք նա ամուսնանալ Վլադիմիրի հետ։ Ռոգնեդան պատասխանում է՝ «Չեմ ուզում հարճորդու կոշիկները հանել, բայց նրա եղբորը՝ Յարոպոլկին

* Պոլոկ քաղաքը գտնվում է Պոլոտա գետի վրա, այժմյան Բելոռուսիայի տերիտորիայում։

կառնեմ»։ Այստեղ բացատրվում է, թե ինչու Ռոգնեդան Վլադիմիրին հարճորդի է անվանում։ Վլադիմիրի հայրը քաջարի Սվյատոսլավն էր, իսկ մայրը՝ Օլգայի մառանապետուհի Մալուշան։ Հարսնացու ծեսը պահանջում էր, որ առաջին գիշերը, ի նշան հնազանդության, հարսը հանի փեսայի կոշիկները։ Երբ Վլադիմիրին հայտնում են հպարտ Ռոգնեդայի պատասխանը, նա մեծ զորքով գնում է Պոլոկի վրա։ Այնտեղ պատրաստություն էին տեսնում Ռոգնեդային Յարոպոլկի մոտ տանելու, բայց Վլադիմիրը սպանում է Ռոգվոլդին և նրա երկու որդիներին ու Ռոգնեդային իրեն կնություն է առնում։ Հետո նա արշավում է Յարոպոլկի վրա, սպանում նրան, տիրանում Կիևի մեծ իշխանությանը, իսկ իր ձեռքով սպանած եղբոր այրի կնոջն իր կինը դարձնում։ Սրանից է որ ծնվում է Սվյատոպոլկ Նզովյալը։

Բիլինային էպոսի հետքերը շատ ակնհայտ են երկու պատմվածքների մեջ, որոնց գործողությունները հարմարեցված են X դարի վերջի իրադարձություններին, որ տեղի են ունեցել Ռուսիայի մկրտությունից հետո։

Կոժեմյակայի մենամարտը պեչենեգ հսկայի հետ (993 թիվ)
(Поединок Кожемяки с печенежским богатырём)

Այստեղ նկարագրված է, թե ինչպես Վլադիմիրն իր դրուժինայով հանդիպում է պեչենեգների հետ Տրուբեժ գետի վրա։ Ուժերն անհավասար էին։ Պեչենեգների իշխանն առաջարկում է գործը վերջացնել մենամարտով. եթե ռուս բոգատիրը հաղթի, պեչենեգները երեք տարի չեն հարձակվի Ռուսիայի վրա, իսկ եթե պեչենեգ բոգատիրը հաղթի, ապա պեչենեգները երեք տարի պիտի պատերազմեն ու ավերեն Ռուսիան։ Վլադիմիրը կոչ է անում մենամարտի դուրս գալ պեչենեգ բոգատիրի հետ։ Դրուժինայից ոչ ոք չի արձագանքում։ Վլադիմիրը «տխրեց ու սկսեց վհատվել» ճիշտ այնպես, ինչպես բիլինայի մեջ նա լալիս ու աղավում է, երբ Կիևում բացակայում էին նրա քաջարի բոգատիրները։ Վերջապես գտնվում է մեկը, որն իր պատրաստակամությունն է հայտնում մենամարտել բոգատիրի հետ։ Նա ռազմիկ չէր, ոչ էլ բոգատիր, այլ մի համեստ պատանի, արհեստավոր՝ կաշեգործ («դաբաղ»), նույնիսկ արտաքին տեսքն էլ հսկայական չէր, այլ «միջակ կազմվածք ուներ»։ Եվ պեչենեգ-հսկան սկսեց ծիծաղել նրա վրա։ «Դաբաղը» խեղդամահ

արեց պեչենեգին և փրկեց ռուս ժողովրդի պատիվը։ Վլադիմիրը անչափ ուրախացավ և այնտեղ հիմնեց Պերեյասլավլ քաղաքը, որովհետև պատանին խլեց պեչենեգ հսկայի պատիվը «переяславу» (խլեց պատիվը)։ Այս ժողովրդական ստուգաբանության նմուշներից մեկն է տարեգրության մեջ։

Բելգորոդյան կիսելի մասին
(О белогородском киселе)

Մեկ ուրիշ պատմվածքի մեջ նկարագրվում է Բելգորոդ քաղաքի պաշարումը։ Բելգորոդի սովամահ ժողովուրդն արդեն պատրաստ էր անձնատուր լինել պեչենեգներին, երբ մի ծերուկ նրանց մի խորամանկ խրատ է տալիս։ Նա պատվիրում է երկու փոս փորել, որոնցից մեկի մեջ մեղր են լցնում, մյուսի մեջ՝ կիսել։ Կիսելի համար ալյուրը մեկական բուռ հավաքել էին քաղաքացիներից։ Այդ հորերի մոտ բերում են 10 պեչենեգ։ «Ինչու եք իզուր տեղը կոտորում ձեզ, երբ չեք կարող հաղթել մեզ։ Եթե 10 տարի էլ մեր քաղաքը պաշարման մեջ պահեք, մենք կապրենք, քանի որ ինքը հողն է կերակրում մեզ»։

Մայրհողի, կերակրող-հողի առասպելը հանդիպում ենք բոլոր հողագործ ժողովուրդների աշխատանքային մոգական ծիսային պոեզիայի մեջ. Նա պահպանվել է և ավելի ուշ ժամանակներում, հաճախ կրկնվելով հեքիաթների մեջ։ Բելգորոդյան կիսելի լեգենդի մեջ գերիշխողը ժողովրդական հեքիաթային հիմքն է։

Խնջույքներ Վլադիմիր իշխանի մոտ
(Пиры у князя Владимира)

Վլադիմիր-Կարմիր-Արևի խնջույքների մասին հիշվում է Կիևի գրեթե ամեն մի հերոսական ժողովրդական բիլինայի մեջ։ «Անցած տարիների պատմության» մեջ նույնպես, ժողովրդական էպոսի ազդեցության տակ, պատմվում է այն մասին, թե ինչպես Վլադիմիրն ամեն շաբաթ խնջույքներ է սարքում։ Ճոխ սեղանները լեփլեցուն էին անասունների ու վայրի գազանների մսով։ Կերած-խմած դրուժինան խնջույքների ժամանակ սկսում էր դժգոհել իշխանից, ասելով՝ «Լավ չէ մեզ համար, իշխա՛ն, մենք փայտե գդալներով ենք ուտում և ոչ արծաթե»։ Լսեց այս բանը Վլադիմիրը և պատվիրեց դրուժինային

արծաթ գդալներ տալ, ասելով՝ «Արծաթով ու ոսկով դրուժինա ձեռք չեմ կարող բերել, իսկ դրուժինայով ձեռք կբերեմ և՛ արծաթ, և՛ ոսկի, ինչպես հայրս՝ Սվյատոսլավը և պապս՝ Իգորը, դրուժինայի միջոցով ձեռք բերին թե՛ ոսկի և թե՛ արծաթ»։ Մի այլ հատվածում ասված է, թե ինչպես պեչենեգներին հաղթելուց հետո Վասիլևի մոտ Վլադիմիրը 8 օր խրախճանքի մեջ է եղել և այդ խնջույքում խմել են անչափ շատ մեղրախմիչք՝ մոտ 200.000 լիտր։

ը) ԶՐՈՒՅՑ ՔՐԻՍՏՈՆԵՈՒԹՅՈՒՆՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Сказания о принятии христианства)

Թե ինչպես Վլադիմիրի ժամանակ քրիստոնեությունն ընդունեցին Կիևյան Ռուսիայում՝ բավականաչափ հայտնի է ՍՍՌՄ պատմության դասագրքերից։

Տարեգիրը, պատմելով այն մասին, թե ինչպես Վլադիմիրը կուռքեր է կանգնեցնում՝ հսկայական փայտյա Պերունը, որի գլուխն արծաթից էր, իսկ բեղերը ոսկուց և մի քանի ավելի փոքր կուռքեր, նկարագրում է հետևյալ դեպքը։ Հեթանոսների ամբոխը ծվատում է երկու վարյագ-քրիստոնյաների, հորը և որդուն, նրա համար, որ հայրը թույլ չի տալիս, որ իր որդուն զոհեն աստվածներին։

Այս պատմվածքը նպատակ ունի ապացուցելու, որ քրիստոնեությունը Ռուսիայում սկսել է տարածվել Ռուսիայի մկրտությունից շատ առաջ։ Հին հեթանոսությունը՝ տոհմական կարգերի այդ կրոնը այլևս չէր բավարարում իշխող ֆեոդալական դասակարգին։ Վլադիմիրի կողմից «կրոններ փորձելու» լեգենդը հետաքրքիր է այն տեսակետից, որ իշխանը տեսակցություններ է ունենում և խոսում մահմեդական, կաթոլիկ, հրեական և, վերջապես, ուղղափառ հունական կրոնների ներկայացուցիչների հետ, որովհետև նրան հետաքրքրում է մի այնպիսի կրոն, որը ընդունում է միայն մի աստված, մի կրոն, որը կարող է գաղափարապես արդարացնել և ամրացնել իշխանի տիրապետությունը ժողովրդի վրա։ Տոհմական կարգերի հին հեթանոսական կրոնն այլևս չի օգնում պետական կյանքին, դասակարգային հասարակության պայմաններում։

Վլադիմիրը զանազան երկրներ դեսպաններ է ուղարկում «փորձելու նրանց հավատքը» և տեղում ուսումնասիրելու, թե

ում կրոնն է ավելի լավ, և նախապատվություն տալիս է հունական կրոնին։ Բյուզանդիայում պատրիարքն ու թագավորը հոգևոր և աշխարհիկ իշխանությունների ներկայացուցիչներն էին։ Կրոնը սրբագործում էր թագավորի, իբրև բոլոր ֆեոդալների գլխավորի իշխանությունը։ Այդ հանգամանքը, ըստ երևույթին, խթան է հանդիսացել այդ կրոնն ընտրելու համար։ Հարկավ, «Անցած տարիների պատմության» մեջ նման շեշտակի պատճառաբանություն չկա, այնտեղ կա միայն մի կիսաերևակայական հունասիրական հեքիաթ—այսպես կոչված «Կորսունի լեգենդը»։

Կորսունի լեգենդը
(„Корсунская легенда“)

988 թվին Վլադիմիրը պաշարում է հունական (Խերսոնես) Կորսուն քաղաքը, որը գտնվում էր Ղրիմում և գրավում է այն դավաճան քաղաքացիներից մեկի օգնությամբ։ Դավաճանը պաշարված քաղաքից նրան նետի վրա նամակ է ուղարկում և հայտնում ստորերկրյա ջրմուղի տեղը, որտեղից քաղաքը ջուր է ստանում։ Հենց այդ ժամանակ Վլադիմիրն ուխտում է ընդունել քրիստոնեությունը։ Ապա նա արշավում է Ցարգրադի վրա պահանջելով, որ հունական թագավորների քույր՝ Աննան ամուսնանա իրեն հետ։ Աննան պատասխանում է, որ նա չի ամուսնանա պիղծ հեթանոսի հետ։ Երբ Աննան եկավ նրա մոտ՝ Կորսուն, Վլադիմիրը, որը կորցրել էր աչքերի լույսը, շտապում է մկրտվել և իսկույն ապաքինվում է։ Այս լեգենդը հակասում է Իլարիոնի ազգային-հայրենասիրական կոնցեպցիային, որ նա արտահայտել է «Ճառ օրենքի և շնորհի մասին» երկի և Նեստորի «Ընթերցածի» մեջ։ Դուրս է գալիս, որ Վլադիմիրը մկրտվել է երկյուղ կրելով կուրանալուց։

Հունական և արաբական աղբյուրները հաստատում են, որ միայն Վլադիմիրն է, որ իր զորքերով օգնեց Բյուզանդիային և նրա կայսր Վասիլիյ Բուլղարամարտին, ճնշելով Վարդ-Ֆոկասի ապստամբությունը 988 թ., բայց հետո հույների պայմանադրուժ լինելու պատճառով՝ Վլադիմիրը հարձակվում է նրանց վրա, գրավում Կորսուն քաղաքը, ապա ամուսնանում արքայադուստր Աննայի հետ։ Այդ քաղաքական ակտը հետապնդում էր Վլադիմիրի դինաստիան ամրապնդելու և Բյուզանդական կայսրին հավասարվելու ձգտումը։

Քրիստոնեությունն ընդունելուց հետո,—շարունակում է տարեգրությունը,—Վլադիմիրը վերադառնում է Կիև և տապալում կուռքերը: Կիևում կուռքերի կործանման միջադեպը շատ գեղեցիկ է նկարագրված: Վլադիմիրը կարգադրում է կուռքերից մի քանիսը տապալել, մյուսները ջարդ ու փշուր անել, իսկ Պերունի կուռքը հրամայում է կապել ձիերի պոչից և քաշ տալ բլուրից, Բորիչևի զառիվայրով գլորելով ցած: Կուռքերը Դնեպրի գետը նետեցին, չմկրտված ժողովուրդը լաց ու կոծ էր անում:

«Հետո, —շարունակում է պատմել տարեգիրը,—988 թվին մկրտեցին կիևցիներին Դնեպրի գետի մեջ: Ժողովուրդը կանգնել էր ջրի մեջ ափից ոչ հեռու, կանայք գեղեցիկ երեխաներին գրկած, իսկ տերտերները գետի ափին աղոթքներ էին ասում»: Մկրտությունն այնքան էլ խաղաղ չանցավ: Վլադիմիրի սուրհանդակները՝ շրջելով քաղաքի մեջ, հայտարարում էին իշխանի հրամանը՝ «Ով որ չգտնվի գետի ափին, լինի նա հարուստ, թե աղքատ, թշվառ, թե ստրուկ, ինձ հաճո չի լինի»:

*
* *

XI դարից սկսած դեպքերը նկարագրվում են ավելի ընդարձակ և տարեթվերը նշանակվում ճշտությամբ: Տարեգիրը XI դարը սկսում է Վլադիմիրի մահվան նկարագրով և նոր գահին տիրացող Սվյատոպոլկի եղբայրների դեմ մղած պայքարով: Վերջիններից երեքին՝ Բորիսին, Գլեբին ու Սվյատոսլավին նա սպանեց, իսկ չորրորդից՝ Յարոսլավից պարտություն կրեց: Սա հաղթելով նաև Մստիսլավ Եղբորը, ինքը դարձավ Կիևի մեծ իշխանը (1019—1054 թ.): Սվյատոպոլկը առաջին անգամ էր, որ դաշինք կնքեց պեչենեգների հետ և օգտագործեց նրանց ներքին երկպառակությունների մեջ:

Յարոսլավին տարեգիրը փառաբանում է քրիստոնեական կրոնը տարածելու և դեպի գիր ու գրականություն ունեցած սիրո համար: «Մենք իմաստություն և ժուժկալություն ենք գտնում գրքերի մեջ»,—գրում է տարեգիրը,—«վասն զի դրանք գետեր են, որոնք սնուցանում են ամբողջ տիեզերքը· դրանք աղբյուրներն են իմաստության, որովհետև անսահման է գրքերի խորությունը. նրանցով ենք մխիթարվում տխրության պահին և նրանք ժուժկալության սանձն են»:

2. «ԱՆՑԱԾ ՏԱՐԻՆԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ» ԵՐԿՐՈՐԴ ՄԱՍԸ

1039 թվից սկսվում է տարեգրության 2-րդ մասը, որը հանդիսանում է արդեն ամենամյա տարեգրություն:

Երկրորդ մասում մեծ տեղ են գրավում հետևյալ հարցերը:

1. 60-ական թվականներին հիմնադրված Կիև-Պեչորյան վանքի վիճակը:

2. Պոլովցիների դեմ մղվող պայքարը, որոնք առաջին անգամ ներխուժեցին ռուսական երկիրը 1051 թվին:

3. Իշխանների հանցագործություններն ու երկպառակությունները ի հայտ բերելը:

Դեպքերի մեծ մասը, մինչ 1110 թիվը, գրել է Նեստորը, իսկ վերջին մասը ենթարկվել է խմբագրական վերամշակության և այստեղ միջարկության կարգով զետեղված են տարբեր մարդկանց մի շարք պատմություններ:

Ամենահուզիչ, ներքին դրամատիզմով լի պատմություններից մեկը, որը պատկանում է Վասիլիյ քահանային, դա Վասիլկո Տրեբովլսկուն կուրացնելու պատմությունն է, որը մտցված է «Անցած տարիների պատմության» երկրորդ խմբագրության մեջ 1116 թվին, հավանական է Վլադիմիր Մոնոմախի պահանջով:

Կիևի մեծ իշխան Վսեվոլոդի մահից հետո (1093 թ.) Մոնոմախը չգրավեց Կիևյան գահը, այլ կամովին զիջեց այն իր հարազատ հորեղբորը՝ Սվյատոպոլկ Իզյասլավիչին, իբրև տոհմի ավագ ներկայացուցչին, իսկ հաջորդ տարին Մոնոմախը նույն հիմունքներով զիջեց Չերնիգովյան գահը իր մյուս հորեղբորը՝ Օլեգ Սվյատոսլավիչին, որին «Ասք Իգորի արշավանքի մասին» երկի հեղինակը մեղադրում է պոլովցիներին երեք անգամ ռուս երկիրը բերելու համար:

1097 թվին Մոնոմախը Լյուբեչում գումարում է իշխանների առաջին համագումարը, որպեսզի վերջ դնի իշխանների ներքին պառակտումներին:

Իշխաններն ասում էին. «Ինչո՞ւ ենք կործանում ռուս երկիրը, իրար դեմ դավադրվելով և պառակտումներ սարքելով: Իսկ պոլովցիները երկպառակություն են սերմանում մեր երկրում և հրճվում են, երբ մեր մեջ կռիվներ են լինում: Այսուհետև բոլորս միահամուռ լինենք և պաշտպանենք ռուս երկիրը: Թող ամեն մեկը պահպանի իր հայրական կալվածքը—հայ-

րենիքը (վոտչինան)՝ Սվյատոպոլկը՝ Իզյասլավի հայրական հողը — Կիևը, Վլադիմիրը՝ Վսեվոլոդի հայրական հողը — Պերեյասլավը, Դավիթը, Օլեգը և Յարոսլավը — Սվյատոսլավի հայրական հողը. և ում ինչ քաղաք, որ տվել է Վսեվոլոդը՝ Դավթին՝ Վլադիմիր քաղաքը, Ռոստիսլավիչներին՝ Պերեմիշլը, իսկ Վասիլկոյին՝ Տերեբովլը»։

Համագումարը որոշում է, որպեսզի ամեն մի իշխան այսուհետև իր հայրական կալվածքում մնա ու իր հայրենիքը (վոտչինան) պաշտպանի։ Իշխանները համբուրում են խաչը և երդվում չխախտել պայմանագիրը, ասելով՝ «Եթե մեկը ապստամբի մյուսի դեմ, նրա դեմ կլինենք բոլորս», այսինքն բոլորը միասին կհարձակվեն խռովարարի վրա։

Դեռ նոր էր վերջացել համագումարը, երբ իշխան Դավիթ Իգորևիչը Վլադիմիր-Վոլինսկի քաղաքից, և մեծ իշխան Սվյատոպոլկ Իզյասլավիչը դիտավորյալ հյուր կանչեցին իրենց մոտ Տերեբովլեսկի Վասիլկոյին, որպեսզի նրան կուրացնեն։

Երբ Վասիլկոն ձին նստած գնում էր, նրան հանդիպեց նրա կրտսեր դրուժիննիկն ու ասաց՝ «Մի գնա իշխան, քեզ ուզում են բռնել»։ Չլսեց նրան Վասիլկոն, մտածելով՝ «Ինչպես թե ուզում են ինձ բռնել։ Քիչ առաջ համբուրեցինք խաչն ասելով՝ եթե մեկը մյուսի դեմ լինի, նրա դեմ կլինեն խաչն ու մենք բոլորս»։

Վասիլկոն իր փոքր դրուժինայով գալիս է իշխանական խնջույքին, բայց չի ուզում երկար մնալ։ Եղբայրները նրան պահում էին, համոզելով՝ «Դե՛ կեր եղբայր»։ Ապա եղբայրները մեկը մյուսի ետևից դուրս են գնում սրահից, և ուղարկում իրենց մարդկանց, որոնք հարձակվում են Վասիլկոյի վրա, գետին գլորում, կապկպում ձեռքերը, շղթայում և սայլի վրա դրած տանում Բելգորոդ, որտեղ գցում են փոքր բաղնիքը։ Այնտեղ նստած էր Թորքը և դանակ էր սրում։ Վասիլկոն հասկանում է, որ իրեն ուզում են կուրացնել, և լալով ու ողբալով գոչում է առ աստված։ Ներս են մտնում ախոռապանները, Սվյատոպոլկը և Դավիթը, որոնք հիշվում են անուններով։ Ախոռապանները փռում են գորգը և ուզում են գետին գլորել Վասիլկոյին, բայց նա կատաղի դիմադրություն է ցույց տալիս. «Չկարողացան նրան տապալել»։ «Այն ժամանակ ներս են մտնում ուրիշները, գլորում նրան, կապկպում, վառարանի վրայից վերցնում են տախտակը, դնում նրա կրծքին և տախտակի երկու ծայրերին

նստում են ախոռապանները՝ Սնովիդն ու Դիմիտրին։ Բայց Վասիլկոն այնքան ուժեղ էր, որ հետ է մղում նրանց։ Այն ժամանակ մոտենում են ևս երկու մարդ, վերցնում են վառարանի վրայից էլի մի տախտակ, դնում են նրա կրծքին և իրենք էլ տեղավորվելով՝ այնպես են սեղմում, որ Վասիլկոյի կրծքի ոսկորները սկսում են ճարճատել։ Այդ ժամանակ մոտենում է Թորք Բերենդեյը՝ Սվյատոպոլկի հովիվը, դանակը ձեռքին, ուզում է զարկել Վասիլկոյի աչքին, բայց վրիպում է և կտրում է նրա երեսը, այդ վերքը Վասիլկոն մինչև օրս էլ ունի (ավելացնում է պատմողը)։ Հետո դանակը խրում է նրա աչքը և հանում աչքը, ապա մյուս աչքն է խրում և դա էլ է հանում»։ Կիսամեռ, կուրացած Վասիլկոյին սայլ են դնում ու տանում Վլադիմիր-Վոլինսկ։

Ճանապարհին նրանք կանգ են առնում ճաշելու Վոզդվիժիվանսկ։ Վասիլկոյի արյունլվա շապիկը հանում են և տալիս տանտիրուհուն լվանալու։ Սա լվանում է շապիկն ու նորից հագցնում նրան, իսկ մյուսները այդ ժամանակ ճաշում էին։ Տիրուհին սկսում է լաց լինել ու ողբալ Վասիլկոյի վրա, ինչպես ողբ են ասում մեռածի վրա։ Վասիլկոն լսում է լացի ձայնն ու հարցնում՝ «Որտե՞ղ եմ ես»։ Նրան պատասխանում են՝ «Քաղաքում՝ Վոզդվիժենսկում»։ Նա ջուր է ուզում, ջուր են տալիս։ Ջուրը խմեց, ուշքի եկավ, հիշեց, շոշափեց շապիկը և ասաց՝ «Ինչո՞ւ հանեցիք վրայիցս։ Այն արյունոտ շապիկով պետք էր, որ ես մահն ընդունեի և աստծու առաջ կանգնեի»։

Դավիթը բերում է Վասիլկոյին իր մոտ Վլադիմիր (Վոլինի վրա), կարծես մի մեծ ավար էր բերում, և 30 մարդ ու իշխանական երկու սարուկ (պատանի) նշանակում նրան հսկելու։

Երբ Մոնոմախը իմացավ այդ արյունալի հանցագործության մասին, սարսափեց և ասաց՝ «Չէր եղել դեռ այդպիսի չարագործություն Ռուսիայի վրա, ոչ մեր պապերի, ոչ էլ մեր հայրերի օրով»։

Վլադիմիր Մոնոմախին վիճակվել էր նույն դերը, ինչ որ Յարոսլավ Իմաստունին՝ Սվյատոպոլկ Նզովյալի դեմ մղած պայքարում։ Նա խաղաղասեր էր, միության կողմնակից, երկպառակությունների թշնամի, բայց նա ստիպված էր «դատաստան տեսնել»՝ զենքի ուժով սաստել իր նենգ և ուխտադրուժ ազգականներին։

Մոնոմախն ուղարկում է իր հորեղբորորդիներին կանչելու

տրպեսցի. Նրանց հետ միասին լուծի կուրացած Վասիլկոյի վրեժը ու պատժի Սվյատոպոլկին ու Դավթին:

Սվյատոպոլկը հանցանքը գցում է Դավթի վրա ասելով՝ «Ես չեմ կուրացրել նրան», իսկ Դավիթը մեղադրում է Սվյատոպոլկին, իբրև մեծ իշխանի տոհմի ամենավագին: Բայց Վլադիմիրի մարդիկ, որոնք ուղարկված էին քննություններ վարելու, ասում են նրան՝ «Մի՛ արդարանա նրանով, որ Դավիթն է կուրացրել նրան. Դավթի քաղաքում չեն բռնել ու կուրացրել նրան, այլ քո՛ քաղաքում»:

Ամեն տեղ ընդգծվում է Վասիլկոյի բարոյական շիտակությունն ու արդարացիությունը և Սվյատոպոլկ Իզյասլավիչի հանցագործությունը: Վլադիմիր Մոնոմախը, երևան գալով վրիժառուի դերում, մինչև իսկ բուռն ու մոլեգին երկպառակությունների ժամանակ՝ կարողանում է զսպել իրեն, հաշվի նստելով հասարակական շահերի, ժողովրդի շահերի հետ: Վլադիմիրն իր դաշնակիցների հետ եկել, մոտեցել էր Կիևին: Նրանք կանգնած էին Դնեպրի ափին, իսկ Կիևում խառնակություն էր տիրում, և Սվյատոպոլկ Իզյասլավիչն ուզում էր փախչել իր մայրաքաղաքից: Կիևցիները չթողեցին նրան: Նրանք գնացին Վսեվոլոդի այրու՝ Վլադիմիրի խորթ մոր մոտ և խնդրեցին նրան ու միտրոպոլիտ Նիկոլային անցնել Դնեպրի մյուս ափը և ասել Վլադիմիր Մոնոմախին՝ «Աղաչում ենք քեզ իշխան, և քո եղբայրներին՝ մի՛ կործանեք ռուս երկիրը: Եթե դուք պատերազմեք միմյանց հետ, «պիղծերը» (այսինքն պոլովցիները) կուրախանան ու կխլեն մեր երկիրը, որն այնքան մեծ դժվարությամբ ու քաջությամբ ձեռք են բերել ձեր հայրերը:

Նրանք և՛ ռուսական երկիրն էին պաշտպանում, և՛ ուրիշ երկրներ ձեռք բերում, իսկ դուք ուզում եք խորտակել ռուս երկիրը»:

Լսեց նրան Վլադիմիր Մոնոմախը, արտասվեց ու ասաց՝ «Իրավ է, մեր հայրերն ու պապերը պաշտպանեցին ռուսական երկիրը, իսկ մենք ուզում ենք խորտակել նրան»: Վլադիմիրը չպատերազմեց և խաղաղությունը վերականգնեց:

Մոնոմախին ուղղած կիևցիների խնդիրքը արտահայտում է Վլադիմիր Մոնոմախի գաղափարը, որ նա գրել է իր «Խրատի» մեջ: Ընդհանրապես Մոնոմախը շատ դրական է բնութագրված: Նա ստիպված է հաշվի նստելու ժողովրդի կարծիքի հետ: Իր այրիացած խորթ մոր հետ նա վարվում է իբրև հարազատ մոր,

Ճարգում է հոգևոր իշխանությունը, չի քամահրում նրանց խորհուրդները, հնազանդ է նրանց։

Երբ Վլադիմիր Մոնոմախն ու Սվյատոպոլկը գժտվեցին Վասիլկոյին կուրացնելու համար, Կիև-Պեչորյան վանքը մեծ իշխանին էր պաշտպանում։ Բայց տարեգրության մեջ այդ մոմենտը սքողված է և ընդգծված այն, որ կիևցիները՝ ուղարկելով Մոնոմախի մոտ նրա խորթ մորն ու միտրոպոլիտին, հիշեցրել են Մոնոմախին իշխանների վրա դրված պարտականությունների մասին, այն է՝ խնայել ու չկործանել երկիրը, այլապես պոլովցիների հրոսակախմբերը կներխուժեն Ռուսիա ու կկլեն երկիրը։ Մոնոմախը պատասխանատու է ժողովրդի առաջ և դրանով նա աչքի է ընկնում և տարեգրի կողմից ավելի բարձր դասվում, քան բոլոր մյուս իշխանները։ Վլադիմիրի ճառը իշխանների Դոլոբյան համագումարում ցույց է տալիս, որ նա մյուս իշխաններից ավելի լավ է հասկանում սմերդներին, ժողովրդական ստորին խավերին զիջումներ անելու անհրաժեշտությունը։ Հեռատես Վլադիմիր Մոնոմախը տեսնում էր, որ շարունակ աճող շահագործումն ու ճնշումը առաջ են բերում մեկը մյուսի ետևից նորանոր ապստամբություններ։ Այդ պատճառով նա կոչ է անում՝ հոգատար լինել սմերդների մասին, պաշտպանել նրանց պոլովցիների հրոսակային հարձակումներից, որոնց իշխանները պետք է միահամուռ ուժերով պաշտպանեն պոլովցիների ասպատակություններից։

Իդեալիզացիայի ենթարկված իշխանին լրիվ կոնտրաստ հակադրվում են հանցագործ իշխաններ Դավիթն ու Սվյատոպոլկ Իզյասլավովիչը։

Կուրացնելով Վասիլկոյին, որին միշտ Վլադիմիրի դաշնակիցն էին համարում, նրանք երկուսն էլ խուսափում են պատասխանատվությունից իրենց արյունահեղ արարքի համար, վիճում են և մեղքը իրար վրա գցում, որը և վերջը հասցրեց կռվի։ Ռուս մարդկանց մոտ նրանք չկարողացան կողմնակիցներ գտնել և ամեն մեկն իր հերթին զորք հավաքեց վարձկան ծառաներից։ Այս բանն ավելի է ընդգծում նրանց կռիվների հակապետական, սոսկ անձնական բնույթը։ Սվյատոպոլկը հաղթում է այդ կռվում։ Բայց այդ հաղթանակը միայն գլխապտույտ է առաջացնում նրա մեջ։ Դավթին նրա քաղաքից վռնդելուց հետո, նա զորքով գնում է Վասիլկոյի վրա։

Վասիլկոյի զորքի առաջ բարձրացնում է այն խաչը, որի

վրա երդվել են իշխանները Լյուբեչի համագումարում և մեղադրում է Սվյատոպոլկին՝ «Դու համբուրեցիր այս խաչը, իսկ հետո հանեցիր իմ աչքերը, զրկելով ինձ աչքի լույսից։ Այժմ էլ ուզում ես իմ հոգին առնել։ Թող այս խաչը կանգնի մեր մեջ»։

Եվ Ռոժնայի ճակատամարտում արդարությունը հաղթանակում է։ Երբ զորքերը գրոհեցին, շատ բարեպաշտ մարդիկ տեսան՝ տարեգրի ասելով՝ խաչը, որ կանգնած էր Վասիլկոյի մարտիկների վրա։ Կատաղի էր ջարդը։ Սվյատոպոլկը պարտվում է և անարգ փախուստի դիմում։

Մենք կանգ առանք «Անցած տարիների պատմության» թվով ոչ այնքան շատ, բայց առավել նշանավոր ու բնորոշ պատմությունների վրա, չհիշատակելով նաև պոլովցիների դեմ մղվող պայքարի պատմությունը, քանի որ այս թեման արծարծվելու է հաջորդ գլխում՝ «Ասք Իգորի արշավանքի մասին» երկասիրության կապակցությամբ։ Չենք խոսում նաև Կիև-Պեչորյան վանքի հիմնադրման պատմության մասին, այնքանով, որքան Կիև-Պեչորյան վանքի ամբողջ գործունեությունը կապված է Կիև-Պեչորյան պատերիկի հետ, իսկ սոսկ Կիև-Պեչորյան մայր-վանքի պատմությունը սակավ հետաքրքրական ենք համարում գրականագետի համար։

Ի՞նչ դեր խաղաց Սիլվեստրը Նեստորի տարեգրության վերամշակման գործում։

Նա նորից վերամշակեց և բավականաչափ լրացրեց տարեգրության վերջին մասը, որտեղ նկարագրված են 1093—1113 թվականների ընթացքում կատարված դեպքերը, այսինքն՝ վերջին 20 տարին։ Դրանք են Վլադիմիր Մոնոմախի վարած քաղաքականության ոգով։ Այդ մասի գլուխ-գործոցը Վասիլյ քահանայի պատմածն է Տերեբովլցի Վասիլկոյին կուրացնելու մասին։ Սքանչելի են նաև իշխանների և իր՝ Մոնոմախի ճառերը, արտասանած Լյուբեչի, Ուվետիչի, Դոլոբսկու համագումարներում, դեսպանների խոսքերը ռազմական բանակցությունների ժամանակ, որոնք պատմական շատ կարևոր և ճշմարիտ փաստաթղթեր հանդիսանալով, միաժամանակ գրական-գեղարվեստական ձևով հայրենասիրական բարձր գաղափարներ են արտահայտում։

«Անցած տարիների պատմության» ընդհանուր միտումը՝ նրա հայրենասիրությունը չի խախտվել նաև երկրորդ խմբագրի

կողմից, իսկ տարեգրության մեծ մասը, որտեղ նկարագրված են մինչ Դոլոբյան համագումարի դեպքերը, հիմնականում մնացել է անփոփոխ, բացի մի միջանկյալ հատվածից, այն է՝ Անդրեաս առաքյալի Ռուս երկիրն այցելելու մասին։

«Անցած տարիների պատմությունը» մի նշանավոր գործ է։ Այս երկը և նրա պատմությունների գեղարվեստական ձևը բացառիկ ազդեցություն են գործել ամբողջ ռուս հին գրականության վրա։

Տարեգրության առաջին պատմությունների վրա էապես ազդել է ֆոլկլորը՝ էպոսը, դրուժինային երգերը, տեղական լեգենդները, մինչև իսկ հեքիաթները։

Քաղաքական գաղափարները արտացոլելով տիրող դասակարգի գաղափարները, հին Ռուսիայի կյանքի յուրահատկության պատճառով՝ լիովին մոտենում էին ժողովրդական մասսաների տրամադրությանը, թեպետ և տարեգրության բովանդակությունն իշխանների մասին է։ XI դարի վերջից տարեգրությունն սկսում է պետական բնույթ կրել, դառնում է քաղաքական փաստաթուղթ, որի նպատակն է ներգործել ներկա դրության վրա, մատնանշելով զանազան օրինակներ ռուսաց պատմական անցյալից, իսկ մյուս կողմից, այնպես լուսաբանել ներկան, ներկային տալ այնպիսի գնահատական, որ հետագա սերունդը կարողանա սովորել իր նախորդների նույնիսկ սխալների վրա։ Երկրի միասնությունը և ֆեոդալական իշխանների վրա դրված ռուս երկիրը պաշտպանելու գործի բարոյական պատասխանատվությունն է դառնում անկյունաքար՝ իշխող գաղափար ռուս գրականության համար։ Ռուս հին գրողները դաստիարակում էին սերունդների զգացմունքները, կապելով ներկան անցյալի հետ, մղելով նրանց դեպի ապագա սխրագործությունները։

Ահա թե ինչու «Անցած տարիների պատմությունը» հարավցիների և հյուսիսցիների՝ ռուսների, ուկրաինացիների և բելոռուսների այդ ընդհանուր օրրանը, իբրև սկզբնական տարեգրություն, հետագայում մտել է բոլոր մարզային տարեգրությունների մեջ։ Նրա շարունակությունն էին հյուսիսային և հարավային տարեգրությունների ժողովածուները։ Հարավայիններն են՝ Հարավային Պերեյասլավլի, Չերնիգովի, Վոլինսկի տարեգրությունները, իսկ հյուսիսայինները՝ Հյուսիսային Պերեյասլավլի կամ Սուզդալյան Ռոստովի, Վլադիմիրի և այլ վայրերի տարեգրությունները։

V. «ԱՍՔ ԻԳՈՐԻ ԱՐՇԱՎԱՆՔԻ ՄԱՍԻՆ»

(«Слово о полку Игореве»)

Ներածություն

«Ասք Իգորի արշավանքի մասին» ռուս հին գրականության մեծագույն հուշարձանն է, որն ունի համաշխարհային, գեղարվեստական նշանակություն։ Նա բառիս տառացի իմաստով մի գլուխ գործոց է։ Դա է գլխավորում Կիևյան Ռուսիայի գրականությունը, բոլորելով նրա զարգացումը, և միաժամանակ ուղիներ է բաց անում ամբողջ ռուս գրականության գեղարվեստական զարգացման հետագա յուրահատուկ տենդենցներն ըմբռնելու համար։ Մինչև Պուշկինի պոեզիայի հանդես գալը ռուս գրականության մեջ չկա մի երկասիրություն, որն իր գեղարվեստականությամբ, լեզվի պայծառությամբ ու պատկերավորությամբ, ռուս կյանքի արմատական հարցերի ընդգրկման խորությամբ և մարդու ու բնության մեջ եղած կենդանի կապի կոնկրետ ցուցադրությամբ՝ հավասար լիներ հանճարեղ «Ասքին»։

Գաղափարական և գեղարվեստական յուրակերպությունը, անկրկնելի օրիգինալության կնիքը առանձնացնում և մեծապես բարձրացնում են «Ասքը» Արևմուտքի և Արևելքի միջնադարյան պոեզիայի մի շարք երկասիրությունների համեմատությամբ։

«Ասքը» մի անթառամ, անմահ ազգային հուշարձան է, «որի վավերականությունն ապացուցվում է հնության ոգով, որը անհնարին է կեղծել», ինչպես գրում էր Ա. Ս. Պուշկինը։ Յուրաքանչյուր դարաշրջան, յուրաքանչյուր սերունդ դրա մեջ նորանոր գծեր, նորանոր գեղեցկություններ է գտնում, որոնք համահունչ են արդիականությանը։ Բանասեր Ե. Վ. Բարսովը՝ «Ասքի» մասին XIX դ. վերջերին հրապարակած իր եռահատոր մենագրության մեջ գրում էր, որ «Ասքի» հեղինակի խոր ու ջերմ սերը Ռուս երկրի, նրա փառքի ու պատվի հանդեպ այդ երկը դարձնում է անմահ։ «Դա այն գրոշն է, որը ռուսներին դարձրեց մեծ ժողովուրդ, մտցրեց նրանց համաշխարհային պատմության մեջ և ռուսներին դարձրեց համամարդկային կուլտուրայի կրողներ։

«Ասքը» ոչ միայն ռուս ժողովրդի, այլև ամբողջ սլավոնության ազգային պարծանքի առարկան է։ Խոշորագույն լեհ բա-

նաստեղծ Ադամ Միցկևիչը՝ 1841—42 թ.թ. Փարիզում սլավոնական գրականությունների մասին կարդացած դասախոսությունների իր դասընթացի մեջ՝ ասում էր՝ «Յուրաքանչյուր սլավ կարդալով այդ պոեմը, զգում է նրա հրապույրը։ «Ասքի» դարձվածքներից ու պատկերներից շատերը շարունակ հանդիպում են ռուս, լեհ, չեխ հետագա բանաստեղծների մոտ ընդորում այդ բանաստեղծները հաճախ մասնագիտորեն չեն էլ ուսումնասիրել, նույնիսկ ծանոթ էլ չեն եղել «Ասքին»։ Դրա պատճառը, ինչպես ենթադրում է Միցկևիչը, երկի սլավական հիմքն է։

Եվ իսկապես «Ասքը», ռուս հին գրական վարպետության ամենափայլուն նմուշը հանդիսանալով՝ իր արմատներով օրգանականապես կապված է ժողովրդական բանավոր պոեզիայի հողի հետ։ Պոեմի գեղարվեստական պատկերների ու ոճի հիմքն են կազմում հանուր սլավոնական պոեզիային հատուկ պոետական մտածողության կոնկրետ, «երկրային» բնույթը, երկրագործական աշխատանքի բնագավառից վերցրած պատկերավոր զուգահեռներն ու համեմատությունները, բնության անձնավորումը՝ ռազմի դաշտում մարտիկների քաջության և անձնվեր արիության գովքը։

«Մինչև չփոխվի սլավի բնավորությունը, այդ պոեմը հավետ կհամարեն ազգային երկասիրություն. նա կպահպանի նույնիսկ արդիականության բնույթը»,—այսպես էր կանխասել ավելի քան հարյուր տարի առաջ Ադամ Միցկևիչը։ «Ասքը» գրելուց հետո 760 տարուց ավելի է անցել, 148 տարի է բոլորել նրա առաջին տպագիր հրատարակությունից մինչև այսօր, մինչդեռ այդ երկասիրության հանդեպ ցուցաբերած հետաքրքրությունն ու սերը ոչ միայն չեն թուլանում, այլ օր ավուր ուժեղանում են։

«Ասքի» մասին հրապարակված են՝ ավելի քան 300 նշանակալից աշխատություններ ռուսերեն և մոտ 200 հետազոտություն օտար լեզուներով։ Զանազան լեզուներով կատարված է 50-ից ավելի թարգմանություններ։

1. «ԱՍՔԻ» ԳՐՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԸ. ՀԵՂԻՆԱԿԻ ՀԱՐՑԸ

«Ասք Իգորի արշավանքի մասին» գրված է պոլովցիների 1185 թ. հյուսիսային Նովգորոդի իշխան Իգոր Սվյատոսլավիչի կատարած անհաջող արշավանքի առթիվ։ XII դ. «ПОЛК» բառն

ունենը կրկնակի նշանակություն՝ «полк»=արշավանք և «полк»= զորամաս, գունդ, որից կազմված էին իշխանի մշտական դրուժինան (дружина—գունդ)՝ հեծելազորը և գեղջուկ զինվորներ-ամերդներ (смерды)— հետևակազորը։ Վերնագրի մեջ գործ է ածված полк բառի առաջին նշանակությունը՝ արշավանք իմաստով, այսինքն՝ պատմություն Իգորի արշավանքի մասին, սակայն հուշարձանի տեքստի մեջ հանդիպում ենք նաև երկրորդ նշանակությունը՝ գունդ, զորամաս իմաստով, օրինակ՝ «հաղթություն չես տալ Իգորի գնդին»։

Իգոր Սվյատոսլավիչի արշավանքն իր արտացոլումն է գտել ոչ միայն «Ասքի» մեջ. դրա մասին պատմվում է նաև տարեգրություններում 1185 թ. տակ, ընդորում Լավրենտյանի մեջ համառոտ, իսկ Իպատյանում՝ ավելի մանրամասն։

«Ասքը» թվագրություն չունի, չկա նաև ոչ մի հիշատակություն հեղինակի մասին։ Հուշարձանի գրության ժամանակի հարցը՝ մոտավոր ճշտությամբ է լուծվում։ Հավաստված է, որ «Ասքը» գրված է եղել 1185 թ. ոչ շուտ և 1187 թ. ոչ ուշ։ «Ասքը» չէր կարող 1185 թ. վաղ գրված լինել, որովհետև վերոհիշյալ տարեգրությունները սուգապես ցույց են տալիս, որ Իգորի արշավանքը և ճակատամարտը պոլովցիների դեմ տեղի է ունեցել այդ տարվա ապրիլի վերջին և մայիսի սկզբներին։ «Ասքը», ամենայն հավանականությամբ, լույս է տեսել 1187 թ. աշնանից ոչ ուշ, քանի որ հեղինակը դիմում է ողջ և առողջ Գալիցիայի իշխան Յարոսլավ Օսմոմիսլին, որը վախճանվել է 1187 թ. աշնանը։ Այստեղից մենք եզրակացնում ենք, որ ժամանակի իրադարձություններին քաջածանոթ «Ասքի» հեղինակն իր պոեմը գրել է դեռևս մեծ իշխան Յարոսլավի կենդանության օրոք։

Հեղինակի անվան հարցը ցարդ չի լուծված։ Հետազոտողների մեծ մասը հանգել է այն եզրակացության, որ հեղինակը՝ ժամանակակից լինելով հիշյալ իրադարձություններին, որպես երգիչ ու բանաստեղծ, ինչպես և ավագ դրուժինիկ ծառայելիս է եղել իշխանին։ Շատ հավանական է, որ նա ուղեկցելիս է եղել Իգորին սրա արշավանքների ժամանակ և նրա երգերն ու վեպերը հնչել են դրուժինայի մասնակցությամբ կազմակերպված իշխանի խնճույքներին։ Իր իսկ երկը՝ «Ասքը» նա անվանում է և՛ երգ, և՛ վեպ (պատմվածք)։ Հեղինակը ազատների կարգին է պատկանել և իշխանից կախում չի ունեցել. նա կա-

րող էր ըստ իր ցանկության հեռանալ նրանից. նա հնարավոր էր համարում ոչ միայն գովերգել իշխաններին, այլև նրանց խորհուրդներ տալ, ցույց տալ սխալները և խրատել:

2. «ԱՍՔԻ» ՀԱՅՏՆԱԳՈՐԾՈՒՄԸ ԵՎ ԱՌԱՋԻՆ ՏՊԱԳԻՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ

«Ասք Իգորի արշավանքի մասին» հայտաբերել է գրաֆ Ա. Ի. Մուսին-Պուշկինը 1795 թ.: Սպասո-Յարոսլավլի վանքի երեցից նա գնում է որոշ քանակությամբ հին ռուս. գրչագիր մատյաններ, որոնց թվում էր նաև XIV—XV դ. դ. կիսաուստավ (հմմտ. հայ միջին երկաթագրին) գրչությամբ գրված մի ժողովածու: Վերջինիս մեջ տեղ էին գտել միայն աշխարհիկ հուշարձաններ և դրանց թվում նաև «Ասք Իգորի արշավանքի մասին, Իգորի, որ Սվյատոսլավի որդին էր, Օլեգի թոռը»: Գրաֆ Մուսին-Պուշկինը հանձնարարում է պրոֆեսորներ՝ Մալինովսկուն և Բանտիշ-Կամենսկուն նախապատրաստել այդ գրչագիրը հրատարակության համար:

Հուշարձանի խմբագրման աշխատանքը բարդ էր ու ծանր. տևում է հինգ տարի: Բանն այն է, որ Մուսին-Պուշկինի գնած ժողովածուն կազմված է եղել XVI դ.: «Ասքը» արտագրված է եղել XV դար. մեզ չհասած մի գրչագրից, որը, ամենայն հավանականությամբ, մեր գրաչագրի օրիգինալը չէ, այլ ավելի վաղ շրջանի մի ձեռագրի պատճենը: Հետևաբար, հուշարձանի օրիգինալ ձեռագիրը հետագա, ավելի ուշ շրջանի արտագրություններից բաժնված է առնվազն 300 տարով: Այդ ժամանակամիջոցում հուշարձանի բնագրի մեջ սպրդել են առանձին սխալներ և աղճատումներ, քանի որ ժամանակի ընթացքում փոփոխության են ենթարկվում թե լեզուն և թե ուղղագրությունը: Բացի այդ՝ մի հուշարձան, որի օրիգինալը (բնագիրը) առաջացել է Ռուսաստանի հարավում, հետագայում արտագրել է,—հայտնի չէ քանի անգամ,—հյուսիսաբնակ գրիչը Նովգորոդի ու Պսկովի մարզերում: Հուշարձանը պահպանել է թե հարավային և թե հյուսիսային բարբառային յուրահատկությունները: Տեքստի գիտական վերլուծությունը ցույց է տալիս, որ հուշարձանի սկզբնական հիմքը հարավ-ռուսականն է, իսկ հյուսիսային արտասանության առանձնահատկությունները մտցրել է հյուսիսցի գրիչը: Բացի այդ՝ ձեռագիրը գրված է միապաղաղ, առանց ընդ-

հատումների տողերի ու բառերի մեջ։ Ուստի անհրաժեշտ էր տեքստը բաժանել տողերի, իսկ տողերն էլ առանձին բառերի։ Նախքան հրատարակությունը՝ մի շարք մասնագետներ ու գրողներ կարողացան ծանոթանալ հուշարձանի հետ և անչափ հետաքրքրվեցին դրանով։ 1797 թ. սկզբներին այդ մասին մամուլի միջոցով հաղորդեց բանաստեղծ Խերասկովը իր «Վլադիմիր» պոեմի մեջ, որտեղ նա «Ասքը» համեմատում է Հոմերոսի երկերի հետ։ Նույն տարվա վերջերին „Обозреватель Севера“ հանդեսի մեջ գրող և պատմաբան Ն. Մ. Կարամզինը զետեղեց մի գիտական հաղորդագրում «Ասքի» հայտաբերման մասին։ 1796 թ. «Ասքը» պատճենահանվել էր Եկատերինա II-ի արխիվի համար։

1800 թ. լույս տեսած «Ասքի» առաջին տպագիր հրատարակությունը պարունակում էր մի շարք սխալներ. որոշ տեղեր մնացին չվերծանված («մութ տեղիներ»): Մինչդեռ հուշարձանի միակ ձեռագիր օրինակը, որ ձեռք էր բերել Մուսին Պուշկինը, այրվեց 1812 թ. Մոսկվայի հրդեհի ժամանակ։ Այդ հանգամանքը չափազանց դժվարացրեց աշխատանքը այն գիտնականների, որոնք ջանք էին թափում ուղղելու «Ասքի» առաջին տպագիր հրատարակության մեջ սպրդած սխալները։ Բանասեր Պեկարսկու կողմից 1864 թ. հայտաբերած «Ասքի» երկրորդ պատճենը, որ պատրաստված է եղել Եկատերինա II-ի համար, որոշ չափով դյուրացրեց տեքստի վրա տարվող աշխատանքը։ «Ասքի» ներկայիս տեքստը 1800 թ. առաջին տպագիր տեքստի և Եկատերինա II-ի համար պատրաստված պատճենի համահավաքն է։ Մինչև օրս էլ, յուրաքանչյուր տարի, լույս են տեսնում «Ասքի» մասին մասնագետների հետազոտություններն ու հոդվածները, որոնք առաջարկում են փոփոխել կամ ուղղել տեքստի այս կամ այն «մութ տեղին» կամ առանձին բառը կամ առաջադրում են այս կամ այն նոր մեկնությունը։

3. «ԱՍՔԻ» ՊԱՏՄԱԿԱՆ ՀԻՄՔԸ ԵՎ ՊՈԼՈՎՑԻՆԵՐԻ ԴԵՄ ԻԳՈՐԻ ՄՂԱԾ ԱՐՇԱՎԱՆՔԻ (ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆ) ՏԱՐԵԳՐԱՅԻՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Միջնադարյան ռուս վեպերի (պատմությունների) հերոսները սովորաբար ո՛չ թե մտացածին մարդիկ են, այլ իրապես գոյություն ունեցած պատմական դեմքեր։ «Ասքն» էլ այս նկատմամբ բացառություն չէ։ Չնայած իր խորը քնարական և պոետա-

կան բնույթին՝ «Ասքը» զարմացնում է ընթերցողին իր պատմական վավերականությամբ, ճշգրտությամբ, իրականության հավատարմությամբ, խիստ փաստականությամբ։ Պարզ է, որ այդ ամենի մասին մենք կարող ենք որոշ դատողություն ունենալ այն պատճառով, որ դրա նկատմամբ մեզ թանկագին նյութեր են տրամադրում Կիևյան տարեգրությունն ու Կիևյան Ռուսիայի այլ հուշարձանները։

«Ասքի» հեղինակը մեծ պատմական մտահորիզոն ունեցող մարդ է եղած։ Պոլովցիների դեմ Իգորի վարած արշավանքը պատկերացվում է մեզ պատմական լայն ֆոնի վրա, որը ընդգրկում է ոչ միայն ժամանակակից իրադարձությունները, այլև այնպիսիները, որոնք տեղի են ունեցել հարյուր տարի առաջ, դեռևս Յարոսլավ Իմաստունի զավակների օրոք։

Կիևյան պետությունը երկարատև և անընդհատ կռիվներ է մղել հարավային տափաստանների վաչկատուն ժողովուրդների դեմ, որոնք այստեղ էին գալիս հեռավոր Ասիայից։ X դարում Կիևյան Ռուսիան անմիջական հարևանության մեջ էր գտնվում պեչենեգների և թուրքերի հետ, իսկ XI դ. պեչենեգներին փոխարինել են պոլովցիները, որոնց դեմ ժողովրդի սատարությամբ հաջող պատերազմներ՝ էր մղել իշխան Վլադիմիր Մոնոմախը։

Վաչկատուն պոլովցիները հարձակվում էին ռուս քաղաքների ու գյուղերի վրա, կողոպտում բնակիչներին, հրդեհում նրանց տներն ու խրճիթները, ոչնչացնում նրանց ցանքսերը, գերեվարում կանանց և երեխաներին։ Հարյուր հիսուն տարվա ընթացքում (1061 թ. մինչև 1210 թ.) պոլովցիները՝ չհաշված մանր-մունր հարձակումները, հիսուն խոշոր ասպատակություններ են կատարել։ Ֆոլկլորը մինչև մեր օրերն է բերել-հասցրել բիլինային հերոսների կերպարները, այդ խիզախ ու բարի ռուս քաջերի, որոնք արիաբար կռվել են անթիվ ու անհամար «մութ» ուժերի թշնամիների դեմ, ինչպես և թշնամի Տուգարին Զմեյևիչի կերպարը, որի անվան մեջ պահպանվել է պոլովցիների Տուգոր-խանի հիշատակը։

XI և XII դ. դ. օր ավուր ուժեղացող ֆեոդալական տրոհվածությունը Ռուսիայում, սակայն, մեծապես խանգարում էր երկրի պաշտպանությունը վաչկատուն-պոլովցիների հարձակումներից։ Վլադիմիր Մոնոմախի կտակը ընդունելություն չգտավ նրա հետնորդների կողմից՝ Մոնոմախովիչները (Մոնոմախի

սերունդ) կռվում էին Օլգովիչների դեմ։ Իշխանական տոհմերի մեջ իշխում էին երկպառակությունն ու գժտությունը։ Նրանցից յուրաքանչյուրը ձգտում էր հերթից դուրս Կիևի գահը գրավել և Կիևի մեծ իշխան դառնալ։ Ֆեոդալական իշխանների մեծ մասը անձնական շահը ընդհանուր պետականից ավելի բարձր էր դասում, իսկ դա ձեռնտու էր թափառաշրջիկ պոլովցիներին։ Մոլեգնաբար երկպառակտիչ կռիվներ մղելով միմյանց դեմ՝ իշխանները խայտառակություն չէին համարում ժամանակավոր համաձայնություններ կնքել թշնամի պոլովցիների հետ և նրանց զինված հորդաները կանչել ռուս իշխանների վրա, որոնց հետ նրանք աշկարա թշնամի էին, թեպետ և այդ իշխանները հաճախ նրանց ամենամոտ արյունառու ազգակից բարեկամներն էին։ Այդպիսի մոլեգին, կատաղի իշխաններից էր, ինչպես նրան բնութագրում է տարեգրությունը, «Ասքի» հերոս Իգորի հարազատ պապը (հոր գծով)՝ Օլեգ Սվյատոսլավովիչը։ Քառասուն տարվա ընթացքում Օլեգ Սվյատոսլավովիչը՝ ձգտելով տեր դառնալ մեծ իշխանական գահին Կիև քաղաքում, կազմակերպում էր միջիշխանական երկպառակություններ և կռիվներ։ 1078 թ. Նեժատինա Նիվայում տեղի ունեցավ մի կատաղի ճակատամարտ, որի մասին հիշատակում է նաև «Ասքի» հեղինակը։ Այդ ճակատամարտի սկզբնապատճառը եղավ Օլեգ Սվյատոսլավովիչը, որն իր հորեղբոր որդու, այդ մարտում սպանված Բորիս Վյաչեսլավովիչի հետ դուրս բերեց պոլովցիներից հավաքագրած մի հուժկու զորք և սրա միջոցով ջարդեց իր հորեղբայրների, Յարոսլավ Իմաստունի որդիների՝ իշխաններ Իզյասլավ Յարոսլավիչի և Վսեվոլոդ Յարոսլավիչի դաշնակից ռուս զորքերը։ Իր հայր Վսեվոլոդի հետ Նեժատինա Նիվայի ճակատամարտին մասնակցում էր նաև սրա որդի՝ Վլադիմիր Մոնոմախը։ Ավելի ուշ նա զիջեց կռվասեր Օլեգ Սվյատոսլավիչին իր գահը Չերնիգովում, իսկ ինքը երեք տարի ժամանակով հեռացավ, գնաց իր փոքրիկ, աղքատ, ի լրումն այդ բոլորի սովահար, Պերեյասլավլի իշխանությունը։ Սակայն, չնայած հօգուտ նրա արած բազմաթիվ զիջումների՝ Օլեգ Սվյատոսլավիչի թշնամությունը հորեղբայրների ու հորեղբորորդիների հետ չդադարեց։ Օլեգը էլի մի քանի անգամ կանչեց-բերեց պոլովցիներին ռուս երկրի վրա, և այդպիսի կռիվներից մեկի ժամանակ սպանեց Վլադիմիր Մոնոմախի որդի Իզյասլավին, գերեվարելով սրա կնոջը։

Այստեղից պարզ է, որ պոլովցիների արշավանքներից և իշխանների երկպառակություններից ամենից ավելի տուժում էին ու տանջվում գյուղացիները—շինականները, ինչպես նաև արհեստավորներն ու գործավորները քաղաքներում ու ավաններում (посад)։

Պոլովցիների դեմ կատարած իր արշավանքներով հռչակ էր վայելում Վլադիմիր Մոնոմախը, որը 1103 թ. մինչև 1116 թ. չորս արշավանք կազմակերպեց, որի հետևանքով պոլովցիները ետ շպրտվեցին Դոնի այն կողմը և մասնակիորեն դեպի Կովկաս։ Մոնոմախի գործը շարունակեց նրա որդի Մստիսլավը։ Վերջինիս մահով (1132 թ.) նորից նկատվում է պոլովցիների հզորանալը։

XII դարի կեսերից պոլովցիները առանձնապես ուժեղ կերպով սկսեցին անհանգստացնել ռուս երկրի սահմանները։ 1170 թ., Իգորի արշավանքից 15 տարի առաջ, հարավային իշխանների ժողովում խոսում էին այն մասին, թե ինչպես համատեղ ուժերով պայքարեն թշնամիների դեմ։ Իշխաններից մեկը ողբում էր ռուս երկրի վիճակը և այսպես էր խոսում պոլովցիների մասին, որոնք շարունակ դրժում էին երդումը՝ «իսկ մեզնից նրանք կխլեն և հունական ճանապարհը, և Սոլյանի, և Զալոզնի (ճանապարհները)»**։

Այսպես էր XI և XII դ. դ. Ռուսիայի պատմական ողբերգական վիճակը, որն անչափ անհանգստություն էր պատճառում «Ասքի» հեղինակին։ Նա շատ լավ էր հասկանում, որ Օլեգի թոռ Իգոր Սվյատոսլավիչի արշավանքը չի կարելի զատել, անջատել մոտիկ անցյալի պատմական իրադարձությունների շղթայից։ Պատմական բազմաթիվ շեղումների մեջ հեղինակը ջերմորեն համոզում է իր ժամանակակիցներին՝ չզբաղվել երկպառակություններով, ինչպես այդ անում էր Իգորի պապը՝ Օլեգը, որը «վիշտ էր սերմում ռուս երկրում» և որի համար ժողովուրդը նրան Գորեսլավ (=վշտավառ) է անվանել։ Դատապարտելով Օլեգին՝ «Ասքի» հեղինակը հակադրում է նրան, իբրև դրական իդեալ, իշխան Վլադիմիր Մոնոմախին, ցավելով միայն, որ այդ իշխանին հնարավոր չէր գամել Կիևի լեռներին։ Այն խորը մեծարումը ու հարգանքը, որ տածում է հեղինակը Վլադիմիր Մոնոմախի հանդեպ, բացատրվում է նրանով, որ այս իշխանը պայքարում էր իշխանների երկպառակությունների դեմ, ջանալով

*. Ղրիմի և ** դեպի Դանուբ տանող ճանապարհները։

միություն առաջ բերել, և հաջողությամբ ետ էր մղում պոլովցիների հարձակումները, մի հանգամանք, որն ապահովում էր ռուս ժողովրդի համեմատաբար հաշտ ու խաղաղ գոյությունը:

Երբ բաղդատում ենք XII դարի երկրորդ կեսի իրադարձությունների շարադրումը «Ասքի» մեջ տարեգրությունների հետ, ամենայն համոզկերությամբ տեսնում ենք, որ հեղինակը ժամանակակից է և, շատ հավանական է, որ ականատես է եղել նկարագրված իրադարձություններին: Դրանց մասին նա ստույգ պատմություն է անում, անսխալ հիշատակելով իշխանների անունները, թվարկելով բանաստեղծորեն լուսաբանված մի շարք փաստեր, թեպետև նրա ամբողջ շարադրանքը տրված է որոշ իդեական-քաղաքական տեսանկյունով, որի նպատակն է կոչ անել իշխաններին՝ փրկելու Իգորին գերությունից և չկրկնելու մի անգամ կատարած քաղաքական սխալը, այն է՝ դուրս չգալ մեծ իշխանի հնազանդությունից:

Ո՞րն է Իգորի քաղաքական սխալը, ինչպե՞ս է նա պատկերացված ոչ թե ըստ «Ասքի», այլ ըստ տարեգրության:

Պոլովցիների վրա Իգոր Սվյատոսլավիչի արշավանքից փոքր ինչ առաջ վաչկատուն ժողովուրդների դեմ մղվող կռիվը սկսեց ծայր առնել լարված բնույթ կրել: Ոչ միայն Տմուտարականը (այժմ՝ Թամանյան թերակղզին), այդ վաղեմի ռուս մարզը, այլև լայնարձակ տափաստանները Դոնի և Դնեպրի ստորին հոսանքում գտնվում էին ամբողջապես պոլովցիների իշխանության ներքո:

Կիևի մեծ իշխան Սվյատոսլավ Վսեվոլոդովիչը, որ Իգորի և Վսեվոլոդի հորեղբոր որդին էր, խորհրդակցելով իշխանների հետ, որոշեց հակահարված տալ պոլովցիներին: 1184 թ. Սվյատոսլավը 3 փայլուն հաղթանակ տարավ պոլովցիների դեմ, ջարդելով նրանց զորքը Դնեպր թափվող Օրել գետի վրա: Նա բռնեց 7000 գերի, որոնց թվում 400 իշխան հզոր Կոբյակ խանի գլխավորությամբ, և գրավեց ճոխ ռազմավար: Հաջորդ 1185 թ. գարնանը պոլովցիների մի այլ խան մեծ զորքով դիմեց ռուսների վրա հյուսիս-արևելյան կողմից, կարծելով, որ հանկարծակիի կբերի ռուսներին: Սվյատոսլավ III-ը զորքով դուրս եկավ նրա դեմ և երկու ճակատամարտում ջարդեց պոլովցիներին, նրանցից գրավելով բավականաչափ ավար և գերիներ: Բայց և այնպես, Դոն գետի ավազանում գտնվող տերիտորիան առաջվա

պես գրավված էր հնում պոլովցիների կողմից։ Սվյատոսլավը կարծում էր, որ պոլովցիները որոշ ժամանակով լավ դաս են առել, ուստի առաջիկա ամիսների ընթացքում չեն համարձակվի վրդովել ռուսների տիրապետությունը։ Նա որոշեց նոր արշավանքը հետաձգել մինչև ամռան ամիսները, նախազգուշացնելով հարևան իշխաններին, որպեսզի նրանք՝ օր առաջ պատրաստվեն համատեղ գործողությունների ընդդեմ պոլովցիների, իսկ ինքը՝ Սվյատոսլավը գնաց հյուսիս-արևելք, դեպի «վյատիչների» երկիրը, որպեսզի այնտեղ տեղական իշխանների օգնությամբ զորք կազմի։ Զգուշություն էր հարկավոր, փոքրաթիվ ուժերով ամեն մի անհաջող արշավանք կարող էր միայն վատթարացնել դրությունը։

Պոլովցիների վրա Սվյատոսլավի տարած փայլուն հաղթությունից երկու օր անց, այն է՝ 1185 թ. ապրիլի 23-ին Իգոր Սվյատոսլավիչը՝ չնախազգուշացնելով մեծ իշխան Սվյատոսլավին, ինքնագլուխ արշավանքի ելավ պոլովցիների դեմ։ Բացի վերը հիշված չորս իշխաններից՝ արշավանքին մասնակցում էր կովույների գունդը (կովույների ցեղը նոր էր մտել ռուս ծառայության մեջ) նրանց վոևոդա (զորավար) Օլստին Օլեքսիչի առաջնորդությամբ, որոնց ուղարկել էր Յարոսլավ Չերնիգովցին։

Իգորը «դանդաղ» էր շարժվում, ճանապարհին հավաքելով իր դրուժինան (գունդը)։ 9-րդ օրը՝ 1185 թ. մայիսի 1-ին նա մոտեցավ Դոնից գետին։ Այստեղ ցերեկվա ժամը 3-ին տեղի ունեցավ արևի խավարում։ Այնպես մթնեց, որ աստղերը երևացին, ինչպես գիշերը, իսկ արևը, կարծես, լուսնի նեղ մանգաղի նման էր։ Զորքը շվարեց, համարելով այդ նշանը չարագուշակ։ Սակայն Իգորը կարողացավ հանգստացնել նրանց, հայտարարելով, որ վերադարձը խայտառակության հավասար է. թերևս հնարավոր է, որ աստված արևի խավարում ուղարկելով, նախազգուշացել է պոլովցիների պարտությունը։ «Չգիտենք, աստված այդ բանն ստեղծել է ի վնաս մեզ, թե հօգուտ»,—ասաց Իգորը, ինչպես այդ մասին գրում է տարեգիրը։ Փոխադրելով զորքը Դոնից գետի մյուս ափը, Իգորը երկու օր սպասեց Ստարի Օսկոլի մոտ, մինչև որ նրա եղբայր Վսևոլոդը իր դրուժինայով տեղ հասավ։ Միացած ուժերով զորքն առաջ շարժվեց դեպի հարավ, դեպի Սալնիցա գետը։ Այստեղ նրանց ընդառաջեցին ռուս հետախույզները և հայտնեցին, թե պոլովցիները սպա-

սում են ռուսների հարձակման և դաշտ են ելնում «զրահ հագած»։ Չցանկանալով նահանջի դիմել, քանի որ «խայտառակությունն ավելի վատ է, քան մահը», ռուս զորքերը, գիշերային խավարի ծածկույթի տակ՝ առաջ էին շարժվում, դառնապես նախազգալով վերահաս վտանգը։ Վերահաս վտանգի այդ կանխազգացումը բանաստեղծորեն վերարտադրված է «Ասքի» մեջ։ Բնությունը՝ համակրելով և կարեկցելով ռուս ռազմիկներին, նախազգուշացնում է նրանց, բայց գունդը շարունակում է առաջ գնալ, թեպետև արծիվները ծղրտոցով գիշային խնճույքի են հրավիրում թռչուններին։ Հետևյալ օրը—ուրբաթ էր—ռուսները դեմ ելան անօրեն պոլովցիների գնդերին, որոնք կանգնած էին Սյուրլյա գետի մյուս ափին։ Իգորի ու նրա դաշնակիցների զորքը կազմված էր վեց գնդից։ Սվյատոսլավի, Վլադիմիրի, վոեվոդա Օլստինի գնդերը և նետաձիգները պոլովցիների հետևից ընկան։ Վերջիններս չընդունեցին մարտը և սլացան դեպի իրենց վաչերը (кибитка)։ Իգորն ու Վսևոլոդը իրենց գնդերով գնում էին ետևից (իբրև հետապահներ)։ Հետապնդվող պոլովցիները սլացան իրենց բանակատեղի մոտով, ռուսներին թողնելով մեծահարուստ ավար՝ ոսկի, թանկարժեք կերպասներ, իրենց կանանց ու երեխաներին։

Ապա Լավրենտյան տարեգրության մեջ, որը ընդհանրապես բացասաբար է վերաբերվում Իգորին, ասված է, որ ռուսները երեք օր շարունակ մնում են պոլովցիների բանակատեղում և ուրախ ժամանակ են անցկացնում։ Նրանք հոխորտանքով ասում էին, թե Սվյատոսլավի հրամանատարությամբ պոլովցիների վրա հարձակվող մարտիկները կռվելիս են եղել ռուս հողի վրա, մի բան, որ այնքան էլ դժվար չէ, իսկ իրենք, Իգորի հրամանատարությամբ՝ հասել են մինչև պոլովցիների երկրի սիրտը՝ գերի են վերցրել նրանց կանանց ու երեխաներին, «իսկ այժմ, ասում էին նրանք, կգնանք Դոնից էլ այն կողմը և մինչև վերջը կկոտորենք նրանց։ Եթե այնտեղ էլ հաղթությունը մերը լինի, ապա կգնանք նրանց վրա մինչև ծովեզրը (այսինքն՝ Ազովյան ծովը), ուր չեն գնացել և մեր պապերը, և վերջնականապես մեզ համար կվաստակենք և փառք, և պատիվ»։

Իպատյան տարեգրության մեջ այլ կերպ է պատմված։

Հաղթության հաջորդ օրը ռուսները հասկացան, որ նրանք հանդիպում են ունեցել թշնամու առաջապահ ջոկատների հետ։

Նրանք լավ էին հասկանում, որ մեծ գնդով դժվար է վերջնական հաղթանակ տանել պոլովցիների հիմնական ուժերի վրա։ Իգորը ցանկանում էր նույնիսկ նահանջի դիմել, բայց Վսևոլոդը, Սվյատոսլավիչը և Սվյատոսլավ Օլգովիչը առարկում էին, որովհետև պոլովցիներին հետապնդող ջոկատների ձիերը շատ էին հոգնել և հանգստանալու կարիք ունեին։ Իգորը համաձայնում է, ավելացնելով հետևյալը. «Եթե մենք փրկվենք, իսկ ռամիկ մարդկանց (черные люди) հետևակ, հասարակ ռազմիկներին թողնենք, ապա նրանց մեղքը մեզ վրա կընկնի»։

Իպատյան տարեգրության պատումը համընկնում է «Ասքի» հետ, որի մեջ այդ հետհաղթության տագնապալից գիշերվա մասին ասված է. «Ննջում է դաշտում Օլեգի քաջերի բույնը. Հեռու են թռել»...

Շաբաթ օրը՝ լուսաբացին պոլովցիները մոտ քաշեցին իրենց ուժերը և շրջապատեցին ռուսներին։ Մարտը տևեց ամբողջ օրն ու գիշերը. երրորդ օրը կռիվը դեռ շարունակվում էր։ Ծովից սաստիկ քամի էր փչում. պոլովցիների նետերը կրկնակի ուժով էին սլանում ռուս ճակատի վրա, իսկ ռուսների նետերը տեղ չէին հասնում, որովհետև թռչում էին քամու դեմ։ Ռուսները անցան ձեռնամարտի։ Մարդիկ և ձիերն ուժասպառ էին լինում ջրի բացակայությունից։ Կռվի երրորդ օրվա լուսաբացին, նախ կովույների ջոկատը չդիմացավ և փախուստի դիմեցին, Վիրավոր Իգորը ձի նստեց, մենակ դուրս եկավ դաշտ ցանկանալով կովույների փախուստի առաջն առնել, և հեռանալով, անջատվելով իր գնդից, գերի ընկավ։ Նա տեսավ, թե ինչպես կատաղի ու արիաբար պաշտպանվում էր նրա եղբայր Վսևոլոդը։ Սա տաք կռվի ժամանակ ջարդեց իր զենքը, վիրավորվեց, բայց և այնպես շարունակում էր դիմադրել իրեն շրջապատող թշնամիներին։ Գերի Իգորը ոչ մի բանով չէր կարող օգնել եղբորը և կարծում էր, որ այլևս նրան կենդանի չի տեսնի։ Իգորը, Վլադիմիրը և Վսևոլոդը գերի ընկան, բոյարներն ու դրուժինիկները սպանվեցին, վիրավորները գերվեցին։ Միայն մոտ 15 մարդ փրկվեց այդ ջարդից. ողջ մնացածները խեղդվեցին կամ ոչնչացան Ազովյան ծովի մերձափնյա ճահճուտներում։ Կովույները մինչև վերջին մարդը կոտորվեցին։ Չկար մեկը, որ Իգորի գնդերի ահավոր ջարդի բոթը բերեր Ռուսիա։ Պոլովցիները պատվիրեցին այդ ճանապարհով անցնող վաճառականներին հաղորդել ռուսներին սոսկալի ջարդի մասին։—«Եկեք ձեր եղբայրներ

րի հետևից, թե չէ՝ մենք կգանք մերոնց ետևից»։

Իգորի պարտությունը բաց արավ պոլովցիների առաջ ռուս երկրի ճանապարհը։ Պոլովցիների մի մասը՝ Կոնչակ խանի առաջնորդությամբ՝ դիմեց Կիևի կողմերը, պաշարեց Պերեյասլավլ քաղաքը, բայց ետ մղվեց։ Բայց և այնպես պոլովցիները, չնայած բնակչության կատաղի դիմադրության, գրավեցին Ռիմով քաղաքը, կոտորեցին բնակիչների մի մասը, մյուսներին գերի քշեցին։ Պոլովցիների զորքի մյուս մասը Գզա խանի առաջնորդությամբ ավերեց ու հրի մատնեց Պուտիվլ քաղաքի շրջակա գյուղերը. Այդ քաղաքում էր գտնվում նաև Իգոր իշխանի կինը։ Քաղաքը չհանձնվեց, բայց պոլովցիները հաճախ հասնում էին քաղաքի պարիսպներին։

Կիևի իշխան Սվյատոսլավ III, որ կոչվում էր Ահեղ, վերադառնալով հյուսիսային իշխանություններից, միայն ճանապարհին, Չերնիգովի մոտ իմացավ Իգորի անհաջող արշավանքի, ինչպես նաև պոլովցիների ներխուժման մասին ռուս երկրի սահմանները։ Նա սկսեց պաշտպանողական պատրաստություններ տեսնել։

Մինչ այդ, Իգորը տառապում էր պոլովցիների գերության մեջ։ Նրան պահպանում էին քսան պոլովցի պահակներ։ Նա ապրում էր առանձին վրանում, ուներ վեց ծառա և բերել էր տվել իր համար մի խոստովանահայր-քահանա։ Նրան թույլ էին տալիս որսի գնալ։ Խոսքը մեկ անելով իր ձիապան, պոլովցի Օվլուրի (ռուս. Լավր) հետ, մի մթագամած գիշեր, երբ պահակները կումիս խմելով հարբել, ընկել էին, Իգորը նրա հետ փախուստ է դիմում։ Հետապնդողները չկարողացան հասնել փախստականներին։ Երկու օր շարունակ նրանք սլանում էին ձիերով։ Ձիերն ընկան։ Դրանից հետո 11 օր նրանք ոտով անցան, մինչև հասան իշխանական աթոռանիստ Նովգորոդ-Սևերսկի քաղաքը։

1187 թ. գերությունից վերադարձավ Իգորի որդի՝ Վլադիմիր Իգորևիչը իր կնոջ՝ Կոնչակ խանի աղջկա, և «մանկիկի» հետ։ Իգորը հարսանիք արեց։ Կոնչակովնային նշանել էին Վլադիմիրի հետ դեռևս արշավանքից առաջ։

Ինչպե՞ս են արտացոլվել այդ իրական-պատմական փաստերը «Ասքի» նման մի պոետական երկի մեջ։ «Ասքի» հեղինակը ոչ միայն չի հեռացել փաստական կողմից, այլև կարողացել է տալ նրա խորը ընդհանրացումը, վերանալ նրանից, ցույց տալով

Իգորի արշավանքը XI—XII դ. դ. սոցիալ-պատմական իրադրության լայն ֆոնի վրա, մտցրել է իր պատմության մեջ մի շարք լրացուցիչ միջադեպեր, ինչպես օրինակ՝ Սվյատոսլավի երազը, Յարոսլավնայի ողբը, Իգորի զրույցը Դոնեցի հետ և այլն, որոնք, հարկավ, բացակայում են տարեգրության մեջ։

4. «ԱՍՔԻ» ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

«Ասքի» անհայտ հեղինակն իր երկը կառուցել է իբրև պատմական երգ, օգտագործելով ժողովրդական չափածո էպոսի եղանները։ «Ասքը» կազմված է ներածությունից, երեք մասից և վերջաբանից։

ա. Ներածություն

Ներածության մեջ հեղինակը դիմում է եղբայրներին ու դրուժինային և հարցնում է՝ ինչպե՞ս սկսի իր պատմությունը փառապանծ իշխան Իգոր Սվյատոսլավիչի արշավանքի մասին պոլովցիների վրա։ Արդյոք նմանվի՞ նա Բոյանի երգերին, որը հնում գովերգում էր իշխաններին և իր երգերում հավերժացրել է ռուս պետության փառքը, թե՞ տա ճշմարտապատում և պարզ մի պատմություն ըստ ժամանակակից բիլինաների (եղելությունների), այսինքն՝ մի պատմություն այն մասին, թե ինչ է եղել իրականում։

Հեղինակը բնութագրում է հին երգիչ Բոյանին իբրև խոսքի անզուգական վարպետի, որը «մտքով սլանում էր ծառերն ի վեր, գորշ գայլի նման՝ գետին ընդ վայր, թուխ արծվի նման՝ ամպերն ի վար»։ Հեղինակը ժողովրդական պոետիկայի հնարանքներով վերակերտում է սերունդների կողմից մոռացության մատնված, բայց հնօրյա՝ հանճարեղ երգչի վեհապանծ կերպարը, որը «տասը բազե չէ՛, որ բաց էր թողել կարապների երամի վրա, այլ տասը կանխագուշակ մատները դարսել էր նա կենդանի լարերի վրա, և այնժամ լարերը որոտում էին ի փառս իշխանաց»։

Սակայն միայն անցյալը չէ, որ արժանի էր Բոյանի երգերին, որը կերտում էր դրանք ի պատիվ ծեր Յարոսլավի, արի Մստիսլավի (Յարոսլավ Իմաստունի եղբայր), որը մորթեց Ռեդեդային Կասոգցիների* գնդերի առաջ ի պատիվ գեղեցիկ Ռոման

---

* Չերկեսներ։

Սվյատոսլավիչի (Յարոսլավի թոռան), այլ և արժանի է գովերգության նաև Իգորը, նրա մարտական անձնազոհությունը հանուն հայրենիքի ազատության, որն իր զորքերն առաջնորդում էր թշնամու վրա։ Եվ Իգորի գովերգության մեջ պետք է փառաբանություն հնչի ռուս զինվորության անպարտելի ոգուն։ Այսպես, Բոյանի երգերի ոճով հեղինակն իր վեպն է հորինում ժամանակակից կյանքի իրադարձության մասին։

բ. Մասն առաջին—Իգորի արշավանքը

Ներածությունից հետո՝ որոշելով իր պատմության ծավալը, այն է՝ «հինավուրց Վլադիմիրից (Մոնոմախ) մինչև արդի Իգորը», հեղինակն անմիջապես անցնում է Իգորի արշավանքի նկարագրությանը՝ «պոլովցիների երկրի վրա ռուս երկրի համար»։

Արշավանքի հենց սկզբին՝ արևը խավարում է։ Տեսնելով «իր ամբողջ զորքը խավարով պատած», Իգորը, որի սիրտը ծարավի է անձնազոհության և լի է մարտական ոգով և արիությամբ, բացականչում է՝ «Եղբայրնե՛ր, և դու, իմ դրուժինա, ավելի լավ է սպանվել, քան գերված լինել։ Դե՛, հեծնենք, եղբայրնե՛ր, արագավազ նժույգները մեր, և աչք ածենք կապույտ Դոնի վրա... Ուզում եմ,—ասաց,—Նիզակս կոտրել պոլովցիների տափաստանի սահմանի վրա, ուզում եմ ձեզ հետ, ռուսորդինե՛ր, կամ վայր դնել գլուխս, կամ ըմպել սաղավարտով (ջուրը) Դոնից»։

Արշավանքի ելած Իգորը հանդիպում է Պուտիվլում իր սիրելի եղբայր Վսեվոլոդին։ Եղբայրները փոխադարձ սիրո ջերմ խոսքեր են փոխանակում։

«Եվ այսպես ասաց նրան (Իգորին) ցուլն այն կորովի՝ Վսեվոլոդը.

—Դու միակ իմ եղբայր, դու միակ իմ լույս-արև լուսավոր, Իգորդ իմ, երկուսս էլ որդիքն ենք Սվյատոսլավի (երկուսս էլ Սվյատոսլավիչ ենք)։ Թամքի՛ր, եղբա՛յր իմ, արագավազ նժույգները քո, իսկ իմոնք կազմ-պատրաստ, թամբած են այնտեղ առջևում՝ Կուրսկի մոտերքը։ Իմ կուրսկցիները ռազմիկներ են քաջահմուտ՝ շեփորների կանչերի տակ բարուրած, սաղավարտների տակ գուրգուրած, նիզակների ծայրով կերակրված. ճամփեքն են նրանց ծանոթ, ձորակները ճանաչ, աղեղները լարած, կապարճները բացած, թրերը սրած. սուրում են նրանք գերթ

գայլերը գորշ դաշտում, որոնելով իրենց համար պատիվ, իսկ իշխանին՝ փառք»։

Վսեվոլոդի բերնով հեղինակը բնութագրում է ռուս զորքը, նրա ռազմական արիությունը, անսահման խիզախությունը, համառությունը մարտի պահերին։ Մի այդպիսի դրուժինայով իշխանները հանգիստ կարող են արշավել նենգ թշնամու վրա։ Ռուս դրուժինայի մասին վերը բերված խոսքերը՝ «որոնելով իրենց համար պատիվ, իսկ իշխանին՝ փառք», իբրև ռեֆրեն, հաճախ կրկնվում է «Ասքի» մեջ։

Ռուս զորությունն առաջ է շարժվում տափաստանում։ «Բլուրի ետևո՛ւմ է մնացել արդեն ռուս երկիրը»,—բացականչում է հեղինակը։

«Գիշերը դանդաղ է խավարում. վերջալույսը մարել է աշխարհը, մեգը դաշտերն է պատել։ Սոխակների դայլայլը լռեց, գորշագռավների կռկռոցը արթնացավ։ Ռուսորդիները դաշտերը լայնարձակ շրջափակեցին վահաններով ծիրանի»։ Բնությունը այդ գիշերային պահին նախազգուշացնում է ռուսներին նրանց սպառնացող վտանգի մասին։ Վայրի գազաններն ու թռչունները անհանգիստ են. արծիվները ծղրտալով թռչուններին սարսափելի խնջույքի են հրավիրում, լավ իմանալով, որ ահեղ ճակատամարտից հետո՝ դաշտում ճոխ ավար կլինի։ Աղվեսները հաչում են ռուս ռազմիկների կարմիր վահանների վրա։ Ռուսորդիները ճակատ են կազմել, պատրաստվելով վաղորդյան մարտի։ Լսվում է արդեն, թե ինչպես են ճռնչում, ասես, սարսափահար կարապներ լինեն, թափառ պոլովցիների սայլերը, որոնք գլորվում են ճանապարհազուրկ տափաստանով մեկ՝ դեպի մեծ Դոնը։

Վաղ առավոտյան ռուս զորությունն ու պոլովցիները հանդիպեցին իրար։ Առաջին ընդհարումը հաջողությամբ պսակվեց. ռուսները գրավեցին հարուստ ավար՝ ոսկի, պոլովցիների գեղեցիկ աղջիկներ, թանկագին գործվածքներ։

Հեղինակը գովերգում է Օլեգի քաջարի «բույնը», նկարագրելով առաջին գիշերը մարտից հետո, երբ զինվորությունը թեթևքուն է մտել և խռովահույզ տագնապի մեջ է գալիքի առաջ։ «Նիրհում է Օլեգի քաջարի բույնը։ Նա անարգվելու համար չէր ծնվել ոչ բազեից, ոչ ճախրուկից, ոչ քեզնից, սև՛ ագռավ, պի՛ղծ պոլովցի»։

Հետևյալ օրը պոլովցիները մոտ քաշեցին իրենց զորքերը. տեղի ունեցավ մի ահավոր ու կատաղի ճակատամարտ, որը տե-

վեց երեք օր և վերջացավ Իգորի գնդերի լիակատար պարտությամբ։ Ճակատագրական օրվա լուսաբացից բնությունը գուշակում էր վերահաս պարտությունը։

«Հետևյալ օրը վաղ առավոտյան արշալույսն արյունագույն ազդարարում է լուսաբացը. Թուխ ամպերն են արշավում ծովից, ուզում են ծածկել չորս արև*. նրանց մեջ էլ կապույտ կայծակներ են թրվռում. մեծ որոտ է լինելու, նետերի անձրև է տեղալու մեծ Դոնի կողմից. այստեղ նիզակներ են բեկվելու, այստեղ թրեր են զարկվելու պոլովցիների սաղավարտներին, այստեղ, Կայալա գետի վրա, Մեծ Դոնի մոտ։ Օ՛, ռուս երկիր, դու արդեն բլուրի ետևն ես մնացել»։

Հողմերը, Ստրիբոգ աստծու այդ թոռները, նետեր են թափում Իգորի քաջերի գնդերի վրա։ Կայալա գետի վրա անթիվ-անհամար պոլովցիները շրջապատել են Իգորի քաջերի գնդերը, իսկ ռուսները նրանց դեմ հանդիման շրջափակել են դաշտը (ռազմի) իրենց վահաններով։

Բազմաթիվ թշնամիների կողմից շրջապատված իշխան Վսևոլոդը քաջաբար կռվում է ռազմի դաշտում. Նրա կերպարը մարմնավորում է անձնվեր հերոսություն, մարտատենչություն, որն այնքան հատուկ է ռուսներին։

«Ով դու, Վսևոլոդ, ցուլդ կորովի, կանգնած ես դու մարտի միջին, նետեր ես ցանում ռազմիկների վրա, որոտալի հարվածներ ես իջեցնում սաղավարտների վրա թրերովդ պողպատե։ Որ կողմը որ սլանում ես դու, ցո՛ւլ, ոսկի սաղավարտովդ փայլփըլելով, այնտեղ փռվում են պիղծ գլուխները պոլովցիների. Թըրատում ես դու, Վսե՛վոլոդ, ցո՛ւլդ կորովի, սրովդ քո քաջամուխ ավարական սաղավարտները»։

Վսևոլոդը այնքան թունդ տարվել է մարտով, որ ամեն ինչ մոռացության է տվել. Նա չի նկատում, որ վիրավորված է։

«Ինչ գին ունի, եղբայրնե՛ր, վերքը նրա համար, ով մոռացել է և պատիվ-կյանք, և Չեռնիգով քաղաքը, հայրական գահը ոսկի, իր սիրասուն սիրուհու, գեղեցկուհի Գլեբովնայի մտերմությունն ու գորովանքը»։

Այս հեղինակը ընդհատում է մարտի նկարագրությունը։ Նրա արդիականությունն ակամա ստիպում է նրան վերհիշել

* Չորս արև—չորս իշխան՝ Իգոր, Վսևոլոդ, Վլադիմիր և Սվյատոսլավ։

անցյալը՝ «Եղել են դարերը Տրոյանի*, անցել են դարերը Յարոսլավի, անցել-գնացել են արշավանքները Օլեգի—Օլեգ Սվյատոսլավիչի»։ Հեղինակը հիշում է «Ասքի» հերոսների պապին, հայտնի Օլեգ Սվյատոսլավիչին, որն իր «թրով խռովություն էր կոփում և նետեր էր ցանում երկրում»։ Զուր չէ, որ «Ասքի» մեջ նա կոչվում է Գորեսլավիչ (=վշտափառ)․ շատ ցավ ու վիշտ է հասցրել նա ռուս երկրին, շատ հոգսեր է պատճառել Վլադիմիր Մոնոմախին։

Զարմանալի հակիրճ մետաֆորաներով, ընդամենը չորս-հինգ տողում հեղինակը խոսում է Նեժատինա Նիվայում 1078 թ. տեղի ունեցած ճակատամարտի նշանակության մասին, երբ Օլեգ Սվյատոսլավիչը «խռովություն էր կոփում», երբ նա՝ արշավանքի ելնելով, ոտքը դնում է ոսկի ասպանդակը Տմուտորական քաղաքում, իսկ դրա զրնգոցը լսում է հնամենի մեծ Յարոսլավի որդին, Վսեվոլոդը**, իսկ նրա որդի Վլադիմիրն ամեն առավոտ իր ականջներն է խցում Չերնիգովում։ Այստեղ «Ասքի» հեղինակը ընդգծում է հնամենի Վսեվոլոդի իմաստությունը, որը լավ գիտե Օլեգ Սվյատոսլավիչի բնավորությունը, և դեռևս քսանհինգամյա Վլադիմիր Մոնոմախի դյուրահավատությունը, որը «խցում էր իր ականջները», այսինքն՝ դեռևս չէր նախատեսնում այն բոլոր չարագործությունները, որը հետագայում կատարելու էր «խռովարար» Օլեգը։ «Իսկ Բորիս Վյաչեսլավիչի փառքը դատաստանի ենթարկեց (=մեռցրեց) և կանաչ խոտի*** վրա սավան փռեց»։ Բորիսը Օլեգի դաշնակիցն էր. նա սպանվեց Նեժատինա Նիվայի ճակատամարտում։ Նույն տեղը սպանվել է նաև Իզյասլավ Յարոսլավիչը, Յարոսլավ Իմաստունի որդին, որը կռվում էր հակառակ կողմում։ Սրա մասին «Ասքում» ասված է. «Այդ նույն Կայալայից Սվյատոպոլկը իր հորը՝ երկու ունգարական նժույգների մեջ ճոճ կապած՝ օրորելով բերեց-հասցրեց սուրբ Սոֆիա (տաճարը) Կիև քաղաքում», այսինքն՝ Սվյատոպոլկը հորը տարավ թաղելու Կիև քաղաքի սբ. Սոֆիայի տաճարում։

Այդ բոլոր հիշատակությունների իմաստը խորը քաղաքա-

* Հավանական է՝ հռոմեական կայսր Տրոյանը, II դ. մ. թ.։

** Վսեվոլոդ Յարոսլավովիչը։

*** „На канину зелену“—„на канину“—չի վերծանված. ենթադրում են—„Трава“=խոտ։

կան բնույթ ունի։ Օլեգ Սվյատոսլավիչը շատ չարիքներ է պատճառել իշխաններին՝ ռազմի դաշտում սպանվել են երկու հռչակավոր իշխաններ, որոնցից մեկը Օլեգի դաշնակիցն է եղել։ Երիտասարդ Վլադիմիր Մոնոմախը դյուրահավատ է եղած, իսկ Օլեգը միշտ խռովությունների հեղինակ։ Նա է, որ ռուս երկիրն էր բերում ռուս ժողովրդի վաղեմի թշնամի պոլովցիներին։ Եթե երկպառակություններ չլինեին, ապա ռուս քաջերը վաղուց ազատված կլինեին իրենց թշնամիներից։ «Ասքի» հեղինակը պատկերավոր և վառ գույներով նկարագրում է, թե ինչ տանջանքների է ենթարկվում ռուս հասարակ ժողովուրդը իշխանների անվերջ երկպառակություններից։

«Օլեգ Գորեսլավիչի (=վշտափառի) ժամանակ սերմանվում ու աճում էր երկպառակությունը, ոչնչանում Դաժդ-Բոգի թոռների ինչքը. իշխանների խռովության մեջ կրճատվում էր մարդկային կյանքը։ Այն ժամանակ ռուս երկրում մաճկալը սակավ էր «հորովել» կանչում, բայց հաճախ կռկռոցը ագռավների, որոնք բաժանում էին դիակները. ագռավներն էլ մոխրագույն. իրենց զրույցն էին զրուցում, նրանք ուզում էին թռչել-գնալ կերի։ Եվ դա այն կռիվների ու արշավանքների ժամանակ էր, իսկ այսպիսի մի կռիվ՝ երբե՞ք լսված չէ»։

Կապ հաստատելով Իգորի պարտության և վաղեմի ժամանակների երկպառակությունների միջև՝ հեղինակը նորից վերադառնում է Կայալա գետի* վրա տեղի ունեցած ճակատամարտի նկարագրությանը։ «Լուսաբացից մինչև իրիկուն, իրիկվանից մինչև լուսաբաց՝ թռչում են նետերը ջրմուխ, թնդում են սրերը սաղավարտների վրա, ճարճատում են նիզակները պողպատի՝ անհայտ դաշտում, պոլովցիների երկրի ներսում։ Սմբակների տակ սև հողը ցանված էր ոսկորներով, ջրված արյունով։ Վիշտն է ծլում, բողբոջում ռուս երկրում»։

Մարտի շրինդը, կարծես, հասնում է բանաստեղծի ականջին, զարթեցնելով նրա երևակայության մեջ զույգ եղբայր-

---

* Կայալա գետը մի որոշ, իրականում գոյություն ունեցող գետի անունը չէ։ Հին վեպերում ամեն մի անհաջող ճակատամարտ տեղի է ունենում Կայալա գետի վրա։ Ըստ այդմ՝ այդ անունը հասարակ անվան իմաստ է ստացել։ Այդ անվան նման կիրառությունը գտնում ենք արդեն «Ասքի» տեքստի մեջ՝ թե Իգորի ճակատամարտը և թե Օլեգ Սվյատոսլավիչի կռիվը իբրև թե տեղի է ունեցել Կայալա գետի վրա։

ների կերպարները․ «Այդ ինչ է աղմկում, ինչ է հնչում հեռաստանից այգաբացից շատ առաջ։—Իգորը գնդերն է շուռ տալիս․ նա ափսոսում է իր եղբո՞րը սիրելի՝ Վսեվոլոդին»։

Եվ հեղինակը նորից վերադառնում է ընդհատված նկարագրությանը։ Նորից նրա առաջ է ելնում Վսեվոլոդի կերպարը, որը համառ կռվում է թշնամիների դեմ, որոնք շրջապատել են նրան։ Իգորը շտապում է օգնության հասնել հարազատ եղբորը։ Նա ուզում է վերադասավորել գնդերը, սակայն վեց գնդից մեկը, որ կազմված էր կովույներից, երերաց ու նահանջեց։ Այդպիսով՝ Իգորը չկարողացավ օգնության հասնել եղբորը․ Թշնամիները շրջապատեցին նրան և գերի վերցրին՝ «այնտեղ Իգորը ոսկի թամբից ցած իջավ, նստեց թամբի վրա ստրուկի»։ Վերջացավ համառ և երկարատև մարտը․ «երրորդ օրը կեսօրին ընկան Իգորի դրոշները։ Այստեղ եղբայրները բաժանվեցին արագընթաց Կայալայի ափին․ այստեղ պակասեց արյուն-գինին և այստեղ ռուսորդիները քաջերի խնջույքը վերջացրին, խնամախոսներին խմեցրին, իսկ իրենք պառկեցին հանուն ռուս երկրի։ Սեզը թառամեց խղճահար, ծառը խոնարհվեց երկիրն ի վար վշտահար»։

Ռուս մարդկանց վիշտը Իգորի պարտությունից հետո՝ հեղինակը տալիս է, գծելով կույս վիրավորանքի կերպարը, որը կարապյա թևերով ծփում էր կապույտ ծովում, Դոնի մոտ․ ծըփալով նա վանեց, քշեց ճոխ առատության ժամանակները։

Առաջին քնարական-հերոսական շեղումը երկպառակության սկզբնավորության մասին է, որը տրամաբանորեն կապված է ռուսների կործանման նկարագրության հետ։ Քաջ են ու անվեհեր ռուս ռազմիկները, շատ են Ռուսիայում այնպիսի բոգատիրներ, ինչպես Վսեվոլոդն ու Իգորը, բայց իշխանների սեպարատ քաղաքականության հետևանքով՝ Ռուսիան ուժասպառ է եղել, կորցնելով իր միասնությունն ու համախմբվածությունը․ իշխանների խռովության շնորհիվ կրճատվել է մարդկային կյանքը։ Իգորի պարտության պատճառները, կարծես, բացատրված են։ Դա կապված է XI—XII դարերի Ռուսիայի հասարակական-քաղաքական կյանքի ընդհանուր պայմանների հետ։

Իգորի գնդի կործանմանը հետևում է պոլովցիների արշավանքը Ռուսիայի վրա, գյուղերի ու քաղաքների ավերն ու կողոպուտը։ Տանջվում է ժողովուրդը։ Պոլովցիները հարկատու են

դարձրել բոլորին. յուրաքանչյուր տնից վերցնում են մի սկյուռ: Ռուս կանայք լացին-ողբացին իրենց կորած-գնացած ամուսիններին: «Մեր սիրելիներին մենք այլևս չենք կարող ո՛չ մտաներս բերել, նրանց մասին երկար ու բարակ մտածելով, ո՛չ աչքով տեսնել, ո՛չ էլ ոսկի ու արծաթ ափի մեջ պահել:

«Եվ տնքաց, եղբայրնե՛ր, Կիևը ցավից, իսկ Չերնիգովը՝ փորձանքից...»:

Ռուս կանանց ողբի ու կոծի մեջ արտացոլվել են համաժողովրդական հույզերը, հնչում է ժողովրդի սուգի ձայնը իր քաջարի զավակների կորուստի մասին, միաժամանակ նաև զուտ կենցաղային, գործնական տրտունջն այն այրիացած կանանց, որոնք երազում էին սիրելի ամուսինների վերադարձը հարուստ ավարով, իսկ այժմ նրանք միայնակ ու դժբախտ տառապում են պոլովցիների կողմից ավերի ենթարկված հյուսիսային իշխանների երկրներում: Չարագուշակ Կարնա և Ժլյա կույսերը սլացան Ռուս երկրով մեկ, ամենուրեք բորբոքելով բոցը հուր՝ եղջյուրի մեջ, և հրդեհների մեջ չքանում են նախկին բարօրության վերջին մնացորդները: Օգտագործելով կույս վիրավորանքի հեքիաթային կերպարը, որը կարապյա թևերով ծփաց կապույտ ծովում, ինչպես և չարագուշակ Կարնա և Ժլյա կույսերի կերպարները, հեղինակը նկարում է պոլովցիների ասպատակության պատկերը, որ զուգակցվել է սու ու գերությամբ, ամեն տեսակի հարկ ու տուրքով և վիրավորանքով, որ պատճառում էին նրանք հաշտ ու խաղաղ և անպաշտպան բնակչությանը: «Թախիծը ծո՛վ կտրեց Ռուս երկրով մեկ, վիշտը լի ու առատ ծավալվեց Ռուս երկրով մեկ»: Առավել ևս վատթար ու զզվելի է այն իշխանների վարքագիծը, որոնք չմասնակցեցին պոլովցիների վրա կազմակերպված արշավանքին, իսկ այժմ բոլորովին «դադարել է պայքարը պիղծերի դեմ, որովհետև եղբայրը եղբորն ասում է՝ «Սա իմն է, դա է՛լ է իմը»: Եվ իշխանները չնչին բաների մասին ասում էին՝ «Դա մեծ բան է», և նրանք իրար վրա խռովություն էին նյութում-կոփում. իսկ պիղծերը բոլոր կողմերից հաղթանակներով արշավում էին Ռուս երկրի վրա»:

Վիրավորանքի խորը զգացմունք է հնչում անարգված Ռուս երկրի համար: «Ասքի» առաջին մասի վերջում հեղինակը ամբողջ ժողովրդի զգացմունքն է արտահայտում, հակադրելով ռուս մարդկանց վշտի պատկերը Իգորի պարտությունից հետո

այն ցնծությանն ու հանգիստ վիճակին, որը պատել էր բոլորին՝ պոլովցիների վրա Սվյատոսլավ Անեղի կողմից ոչ հեռու անցյալում տարած հաղթությամբ։

Քաջ են ու արի այդ զույգ Սվյատոսլավիչները՝ Իգորն ու Վսեվոլոդը, սակայն նրանք, չկշռելով իրենց ուժերը, մարտի ելացան թշնամու դեմ։ Ոչ հեռու անցյալում նրանց նենգությունը թմրեցրեց Կիևի մեծ իշխան՝ Սվյատոսլավ Անեղը։ Նա արշավեց պոլովցիների երկրի վրա, կոխկռտեց նրանց բլուրները ու ձորակները, պղտորեց գետերն ու լճերը, ցամաքեցրեց հոսանքներն ու ճահիճները, իսկ պիղծ խան Կոբյակին խլեց-պոկեց ծովախորշից, պոլովցիների երկաթի հուժկու գնդերից, և Կոբյակը մրրիկի պես ընկավ Կիև քաղաքը, Սվյատոսլավի ընդունարան-դահլիճը, երեսն ի վայր փռվելով նրա առաջ։

Այստեղ օտար ցեղերը՝ վենետիկցիները, հույներն ու մորավները գովք են ասում Սվյատոսլավին, նախատում են Իգորին, որը խեղդեց «առատությունը» պոլովցիների Կայալա գետի հատակում, ռուս ոսկին ցրիվ տվեցին։

Հեղինակը նորից կրկնում է, որ Իգորը ոսկի թամբից իջավ ու նստեց ստրուկի թամբի վրա. դրանով, կարծես, ուզում է ընդգծել, որ Իգորը թեպետև գերության մեջ է, բայց և այնպես ցավում, տանջվում է և հասկանում, թե ինչ վշտալի հետևանք ունեցավ նրա անհաջող արշավանքը։ «Ընկճվել են քաղաքի պարիսպները և խնդությունը սպառվել»—այսպես է ավարտում հեղինակը առաջին մասը, ավելի ևս ընդգծելով իր այս վերջին բացագանչությամբ ռուս երկրի վշտի համատարած բնույթը։

ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

ԳԱՀԱՆԻՍՏ ԿԻԵՎԻ ԻՇԽԱՆ ՄԵԾՆ ՍՎՅԱՏՈՍԼԱՎԸ

Ավարտելով առաջին մասը պոլովցիներին հաղթող Սվյատոսլավի և պոլովցիների դեմ անփառունակ արշաված քաջ Իգորի հակադրությամբ, հեղինակն անմիջապես անցնում է Սվյատոսլավի կերպարի նկարագրությանը։

Կիևի մեծ իշխանը, որը ոչինչ չգիտեր իր հորեղբոր որդիների արշավանքի մասին ընդդեմ պոլովցիների, երազ է տեսնում՝ իբր թե նրան ծածկում են մետաքսե սև գործվածքով*, մատուցում են թունախառն կապույտ գինի, թափում նրա կրծքին պոլովցիների կապարճից մեծամեծ մարգարիտներ**։ Բոյարները մեկնում են մեծ իշխանի երազը։ Նրանք հայտնում են նրան, որ ռուս իշխաններն արշավել են պոլովցիների վրա և սարսափելի ջարդ են կրել։ Սվյատոսլավը խորապես վշտացած է եղբայրների չմտածված քայլի համար և ճառ է ասում, որը հեղինակը բնութագրում է իբրև «արտասվախառն ոսկե խոսք»։

«Այդ ինչ բերիք դուք, իմ ալիքներին արծաթի», բացականչում է նա։ Եթե իշխաններն դաշն կապեին իր, ալեվոր, բայց դեռևս կայտառ և հզոր Կիևի մեծ իշխանի, այն ծեր բազեի հետ, որը երիտասարդներից շատ ավելի բարձր է սավառնում և ավելի ամեհի է ջարդում թռչուններին որսի ժամանակ, ապա նրանք պարտություն չէին կրել պոլովցիներից, և այն ժամանակ չէր տանջվի Ռուս երկիրը։ Եվ այդ ամենը մոռանալով, իշխաններն ասել էին՝ «Արիանանք մենք ինքներս, գրավենք գալիք փառքը, իսկ անցյալինը մենք ինքներս կբաժանենք». դեռ վաղ են սկսել նրանք զենք ու զրահով անհանգստացնել պոլովցիների երկիրը, իսկ իրենց համար փառք որոնել։ Սակայն անփառունակ ավարտեցին պատերազմը, անփառունակ և զուր թափեցին պիղծ պոլովցիների արյունը։

Հեղինակը Սվյատոսլավի բերնով մի դիմում է ուղղում հզոր ռուս իշխաններին՝ Յարոսլավ Չերնիգովյան, Գալիցիայի

* Սև սավանով ծածկում են մեռելներին։

** Ժողովրդական երգերի մեջ մարգարիտը վշտի ու արցունքի խորհրդանիշն է։

իշխան Յարոսլավ Օսմոմիսլին (Յոթնիմաստ), Վլադիմիրի մարզի իշխան Վսեվոլոդին՝ Բոլշոյե Գնեզդո (մեծ բուն, մեծ տուն), և ուրիշներին, որպեսզի նրանք միանան և միահամուռ ուժերով դուրս գան վերացնելու ներկա ժամանակի վիրավորանքը՝ Ռուս երկրի համար, Իգորի համար, կորովի Սվյատոսլավիչի, և նրա ստացած վերքերի համար:

XII դ. Ռուսիայի պատմական կյանքում տեղի ունեցան որոշ փոփոխություններ: Կիևի մեծ իշխանն այլևս չուներ այն մեծ նշանակությունն ու ազդեցությունը, ինչ որ ունեցել էր անցյալում: Մյուս իշխանների նկատմամբ նա չէր վայելում իր անցյալ լիակատար իշխանությունը. նրանցից յուրաքանչյուրն ինքնիշխան էր ու անկախ: Բայց և այնպես մեծ իշխանը՝ հին ավանդի համաձայն՝ դիտվում էր որպես պետության միասնության ու հզորության խորհրդանշան: Ուստի այդ «ոսկի խոսքը», որը կանչում է բոլոր անջատ իշխանություններին միանալու և կռվելու ներխուժած թշնամու դեմ, վերապահվում է Կիևի մեծ իշխան Սվյատոսլավին: Բացի այդ՝ չպետք է մոռանալ, որ նույն այդ Սվյատոսլավը 1184 և 1185 թ. թ. հաղթելով պոլովցիներին, միաժամանակ բարձրացրեց Կիևի մեծ իշխանի հեղինակությունը:

«Ասքի» անանուն, բայց հանճարեղ հեղինակը իր հայրենիքի բոցավառ պատրիոտն (հայրենասերն) է: Նա լավ գիտե, որ հայրենիքի պաշտպանության գործը միայն Սվյատոսլավի ընտանեկան գործը չէ, այլ ամբողջ Ռուսիայինը: Ռուսիան պետք է համախմբի իր ուժերը թշնամու դեմ, և եթե այդ տեղի ունենա, նա կդառնա անպարտելի:

Այդ գաղափարը՝ իշխաններին ուղղած միության կոչը հանճարեղ «Ասքի» բովանդակության հիմքն է կազմում:

Այդ կոչի մեջ, որը մի շարք հետազոտողների՝ Կարամզինի, Գրամմատինի, Կալլաշի և ուրիշների կարծիքով պատկանում է ոչ թե Սվյատոսլավին, այլ «Ասքի» հեղինակին, դիպուկ կերպով բնութագրված են ժամանակի ռուս իշխանները: Առանձնապես հզոր և անկախ է պատկերացված Վլադիմիր-Սուզդալի իշխան՝ Վսեվոլոդ Բոլշոյե Գնեզդոն, որը հեռավոր հյուսիսում մոռացել է իր հայրական ոսկե գահը Կիևում, և Գալիցիայի իշխան Յարոսլավ Օսմոմիսլը, որը վարում է իր իշխանությունը Դանուբի վրա: Միայն-հուսալի չէին անհամերաշխ և թուլացած Պոլոցկի իշխանները: Նա հիշում է եղբայրներից լքված Պոլոցկի իշխան

Իզյասլավ Վասիլկովիչն, այն հերոսին, որն ընկավ լիտվացիների դեմ մղած մարտում։ Իսկ նրա պապին, Վլադիմիր I-ի թոռ՝ Պոլոցկի իշխան Վսեսլավին, որը բարի անուն էր վաստակել և արժանացել բոյանի գովերգին, «Ասքի» հեղինակը մի ամբողջ էջ է նվիրում։ Վսեսլավը կռվով և խարդավանքով ձգտում էր խլել Յարոսլավի որդիներից մերթ Նովգորոդի, մերթ Կիևի իշխանական գահերը։ Նա քիչ չէ անհանգստություն պատճառել նրանց, բայց և ինքն էլ պակաս չի տուժել երկպառակտիչ կռիվներում ընդդեմ Յարոսլավիչի որդիների*։ Վսեսլավի գունագեղ արկած-

* Պոլոցկի իշխանները սերում են Վլադիմիր I-ից և նրա կին Ռոգնեդայից։ Յարոսլավ Իմաստունի կտակի համեմատ՝ նրանք իրավունք չունեին ժառանգելու Կիևի գահը։ Նրանց կալվածքները գտնվում էին այժմյան Բելոռուսիայի տերիտորիայում, արևմտյան սահմաններում, որտեղ տեղադրված են Պոլոցք, Մինսկ, Սմոլենսկ քաղաքները։

Պոլոցկի իշխան Վսեսլավը ձգտում էր տիրանալ Կիևի գահին և անընդհատ պատերազմներ էր մղում Յարոսլավ Իմաստունի որդիների դեմ։ 1063 թվին նա հարձակվեց Նովգորոդի վրա (Վոլխով գետի ավազանում) և հրի մատնեց. չորս տարի անց՝ նա գրավեց Նովգորոդը, որի տերն էր Իզյասլավ Յարոսլավիչը։ Իրենց հերթին Յարոսլավիչ երեք եղբայրները՝ վրեժ առնելով Վսեսլավից, դիմեցին նրա վրա, ճանապարհին գրավեցին Վսեսլավի Մինսկ քաղաքը, որտեղ կոտորեցին բոլոր տղամարդկանց, իսկ կանանց ու երեխաներին հանձնեցին հաղթողների գթասրտությանը։ Ռուսներից կազմված երկու բազմամարդ զորքերը 1067 թ. մարտի 3-ին, երբ խորը ձյուն էր նստել դաշտերում, դեմ հանդիման խմբվեցին Նեմիգա գետի վրա։ Տեղի ունեցավ մի կատաղի ճակատամարտ. հաղթեցին Յարոսլավիչները, Վսեսլավը սարսափած՝ փախուստի դիմեց։ Նույն տարվա ամառը Յարոսլավի որդիները հաշտություն առաջարկեցին Վսեսլավին։ Նրանք երդվեցին, համբուրեցին խաչը, որ նրան չեն վնասի և նենգաբար նրան հրավիրեցին իրենց վրանը։ Վսեսլավը հավատաց Յարոսլավիչ եղբայրներին և Սմոլենսկի մոտ իր երկու որդիների հետ անցավ Դնեպր գետը։ Յարոսլավիչները բռնեցին նրանց, շղթայեցին, տարան Կիև և այնտեղ բանտարկեցին։

1068 թ. պոլովցիները հարձակվեցին ռուսների վրա և հաղթեցին սրանց Ալտա գետի վրա։ Կիևցիները պահանջեցին, որ մեծ իշխան Իզյասլավ Յարոսլավիչը նրանց կռիվ տանի պոլովցիների դեմ։ Նրանք ասում էին՝ «Պոլովցիները ցրվեցին-տարածվեցին մեր երկրում, տուր մեզ, իշխա՛ն, զենք ու ձի, և մենք դեռևս կկռվենք նրանց հետ»։

Իշխանը մերժեց ժողովրդի խնդիրքը. Կիևցիների ստորին խավերն ապստամբեցին իշխանի դեմ, ժողովուրդը քշեց Իզյասլավին, սա փախավ լեհերի մոտ։ Վսեսլավը դուրս եկավ բանտից. կիևցիները նրան գահ բարձրացրին։ Սա նույն 1068 թվին մոտ 7 ամիս իշխեց Կիևում, երբ Լեհաստանից լեհ զորքով և լեհ թագավոր Բոլեսլավի հետ վերադարձավ արտաքսված Իզյասլավը։ Վսեսլավը լքեց Կիևի գահը և ժողովրդից գաղտնի փախավ քաղաքից։

ները «Ասքի» հեղինակը այլաբանորեն է նկարագրում։ Վսեսլավը ներկայանում է մեզ իբրև մի խաղացող, որ վիճակ է գցում իր սիրած աղջկա վրա։ Աղջիկ ասելով՝ հասկացվում է Կիև քաղաքը։ Վսեսլավը «իր կեռ գավազանով հենվեց նժույգին և թռավ սլացավ դեպի Կիև քաղաքը և կոթովը (գավազանի) դիպավ Կիևի ոսկի գահին։ Ապա կես գիշերին թռավ-սլացավ գերթ վայրագ գազան Բելգորոդից, իրեն պատելով կապույտ մշուշով, լուսաբացին թափով մխեց ... բացեց դարպասները Նովգորոդի, խորտակեց փառքը Յարոսլավի, թռավ-սլացավ, գերթ գայլ, Դուդուտկից* Նեմիգա»։

Շատ գեղեցիկ է նկարագրում «Ասքի» հեղինակը 1068 թ. Նեմիգա գետի վրա տեղի ունեցած ճակատամարտը։ Այդ ճակատամարտը հեղինակը համեմատում է կալսելու պրոցեսի հետ։

«Նեմիգայի վրա գլուխներից խրձեր են փռում, կալսում են շղթաներով պողպատի, կալի վրա կյանք են դնում, քամհարում-բաժանում են հոգին մարմնից։ Նեմիգայի արյունոտ ափերին ոչ թե բարիք էր ցանված, ցանված էր ռուսորդիների ոսկորներ»։

Նեմիգայի վրա տեղի ունեցած ճակատամարտի պատկերավոր նկարագրությունից հետո՝ հեղինակը նորից վերադառնում է Կիևում Վսեսլավի գալու հարցին։

«Կոթովը (գավազանի) Կիևի ոսկի գահին դիպչելով», այսինքն իշխանական գահին բազմած՝ «Վսեսլավ իշխանը մարդկանց դատ ու դատաստան էր տեսնում, իշխաններին քաղաքներ էր շնորհում կառավարելու (РЯДИТЬ), իսկ ինքը ամեն գիշեր մինչև հավախոսը իբր թե վազում-հասնում էր Տմուտորոկան, գայլ դարձած կտրում-անցնում էր արևի աստված Խորսի ճանապարհը»։ Վսեսլավի գիշերային ճամփորդությունները այս-

---

Հետևյալ առավոտյան կիևցիները, տեսնելով, որ իրենց ընտրած իշխանը փախուստի է դիմել, ժողովի (վեչեի) հավաքվեցին և որոշեցին դիմել իշխան Իզյասլավին, ասելով՝ «Վսեսլավը փախել է. լեհերին մի բեր Կիևի վրա, քո հակառակորդը այլևս չկա»։ Ապա Կիև է գալիս իշխանի որդին՝ Մստիսլավ Իզյասլավովիչը, կոտորում է բոլոր նրանց, ովքեր ազատել էին Վսեսլավին բանտից,—մոտ 70 հոգի,—ոմանց էլ կուրացնում է առանց դատ ու դատաստանի։ Սրանից հետո գալիս է Իզյասլավը և նորից գրավում իր գահը։ Սակայն դրանով կռիվը չի վերջանում։ Իզյասլավը գրավում է Վսեսլավի ուդել (կալվածք) Պոլոցքը, վերջինս էլ ստիպված եղավ նորից հետ նվաճել իր քաղաքը։

* Նովգորոդի արվարձաններից մեկը։

տեղ փոքր ինչ հեքիաթային երանգ էր ստանում և այնքան էլ պարզ չեն, մանավանդ որ տարեգրային սկզբնաղբյուրների մեջ չկա ոչ մի հիշատակություն Վսեսլավի և Տմուտորոկան քաղաքի գաղտնի հարաբերությունների մասին։

Հավանական է, որ Վսեսլավի բանաստեղծական կենսագրությունը ուրիշ բան չէ, եթե ոչ Բոյանի երգը Վսեսլավի մասին, որը իր խոսքերով հարասում է «Ասքի» հեղինակը։ Այս մտքին է բերում մեզ տվյալ հատվածի եզրափակիչ մասը։

«Թեպետև անվեհեր մարմնի մեջ իմաստուն հոգի ուներ, բայց և հաճախ նա տանջվում էր փորձանքներից։ Նրա մասին դեռ շատ առաջ կանխագուշակ Բոյանը երգ է հորինել ու ասել՝ «Ոչ հնարագետը, ոչ բանիմացը, ոչ էլ թռչունը փորձաշատ՝ չեն խուսափիլ աստծո դատաստանից»»։

Հինավուրց երգիչ Բոյանը, ժողովրդի ձայնի արտահայտիչը հանդիսանալով՝ գնահատում էր իշխանների գործունեությունը, և ժամանակակիցների դատավճիռը սերնդից սերունդ էր ավանդվում երգի միջոցով։ «Ասքի» հեղինակն էլ գնում է Բոյանի նշած ուղիով։ Բոյանից մեջբերված ցիտատին անմիջապես հետևում է հեղինակի հայրենասիրական խորը զգացմունքով լի բացականչությունը, որ ուղղված է արդիականությանը։

«Պիտի հեծեծա Ռուս երկիրը, հիշելով վաղեմի ժամանակները և վաղեմի իշխաններին։ Այն Վլադիմիրին հինավուրց չէր կարելի գամել Կիևի լեռներին. Նրա դրոշներն անցան Ռյուրիկովիչներին, մյուսները՝ Դավիդովիչներին*, բայց զատ-զատ են փողփողում նրանց դրոշները։ Նիզակներն երգում են»։

Եվ այսպես, հիշելով ծեր Վլադիմիրին, որի ժամանակ Ռուսիան միասնական էր, ավարտում է «Ասքի» երկրորդ մասը։

---

* «Ասքի» հերոս Սվյատոսլավ III Ահեղի մահից հետո՝ Ռյուրիկը 1194 թ. գրավեց Կիևի մեծ իշխանական գահը, իսկ նրա եղբայր Դավիթը՝ Սմոլենսկի գահը։ Ռյուրիկի ժամանակ, շնորհիվ իշխան Վսեվոլոդ Բոլշոյե Գնեզդոյի խարդավանքին, որին «Ասքի» հեղինակը զուր և ապարդյուն աղերսում էր դուրս գալ ի պաշտպանություն «ռուս երկրի», բռնկեց միջիշխանական մի գարհուրելի պատերազմ, որն ընդգրկեց ամբողջ Սմոլենշչինան, Չերնիգովշչինան և Վոլինը և տևեց երկու տարի։

ՅԱՐՈՍԼԱՎՆԱՆ ԵՎ ԻԳՈՐԻ ՓԱԽՈՒՍՏԸ ԳԵՐՈՒԹՅՈՒՆԻՑ

«Ասքի» երրորդ մասում նկարագրված է Իգորի երտասարդ կնոջ՝ Յարոսլավնայի հմայիչ կերպարը։ Վաղ առավոտյան Պուտիվլ քաղաքի պարիսպների վրա՝ Յարոսլավնան լալիս է ողբողում ու մրմնջում։*

«Կկու կդառնամ, կթռչեմ Դանուբն ի վեր, կթրջեմ կղբե թևքերս Կայալա գետի մեջ, կսրբեմ իշխանի արյունոտ վերքերը նրա հզոր մարմնի վրա»։

Վաղ առավոտյան Պուտիվլ քաղաքի պարիսպների վրա Յարոսլավնան լալիս է ողբողում ու մրմնջում։

«Ո՜վ դու, քամի, արագաթռիչ մրրիկ, ինչո՞ւ ես դու, տեր, այդպես մոլեգին փչում, ինչո՞ւ ես դու թեթև թևերիդ վրա արագ թռցնում-բերում խինական նետերը սիրականիս մարտիկների վրա։ Մի՞թե բավական չէ այն, որ դու այստեղ՝ բարձունքում ամպերի տակ շնչում ես, փչում, ճոճելով նավերը կապույտ ծովի վրա։ Ինչու, տեր իմ, ցրեցիր սիզախոտովը (դաշտի) մեկ իմ խնդությունը»։

Վաղ առավոտյան Պուտիվլ քաղաքի պարիսպների վրա Յարոսլավնան լալիս է ողբողում ու մրմնջում։

«Ո՜վ դու, Դնեպր Սլովուտիչ, դու ծակեցիր լեռները քարե, անցար պոլովցիների երկրի միջով. դու ճոճ ի ճոճ տանում էիր Սվյատոսլավի լաստերը դեպի զորքը Կոբյակի. գուրգուրանքով, տեր իմ, սիրականիս բեր ինձ մոտ, որ չուղարկեմ վաղ առավոտյան արցունքներս նրան ծովն ի վեր»։

Վաղ առավոտյան Պուտիվլ քաղաքի պարիսպների վրա Յարոսլավնան լալիս է ողբողում ու մրմնջում։

«Լույս, լուսավոր Արև իմ, բոլորի համար դու ջերմ ես ու գեղեցիկ, ինչու, տեր իմ, ճառագայթներդ հուրհրան տարածեցիր սիրականիս մարտիկների վրա։ Դաշտում ջրազուրկ ծարավը ծրեց նրանց աղեղները. վիշտը խցեց նրանց կապարճները»։

Յարոսլավնան համակված է բուռն ցանկությամբ՝ օգնելու մարտական կյանքի այդ ծանր պահին ոչ միայն իր ամուս-

** Յարոսլավնան Իգորի երկրորդ կինն էր, նա երիտասարդ էր. Իգորի որդի Վլադիմիրին նա խորթ մայր էր գալիս։*

նուն, այլև նրա ռազմիկներին։ Նրա դիմումը բնության ուժերին շատ նման է հեթանոսական պոեզիայի ժողովրդական հմայություններին։ «Ասքի» մեջ բնությունը միշտ էլ կենդանի է, ոգեշնչված, հլու հնազանդ մարդու ցանկության կամքին։ Բնությունը ցավ է զգում և ապրում է մարդկանց հետ։ Նա նախազգուշացնում է նրանց վերահաս վտանգի մասին, ուրախանում և ցնծում է նրանց հետ։

Խորը վիշտ է հնչում Յարոսլավնայի ողբի մեջ, սակայն դա ոչ միայն մրմունջ է, այլև հմայություն։ Ժողովուրդը ձախորդությունների հանդիպելիս իր մեջ միշտ հակադրվելու ուժեր է գտնում։ Ժողովուրդը պատրաստ է պայքարի, ակտիվ գործողության։

Այդ միտքն է արտահայտել «Ասքի» հեղինակը՝ Յարոսլավնայի ողբը դարձնելով բնության նախազգուշակ ուժերի հմայության և կոչ անելով ազատագրելու Իգորին։

Յարոսլավնայի հմայությունը, կարծես, ունեցավ իր ներգործությունը։ «Ասքի» շարունակությունը պատմում է, թե ինչպես Իգորը փախավ պոլովցիների գերությունից։ Տարերքը օգնում է Իգորին՝ «կես գիշերին ծովն է ծփում, մրրիկը միգով գալարվում»։

Այսպիսի փոթորկալից պահին, մշուշապատ գիշերային խավարի մեջ ավելի դյուրին է փախուստի դիմել գերությունից, թմրեցնելով պահակների զգոնությունը։ Իգորը փախչում է գերությունից։ Նրան ուղեկցում է պոլովցի Օվլուրը։ Իգորի փախուստի նկարագրությունը սկզբում տրվում է ընդհատ, հուզումնալից ու երկյուղով լի։ Կարճ դարձվածքների սուր և հատու ռիթմը ուժեղ տպավորություն է թողնում։ «Իրիկնաժամին վերջալույսը մարեց։ Իգորը ոչ քնած է, ոչ արթուն։ Իգորը մտքով չափում է դաշտերը Մեծ Դոնից մինչև փոքր Դոնեցը։ Կես գիշերին Օվլուրը սուլեց-կանչեց ձիուն գետի մյուս ափին, իմաց տվեց իշխանին։ Իշխան Իգորը չհասկացավ։ (Օվլուրը) գոռաց, երկիրը թնդաց, սեզը խշշաց, պոլովցիների վրանները շարժվեցին»։ Կամաց-կամաց տանջալի, տագնապալի սպասողական դրությունը փոխվում է երկու հետապնդվող ձիավորների սրընթաց փախուստի նկարագրությամբ։ Գզակն ու Կոնչակը հետապնդում են փախստականներին։

Իգորին բազեի, իսկ Օվլուրին՝ գայլի հետ համեմատելով վերարտադրում են ռուս հեքիաթների ավանդական համեմա-

տությունները, երբ ուզում են պատկերած լինել արագընթաց վազքը։ Այդ համեմատությամբ պատկերը դառնում է պլաստիկ, համոզիչ և նրբագեղ։

Ահա Իգորը հասավ հարազատ Դոնեցին։ Նա արդեն իր հարազատ հողի վրա է։ Վիպերգու տոնը, ավելի ճիշտ ռիթմը, դանդաղում է, հուզումն ու տագնապը տեղի են տալիս հայրենիք վերադառնալու ցնծագին զգացմունքներին։ Տառապալի ձախորդություններից հետո՝ Իգորը ուզում է հանգստանալ և զրույց անել հարազատներից մեկի, թեկուզ Դոնեց գետի հետ։ Իգորն ու Դոնեցը սրտառուչ ողջունում են իրար։

«Դոնեցն ասաց.—Ո՛վ դու, իշխան Իգոր, սակավ չէ մեծությունը քո, իսկ Կոնչակի տրտմությունը և Ռուս երկրի ցնծությունը»։

«Իգորն ասաց.—Ո՛վ դու, Դոնեց, սակավ չէ մեծությունը քո, որ օրորեցիր իշխանին ալիքների վրա, փռեցիր նրա համար կանաչ սեզը քո արծաթի ափերին, զգեստավորեցիր նրան ջերմ մշուշով ստվերում կանաչ ծառերի։ Դու պահպանեցիր նրան ինչպես հողամաղին ջրերի վրա, որորներին՝ ալիքների վրա, բադերին՝ քամիների վրա։ Այդպիսին չէ, ասում են, Ստուգնա գետը. ծանծաղ հոսելով, կլանելով օտար վտակներ և հոսանքներ, լայնանալով գետաբերանի մոտ, նա արգելափակել է իր հատակում մռայլ ափի մոտ երիտասարդ իշխան Ռոստիսլավին։ Մորմոքվում է մայրը Ռոստիսլավի՝ երիտասարդ իշխան Ռոստիսլավի համար, հուսալքվել են ծաղիկները խղճահարությունից և խոնարհվել են ծառերը ցավից»*։

Գզակն ու Կոնչակը՝ չկարողանալով հասնել Իգորին, այլաբանությամբ լի հետևյալ զրույցն են ունենում։ Գզակը, նկատի ունենալով այն, որ բազեն, այսինքն՝ Իգորը թռել-անցել է իր բունը, առաջարկում է նետահար անել բազեի ձագին, այսինքն՝ Վլադիմիրին, ոսկի նետերով։ Կոնչակը առարկում է նրան, առաջարկելով բազեի ձագին կապել-շղթայել գեղեցիկ աղջկա միջոցով։ Այս այլաբանությունն իմաստավորվում է տարեգրության պատմությամբ, որի համեմատ Վլադիմիրն ամուսնանում է

---

* Այստեղ խոսքը Վլադիմիր Մոնոմախի կրտսեր եղբայր Ռոստիսլավի մասին է. Կիև-Պեչորյան պատերիկի (Հարանց վարքեր) մեջ նրա մասին ոչ բարյացակամությամբ է պատմված (տես «Պատմություն Գրիգոր կրոնավորի մասին»)։

կոնչակի դուստրի հետ: Այս առաջարկության ի պատասխան կենսական հարցերում զգաստ պրակտիկ Գզակ խանն ասում է.
«Եթե նրան շղթայենք-կապենք գեղեցիկ աղջկա միջոցով, ապա մենք կզրկվենք թե՛ բազեի ձագից և թե՛ գեղեցիկ աղջկանից և թռչունները կհարվածեն մեզ (Նույնիսկ) պոլովցիների տափաստանում»:

ՎԵՐՋԱԲԱՆ

Հին երգիչների տրադիցիային հետևելով՝ հեղինակը նորից հիշում է Բոյանին: Բոյանն ասել է.

«Թեպետև ծանր է գլխի համար առանց ուսերի, և աղետ է մարմնի համար առանց գլխի», այդպես էլ (ծանր է) Ռուս երկրի համար առանց Իգորի: Արևը լույս է տալիս երկնքում, Իգոր իշխանը՝ Ռուս երկրում:

Այդպիսի զուգադրությունները սովորական են գովասանական երգերի մեջ, որոնք ասվում էին իշխանական խնջույքներում և ժողովներում:

Հեղինակը, տարբերվելով տարեգրությունից՝ ստիպում է Իգորին անմիջապես մեկնել Կիև քաղաքը: Ինչպես երևում է, հեղինակը դրանով ուզում էր ասել, որ Իգորը իր պարտքն էր համարում՝ նախ և առաջ ներկայանալ Կիևի մեծ իշխանին՝ նրան բացատրություն տալու կամ թողություն խնդրելու համար:

«Ասքը» վերջանում է ռուս երկրի գործիչների փառաբանությամբ:

«Ծեր իշխաններին գովերգելուց հետո, պետք է երգով գովել և երիտասարդներին, փառք Իգոր Սվյատոսլավիչին, կորովի ցուլ Վսևոլոդին, Վլադիմիր Իգորևիչին: Ո՜ղջ եղեք դուք, իշխաններ և դրուժինա, կռվելով քրիստոնյաների համար ընդդեմ պիղծ գնդերի: Փառք իշխաններին և դրուժինային: Ամէն»:

5. «ԱՍՔԻ» ԳԼԽԱՎՈՐ ՀԵՐՈՍՆԵՐԸ

«Ասքի» գլխավոր հերոսներն են՝ իշխաններ Իգոր և Վսևոլոդ Սվյատոսլավիչները, Կիևի մեծ իշխան Սվյատոսլավ Վսևոլոդովիչը և Յարոսլավնան: Դրանք բոլորն էլ՝ ըստ «Ասքի», ուժեղ կամքի տեր մարդիկ են, վառ և ամբողջական բնավորություններ:

Իգորի մասին ասված է, որ «նա զարգացրել էր իր միտքը անսասանությամբ, սրել այն արիությամբ և ինքը համակվել ռազմական ոգով»։ Նախ և առաջ հանդես է գալիս նրա արիությունը, ռազմական ոգին և մարտական խանդը։ Իգորի համար պատերազմը սովորական բան է։ Նույնիսկ արշավանքից առաջ տեղի ունեցած խավարումը նրան վախ չպատճառեց։ Այս հանգամանքը ցույց է տալիս, որ Իգորը, իսկապես, խելոք էր և բարձր էր կանգնած ժամանակի նախապաշարումներից, երբ մարդիկ հավատում էին ճակատագրին, աստվածային նախախնամությանը։ Ռազմիկներին Իգորը ասում է՝ «Լավ է սպանվել, քան գերի ընկնել»։ Ձեռներեցությունը, հաստատուն կամքը՝ կռվելու թշնամու դեմ, որոշում են Իգորի վարքագիծը՝ «սաղավարտով ըմպել ջուրը Մեծ Դոնի», այսինքն՝ դուրս քշել պոլովցիներին ռուս երկրի սահմաններից և հաղթել նրանց, ինչ գնով էլ լինի այդ,—ահա թե ինչի էր ձգտում ռազմատենչ, անհամբեր ու տաքարյուն իշխանը։

Ռազմական խանդը, երազանքը հաղթության ու փառքի մասին, որը ցանկանում է նա բաժանել իր սիրելի եղբայր Վսեվոլոդի հետ, հրապուրեցին Իգորին։ Նա մոտ քաղաքագետ էր, մոռացավ հանուր ռուսական շահերը և անշեղ դիմեց առաջադրած նպատակին։ Նա ընդունակ չէր նախատեսնելու իր բռնած գործի հետևանքները։ Պոլովցիների վրա տարած առաջին հաղթությունը թևավորեց նրան, և նա շատ հեռու գնաց, մտավ պոլովցիների երկրի սահմանները։ Արիությունը, անձնական քաջությունը չեն լքում նրան անգամ ամենածանր պահերին, երբ նա տանուլ է տալիս ճակատամարտը։ Բարձր ու վեհ ձգտումը՝ փրկելու իր եղբորը, որը շրջապատված էր թշնամիներով, չնայած նրա վճռականությանը, այնուամենայնիվ, հաջողությամբ չպսակվեց՝ շնորհիվ նրա վերը հիշված տաքարյունության։ Նա առաջ նետվեց փրկելու իր եղբորը, չկարողացավ ետ պահել, կանգնեցնել նահանջող կովույներին, և ինքը գերի ընկավ։ Իգորը դյուրաբորբոք է, արի, ռազմատենչ և վեհանձն, բայց միաժամանակ նա տաքարյուն է, անզգույշ և, ինչպես իշխանների մեծ մասը, զուրկ քաղաքական լայն աշխարհայացքից։ Սակայն դա Իգորի հանցանքը չէ, այլ սոսկ նրա դժբախտությունը։ «Ասքի» հեղինակը փառաբանում է Իգորին, որպես լա-

վագույն ռուս իշխաններից մեկին, որը կարող է գիտակցել իր սխալը և կշարունակի կռվել պոլովցիների դեմ։ Թանկ գնով պիտի նա քավի հայրերի ու պապերի մեղքերը։

Վսեվոլոդ Սվյատոսլավիչ

Վսեվոլոդի կերպարը ներկայացված է հենց նրա կողմից գլխավորած քաջարի, պատերազմներում կոփված դրուժինայի ֆոնի վրա։ Ճակատամարտի նկարագրության մեջ ի հայտ է գալիս Վսեվոլոդի հզորությունը, բացառիկ ճարպկությունն ու արիությունը։ Հեղինակը նրան «կորովի ցուլ» է անվանում։ Նա նման է բիլինային հերոս՝ բոգատիր Իլյա Մուրոմցուն։ Թեև նա վիրավորված է, բայց չի նկատում իր վերքերը, արհամարհում է մահը, մոռացության է մատնում իր բոլոր բարեկամական կապերն ու կենցաղային հոգսերը։ Վսեվոլոդի կերպարը ռուս ազգային հերոս-ռազմիկի մոնումենտալ կերպարն է, մի հերոսի, որ ընդունակ է ինքնամոռացության աստիճանի հասցրած խանդով տարվել ճակատամարտով և անթիվ թշնամիներ կոտորել։

Սվյատոսլավ Վսեվոլոդովիչ

Քաջարի, բորբոքուն և շուտ հափշտակվող հյուսիսային իշխաններին հակադրված է Կիևի մեծ իշխան Սվյատոսլավի կերպարը։ Մյուս բոլոր իշխանների համեմատությամբ, նա անհամեմատ բարձր է կանգնած, որպես հանուր ռուսական շահերի արտահայտիչ այն պայքարում, որ մղվում է պոլովցիների դեմ։ Ռուս երկրի միասնության գաղափարը, պատմականորեն խորը ճշմարտություն պարունակող այդ գաղափարը, արտահայտված է «ոսկի խոսքի» մեջ, որը հեղինակը վերագրում է այս մեծ իշխանին։ Նրա կերպարի հատկանշական գծերից են՝ խորը և անվրդով իմաստությունն ու քաղաքական լայն մտահորիզոնը։

Սվյատոսլավը պոլովցիների ահ ու սարսափն է։ Նա ներխուժեց պոլովցիների երկիրը, կոխկռտեց նրանց բլուրներն ու ձորակները, պղտորեց գետերն ու լճերը, չորացրեց հոսանքներն ու ճահիճները։ Այդ նշանակում է, որ Սվյատոսլավը մեծ զորք ուներ։ Կոբյակ խանը «մրրիկի պես խլեց-պոկվեց պոլովցիների երկրից և իբրև գերի փռվեց Կիևում Սվյատոսլավի գահլիճ-

ընդունարանում»։ Սակայն մեծ իշխանը չի պարծենում իր հաղթություններով։ Նրա համար թանկ է ոչ թե անձնական փառքն ու հռչակը, այլ հարազատ երկրի երջանկությունը, խաղաղ ու հաշտ կյանքը և անկախությունը։ Սվյատոսլավի իմաստությունն երևան է գալիս նաև այն ժամանակ, երբ նա անմիջապես հասկանում է, թե ինչու հյուսիսային իշխանները անջատ ելան պոլովցիների դեմ, կանխապես պատրաստված չլինելով պատերազմի և թերագնահատելով թշնամու ուժերը։ Նա անձնապես թշնամական զգացմունքներ չի տածում իր հորեղբոր որդիների՝ Իգորի եվ Վսեվոլոդի հանդեպ։ Նա խոսում է նրանց «քաջարի սրտերի մասին, որոնք կոփված են ամրակուռ պողպատից և եփված են խիզախության մեջ», բայց և այնպես նա վշտանում է, որ իշխանները թեթևամտորեն մեծ սխալ են գործել՝ «շատ վաղ են սկսել իրենց սրերով փաղաքշել պոլովցիների երկիրը, իսկ իրենց համար փառք որոնել, սակայն նրանք փառք չվաստակեցին և զուր տեղը պիղծերի արյունը թափեցին»։

Խորը համոզված լինելով, որ ռուսորդիները կարող են պաշտպանել իրենց երկիրը և խորտակել թշնամիներին, եթե համապատասխան քաջարի իշխան-զորավար գտնվի, «Ասքի» հեղինակը փոքր ինչ իդեալականացնում է Սվյատոսլավի կերպարը, նրան հանդես բերելով որպես Վլադիմիր Մոնոմախի «գործի ու աշխատանքի» շարունակող։ Հեղինակը որոշ չափով վեհություն է տվել Սվյատոսլավի կերպարին, նրա «ոսկի խոսքի» մեջ դնելով իր նվիրական մտքերն ու խոհերը, իր. հայացքը գերագույն իշխանության խնդիրների մասին, որոնք արտահայտում են նրա հայրենասիրական ջերմ զգացմունքները։

Յարոսլավնա

Ռազմական առաքինություն կամ քաղաքական իմաստություն մարմնավորող քաջարի իշխանների կերպարների կողքին, հակադրվելով, միաժամանակ և լրացնելով նրանց, հանդես է գալիս Եփրոսինյա Յարոսլավնայի, սլավոնական կնոջ այդ քնքշագույն, լիրիկական և հմայիչ կերպարը։ Իգորի երիտասարդ կինը Գալիցիայի հռչակավոր իշխան Յարոսլավ Օսմոմիսլի աղջիկն է։ Նա ոչ միայն ամուսնական հավատարմության սիմվոլն է, այլև ռուս կանանց քաղաքացիական հայրենասիրական զգաց-

մունքների ներկայացուցիչը դաժան ռազմի ժամանակ։ Նրան մտահոգություն է պատճառում ոչ միայն մարտերում վիրավորված իր ամուսնու վիճակը, այլև անջուր տափաստանում բարկ արևի ճառագայթների տակ ուժասպառ եղած նրա ռազմիկների ծանր դրությունը։

Հնագույն դարերում ռազմի ժամանակ վերքերի բժշկությունը կանաց անմիջական պարտականությունն էր համարվում։ Այստեղ էլ արդեն պարզ է, թե ինչ հոգեբանական կացություն է ապրում Յարոսլավնան, որը տանջվում է անզորությունից և իր գերի ընկած ամուսնու կարոտն է քաշում։ Ավելացնենք նաև այն, որ Իգորի պարտությունից հետո՝ պոլովցիները թիկունքից հարձակվեցին հյուսիսային իշխանության վրա և նույնիսկ ասպատակելով՝ մոտեցան Պուտիվլ քաղաքի գերանակապ պարիսպներին, որոնց վրա վաղ առավոտյան Յարոսլավնան իր ողբ ու կոծն էր մրմնջում։

Սլավոնուհու քնքուշ և կաթոգին հոգին զուգորդվում է ակտիվ գործելու վառ ձգտման հետ։ Յարոսլավնայի հոգու բոլոր ուժերը բանաստեղծորեն ի հայտ են գալիս բնության գրեթե հեթանոսական հմայության մեջ։

Յարոսլավնան ներկայանում է մեզ իբրև մի կերպար, որ աճել-բողբոջել է սլավոնական ժողովրդական բանավոր պոեզիայի անդաստանում։ Սերտ կապը բնության հետ բացառիկ պոետականություն և ճշմարտացիություն է տալիս Յարոսլավնայի կերպարին։

Ազգային սլավոնական ու պատմական գծերին զուգընթաց՝ Յարոսլավնայի կերպարի մեջ առկա է կնոջ հոգեկան հույզերի մի այնպիսի վեհ ու ազնիվ, այնպիսի պոետական արտահայտություն, որը համամարդկային բնույթ է կրում, և այդ հանգամանքը դասում է նրան համաշխարհային գրականության հավիտենական ու անթառամ, անմահ ու հավետ հմայիչ կերպարների շարքը։

6 «ԱՍՔԻ» ՀԱՅՐԵՆԱՍԻՐԱԿԱՆ ԳԱՂԱՓԱՐԸ

Ռուս պետության միասնության և անկախության գաղափարը ոգևորում էր «Ասքի» հեղինակին, ինչպես և Կիևյան Ռուսիայի լավագույն հայրենասեր գրողներին։ Տափաստանների բազմաթիվ վաչկատուն ցեղի դեմ հաջող պայքար մղելու

համար անհրաժեշտ էր, որ ֆեոդալական վերնախավը միաբան և միասիրտ լիներ։ Ռուս ժողովուրդը պարապում էր երկրագործությամբ, մասամբ անասնապահությամբ, արհեստներով, որսորդությամբ և ձկնորսությամբ։ Աստանդական ցեղերի հորդաները (խազարներ, Թուրքեր, պեչենեգներ, ապա պոլովցիներ), հաջորդաբար հեղեղելով ռուսական լայնարձակ դաշտավայրերը՝ խանգարում էին երկրի խաղաղ զարգացումը, ետ պահելով նրա կուլտուրական աճը։ Կիևյան պետությունը X—XIII դ. դ. շատ արագ էր զարգանում և որոշ կողմերով կուլտուրապես ավելի բարձր էր կանգնած, քան Արևմտյան Եվրոպայի պետությունները։ Սակայն աշխարհագրական տեսակետից նրա դիրքը նպաստավոր չէր։ Գտնվելով Եվրոպայի սահմանագծի վրա, այդ պետությունը մշտապես ասպատակությունների էր ենթարկվում Ասիայից ներխուժող վայրենի ու գիշատիչ քոչվորական ցեղերի կողմից։ XI դ. վերջերին ռուսները հաջողությամբ հաղթահարեցին իրենց հարևան աստանդական ցեղերին, խորտակելով կամ ծառայության ընդունելով նրանց ինչպես ընդունել էին կովույներին կամ ներծծելով ու ասիմիլյացիայի ենթարկելով նրանց։ Բացառություն էին կազմում միայն պոլովցիները, որոնք արդեն 125 տարի, մոտավորապես «Ասքը» գրելու ժամանակները, շարունակում էին սարսափ տարածել ռուս երկրի վրա։ «Ասքի» հեղինակը, կարծես, հարց է տալիս՝ «ինչպես այդքան ուժեղ են պոլովցիները. միթե՞ քաջակորով ռուսորդիները չեն կարող նրանց հախից գալ։ Եվ ինչն է խանգարում այդքան կարևոր գործի կենսագործմանը»։

Իր երկի համար թեմա ընտրելով Իգորի անհաջող արշավանքը պոլովցիների վրա, «Ասքի» հեղինակն ամենայն համոզկերությամբ ապացուցում է, որ պետք է խորտակել պոլովցիներին, և դա միանգամայն հնարավոր է։ Վկայակոչելով պատմական անցյալը՝ Օլեգ Սվյատոսլավիչին և Վսեսլավ Պոլոցկուն, նա համոզում էր, որ այն օրից, երբ պոլովցիները ներս խուժեցին, ռուս իշխաններն ավելի շատ զբաղված էին երկպառակություններով. և միայն Վլադիմիր Մոնոմախն էր, որ հաջողությամբ մղում էր այդ կռիվը, և այդ ամենը շնորհիվ այն հանգամանքի, որ նա պայքարում էր երկպառակությունների դեմ՝ պաշտպանելով սմերդների (ռամիկ ժողովուրդ) շահերը։ Պոլովցիների դեմ կազմակերպված համերաշխ կռիվ մղելու այդ կոչը հեղինակն ուղղում է ոչ թե ժողովրդին, որը միշտ կպաշտ-

պանի իշխաններին այդ ձեռնարկության մեջ, այլ ֆեոդալական շրջաններին՝ իշխաններին ու նրանց դրուժինաներին։

Ավագ դրուժինան սովորաբար հավատարիմ էր մնում իշխանին։ Հազվադեպ էր, երբ դրուժինիկը մեկ իշխանից անցնում էր մյուսի մոտ։ Մասնակցելով իշխանի հետ ընդհանուր գործին, լինի դա պատերազմ, թե երկպառակություն, դրուժինան կամ հարստանում էր, շահելով ճակատամարտը, կամ փորձանքի էր ենթարկվում և ոչնչանում նրա հետ միասին, որոնելով իրենց համար պատիվ, իսկ իշխանին՝ փառք։

Սակայն, դա այլևս Սվյատոսլավ քաջի ժամանակների դրուժինան չէր։ XII դ. տարեգրությունները և Կիև-Պեչորյան պատերիկը պատմում են մեզ դրուժինայի երկու շերտի մասին, դրանք են՝ կրտսեր դրուժիննիկներ-պատանիներ, որոնք ապրում էին իշխանի մոտ ու նրա հաշվին, և ավագ դրուժիննիկները, որոնք իշխանների նման բնակվում էին իրենց սեփական տներում, ունեին գյուղեր, սմերդներ և խոլոպներ։ Իշխանի հրավերով սրանք հավաքվում էին խնջույքի և մասնակցում այն ձեռնարկություններին, որոնք մեծ ավար և օգուտներ էին խոստանում։ Հեղինակը կոչով դիմել է ռազմիկ մարդկանց հենց այս միջավայրին, ինչպես երևում է դա «Ասքի» վերջաբանից՝ «Ողջ լինեք դուք, իշխաններ և դրուժինա, կռվելով քրիստոնյաների համար ընդդեմ պիղծ գնդերի»։ Քրիստոնյաներ ասելով՝ հասկանում է հասարակ երկրագործներին-սմերդներին, որոնց հետագայում անվանում են կրեստյանե (крестьяне)—գյուղացիներ։ «Ասքի» հեղինակը ձգտում է ոչ միայն բարձր հայրենասիրական զգացմունքներ արթնացնել նրանց մեջ, այլև ցույց է տալիս, թե ինչ օգուտներ կունենային ռազմա-ֆեոդալական վերնախավերը՝ իշխաններն ու դրուժինան, եթե հաղթելու լինեին պոլովցիներին։ Եթե հյուսիսային մեծ իշխան Վսեվոլոդ Բոլշոյե Գնեզդոն, որն այնքան հզոր էր, որ կարող էր թիակներով Վոլգայի ջուրը ցրիվ տալ-պրծնել, իսկ Դոնը սաղավարտներով դատարկել, կռվի ելներ պոլովցիների դեմ, ապա հաղթության հետևանքով ստրուկների գինը կընկներ, իսկ ստրկուհին հավասար կլիներ մի նոգատի, այսինքն՝ մեկ սկյուռի կամ մեկ խոճկորի, ընդհանրապես ստրուկների գինը կընկներ 250 անգամ։

Արտահայտելով իր ժամանակի առաջավոր միտքը, «Ասքի» հեղինակը այնուամենայնիվ իր դարի զավակն է։ Ճիշտ է, նա

գտնում է, որ պոլովցիների վրա տարած հաղթությունը կթեթևացներ ռուս սմերդի գոյավիճակը, բայց միևնույն ժամանակ նա դեմ չէր հրապուրելու նաև իշխաններին այն հեռանկարով, որ նրանք ի վիճակի կլինեն գրավելու մեծ քանակությամբ ստրուկներ-օտարազգիներ։ Դրանում արտահայտվում է հեղինակի պատմականորեն ճշմարտացի՝ սահմանափակվածությունը, որպիսի հանգամանքը, հարկավ, չի նվազեցնում «Ասքի» ամբողջ նշանակությունը։

Ռուս պետության մեջ ազգային միասնության գաղափարը այն ժամանակ՝ ֆեոդալական մասնատվածության պայմաններում առաջադիմական էր և ծայր աստիճան կարևոր նշանակություն ուներ։ Արտաքին վտանգի առաջ երկրի ներսում միասնության համար հնչող այդ բուռն կոչը սուր քաղաքական և ագիտացիոն բնույթ է տալիս «Ասքի» նման գեղարվեստական երկին։

Քաջարի Իգոր և Վսեվոլոդ իշխանների զորքի, ներառյալ նրանց հրաշալի մարզված դրուժինաների ջախջախումը թույլ է տալիս «Ասքի» հեղինակին անել լավատես եզրակացություն, այն է՝ պետք է ոչ թե հուսահատվել, այլ համախմբել բոլոր ուժերը թշնամուն հակահարված տալու, այս դեպքում օրինակ առնելով հինավուրց Վլադիմիր Մոնոմախից և չկրկնելով անցյալի սխալները։ «Ջախջախված զորքերը լավ են մարզվում», ասում է առածը։ Հյուսիսային իշխանների սխալն այն էր, որ նրանք, Կիևի մեծ իշխանից գաղտնի արշավելով թշնամու վրա, հաշվի չառան այն պլանը, որ նախատեսված ու հաջողությամբ կենսագործված էր 1184 թ. և 1185 թ. գարնանը։

Պոլովցիների դեմ մարտնչելիս թույլ էին տրված ավելի վատթար սխալներ դեռևս անցյալում, հենց առաջին տասնամյակում, երբ հանդես էին եկել պոլովցիները. իշխանները ռուս եղբայրական արյան հեղեղներ թափեցին։

1856 թ., երբ Կարլ Մարքսը կարդաց «Ասքի» ֆրանսերեն թարգմանությունը, նա Ֆրիդրիխ Էնգելսին այդ երկի իդեայի մասին գրեց հետևյալը.

«Պոեմի իմաստը միության այն կոչն է, որ ուղղված է ռուս իշխաններին հենց մոնղոլ-թաթարական արշավանքից առաջ»։

Միջազգային իրադրությունը XII դարի վերջերին, Մոնղոլ-թաթարական աստանդական ցեղերի՝ նոր և ավելի ահավոր

թշնամիների արշավանքից փոքր ինչ առաջ՝ պահանջում էր, որ երիտասարդ ռուս պետությունը համախմբի ու կենտրոնացնի իր բոլոր ուժերը։ Այդ գաղափարը, որ արդեն որոշ չափով զարգացվել էր Կիևյան շրջանի մի շարք երկերի մեջ, համընկնում էր ժողովրդական լայն մասսաների պահանջների ու շահերի հետ։ Նա գտավ իր ամենավառ և բարձր գեղարվեստական արտահայտությունը «Ասքի» մեջ։

«Ասքի» պաթոսը—դա կյանքի հավաստումն է և քաջարի ռուսորդիներին, հայրենի երկրին ուղղած հաղթության կոչը։ «Ասքի» մեջ հնչեց ժողովրդի ձայնը, որ ուղղած էր դարերին, այսինքն՝ անհրաժեշտ է, որ ուժեղ կենտրոնական իշխանությունը պայքար մղի ֆեոդալական մասնատվածության և խռովությունների դեմ, հենվի ժողովրդի վրա, որը միշտ ենթարկված է կեղեքման ու հարստահարության։

«Ասքի» կերպարները պոետական ընդհանրացումներ են, դրանք XII դ. Ռուսիայի պետական գործիչներին առաջադրված խնդիրների, նրանց ապրումների, գաղափարների, պոետական տրամադրությունների խորհրդանշաններն են։ Հեղինակը նրանց դարձրել է ռուս երկրի միասնության, ռուս պետականության և թշնամիների դեմ նրա վարած հերոսական պայքարի ժողովրդական գաղափարի կրող, մի գաղափար, որ անթառամ ապրում է ռուս մարդկանց հոգու խորքերում։

7. ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ ԿԵՐՊԱՎՈՐՄԱՆ ՀՆԱՐՆԵՐԸ

«Ասքի» մեջ գերակշռում են՝ մերթ միաձուլվելով, մերթ փոխարինելով մեկը մյուսին երկու ինտոնացիոն շերտեր՝ ժողովրդական վիպական պոեզիայի ռիթմը և հռետորական ագիտացիոն ձայնը, որտեղ հանդիպում ենք նաև առանձին գրքային դարձվածքներ։

Գիտնականներից շատերը տրոհում էին հուշարձանի տեքստը չափածո տողերի, հար և նման բիլինաների ոտանավորին, և ենթադրում էին, որ այդ երկը երգվել է երաժշտական լարային գործիքի, հավանաբար, գուսլիի նվագակցությամբ։ Ալիտերացիաների, ներքին հանգերի, հնչյունանմանությունների, առանձին տների կրկնությունների առատությունը, իսկ դրանց թիվը մանավանդ շատ է ավելի հուզական և սրտառուչ հատվածներում,—արդարացնում են նմանօրինակ ենթադրությունը։

«Ասքը» ձևավորված է իբրև կենդանի խոսք ու երգ, որոնք ուղղված են ոչ թե ընթերցողին, այլ կենդանի ու անմիջական ունկնդիրներին. «Ո՛վ, դուք, եղբայրներ և դրուժինա, ավելի լավ չէ՞ր լինի, եթե ականջ դնեինք...», այսպես է սկսում հեղինակն իր երգը, որը պատահաբար չէ, որ „Слово“—«Ասք» է կոչվում, իսկ երգն ավարտում է արշավանքին մասնակից իշխաններին մեծարանքով, ինչպես ընդունված է եղել խնջույքների ժամանակ։

«Ասքի» պլանի թեմատիկ մասերից յուրաքանչյուրը բաժանվում է կամ ընդհատվում տրամաբանական կապի համար այսպես կոչված ռեֆրենով-կրկնակով. այսինքն՝ ռիթմիկ, երաժշտականորեն հնչող տներով, որոնք երկին խոսքը լիրիկական, լարուն էմոցիոնալ, հուզական բնույթ են տալիս։ Այդպիսի կրկնակներից հիշենք՝ «Օ՛, ռուս երկիր, դու արդեն բլուրի ետևն ես մնացել» կամ «Շրջափակել են դաշտերը լայնարձակ վահաններով կարմիր», կամ «Որոնելով իրենց համար պատիվ, իսկ իշխանի՝ փառք», կամ էլ «Հարություն չես տա Իգորի քաջարի զորքին», կամ հաճախ կրկնվող ռազմականչերը կռվել-վրեժ առնել «ռուս երկրի համար, Իգորի վերքերի համար»։ Այդպես են նաև բնաշխարհից վերցրած հաճախ կրկնվող պատկերները, որպես զուգահեռներ մարդկային ծանր ապրումների. օրինակ՝ «Սեզը թառամեց խղճահար, ծառը խոնարհվեց երկիրն ի վար վշտահար»։ Դա շատ է մոտեցնում հուշարձանի ոճը ժողովրդական բանավոր ստեղծագործությանը։

«Ասքի» մեջ գերիշխում է բանավոր ժողովրդական պոեզիայի լեքսիկան և մեծ քանակությամբ հանդիպում են ֆոլկլորային ժողովրդական կայուն էպիտետներ, օրինակ՝ „светлое солнце“ («լուսավոր արև»), „чистое поле“ («ազատ դաշտ»), „сабли калёные“ («ջրմուխ թրեր»), „острые стрелы“ («սրածայր նետեր»), „острые мечи“ («սրասայր սրեր»), „борзые кони“ («արագավազ ձիեր»), „серые волки“ («գորշ գայլեր»), „зеленая трава“ («կանաչ սեզ»), „золотое седло“ («ոսկի թամբ»), „золотое стремя“ («ոսկի ասպանդակ»), „золотое слово“ («ոսկի խոսք»), „серебряные струю“ («արծաթի շիթեր»), „серебряная седина“ («արծաթի ալիք»)։

Ֆոլկլորային նմանությունը տեսնում ենք նաև մի շարք փոխաբերությունների (մետաֆորաների) հորինվածքի մեջ, օրինակ՝ „не десять соколов пускал Боян на стадо лебедей, но

свои вещие персты возлагал на живые струны“ («տասը բազե չէ՝ որ բաց էր թողել (արձակել էր) կարապների երամի վրա, այլ տասը կանխագուշակ մատներ դարսել նա կենդանի լարերի վրա»),—այստեղ կիրառված է ֆոլկլորին հատուկ „не“ (չէ, ոչ) բացասականով հոգեբանական զուգահեռականությունը, կամ հետևյալ համեմատությունները՝ „кричат телеги (их) в полночь, скажемь-лебеди раснуганные“ («կես գիշերին ճռնչում են վաչերը (նրանց), ասես, կարապներ են սարսափահար»), կամ „Ане сороки застрекотали, по следу Игоревом едут Гзак и Кончак“ («կաչաղակները չեն, որ կչկչում են, — Իգորին հետապնդում են Գզակն ու Կոնչակը»)։

Խորը ժողովրդական բնույթ ունի ճակատամարտի համեմատությունը ցանքսի կամ խնջույքի հետ, օրինակ՝ „тут кровавого вина не достало, тут пир окончили храбрые русичи: сватов напоили, а сами полегли за русскую землю“ («Այստեղ պակսեց արյուն-գինին, այստեղ քաջ ռուսորդիները խնջույքը վերջացրին—խնամախոսներին՝ խմեցրին, իսկ իրենք հանուն Ռուս երկրի պառկեցին»)։ Ճակատամարտը համեմատվում է նույնպես կալ կալսելու հետ՝ „На немиге снопы стелют из голов, молотят цепами булатными, на току жизнь кладут, отвевают душу от тела. У Немиги кровавые берега не благом были посеяны; посеяны костями русских сынов“ («Նեմիգայի վրա գլուխներից խրձեր են փռում, կալսում են շղթաներով պողպատի․ կալի վրա կյանք են դնում, քամհարում-բաժանում են հոգին մարմնից։ Նեմիգայի արյունոտ ափերին ոչ թե բարիք էր ցանված, ցանված էր ռուսորդիների ոսկորներ»)։ Ճակատամարտում լիտվացիների ձեռքով սպանված Իզյասլավի մասին ասված է․ „Он был побит под красными щитами на кровавой траве мечами Литовскими и... на кровати“ [лег] («Իսկ ինքը սրախողխող ընկավ լիտվացիների ձեռքով կարմիր վահանների տակ արյունոտ սեզի վրա և յուր սիրուհու հետ... մահճակալի վրա...» (պառկեց), այսինքն՝ մահը համեմատվում է հարսանիքի հետ։

«Ասքում» կան նաև այնպիսի դարձվածքներ, որոնք հանդիպում են միայն գրականության մեջ, մի հանգամանք, որ վկայում է հեղինակի բազմընթերց լինելու մասին, օրինակ՝ «ըմպել սաղավարտով մեծ Դոնից», «սրել խելքը ամրությամբ», «կոփել սիրտը արիությամբ», «սրտերը կոփված են պողպատից»,

«Ոտք դնել ասպանդակը», «դրոշներն իջեցնել», «ընկան դրոշակները», «հնչում է հռչակը» և այլն։ Նման դարձվածքներ կարելի է գտնել նաև ռազմական վեպերի և տարեգրության մեջ, օրինակ՝ «կոխկռտել (տրորել) գնդերը», սակայն դրանք էլ ֆոլկլորից են անցել գրքային լեզվի մեջ։

Այդ ամենը վկայում է այն մասին, որ «Ասքի» ոճը ժողովրդական-գրքային է, սակայն բանավոր-պոետական ոճի տարրերը գերակշիռ են գրքայինից։ Ակադեմիկոս Պոտեբնյան դեռևս 1878 թ. ամենայն իրավունքով գրում էր. «Մենք չգիտենք մի ուրիշ հին ռուս գրական երկ, որ այնքան ներծծված լինի ժողովրդական-պոետական տարրերով»։ Ֆոլկլորին մոտ լինելը երևան է գալիս նաև հատվածներում, երբ հեղինակը հանդես է բերում հեթանոսական աստվածների առասպելաբանական կերպարները՝ Դաժդբոգ, Խորս, Ստրիբոգ, այսինքն՝ բոլոր գլխավոր հին հեթանոսական աստվածներին, որոնք երկրագործությամբ զբաղվող ժողովրդի մեջ կապվում են բնության պաշտամունքի հետ։ Այդ հեթանոսական աստվածների անունները մենք գտնում ենք նաև տարեգրությունների և այլ ապոկրիֆիկ հուշարձանների մեջ։ «Ասքի» հեղինակը չի հիշատակում միայն Պերունին, որի պաշտամունքն այնքան համառությամբ տարածում էր Վլադիմիր I-ը (սուրբը)։

Բացի դրանցից՝ «Ասքի» հեղինակն իր գրվածքի մեջ հիշատակում է նաև մի շարք առասպելաբանական էակների անուններ, որոնք չեն հանդիպում այլ հին գրական հուշարձաններում, դրանք են՝ Դիվ, կարապաթև Կույս-վիրավորանք, Կարնա և Ժլյա։

Կարլ Մարքսը 1856 թ. Ֆ. Էնգելսին ուղղած և վերը հիշատակած նամակի մեջ գրում է՝ «Ամբողջ երգը կրում է քրիստոնեական-հերոսական բնույթ. թեև հեթանոսական տարրերը բավականաչափ նկատելի են»։

«Ասքի» հեղինակը, հարկավ, հեթանոս չէր, բայց և այնպես նա լայնորեն օգտագործել է այն հեթանոսական հոսանքը, որով ազդված է ֆոլկլորը։ «Ասքի» անմիջական հեթանոսական տարրերը ցայտուն կերպով ի հայտ են գալիս այն անչափ մեծ բանաստեղծական դերի մեջ, որ հատկացված է բնությանը։ Վերջինս կարեկից է ռուսների վշտին, նախազգուշացնում է նրանց վերահաս վտանգի մասին, օգնում է Իգորին փախչել գերու-

թյունից, արձագանքում Յարոսլավնայի կոչերին և ողջունում փառապանծ Իգորին (սրա զրույցը Դոնեցի հետ)։

Յարոսլավնայի ողբ ու կոծի մեջ լիովին բացահայտված է հեթանոսական աշխարհազգացողությունը, որն ընկալված է բանաստեղծորեն զտված, ոգեշնչված ձևով։ Այստեղ մարդը պայմանագրային հարաբերությունների մեջ է մտնում բնության տարերային աշխարհի հետ, որպես հավասարը հավասարի հետ, նա չի աղոթում, չի աղերսում-պաղատում, այլ համոզում է իր զգացմունքի ուժով, ինչպես այդ արտահայտում է Յարոսլավնան իր հմայության մեջ։ Արևը, ջուրն ու քամին, հողն ու բույսը, հավքն ու գազանը,—ահա բնության այն կենդանի ուժերը, որոնք զանազան ձևերով ու կերպարանքով հանդես են գալիս «Ասքի» մեջ և ստեղծում են այն կենդանի և հարուստ ֆոնը, այն կենդանի միջավայրը, որտեղ գործում են «Ասքի» հերոսները։ Այդ հանգամանքը առանձին պլաստիկություն է տալիս «Ասքի» մարդկանց, շրջապատում է նրանց օդով, ստիպում է մեզ հավատալ, որ նրանք գոյություն ունեն, ռեալ են ու կոնկրետ։ Այսպիսի խոր և յուրահատուկ գեղարվեստական եղանակ, որ, անշուշտ, գալիս է նույնպես ֆոլկլորից, հին նկարչությունից և զարդարվեստից (օրնամենտից). հեղինակը լուծել է պեյզաժի պրոբլեմը, որն իսպառ բացակայել է հին և միջնադարյան գրականության մեջ։

Այստեղ հանդես է գալիս ոչ միայն ժողովրդական բանավոր պոեզիայի ազդեցությունը, այլև հեղինակի խոր ներազգացությունն ու իրազեկությունը հին կերպարվեստի բնագավառում։

«Ասքի» գեղարվեստականության յուրօրինակ առանձնահատկություններից մեկն էլ վիպական պատմվածքի ձևն է, որը բարդանում է խոր ներքին դրամատիզմով, հագեցված է հերոսների անչափ առատ մոնոլոգներով ու դիալոգներով և ուղիղ խոսքի միջոցով հեղինակի դիմումներով իր իսկ ունկնդիրներին։ «Ասքի» բոլոր գլխավոր հերոսները դիմում են ուղիղ խոսքին։ Նրանք այդպիսի «խոսքերով» բնութագրում են գլխավորապես հենց իրենց։ Յարոսլավնայի հմայություն-մենախոսությունը, որն իր ռիթմով այնքան նման է երգի, լիովին բնութագրում է հենց իրեն՝ այդ հերոսուհուն։ Սվյատոսլավի կերպարն ամենից ամբողջական ու լիակատար բացահայտված է հենց նրա «ոսկե խոսքի» մեջ, իսկ վերը բերված կանխագուշակ երազը էքսպո-

գեղխայի նշանակություն ունի, որով ցույց է տրվում Սվյատոսլավի տարակուսանքն ու դառնությունը։ Սվյատոսլավի «ոսկի խոսքը» կառուցված է որպես հեղինակի անունից արտասանված մի հռետորական ճառ, որը բնութագրում է Կիևի մեծ իշխանին, ինչպես նաև ժամանակի ֆեոդալական Ռուսիայի քաղաքական կացությունը և որը վեր է ածվում ագիտացիոն մարտական մի կոչի ընդդեմ պոլովցիների։ «Ասքի» չորս գլխավոր հերոսներից միայն Վսեվոլոդն է, որ պատկերված է էպիկական եղանակով ճակատամարտի նկարագրության մեջ, սակայն սա էլ գլուխ չի գալիս առանց կենդանի խոսքի, որպեսզի Վսեվոլոդը բուռն ոգևորությամբ և մարտական տենդով համակված՝ ողջունում է իր հարազատ եղբորը։ Իգորը նույնպես մարտից առաջ ճառ է ասում, ցանկանալով ոգևորել իր ռազմիկներին, ապա փախուստից հետո զրույց է անում Դոնեցի հետ, շնորհակալություն հայտնելով նրան իրեն մատուցած օգնության համար։ Այդ բոլոր ճառերի իմաստն է՝ ուժեղացնել մարտահրավերագիտացիան ընդդեմ պոլովցիների։ Ընդհանրապես ուղիղ խոսքը օրգանապես յուրահատուկ է Կիևյան շրջանի ռուս հին գրականությանը։ Սակայն «Ասքի» հերոսների ճառերը ռոմանտիկորեն փոքր ինչ վերամբարձ են, ոճաբանորեն զարդարուն և հագեցված այնպիսի վառ ու յուրահատուկ մետաֆորներով, որոնց նմանը չեք գտնի հին գրականության այլ ժանրերում ու երկերում։ Այսպես, օրինակ՝ Իգորն ասում է՝ ուզում եմ սաղավարտով ըմպել մեծ Դոնից — դա գետը գրավելու մետաֆորան է կամ՝ ուզում եմ նիզակս ջարդել պոլովցիների դաշտի ծայրին, այսինքն՝ նվաճել թշնամու կողմից գրաված տերիտորիան։ Սվյատոսլավն իրեն համեմատում է ծեր բազեի հետ, որ որսի ժամանակ բարձր սավառնելով՝ կոտորում է թռչուններին։ Յարոսլավնայի ճառը նույնիսկ դժվար է անջատել բանավոր ժողովրդական պոեզիայի մետաֆորներից։ Նա դանազանվում է ֆոլկլորից միմիայն իր նրբագեղությամբ, մետաֆորների խտացվածությամբ և պոետիկայի պեսպիսությամբ։

«Ասքի» հեղինակը քաջածանոթ էր ֆոլկլորի պոետիկային։ Նա զանազան երանգներ է քաղում ժողովրդական, ազգային՝ արվեստի այդ մեծ գանձարանից, սակայն այդ գույները նա ենթարկում է ստեղծագործական վերամշակության, այսինքն վարվում է այնպես, ինչպես այդ անում են բոլոր մեծ գրողները։

8. «ԱՍՔԻ» ԺԱՆՐԸ

Պոլովցիների դեմ մղած պայքարի ժամանակաշրջանում ռուս կյանքի էական կողմերի ճշմարտացի ու բազմակողմանի արտացոլումը, խոր լիրիզմը, արտահայտված զգացմունքների լրիվությունը, մարդկանց հերոսական կերպարների պայծառությունն ու քաղաքական-քաղաքացիական պաթոսը, անդրդվելի հավատը պոլովցիների վրա տանելիք հնարավոր և բաղձալի հաղթության նկատմամբ—կանխորոշել են նաև «Ասքի» ժանրն ու ոճը։ Այս երկասիրությունը պոլովցիների դեմ Իգորի արշավանքի ու ճակատամարտի սոսկ պատմությունը չէ միայն, թեև այդ իրադարձությունը, անշուշտ, նրա սյուժեի հիմքն է, նրա կմախքը։ Այստեղ ցայտուն կերպով հանդես են գալիս՝ բացի գլխավոր հերոս Իգորից՝ նաև նրա եղբայրը, կինը և ռոմանտիկորեն վերամբարձ, Կիևյան իդեալական իշխան Սվյատոսլավը։

Հեղինակի տեսակետը կարելի է նմանեցնել այն հայացքին, որ ինքը հեղինակը ներածության մեջ վերագրում է Բոյանին, որն իրադարձությունների վրա նայում էր արծվի թռիչքից ի վար, («գերթ արծիվ ճախրում էր ամպերն ի վար»), և միևնույն ժամանակ այդ չէր խանգարում նրան ռեալ կերպով, ճըշգրիտ ու ճշմարտացի վերարտադրել կյանքի փաստերը, ըմբռնել մարդկանց նյութական, երկրային շահերը, կանգնել ժողովրդի տեսակետի վրա և մերկացնել իշխաններին նրանց շահասիրության, նեղմտության և ֆեոդալական-դասակարգային սահմանափակության համար։ Այլ խոսքով ասած՝ օգտագործելով Բոյանի նկատմամբ փոխաբերաբար կիրարկած դարձվածքը՝ «Ասքի» հեղինակը նույնպես «սուրում էր գերթ գորշ գայլ գետնին ընդ վայր»։ Նա զուգորդում էր ճշմարտությունը մտացածնի հետ, արտացոլել է ոչ միայն այն, ինչի մասին պատմված կա տարեգրության մեջ, այլև ավել է այն, ինչ որ կարող էր այնտեղ չլինել, օրինակ՝ Սվյատոսլավի երազը, Յարոսլավնայի ողբ-հմայությունը, Իգորի զրույցը Դոնեցի հետ և այլն։ Հեղինակի ընդունակությունը ընդհանրացնելու, բարձր արվեստի հնարների միջոցով սինթեզի ենթարկելու եզակի կոնկրետ դեպքերը, քննարկելու և մատուցելու իրողություններն ու երևույթները՝ կապակցված պատմական անցյալի իրադարձությունների, ինչպես և պոլովցիների դեմ մղվող պայքարի կենսական, հրատապ

հարցի հետ, այլ խոսքով, նրա հմտությունը «միահյուսելու արդի ժամանակի զույգ կետերը», այսինքն՝ ներկան համեմատելու անցյալի հետ, դրանից դասեր քաղելու, հաշվի առնելով պատմական փորձը, և դրանց հիման վրա առաջադրելու ներկայի իր պահանջները, որոնք համապատասխանեին ժողովրդի և նրա հայրենիքի շահերին,—ահա այդ բոլորը միասին վերցրած՝ բացառիկ են դարձնում այս երկը, որի նշանակությունը կպահպանվի դարերի ու հազարամյակների ընթացքում։

«Ասքը» արտացոլում է ոչ միայն անցյալի հետ կապակցված արդիականության պատմական իրադարձությունները, այլև հենց պատմության ընթացքն իր հակասության մեջ վերցրած, արտացոլում է սլավոնական ժողովուրդների հոգևոր կյանքն ու ձգտումները, ժողովրդի բնավորության գծերն ու հատկությունները, նրա չկորացող կամքը, նրա աշխատանքը, հույզերը, վերաբերմունքը բնության հանդեպ՝ տալիս է նրա աշխարհայեցության գծերը, նրա ընտանեկան և կենցաղային հարաբերությունները։ Այդ ամենը առկա է «Ասքի» մեջ, և դա թույլ է տալիս մեզ սահմանելու այդ երկի ժանրը որպես էպոպեա, որի թեման է ռուսների պայքարը պոլովցիների դեմ, իսկ իդեան միության մարտակոչն է հետ մղելու և վերջնականապես հաղթելու թշնամուն։ Այստեղ հերոսական հավասման պաթոսով ներկայացված են բազմիցս զուր արյուն թափած «քաջարի ռուսորդիների» անվտանգ կյանքի, խաղաղ աշխատանքի և երջանիկ ապրուստի սրբազան իրավունքները։ «Ասքը» հին սլավոնների հերոսական էպոպեան է, որը մինչև մեր օրերն էլ պահպանում է իր մեծագույն նշանակությունը, իբրև անմահ երկասիրություն։

Հայրենական Մեծ պատերազմի տարիներին ֆաշիզմի սև հորդաների դեմ մղած անհաշտ կռվում «Ասքի» բոցավառ հայրենասիրությունը գտավ կենդանի ու ջերմ արձագանք սովետական բոլոր մարդկանց սրտերում։ Պատերազմի տարիներին Մոլոտով քաղաքում կազմակերպված ցուցահանդեսը, որ նվիրված էր «Ասքին», մշակված էր հետևյալ լոզունգով՝ «Վրեժ առնենք ռուս երկրի համար. մեր օրերի վիրավորանքի համար»։ «Ասքից վերցրած այս ցիտատը հնչում էր որպես մարտակոչ՝ ոչընչացնելու անարգ ֆաշիստներին։

Մեծ Հայրենական պատերազմի տարիներին Ռիլսկ քաղա-

քի* մերձակայքում գործող պարտիզանական ջոկատը «Խոսքից» առած հետևյալ ցիտատն էր գրել իր մարտական դրոշի վրա՝ «Լավ է սրախողխող լինել, քան գերված»:

Ոչ միայն ռուսները, այլև չեխերը իրավացիորեն գիտում են «Խոսքը» որպես հայրենասիրական և անմահ մի հուշարձան, որի նշանակությունը նոր ձևով ի հայտ եկավ Հայրենական Մեծ պատերազմի տարիներին: Այսպես 1946 թ. Պրագայում լույս տեսավ «Խոսքի» չեխերեն նոր թարգմանությունը հետևյալ բնորոշ ձոնով՝ «Ազատարար Կարմիր Բանակին»: Այդ ձոնի իմաստը պարզ է: XII դարի ֆեոդալական գրողի մարտակոչը՝ «վրեժ առնենք ռուս երկրի համար, մեր օրերի վիրավորանքի համար» մարմնացել է սովետական մարդկանց, սոցիալիստական դարաշրջանի հաղթողների ռազմական սխրագործությունների մեջ: Սովետական հայրենասիրությունը, իր արմատներով խորամուխ լինելով Սովետական Միության բազմազգի ժողովուրդների պատմական անցյալը, անտարակույս սոցիալիստական գիտակցության անհամեմատ ավելի բարձր ձև է, քան մեր երկրի մինչհեղափոխական անցյալի՝ միասին վերցրած բոլոր դարաշրջանների հայրենասիրությունը: Հենց այդ պատճառով էլ անցյալ կուլտուրայի լավագույն նվաճումները՝ հայտնագործությունները, գյուտերը, արվեստի ու գրականության մեծագույն երկերը, որոնք ստեղծվել են հին հասարակության հազարամյա գոյության ընթացքում, սոցիալիզմի դարաշրջանում գտնում են մի այնպիսի մասսայական և ներգործուն արձագանք, որը միանգամայն անհնարին, աներևակայելի և անիրագործելի կլինեին ֆեոդալական և բուրժուական սեփականատիրական կարգերում: Դրանով է բացատրվում «Խոսքի» օր ավուր անընդհատ տարածվելը Սովետական Միության մեջ, այդ հուշարձանի նկատմամբ հետաքրքրության և սիրո բարձրացումը թե՛ գրողների, թե՛ ընթերցողների և թե՛ հետազոտողների շրջանում, դրանով է բացատրվում նաև «Խոսքի» վերահրատարակությունների, ինչպես և նորանոր թարգմանությունների աճը մեր Միության եղբայրական ռեսպուբլիկաների ազգային լեզուներով:

* Այս քաղաքը հիշվում է «Խոսքի» մեջ որպես Սվյատոսլավ Օլգովիչ Ռիլսկու կալվածքը:

VI. ԿԻԵՎՅԱՆ ՇՐՋԱՆԻ ԹԱՐԳՄԱՆԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Կիևյան Ռուսիայում հայտնի էին մի շարք տարբեր ժանրերի թարգմանական գրքեր։

Այդ գրքերի մուտքը Կիևյան Ռուսիա սկսվեց X դարի վերջին, ուժեղացավ XI դարի առաջին կեսին, Կիևի մեծ իշխան Յարոսլավ Վլադիմիրովիչի գրքային ինտենսիվ գործունեության ժամանակ և վերջացավ սրա որդիների օրոք։ «Անցած տարիների պատմությունների» («Повести временных лет») մեջ տարեգիրը բնութագրելով Յարոսլավ Վլադիմիրովիչի լուսավորչական գործունեությունը, գրում է 1037 թվականի տակ։

«Յարոսլավը սիրում էր եկեղեցական կանոնադրությունները, հակումն ուներ դեպի գիրքը, կարդում էր հաճախ գիշեր ու ցերեկ։ Նա հավաքեց շատ գրիչների ու նրանց հետ միասին սլավոներենի թարգմանեց հունարեն գրված գրքեր, արտագրեց շատ գրքեր»։

Երկերի մեծ մասը թարգմանվում էր եկեղեցու գործնական կարիքների համար։

Սակայն թարգմանական գրականությունը ռուս միջնադարում ենթարկվում է խմբագրական վերամշակության, առլցվում տեղական բովանդակությամբ, հետզհետե հարմարվում թարգմանիչ-հեղինակի ժամանակակից ազգային շահերն արտահայտելու պահանջներին։

Նույնպիսի դեր ու ֆունկցիա ուներ թարգմանական գրականությունը նաև հայ գրականության պատմության մեջ, երբ V դ. սկսած Սահակն ու Մաշտոցը իրենց ավագ աշակերտների հետ թարգմանեցին հունարենից հայերեն «Աստվածաշունչը», կրոնական պաշտամունքային գրքեր, աստվածաբանական-դավանաբանական երկեր և այլն։

Այդ գրականությունը հազիվ թե թարգմանական կարելի է համարել, քանի որ այդ օրգանապես յուրացվում էր ազգային ինքնուրույն գրականությունը ստեղծելու պրոցեսում։ Նրա վերամշակումը տվյալ ժողովրդի գրական ձևերին համապատասխան, նրա հարմարվելը տեղական շահերին՝ շատ դեպքում բերում էր այն բանին, որ հիմնական տեքստը կրում էր էական փոփոխություններ։ Վերցնենք օրինակ, «Աստվածամոր շրջագայությունները դժոխքում» զրույցը։ Ռուսական թարգմանության մեջ դժոխքում տեղավորված են ռուս հեթանոս աստվածներին՝

Տրոյանին, Վելեսին, Պերունին պաշտողները, կալվածատերերը, կալվածքների դաժան վերակացուները և այլն, այնինչ հայկական թարգմանության մեջ հայ հեթանոս աստվածներին՝ Վահագնին, Անահիտին պաշտողները։ Եվ հենց ինքը ապոկրիֆի բանաստեղծական ձևը, հորինվածքը ռուսների մոտ կրում է ռուսական ժողովրդական հեքիաթի, իսկ հայերի մոտ՝ հայկականի գծերը։

Սակայն թարգմանական գրականության մեջ կային այնպիսի գործեր, որոնք պահանջում էին թարգմանության ճշգրըտություն, տեքստի անաղարտություն, ինչպես օրինակ աստվածաշունչը, եկեղեցա-ծիսական գրականությունը։ Բայց այս գործերն էլ ժամանակի ընթացքում կրեցին որոշ փոփոխություններ, տարբերվեցին հիմնական տեքստից։ Սրանով են բացատրըվում եկեղեցա-ծիսական գրքերի այն ճշտումները, որ պարբերաբար կատարվում էին Ռուսիայում։ Այս բոլոր հանգամանքները մեզ թույլ են տալիս թարգմանական գրականությունը դիտելու իբրև ինքնուրույն գրականության մի ուրույն մաս, որը ռուսականացվելով՝ խառնվում է համառուսական գրականության հոսանքին։

Ի՞նչ էր ներկայացնում Կիևյան Ռուսիայի թարգմանական գրականությունը։

1. ԱՊՈԿՐԻՖՆԵՐ
(Апокрифы)

Երկարատև պայքարից հետո պաշտոնական քրիստոնեական եկեղեցին մոտավորապես IV դարի սկզբներին հաստատում է Աստվածաշնչի ամենից ավելի հեղինակավոր, լիակատար վստահություն վայելող գրքերի ժողովածուն, և կոչվում է «Կանոնական», այսինքն ճշմարիտ վավերական գրքեր։ Դրանից հետո «Սուրբ գիրքը» փոփոխության ենթարկելու կամ լրացնելու յուրաքանչյուր փորձ դիտվում էր որպես «հերձված», որպես օպոզիցիա՝ պաշտոնական քրիստոնեական դավանաբանության դեմ։

Սակայն Աստվածաշնչից դուրս մնացին հրեական, ինչպես և քրիստոնեական բազմաթիվ կրոնական զրույցներ և առասպելներ, որոնք ակնառու բանաստեղծական պատկերներով լըրացնում էին բիբլիական լեգենդները։ Ժամանակի ընթացքում այդ բոլոր երկերը ի մի հավաքեցին և կոչեցին ապոկրիֆներ։

Հունական «ապոկրիֆ» բառը բառացի նշանակում է «գաղտնի», «ծածուկ», ոչ բոլորին մատչելի։

Մեր թվականության IV դարից սկսած եկեղեցական իշխանությունը պայքար է սկսում ապոկրիֆների դեմ, մշակելով այսպես կոչված «ճշմարիտ և սուտ գրքերի ցուցակներ» (ինդեքսներ)։ Այդ ցուցակները պետք է կարգավորեին հին գրասերի ընթերցանությունը, հեռու պահեին նրան «հերձվածողական առասպելներից»։ Ապոկրիֆների մեծ մասի հիմքում ընկած են հին հեթանոսական առասպելներ ու զրույցներ, որոնք հետագայում կրում են հելլենական փիլիսոփայության և քրիստոնեական Արևելքի դուալիստական ուսմունքի ազդեցությունը, որոնց հետևանք էին այնպիսի աղանդներ, ինչպիսիք են մանիքեությունը, պավլիկյան աղանդը և սրանց հետ կապված Բուլղարիայում տարածում գտած X—XI դարերում «բոգոմիլյան» աղանդը։

Բոգոմիլները կոչվել էին այդ ուսմունքն ակտիվ տարածող պոպ (քահանա) Բոգոմիլի անունով։ Գրական հուշարձաններում այդ հերձվածը անվանում են երբեմն մանիքեացիներ, մեսալիաններ (մծղնե), արմեններ և պավլիկյաններ։ Պավլիկյանների շարժումը ծայր է առել Հայաստանում, արագ գրավել ամբողջ Առաջավոր Ասիան և այստեղից էլ անցել Բալկանյան թերակղզին, որտեղ սերտորեն կապվել և ազդակել է բոգոմիլների շարժմանը։ Պավլիկյանների և սրանց հաջորդ թոնդրակյանների աղանդավորական շարժումը հեղեղեց ամբողջ Առաջավոր Ասիան, Արևելյան Հայաստանից սկսած մինչև Դիվրիկ, այստեղ ամբողջ Բյուզանդական կայսրության մեջ, ամենուրեք բարձրացնելով գյուղացիական ապստամբությունների փոթորիկներ։ X—XII դ.դ. հայ ֆեոդալական իշխանությունները և բյուզանդական կայսրները անհաշտ պայքար վարեցին նրանց դեմ և ճնշեցին այդ ապստամբությունները։ Պավլիկյանները ցրվեցին, տարածվեցին Եվրոպայում, նաև Հարավային Ռուսիայում։ Պավլիկյանների ու թոնդրակեցիների մնացորդները հարատևեցին Հայաստանում մինչև XIX դ. կեսերը։ Միջին դարերում պավլիկյանությունը դարձավ ընդհանուր-եվրոպական հերետիկոսություն։ XII դարի սկզբներին ամբողջ Հարավային Եվրոպան, Պիրենեյան լեռնաշղթայից մինչև Բոսֆոր շրջապատված էր բոգոմիլների, պավլիկյանների ավանների շղթայով։ Նրանք գաղտնի կամ բացահայտ դավանում էին հայ, հույն և բուլղար ա-

Ապոկրիֆային գրականությունը, որ իր թեմատիկայով մոտ էր կանգնած Աստվածաշնչին, բազմազան էր իր բովանդակությամբ։ Այստեղ կային հին և նոր կտակարանների, պատմական գրքերի տիպի ապոկրիֆներ, սրբերի, առանձնապես նահատակների վարքեր, զանազան վախճանաբանական երկեր, որոնք ֆանտաստիկ գծերով նկարագրում էին աշխարհի վերջը և հանդերձյալ կյանքը։

Մի շարք ապոկրիֆներ (օրինակ Ադամի մասին, մի քանի լեգենդներ Քրիստոսի և առաքյալների մասին), որոնք լայն տարածված են եղել նաև Հայաստանում, կապված էին պավլիկյանների, բոգոմիլների աղանդի հետ։

Բոգոմիլյան աղանդի արձագանքները պահպանվել են Ադամի ու Եվայի ստեղծման ապոկրիֆի մեջ (Апокриф о сотворении Адама и Евы).

Աստված ստեղծեց մարդուն Մաղլամի երկրում «ութ մասից» հողից ստեղծվեց նրա մարմինը, քարից՝ ոսկորները, ծովից՝ արյունը, արևից՝ աչքերը, ամպից՝ մտքերը, լույսից՝ լույսը, քամուց՝ շունչը, կրակից՝ ջերմությունը։ Երբ աստված գնաց, որ արևից վերցնի աչքերը, նա թողեց Ադամին մեն մենակ պառկած հողի վրա։ Այդ ժամանակ եկավ անիծյալ սատանան և Ադամին կեղտ ու խլինքով պատեց։ Վերադառնալով, երբ աստված կամեցավ Ադամին աչքեր դնել, տեսավ, որ նա ապականված է, բարկացավ սատանայի վրա և անիծեց նրան։ Եվ սատանան կայծակի պես գետնի տակն անցավ ու անհետացավ աստծու աչքից։ Աստված սրբեց ադամի վրայից ամբողջ կեղտը և շաղախելով նրա արցունքների հետ, ստեղծեց շանը և հրամայեց նրան պահպանել Ադամին, իսկ ինքը գնաց վերին Երուսաղեմ Ադամի համար շունչ բերելու։ Սատանան նորից եկավ և նորից ուզեց ապականել Ադամին, սակայն՝ վախենալով շնից, վերցրեց ծառը և ծակելով Ադամի մարմինը, առաջ բերեց այնտեղ յոթանասուն հիվանդություն։ Եվ եկավ աստված վերին Երուսաղեմից և տեսնելով, որ ծառը ծակել է Ադամի ողջ մարմինը, խղճաց նրան և ասաց սատանային. «Անիծյալ սատանա, ինչ արիր այս մարդուն, ինչու նրա մարմնի մեջ հիվանդություններ դրիր»։ Սատանան բացատրեց, որ եթե մարդը չհիվանդանա, երբեք աստծուն չի հիշի, իսկ երբ հիվանդանա, նա իսկույն և եթ աստված կկանչի։ Ու վռնդեց աստված սա-

տանային, իսկ հիվանդությունները աստված տարավ մարդու
մարմնի ներսը։ Այնուհետև աստված ուղարկեց հրեշտակին բե-
րելու այն գրերը, որոնք Ադամի անունն էին հոգում (ԱՅԴ, ԴԱ-
ՄԵՆ—ԱԴԱՄ)։ Ադամը դարձավ թագավոր այն ամենի վրա, ինչ
գոյություն ուներ։ Աստված նրան հպատակեցրեց երկնային բո-
որ լուսատուները և երկրի ողջ արարածներին։ Արևելքում աստ-
ված տարածեց դրախտը և Ադամին հրամայեց այնտեղ ապրել։
Վեցերորդ օրը աստված Ադամի աչքերին քուն բերեց, հանեց
նրա ձախ կողը և կողից նրա համար կին ստեղծեց՝ Եվային։
Այնուհետև աստված Ադամին ցույց տվեց յուր մահը, խաչելու-
թյունը. հարությունը և համբարձումը հինգ ու կես հազար տարի
հետո։ Ու տեսավ Ադամը խաչված աստծուն, Պետրոսին՝ Հռոմ
գնալիս, Պողոսին՝ Դամասկոսում ուսուցանելիս և քարոզելիս
Քրիստոսի հարության մասին։ Երբ Ադամը զարթնեց, սաստիկ
դողում էր և տիրոջը պատմեց իր տեսիլքը։ Եվ տերն ասաց նը-
րան. «Ինձ վիճակված է քեզ համար երկիր իջնել, խաչվել և
երրորդ օրը հարություն առնել։ Դու ոչ ոքի չպատմես քո տե-
սիլքը, մինչև որ ինձ չտեսնես նստած իմ հոր աջ կողմը, և
այն ժամանակ միայն սուգ արա այդ տոթիվ»։ Ադամը դրախ-
տում մնաց յոթ օր, և աստված դրանով կերպավորեց մարդկա-
յին կյանքը. մինչև 10 տարին ծնունդն է, 20 տարին—պատանի,
30 տարի—կատարյալ, 40 տարի—միջօրե. 50 տարի—ճերմակա-
հեր, 60 տարի ծերություն, 70 տարի—վախճան»։ Յոթը օրը վե-
րափոխեցին նաև աշխարհի գոյության յոթ հազար տարին, իսկ
8-րդ հազարը վերջ չի ունենա, որովհետև նա անվախճան է։

Ադամի և Եվայի ստեղծման ապոկրիֆը պահպանել է բո-
գոմիլների վարդապետության միայն արձագանքները։ Ըստ բո-
գոմիլների՝ Ադամի մարմինն ստեղծեց սատանան, իսկ հոգին՝
աստված. մինչդեռ ապոկրիֆում աստված ստեղծեց Ադամի և՛
մարմինը, և՛ հոգին. սատանայի մասնակցությունը արտահայտ-
վեց նրանով, որ նա հիվանդություններ մտցրեց Ադամի մեջ։
Աստծուն և սատանային ապոկրիֆը հաղորդել է մարդկային գը-
ծեր։ Ի տարբերություն Աստվածաշնչի, որ աստծուն ամենակա-
րող է ներկայացնում, ապոկրիֆը պատկերացնում է նրան որ-
պես սահմանափակ իշխանության տեր և այդ սահմանափակու-
մը կատարում է սատանան, որը մարտնչում է աստծու դեմ։
Ապոկրիֆում դեպքերը նկարագրված են ռեալիստական երանգ-
ներով ու ծայր աստիճան նյութականացված։ Հենց այդ տար-

բերություններն են, որ կազմում են ապոկրիֆների շարքը դասված այդ երկի «հերձվածողական» էությունը։

Հին կտակարանի պատմության մեջ ամենատարածված հերոսներից մեկը հրեական թագավոր Սողոմոնն էր։ Արևելքում և Արևմուտքում, ինչպես ֆոլկլորի, այնպես էլ գրականության մեջ նրա շուրջը հորինված էին բազմաթիվ լեգենդներ և զրույցներ։

Մեղավորների տանջանքները դժոխքում նկարագրող ամենաժողովրդական ապոկրիֆներից մեկը Ռուսիայում «Աստվածածնի թափառումները տանջանքների միջով» (հայկական վերսիան՝ «Աստվածածնի տեսիլքը», «Хождение богородицы по мукам») ապոկրիֆն էր։ Նրա բովանդակությունը հետևյալն է։

Աստվածածինը ցանկանում է տեսնել, թե ինչպես են տանջվում մարդկային հոգիները. նա դիմում է Միքայել հրեշտակապետին, խնդրելով, որ նա իրեն ցույց տա դժոխքը։ Հրեշտակապետը ցած է իջնում երկնքից, որպեսզի ցույց տա նրան «երկնային և երկրային տանջանքը»։ Հարավից երևում են հրեշտակները և բացվում է դժոխքը, որտեղ աստվածածինը տեսնում է բազմաթիվ տանջվող այրերի և կանանց։ Աստվածածինը հարցնում է, թե ովքեր են այդ մարդիկ։ Հրեշտակապետը պատասխանում է. «Այդ նրանք են, ովքեր չէին հավատում հորը, որդուն և սուրբ հոգուն, այլ հավատում էին մի «արարածի», որին աստված ստեղծել է մարդկանց ծառայելու համար։ Նրանք աստվածացնում էին արևը, լուսինը, երկիրը, ջուրը, գազաններին և սողուններին. աստված էին համարում Տրոյանին, Խորսին, Վելեսին, Պերունին։ Այդ պատճառով էլ նրանք տանջվում են այստեղ»։

Հեթանոսների հետևից հավիտենական խավարի մեջ խարխափում են հերետիկոսները, որոնք չէին հավատում ո՛չ աստծուն, ո՛չ քրիստոսին և սուրբ հոգուն, ոչ էլ աստվածածնին (ակնարկում է նեստորականների աղանդը, որն ասում էր, թե աստվածածնին պետք կոչել միայն քրիստոսածին)։ Այստեղ աստվածածինը կրկին արտասվեց և ասաց. «Ինչո՞ւ ընկաք դայթակղության մեջ. միթե՞ դուք չգիտեք, որ իմ անունը պաշտում է ամեն մի էակ»։

Աստվածածինը շարունակում է շրջել և տեսնում է բազմաթիվ մեղանչողների՝ այրերի և կանանց, որոնք պատժված էին «կենցաղային մեղքերի» համար։ Մինչև գոտին հրահոս գետի մեջ էին սուզված ծնողների անեծքը կրող զավակները. մինչև կռնատակերը՝ մեղանչած քավորները, մինչև վիզը՝ մար-

ղակերները, իսկ ամբողջովին գետն էին սուզված խաչով սուտ երդում տված ստախոսները։ Աստվածածինը տեսնում է վաշխառուին՝ գլխիվայր կախված, և նրան ուտում էին որդերը, տեսնում է բամբասասեր կնոջը, որը կախված էր մի ատամից, և որի բերնից դուրս էին թափվում նրան լափող օձերը։

Աստվածածինը ցանկանում է տեսնել բոլոր տանջանքները և հրամայում է տանել իրեն դեպի հյուսիս։ Այստեղ նա տեսնում է կրակի մեջ պառկած «ծույլերին», որոնք քնով ընկած՝ ուշացել էին կիրակնօրյա պատարագից. տեսնում է գրպարտիչներին, որոնք կախ են ընկած երկաթե ծառից՝ երկաթի կեռերով լեզուներից բռնած։ Իրենց ամուսիններին չհարգած և երկրորդ անգամ ամուսնացած այրուհիներին, որոնք գլխի վայր կախված էին ծառից, նրանց բերնից բոց էր ելնում, իսկ բոցից դուրս էին գալիս օձեր և կպչում նրանց. կրակի մեջ պառկած էին անառակ միանձնուհիները, և օձերը լափում էին նրանց. այդպես հոսող հուր գետի մեջ էին ընկած անառակները, շնացողները, գողերը, բամբասողները, գրպարտիչները, հարբեցողները, անողորմ իշխանները, եպիսկոպոսները և պատրիարքները, վաշխառուները, օրինազանցները, անարդարադատ թագավորները։ Նայելով նրանց, աստվածածինը արտասվում և ասում է՝ «Ծանր է մեղավորների դրությունը, ավելի լավ է նրանք աշխարհ եկած չլինեին»։

Աստվածածինը գնում է արևմուտք և տեսնում կուպրի գետը՝ խավարի մեջ կորած, այնտեղ հրի ալիքներն էին եռում մեղավորների վրա, որոնց անդադար կրծում էր որդը։ Այստեղ տանջվում էին հրեաները, որոնց պատճառով խաչվեց նրա որդին, տանջվում էին քրիստոնեությունն ուրացողները, տանջըվում նրանք, ովքեր շնացել էին իրենց սանամայրներից, մայրերի և դուստրերի հետ, տանջվում էին թունավորողները և մարդասպանները։ Աստվածածինը ասում է՝ «Տեղն է, երբ որ նրանք տանջվում են»։

Դժոխքի անհամար տանջանքները հուզում են աստվածածնին և նա հրեշտակների հետ միասին աղոթքով դիմում է աստըծուն և խնդրում ներել մեղավորներին։ Սակայն աստված հրաժարվում է խնայել նրանց։ Աստվածածինը օգնության է կանչում մարգարեներին ու առաքյալներին, բայց աստված այս անգամ էլ անողոք է գտնվում։ Այն ժամանակ աստվածածինը դիմում է բոլոր երկնային ուժերին, և նրանց աղոթքնե-

րով ասված հրամայում է Քրիստոսին իջնել իր անտեսանելի գահից, որպեսզի լսի սրբերի աղոթքները և ցույց տա իր դեմքը մեղավորներին։ Քրիստոսը մեղավորներին գիշեր ու ցերեկ հանգիստ է տալիս՝ սկսած ավագ հինգշաբթի օրվանից մինչև հիսուներորդ օրը (մոտ երկու ամիս)։

Այս ապոկրիֆը ծագեց քրիստոնեական Արևելքում մոտավորապես V դարում, երբ պայքար էր մղվում հերետիկոս նեստորականների դեմ, որոնք հրաժարվում էին աստվածածնի պաշտամունքից և նրան կոչում սոսկ քրիստոսածին։ Ապոկրիֆը ռուսերեն է թարգմանված հարավ-սլավոնական միջնորդությամբ հունարենից։ Ռուսերեն ամենահին ձեռագիր օրինակը XII դարից է։

Ապոկրիֆի ռուսերեն բնագրում կա մի հավելված, որը գոյություն չունի հունարեն բնագրում, այն է՝ դժոխքում տանջվողների մեջ առաջին տեղում հիշատակված էին նրանք, ովքեր հավատում էին Ռուսիայի հեթանոսական աստվածներին՝ Տրոյանին, Խորսին, Վոլոսին, Պերունին։

Միջնադարյան գրականության մեջ կային զգալի քանակությամբ այնպիսի երկեր, որոնք նկարագրում էին դժոխքը և մեղավորների տանջանքները։ Դրանք հիմք հանդիսացան Դանթեի «Աստվածային կատակերգության» համար։ «Աստվածների տեսիլը» ապոկրիֆը հարում է այդ տարածված գրականությանը։ Դժոխքի նկարագրությունը միանգամայն կոնկրետ է ու ռեալ իր մարմնական պատիժներով, հրով, կուպրով, սառնամանիքով, օձերով և այլն։ Մեղավորների ֆիգուրաները պատկերված են առօրյա կենցաղային ախտերով պարուրված (բամբասասեր կինը, որը աղբ է դուրս բերում խրճիթից, ծույլերը, որոնք ուշանում են առավոտյան պատարագից և այլն), իսկ աստվածածինն ինքը նույնպես օժտված է ռեալ մարդկային անհատականությամբ։ Նա կարեկցում է, բայց և որպես մայր, երբ հանդիպում է իր որդուն՝ Քրիստոսին տանջող մարդկանց, բարկացած ասում է՝ «Տեղն է, որ տանջվում են»։

Ինչու է այս երկը հերձվածողական համարվում։

Այս երկի մեջ մարդկային թուլություններին կարեկից բարեգութ, գթառատ աստվածածինը հակադրված է խիստ անողորմ աստծուն։ Այստեղ միայն աստվածածնի հաստատակա-

մության շնորհիվ է, որ թեթևանում են մեղավորների տանջանքները։ Այս ապոկրիֆի մեջ ի հայտ են եկել նաև սոցիալական հակասությունների արձագանքները։ Մեղավորների շարքն են մտցված ոչ միայն շարքային մարդիկ, այլև պաշտոնական եկեղեցու պաշտպանության ներքո գտնվողները՝ եպիսկոպոսները, պատրիարքները, միանձնուհիները, անողորմ իշխաններն ու թագավորները (որոնք աստծու կամքին հակառակ էին վարվում)։ Ապոկրիֆի ռուսական վերսիայում մեղավորների շարքն ընկան՝ չար բոյարները, գերմանացի կառավարիչները, անարդարադատ դատավորները և «պարոնայք վաճառականները»։ Հենց այս առանձնահատկությունների պատճառով է, որ տիրապետող եկեղեցին աստվածածնի ապոկրիֆը մտցրեց արգելված գրքերի ցուցակի մեջ։ Այս ապոկրիֆը գրչագիր օրինակներով մեծ չափերով տարածվել էր մինչև XIX դարը, ինչպես և անցել էր ժողովրդական բանավոր պոեզիային՝ արտացոլվելով Ահեղ դատաստանի մասին եղած լեգենդներում և հոգևոր երգերում։

Երբեմն ապոկրիֆների ժողովածու էին կազմում։ Սլավոնական թարգմանությամբ այդպիսի մի ժողովածու գոյություն ուներ XII—XIII դարերում Ռուսիայում, դա կոչվում էր «Толковая Палея»։ XV դարում, հունարենից բուլղարերեն էր թարգմանվել և Ռուսիայում տարածվել մի այլ ժողովածու՝ «Историческая Палея», որի մեջ տրվում էր ապոկրիֆային բիբլիական պատմությունը։

* * *

Ապոկրիֆային զրույցները ծանոթացրին Կիևյան Ռուսիային արևելյան և հունական հավատալիքների ու ավանդությունների հետ, այստեղ հասցրին սոցիալական-քաղաքական ու կրոնական պայքարի արձագանքները ու տվին ռեալիստական գունավորումով շատ հետաքրքրական պատմվածքներ։ Ապոկրիֆներն իրենց արտացոլումը գտան հին ռուս գրականության մի շարք հիշատակարաններում, մի շարք ռուս գրողների գրական ստեղծագործություններում, և վերամշակվելով՝ տեղ գտան բազմաթիվ ժողովրդական լեգենդների և հոգևոր երգերի մեջ։

Ապոկրիֆային գրականության գլխավոր նշանակությունն այն է, որ նա տոգորված լինելով հերձվածողական մտքերով և հակառակ գնալով պաշտոնական կրոնական ուսմունքին, զարթ-

նեցնում էր հին գրասերի միտքը, ազատում նրան եկեղեցու անխախտ դավանաբանության իշխանությունից և մղում նրան դեպի կյանքի ինքնուրույն իմաստավորումը:

2. ՎԱՐՔԱԲԱՆԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

(Житийная литература)

Միջնադարյան եկեղեցական գրականության մեջ ամենատարածված ժանրն էր—«սրբերի» վարքաբանությունը, վկայաբանությունը: Վարքաբանություն կոչվում էր քրիստոնեական կրոնի աչքի ընկնող գործիչների կյանքի նկարագրությունը կամ կենսագրությունը,

Վարքաբանությունը որպես ժանր ունի իր պատմությունը, որ կապված է քրիստոնեության պատմության հետ:

Դարերի ընթացքում ստեղծվում է վարքագրության կանոնական ձևը, նրա սխեման: Երևան են գալիս հատուկ դասագրքեր՝ տալով այդ ժանրի տեսությունը: Այդտեղ բերվում են պատրաստի կենսագրությունների նմուշներ և տեսական ցուցումներ: «Սրբի» բնութագիրը, վարքագրության ոճը և կոմպոզիցիոն տարրերը որոշվում են վարքագրության սխեմայով:

Վարքերը սովորաբար ունենում էին առաջաբան, որի մեջ հեղինակն ամեն կերպ իրեն նվաստացնում է: Ապա նա մի առ մի թվարկում է այն փաստարկումները, որոնք, այնուամենայնիվ, ստիպել էին իրեն սկսել իր ուժերից վեր մի այդպիսի աշխատանք և հետո պատմում է, թե ինչպես է ինքը նյութեր հավաքել տվյալ վարքը գրելու համար:

Վարքաբանության հիմնական մասը նույնպես ունի ընդհանուր սխեմատիկ տեղեր: Դա բացառապես նվիրված է ընտրված հերոսի անձնավորությանը: Այդ հատվածը սկսվում է հերոսի հայրենիքի և ծնողների համառոտ հիշատակությամբ, ընդորում նրա ծնողները մեծ մասամբ բարեպաշտ և անվանի մարդիկ են: «Սրբի» ծննդյան հետ հաճախ կապված է լինում մի որևէ հրաշք: Մանկական տարիներից արդեն «սուրբը» հանդես է բերում իր ապագա «աստվածահաճության» բոլոր նշանները: Հաճախ, հենց պատանեկության շրջանից, նա գնում է վանք կամ անապատ, և ահա այստեղ սկսվում են նրա սխրագործությունները: «Սուրբը» մեռցնում է իր մարմինը, պայքարում կրքերի դեմ, մանա-

վանդ մարմնական ցանկությունների, կռվում է դևերի հետ, զբաղվում ինքնակատարելագործությամբ, քարոզում, տարածում է ճգնավորական կյանք ու կուսակրոնություն, ոչնչացնում հերձվածները, կատարում «հերոսական» գործեր։ Ինչպես օրինակ, բարձրանում է քարի վրա, նստում նրա վրա է տասնյակ տարիներ, ամբողջ կյանքում չի լվացվում և չի լողանում, ծածկվելով կեղտի հաստ շերտով և այլն։ Ճգնավորական կյանք վարելով, նա անմիջական հաղորդակցության մեջ է մտնում հրեշտակների ու սատանաների հետ և ընդունակություն է ձեռք բերում հրաշքներ գործելու՝ դուրս քշելու սատանաներին, նախատեսելու ապագան. Նա մտքով սլանում է հանդերձյալ կյանքը և վերադառնալով այնտեղից՝ պատմում է իր տեսածների մասին։

Մահվանից առաջ «սուրբը» խրատներ է տալիս։ Հենց նրա վախճանը, մեծ մասամբ կապվում է որևէ հրաշքի հետ։ Սրբի մարմինը սկսում է անուշահոտություն տարածել, դագաղի առաջ կամ շիրիմի վրա զարմանահրաշ բուժումներ են կատարվում և այլն։ Վարքերի եզրափակիչ մասը՝ ճարտասանական մի ներբող է ի պատիվ «սրբի»։

Ժամանակի ընթացքում մշակվեցին որոշ տրադիցիոն ձևեր։ Պատկերները կառուցվում էին հիպերբոլիկ ձևով, մի բան, որ վարքագրությանը տալիս էր ֆանտաստիկ, հեքիաթային բնույթ։ Գործող անձերին հաճախ տալիս էին հոգեբանական բնութագիր՝ օգտագործելով այդ նպատակով նրանց խորհրդածությունները։ Երկը կառուցելիս շատ տեղ էր հատկացվում երկախոսություններին (որոնք կենդանացնում էին երկը), երկար մենախոսություններին, աղոթքներին, ողբերին։ Հաճախ պատմվածքի թելը կտրվում էր հեղինակի լիրիկական շեղումով, նրա խորհրդածություններով, աստվածաշնչից ցիտատներ բերելով և ճարտասանական բացականչություններով։ Վարքագրության լեզուն ճոխ կերպով զարդարված է համեմատություններով, մետաֆորներով և մակդիրներով, լի է ճարտասանական ֆիգուրալ արտահայտություններով։

Ռուսիայում եկեղեցու կողմից ժողովրդականացված վարքերից մեկը՝ «Ալեքսիանոսի վարքն է («Житие Алексея, человека божиея)։ Հայ հին գրականության մեջ ունենք այդ վարքի կրկնակի թարգմանություն՝ համառոտ և ընդարձակ, ապա մի շարք գրական բանաստեղծական վերամշակություններ*։

* «Վարք հարանց» հատ. II, Վենետիկ, 1885 թ.։

Ալեքսեյը կամ Ալեքսիանոսը բարեպաշտ ու հարուստ հռոմեական քաղաքացի Եվֆիմիանի և Ագլաիդայի (հայկական Եփիմիանոս և Ագլայիս) որդին էր։ Սրանք երեխա չեն ունեցել, ապա երկար տարիներ բարեպաշտ կյանք վարելուց հետո, իբրև պարգև աստծուց ստացել են մի զավակ։ Ծնողները նրան ուսումի են տալիս 6 տարեկան հասակից։ Ալեքսեյը ցուցաբերում է արտակարգ ընդունակություններ։ Դառնալով պատանի՝ նա հրաժարվում է կյանքի գայթակղություններից և վարում ճգնավորական կյանք։ Երբ ծնողները հակառակ Ալեքսեյի կամքին, նրան ամուսնացնում են, նա առաջին իսկ գիշերը, հարսանիքից հետո, թողնում է կնոջը և մեկնում Եդեսիա։ Իր ունեցվածքը բաժանելով մուրացկաններին, Ալեքսեյը աղքատի հագուստներով նստում է Եդեսիայի Աստվածածնի տաճարի դռանը և 17 տարի շարունակ իր կյանքն անց է կացնում աղքատության մեջ և եկեղեցի չի մտնում։ Այդ ժամանակամիջոցն անցնելուց հետո տաճարի ժամկոչին երազի մեջ երևում է աստվածածինը և պատվիրում է նրան, որ փնտրի աստծու մարդ Ալեքսեյին և ներս բերի տաճարը։ Ալեքսեյի հռչակը տարածվում է ամբողջ քաղաքում և նա խորհում է հեռանալ Եդեսիայից։ «Աստծու կամքով» նավը նրան դցում է Հռոմ։ Այստեղ Ալեքսեյը բնակությունն է հաստատում իր ծնողների մոտ, որոնք նրան չեն ճանաչում և շարունակում է մուրացիկի կյանք վարել, կրելով ամեն տեսակի զրկանքներ։ Իր հոր ծառաները ծաղրում են նրան, Ալեքսեյը տեսնում է ծնողների և լքված կնոջ վիշտը, սակայն չի հայտնում իր ով լինելը։ Այսպես, առանց ճանաչվելու որևէ մեկի կողմից, նա 17 տարի շարունակ ապրում է իր ծնողների տանը։ Մոտենում է Ալեքսեյի մահվան ժամը։ Նա մագաղաթի վրա գրում է իր կամավոր աղքատի ողջ կյանքի պատմությունը և իր անձի գաղտնիքը։ Այդ ժամանակ հռոմեական եկեղեցու բեմից լսվում են հրաշալի ձայներ, որոնք հայտնում են, թե Եվֆիմիանի տանը մեռնում է մի արդար մարդ։ Հռոմի թագավորներ՝ Հոնորիոսը ու Արկադիոսը, բոլոր կղերականներն ու պալատականները գնում են Եվֆիմիանոսի տունը, սակայն Ալեքսեյին գտնում են արդեն մեռած։ Հայրը ուզում է մագաղաթը վերցնել հանգուցյալի ձեռքից, բայց նա չի տալիս։ Թագավորների և կղերականների աղերսանքներից հետո նա հանձնում է մագաղաթը։ Ծնողներն իմանում են, որ մուրացկանի արտաքինի տակ թաքնված է եղել իրենց որդին։ Նկարագրվում է

Ալեքսեյի ծնողների և այրու վիշտն ու ողբը։ Թագավորների և արքեպիսկոպոսի հրամանով Ալեքսեյի մարմինը դրվում է քաղաքի մեջտեղը, և ահա այստեղ հրաշքով բուժվում են խուլերը, կույրերը, բորոտները և դիվահարները։ Այնուհետև նկարագրվում է նրա հանդիսավոր թաղումը։

Այս վարքագրական պատմությունը մեր առաջ մանրամասն ծավալում է մի մարդու կյանք, որը հրաժարվում է այս աշխարհի բոլոր վայելքներից միայն ու միայն «աստծուն ծառայելու» համար։

Ալեքսեյի վարքի ձևավորման մեջ պահպանվել են տրադիցիոն վարքագրական պոետիկայի բոլոր մոմենտները՝ ծնողների բարեպաշտությունը, սովորելու մեծ ընդունակությունները, ամուսնությունից հրաժարվելը, ճգնավորությունը, երանելի վախճանը և ապա իբրև վերջաբան հրաշքները։ Այս ամենը կրկնում է վարքագրության սովորական սխեման։ Այս վարքն էլ ըստ սխեմայի կրում է ֆանտաստիկ բնույթ (աստվածածնի երևալը ժամկոչին, հրաշալի ձայնը եկեղեցու բեմից և այլն), հագեցած է երկախոսություններով և լիրիկական ողբերով, ինչպես և մենախոսություններով։ Վարքագրության ոճը զարդարուն է ճարտասանական՝ համեմված հեղինակի լիրիզմով։

Ալեքսեյի վարքագրությունը Ռուսիայում հայտնի էր արդեն XI դարից։

Ալեքսիանոսի վարքը միևնույն բախտին է արժանացել նաև հին հայ գրականության մեջ։

Վարքերից ու վկայաբանություններից կազմում էին հատուկ ժողովածուներ։ Համառոտ վարքագրությունների ժողովածուն կոչվում էր «Синаксарий»։ Սկզբում դրանք օգտագործվում էին եկեղեցու պաշտամունքային կարիքների համար, ապա տարածվեցին որպես խրատական երկեր։ Հունարենից ռուսերեն թարգմանելու ժամանակ «Սինակսարին» ստացավ «Պրոլոգ» անունը, որովհետև ժողովածուի ռուս խմբագիրը «Սինակսարի» նախաբանը՝ «Προλογος»-ը սխալմամբ ընդունել էր իբրև գրքի վերնագիր։

Պրոլոգները կազմված են նահատակների և սրբերի կյանքին վերաբերող համառոտ զրույցներից, որոնք դասավորված են ըստ ամիսների և օրերի համապատասխան այն կարգին, որ սահմանված էր եկեղեցում յուրաքանչյուր սրբի հիշատակի տոնը կատարելու համար։

Պրոլոգային վարքագրությունները շատ համառոտ էր. այստեղ նշվում էր միայն սրբի կենսագրության հիմնական փաստերը՝ ծննդից մինչև մահվան օրը։ Կենսագրության սովորական ծավալը 20 տողից չի անցնում։ Դրանց մեջ լուսաբանվում են քրիստոնեական բարոյագիտության հիմնական գաղափարները, պատկերելով այդ ամենը՝ պարզ, կոնկրետ պատմվածքի միջոցով։

Ռուսական հողի վրա «պրոլոգը» երևան եկավ XII դարի սկզբներից ոչ վաղ։ Այդ ժողովածուն լրացվել է տեղական նյութերով՝ ռուս «սրբերի» վարքագրություններով։ Պրոլոգը տարածված էր և որպես բազմաթիվ սյուժեների ժողովածու՝ նույնիսկ XIX—XX դարերի գրականության մեջ հետաքրքրական նյութեր մատակարարեց Գերցենին, Լեսկովին, Լ. Տոլստոյին, Ռեմիզովին և ուրիշներին։

Վարքագրական գրականության մյուս ժողովածուն, որն անցավ զարգացման նույն ուղին, ինչ որ պրոլոգը, «Четья-Минея»-ն էր, «Հայսմավուրք»-ը։ Դա մի ժողովածու է վարքագրությունների, խրատների, որոնք դասավորված են ըստ ամսաթվերի։

Վարքագրական (ագիոգրաֆիկ) գրականությանն են պատկանում նաև իրենց հրաշքներով և ասկետական սխրագործություններով հռչակված ճգնակյաց կրոնավորների կյանքից վերցված խրատական անեկդոտների և համառոտ նովելների թարգմանական ժողովածուները, այսպես կոչված պատերիկները (հունարեն Πατρ—հայր)։ Պատերիկի մեջ տրվում է ոչ թե մի ամբողջ կենսագրություն, այլ զանազան էպիզոդներ, որոնք կապված են որոշ վանքի կամ որոշ վայրի (Պաղեստինի, Ասորիքի, Եգիպտոսի և այլն) վանականների կյանքի հետ։

Ռուսիայում պատերիկները հայտնի էին դեռևս XI դարից (դրանք կոչվում էին նաև «Отечник» կամ «Старчество»)։ Հայտնի էին հետևյալ ընդարձակ պատերիկները՝ Սինայի, Եգիպտոսի, Հռոմի, Երուսաղեմի և այլն։

Սինայի պատերիկը կամ «Հոգևոր մարգը» («Луг духовный») պատմում է գլխավորապես Պաղեստինի վանական կյանքից վերցրած դեպքերը։ Սինայի պատերիկի մեջ մտնող անեկդոտների և նովելների թեմատիկան բազմազան է։ Այստեղ կան և՛ պատմվածքներ ճգնավորական աշխարհամերժ սխրագործությունների (օր.՝ հայր Ձենոգսենոսի մասին, որը 35 տարի ապրել է միայնության մեջ՝ պահպանելով լիակատար լռություն),

և՛ զանազան հրաշքային տեսիլների, ինչպես նաև մեղավորների անդրշիրիմյան տանջանքների, հիվանդների հրաշքային բուժման, հանցանքների համար կրած պատիժների մասին։ Քիչ չեն նաև զրույցներ կրոնավորների և ճգնավորների, օր.՝ ինչպես բարեպաշտ կույսերի ժուժկալության կամ անժուժկալության մասին (օրինակ՝ մի միանձնուհու, որը սանրով հանում է իր աչքերը, երբ իմանում է, որ իր վրա սիրահարված է մի պատանի)։ Պատերիկի մեջ կան նաև շատ պատմվածքներ կենդանիների մասին, որոնք ծառայություն են մատուցել ճգնավորներին։ Դրանցից է հայր Գերասիմի և առյուծի լայն ժողովրդականություն վայելող պատմությունը։

Հորդանանի հովտում կար մի փոքրիկ վանք, որտեղ ապրում էին մի քանի վանականներ, որոնց թվում և ծեր կրոնավոր Գերասիմը։ Մի անգամ, Հորդանանի ափին նա պատահեց ցավից մռնչացող մի առյուծի, որի թաթը փուշ էր մտել։ Առյուծը մոտեցավ ծերունուն և մեկնեց իր հիվանդ թաթը։ Գերասիմը հանեց փուշը, թաթը լվաց ու փաթաթեց մի քաթանով։ Առողջացած առյուծը այլևս չբաժանվեց ծերունուց և ամենուրեք գնում էր նրա հետևից։ Ծերունին կերակրում էր առյուծին։ Սա արդեն ընտելացել, ընտանի էր դարձել։ Շուտով առյուծին հանձնում են մի էշ արոտ տանելու։ Այդ էշը կրոնավորների համար Հորդանանից ջուր էր կրում։ Մի օր էշը բավական հեռացած է լինում առյուծից։ Անցնող ուղտապանները բռնում են էշին և քշում տանում։ Երկար որոնումներից հետո առյուծը տխուր-տրտում վանք է վերադառնում։ Գերասիմը կարծում է, որ առյուծը կերել է էշին։ «Որտե՞ղ է էշը»—հարցնում է Գերասիմը։ Առյուծը «մարդու նման լուռ կանգնած՝ գետին է նայում»։

Ծեր Գերասիմը առյուծին պատժելու համար հրամայում է նրան, որ էշի փոխարեն վանականների համար ջուր կրի։

Անցնում է որոշ ժամանակ։ Մի օր էշը հափշտակող ուղտապանը անցնում է այդ տեղերով։ Տեսնելով առյուծին՝ նա փախուստի դիմեց, սակայն առյուծը հասավ նրան, և էշի պախուրցից բռնած տարավ ծեր Գերասիմի մոտ։ Առյուծը հինգ տարի ևս ապրեց ծեր կրոնավորից անբաժան։ Սակայն մի օր Գերասիմը մեռավ և նրան տարան թաղեցին։ Առյուծը «աստծու տնօրինությամբ» այդ ժամանակ վանքում չէր։ Վերադառնալով՝ նա սկսում է որոնել ծերունուն, սակայն չի գտնում նրան և ընկնում է հուսահատության ու խոր վշտի մեջ։ Վանականները

ող մի կերպ չեն կարողանում նրան սփոփել—մխիթարել։ Նրանք տանում են և ցույց տալիս առյուծին Գերասիմի գերեզմանը։ Առյուծը գլուխը դնում է գերեզմանի վրա և շունչը փչում։

Եգիպտական պատերիկը ձեռագիր օրինակների մեջ կոչվում է «Զրույցներ եգիպտական սևասքեմների մասին»։ Դա պատմվածքների մի ժողովածու է, որի մեջ մտնում են մի շարք պատմվածքներ։

Պատերիկները բավականին տարածված էին Ռուսիայում։ Մտնելով պրոլոգի կազմի մեջ, պատերիկյան պատմվածքներն ու նովելները դուրս են գալիս վանքի պատերի սահմաններից և մատչելի դառնում ընթերցողներին։

* * *

Սինայի, Եգիպտոսի, Երուսաղեմի և այլ պատերիկները հնում՝ հայ գրականության հենց սկզբնական շրջանից, հետզհետե թարգմանվել են նաև հայերեն։ Ժամանակի հայ կաթողիկոս Գրիգոր Պահլավունին անձամբ շրջագայել է Բյուզանդիա, Եգիպտոս, Պաղեստին և ամենուրեք հավաքել ու թարգմանել է անձամբ, կամ թարգմանել է տվել ասորերենից և հունարենից վարքաբանությունները, հատկապես վկայաբանությունները, հենց դրա համար էլ կոչվել է Գրիգոր Վկայասեր։ Վարքաբանություններից և վկայաբանություններից Հայաստանում կազմվել են մի շարք ժողովածուներ՝ «Վարք սրբոց» կամ «Վարք հարանց», «Ճառընտիր», «Հայսմավուրք» և այլն։ Վարք ու վկայաբանություններից շատերը դեռ անտիպ են և պահպանվում են հայ ձեռագրատներում։ Հենց վերը հիշատակված վարքաբանական էպիզոդները (կույսի, Գերասիմի ու առյուծի մասին) կան նաև «Հարանց վարք»-երի մեջ։ Բացի թարգմանական նյութերից՝ մեր ժողովածուներն ընդգրկում են նաև տեղական եկեղեցական հայրերին ու ճգնավորներին նվիրված ինքնուրույն վարք-վկայաբանությունները։ Դրանց մի մասը վեր է ածված նաև ոտանավորների, և դրանք երգվել են մեր եկեղեցիներում հատուկ երաժշտական եղանակով։

Վարքաբանական գրականության երկերը հզոր զենք էին հանդիսանում եկեղեցու ձեռքում՝ տիրապետող դասակարգի գաղափարների պրոպագանդայի համար։ Նրանք ժողովրդին՝ իշխանություններին հլու-հնազանդ մնալու և ենթարկվելու կոչ էին անում, մարդու միտքը հեռացնում էին երկրային գործերից և

մղում դեպի անդրերկրյա աշխարհը։ Ճգնավորության ռեակցիոն քարոզը, աստծուն ծառայելը, իրականությունից հեռանալը, համբերատարությունը երկրի վրա, սպառնալիքները անհնազանդներին «երկնային պատիժներով» պետք է թուլացնեին մարդու կամքը, նրա ձգտումը դեպի ազատություն, նրա պայքարը ընդդեմ ճնշման և շահագործման։ Եվ պատահական չէ, որ եկեղեցին հատկապես շահագրգռված էր ոչ միայն ինքնուրույն (օրիգինալ) կենցաղային գրականությունը ընդարձակորեն տարածելու գործում, այլև բացառապես այդ նպատակների համար էր հարմարեցնում թարգմանական երկերը։

Եկեղեցու կողմից, որպես նմուշ, որպես իդեալ հաստատվող անթիվ ու անհամար «սրբերի» գործունեությունը, նորմալ մարդու տեսակետից, բացարձակորեն անօգուտ և աննպատակ բնույթ ունեն։ Դրանք աննորմալ մարդիկ են, և զուր չէ, որ ժողովուրդը նրանց անվանում է «խևեր» ու խելառներ։ Իսկ «ի Քրիստոս խենթացյալ» քարոզը բոլոր դարերում ծառայել է տիրապետող դասակարգի ձեռքում որպես մի միջոց՝ աշխատավորներին իրենց ռեալ շահերի պայքարից շեղելու համար, մասսաների դժգոհությունը դեպի աղոթքները, լացի ու հնազանդության հունն ուղղելու համար։ Այդպիսի քարոզը «ի Քրիստոս խենթացյալ» Լև Տոլստոյի մոտ Վ. Ի. Լենինը անվանեց «ճնշված մասսաների համար նոր, զտված, նրբացրած թույնի» քարոզ։

3. ՊԱՏՄԱԿԱՆ, «ԲՆԱԳԻՏԱԿԱՆ», ՊԱՏՐԻՍՏԻԿ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ, ԲԱՐՈՅԱ-ՓԻԼԻՍՈՓԱՅԱԿԱՆ ԱՍԱՑՎԱԾՔՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒՆԵՐ

Թարգմանական պատմական գրականություն

Եկեղեցական-պատմական գրականությունը Ռուսիայում ներկայացված է թարգմանական քրոնիկոնի (ժամանակագրության) միջոցով։ Բյուզանդիայում քիչ չէին նաև աշխարհիկ պատմական երկերը, սակայն դրանց թարգմանության խնդրում եկեղեցին շահագրգռված չէր, դրանք հայտնի չէին Ռուսիայում։

Քրոնիկոնները պատմում էին աշխարհի մասին, սկսած նրա ստեղծագործությունից մինչև հեղինակին ժամանակակից դեպքերը։ Համաշխարհային պատմությունը, առավելապես հրեականը և բյուզանդականը, շարադրվում էին եկեղեցական-կրոնական տեսանկյունով։ Քրոնիկոնների հեղինակները՝ վա-

նականները իրենց գլխավոր ուշադրության առանցքն էին դարձնում բիբլիական պատմության դեպքերը, բյուզանդական եկեղեցու պատմությունը, նրա դավանաբանության պաշտպանությունը, հերձվածների մերկացումը և աստվածաբանական առատ խորհրդածությունները։ Ժամանակագրությունների հեղինակների սկզբունքներն էին՝ Աստվածաշունչը, եկեղեցու հայրերի երկասիրությունները, հին աշխարհի և միջնադարի պատմիչները, ինչպես նաև որոշ չափով ապոկրիֆները, անտիկ դիցաբանությունները և բանավոր ավանդությունները։ Պատմությունը հետաքրքրական դարձնելու նպատակով՝ քրոնիկոններում շատ տեղ էր հատկացվում մանր-մունր և տարօրինակ փաստերին։ Այդ հանգամանքը քրոնիկոններին հաղորդում էր ժողովրդի առօրյա կենցաղի համար պատմական թեմայով գրված մատչելի և միաժամանակ եկեղեցական-կրոնական բարոյախրատություն քարոզող գրքերի բնույթ։

Եկեղեցական գրականության մոտ լինելու հանգամանքով էր պայմանավորված քրոնիկոնների վաղ թարգմանությունը սլավոնական լեզուներին։ XI դարում արդեն Ռուսիայում գոյություն ունեին Հովհան Մալալայի, Գեորգի Սինկելլայի, Գեորգի Ամարտոլայի քրոնիկոնների թարգմանությունները։

Անտիոքացի Հովհան Մալալայի (ապրում էր Ասորիքում, քահանա էր. ասորերեն malal — նշանակում է քարոզիչ, ուսուցիչ) ժամանակագրությունը կազմված է XVI դարում և բաղկացած է նախաբանից ու 18 գրքից։ Այդ ժամանակագրությունը պատմում է Ադամի ստեղծման, նրա հետնորդների, համաշխարհային ջրհեղեղի և բիբլիական այլ դեմքերի ու դեպքերի մասին։

Հենվելով Աստվածաշնչին՝ Մալալան, այնուամենայնիվ, ապոկրիֆներից փոխ է առնում Ադամի հասակի չափը («գլխից մինչև կրունկը—96 վերշոկ, ձեռքի դաստակը—12, ձեռքից մինչև արմունկը—20, ոտքի թաթը—16 վերշոկ»), այն զրույցը, թե ինչպես է Միֆը հնարել աստղերի անունները և գտել հրեական գրերը, աստղաբաշխության ծագումը, որը տեղի է ունեցել Նեմրութի (Նեբրովթի) օրոք և այլն։ Այնուհետև տալիս է Արևելքի և Հունաստանի հին պատմությունը, որ հագեցած է անտիկ և արևելյան դիցաբանության տարրերով։ Ամբողջ հինգերորդ գիրքը հատկացված է Տրոյական պատերազմի և նրա հերոսների մասին եղած զրույցների հարուստ ու ծավալուն ցիկլին, ընդո-

րում Մալալան տալիս է այստեղ մի շարք արտաքին պորտրետներ (Պրիամոսի, Հեկտորի, Պարիսի, Հեղինեի և այլն), թվարկելով նրանց ֆիզիկական հիմնական նշանները։

Յոթերորդ գրքում սկսվում է Հռոմի և Հռոմեական կայսրության պատմությունը, իսկ վերջին գրքերում զետեղված է Բյուզանդիայի պատմությունը։ Բյուզանդիայի քաղաքական պատմության զուգընթեր Մալալան պատմում է նաև եկեղեցական պատմության փաստերի մասին. Նա տալիս է պալատական կյանքի նկարագրությունը, խոսում է բնության արտակարգ երևույթների՝ երկրաշարժի, ջրհեղեղի, գիսավոր աստղերի և «մեղքերի ու չարագործությունների մեջ ընկղմված» մարդկանց վերաբերմամբ «աստծու բարկության» այլ և այլ արտահայտությունների մասին։ 15-րդ գրքից մինչև 18-րդը՝ Մալալան գրել է ինքնուրույնաբար։ Այդ գրքերն ընդգրկում են Զենոն I-ի թագավորությունից սկսած՝ մինչև Հուստինիանոս I-ի թագավորության վերջին տարիները (565). 18-րդ գիրքն ավարտվում է ժամանակագրական աղյուսակով և քաղաքական մոմենտի հետ կապված դեպքերի տեսությամբ։

Մալալայի Քրոնիկոնը եկեղեցական պատմիչի տեսանկյունով գրված համաշխարհային պատմության առաջին փորձն է։ Ընթերցողների լայն մասսաներին մատչելի ու պարզ ոճով գրված իր երկասիրությամբ Մալալան նշեց այն ուղին, որով ընթացան հետագա ժամանակագիրները։ Վերջիններս հետևեցին նրան և լրացրին այդ սխեման այս կամ այն փաստական բովանդակությամբ։

Մալալայի քրոնիկոնի սլավոներեն ազատ թարգմանությունը կատարված է Բուլղարիայում, Քրոնիկոնի թարգմանությունները ձեռագրի մեջ ամբողջական չեն։ Քրոնիկոնը որոշ չափով վերականգնվում է ըստ ուշ շրջանի ռուսական կոմպիլյացիաների, որոնց հեղինակները Մալալայից հաճախ մեծ հատվածներով մեջբերումներ են քաղում։

Ռուսիայում ամենատարածված և մատչելի ժամանակագրություններից էր Գեորգի Ամարտոլի (ամարտոլս—մեղավոր, այսինքն վանական) քրոնիկոնը։ Քրոնիկոնն ունի 4 մաս. առաջինը ընդգրկում է Ադամից մինչև Ալեքսանդր Մակեդոնացու ժամանակաշրջանը, երկրորդը՝ նվիրված է հրեական ժողովրդի պատմությանը, երրորդը՝ Հռոմեական կայսրության պատմությանը՝ իսկ չորրորդը՝ Բյուզանդիայի ավելի ընդարձակ

պատմությունը, սկսած Կոստանդիանոս Մեծի մկրտությունից (324 թ.) մինչև Միքայելի թագավորությունը (842 թ.)։ 813—842 թ.թ. միջև ընկած ժամանակաշրջանը Ամարտոլը նկարագրել է ինքնուրույն կերպով։ Հետագայում քրոնիկոնը շարունակել են մինչև 948 թ.։ Ամենահին հույն բնագրերում 842 թվականից հետո կա հետևյալ նշումը՝ «Մինչև այստեղ Գեորգու քրոնիկոնն է, իսկ սրանից հետո՝ մի ինչ որ Լոգոֆետի աշխատությունը»։

Քրոնիկոնի մեջ նա մեծ ուշադրություն է հատկացրել Բյուզանդիայի եկեղեցական պատմությանը, հերձվածների դեմ եկեղեցու մղած պայքարին, տիեզերական ժողովներին, եկեղեցու հայրերի մեծագործություններին, սրբերի վարքագրություններին։ Ամարտոլի համար բնորոշ է նրա շեղումները աստվածաբանական հարցերում, նրա արտահայտած հայացքները քրիստոնեական առաքինությունների, վանական կյանքի ծագման և զարգացման պատմության, հանդերձյալ կյանքի մասին և այլն։ Այստեղ պակաս չեն նաև զանազան խրատական-ուսուցողական պատմվածքներ։ Ուժեղ վանական տենդենցը իրեն զգալ է տալիս, երբ նա խստիվ դատապարտում է հեթանոսությունը և գնահատում պատմական դեմքերը միայն այն տեսակետից, թե նրանք որքան են աջակցել կամ դիմադրել քրիստոնեական ուսմունքի տարածմանը։

Ամարտոլի քրոնիկան Ռուսիայում երևան է եկել XI դարում և արտագրվել մի քանի անգամ ավելի ուշ շրջանում։ Ամարտոլի ռուսական գրչագիր օրինակները հայտնի են ինչպես առանձին, այնպես էլ ժամանակագրությունների կոմպիլյացիաների մեջ։ XII դ. Ամարտոլի քրոնիկոնը համառոտ մտավ «Хронограф по великому изложению»-ի մեջ, որը պարունակում էր սկզբնական տեղեկություններ ռուս պատմության մասին և որը առաջին ռուս տարեգրություններից մեկը՝ «Անցած տարիների պատմության» սկզբնաղբյուրներից մեկը հանդիսացավ։

Թարգմանական եկեղեցա-պատմական գրականությունը գաղափար տվավ, թեպետև եկեղեցական մեկնաբանությամբ, համաշխարհային և բյուզանդական պատմության մասին և փոխանցեցին անտիկ գիտականության, գրականության և փիլիսոփայության տարրերը։

Պատմական-գրական նշանակություն ունեին մի շարք թարգմանական հուշարձաններ, որոնք տեղեկություններ էին տալիս աշխարհի և բնության մասին. դրանք են՝ «Բարոյախոսը» („Физиолог“) *«Վեցօրյայքը»* („Шестиднев“), *«Քրիստոնեական Տեղագրությունը»* („Христианская Топография Космы Индикоплова“).

«Բարոյախոսը»—դա մի ժողովածու է, բաղկացած 49 *պատմվածքից, որոնք նկարագրում են գլխավորապես իրական կամ երևակայական կենդանիների, ինչպես նաև քարերի ու բույսերի բարքերն ու հատկությունները։ Այդ տեղեկությունները մեծ մասամբ կրում են ֆանտաստիկ բնույթ։ Յուրաքանչյուր պատմվածքի վերջում դրված է քրիստոնեական հայացքների ոգով բարոյակրթական մեկնություն։*

«Բարոյախոսը» ծագել է Ալեքսանդրիայում, մեր թվականության II—III *դարերում։ Դրա նյութը քաղած է հին գրողների երկերից, հեթանոսության ժամանակ կենդանիների մասին հորինված հեքիաթներից, ինչպես և եգիպտական գրական-կերպագրական հուշարձաններից, Աստվածաշնչից և Թալմուդից, որոնք հետագայում վերամշակվել էին քրիստոնյա գրողների գրչի տակ։*

Ահա «Բարոյախոսի» զրույցների մի նմուշ՝ Առյուծի պատմությունը, որով և սկսվում է ժողովածուն։ Առյուծն ունի երեք բնություն։ Էգ առյուծը ծնում է մի մեռած կորյուն և երեք օր նրան պահպանում է, մինչև որ գալիս է հայրը, փչում ձագի քթածակերից ներս և կենդանացնում նրան։ Մեկնություն.—մեռած կորյունը՝ դա հեթանոսությունն է, որը մեռած է մինչև մկրտությունը և կենդանանում է սուրբ հոգով։

Երկրորդ հատկությունը՝ երբ առյուծը քնած է, նրա աչքերը բաց են և արթուն։ Այդպես է նաև աստված, որն ասում էր հրեաներին. «Ես քնած եմ, սակայն իմ սիրտն արթուն է»։

Երրորդ հատկությունը՝ երբ առյուծը փախչում է, ապա նա պոչով ավլում է հետքը, որպեսզի չբռնվի։ Մեկնություն.—մարդ պետք է այնպես ողորմություն անի, որ ձախ ձեռքը չիմանա, թե ինչ է անում աջը։

Կամ թե վերցնենք աղվեսի պատմությունը։ Երբ նա քաղցած է, մեռած է ձևանում և բռնում է այն թռչուններին, որոնք

նստում են նրա վրա՝ նրան կտցահարելու համար։ Այդպես է գործում և սատանան մարդու վերաբերմամբ, և որպես ապացույց բերվում են Քրիստոսի, Սողոմոնի, Դավթի կարծիքները աղվեսի մասին։

«Բարոյախոսը» երևան եկավ Կիևյան Ռուսիայում XI կամ XII դարում. մեզ հայտնի են նրա երեք լրիվ գրչագրությունները (դրանցից երկուսը՝ XV դարին են պատկանում և ըստ իրենց լեզվի ծնում են բուլղարական բնագրից)։ Բնախոսական գրույցի այս ժանրը չտարածվեց Ռուսիայում, որովհետև, մի կողմից՝ նրա նյութը օտար էր ռուսական բնությանը, իսկ մյուս կողմից՝ պատկերների այլաբանությունը դժվարըմբռնելի էր։

«Բարոյախոս»-ը հնագույն հայ թարգմանությունների շարքին է պատկանում։ Նա ծանոթ է եղել մեր V—VI դարերի հեղինակներին։ Հայ գրասերը հնում շատ է սիրել այդ գիրքը և դրանով է բացատրվում, որ մեր մատենադարաններում ունենք բազմաթիվ գրչագրեր, որոնք լրիվ կամ քաղվածաբար տալիս են այդ ժողովածուի գրույցները, կամ ավելի ընդարձակ խմբագրություններ են հանդիսանում, ներգրավելով ժողովածուի մեծ բազմաթիվ նորանոր գրույցներ կենդանիների կյանքից։ Ժողովածուն բազմիցս խմբագրվել է և դրանով է բացատրվում այն, որ մի շարք գրույցների լեզուն շատ է մոտենում միջնադարյան հայերենին։

«Վեցօրյայքը»—դա ընդհանուր վերնագիրն է այն ժողովածուների, որոնք պատմում են արարչագործության վեց օրերի մասին։ Մանավանդ հայտնի է Բարսեղ Կեսարացու «Վեցօրյայքը», որ դեռևս V դարում թարգմանվել է հայերեն։ Այստեղ տեղեկություններ են տրվում երկնքի և երկրի, տիեզերական ուժերի էության և հատկությունների, լուսատուների, բույսերի, կենդանիների, մարդու մասին և այլն։ Դա մի յուրատեսակ հանրագիտարան է, ֆանտաստիկ տարրերով լիառատ համեմված, որին զուգակցվում են մարդու կյանքի վերաբերյալ մի շարք կրոնա-բարոյական խրատներ։ Այսպես օրինակ՝ պոլիպի մասին ասված է, որ նա աչքի է ընկնում իր խորամանկությամբ, խարդախությամբ։ Նա ընդունում է այն քարի գույնը, որին մոտենում է, և ձկները՝ նրան քարի տեղ դնելով, անհոգ կերպով լող են տալիս և ընկնում նրա երախը։ Կան պոլիպանման մարդիկ, որոնք հաճոյանում են իշխանություններին, համակերպվում հանգամանքներին, առաքինիների հետ նրանք առաքինի են,

ախտավորների հետ՝ ախտավոր, թաքցնելով իրենց խարդախությունը։ Դրանք գայլեր են գառան մորթով և մարդ չպետք է նրանց հետևի, այլ պիտի գնա ճշմարտության և մաքրության հետևից։

XI դարում Ռուսիայում հայտնի էր X դարի նշանավոր բուլղարական գրող, Բուլղարիայի էկզարխ Հովհաննի «Վեցօրյայքը»․ Նրա հետ իրենց ծանոթությունն են երևան բերում Կիևյան շրջանի ինքնատիպ երկերը՝ միտրոպոլիտ Իլլարիոնի խոսքը «Օրենքի և շնորհի մասին», Վլադիմիր Մոնոմախի «Ոգեշահ խրատը», իսկ մի շարք նյութեր մտել են „Толковая Палея"-ի մեջ։ «Վեցօրյայքը» Ռուսիայում ինքնուրույն կերպով չզարգացավ։

Քրիստոնեական Տեղագրական ստորագրությունը, որ գրել է ալեքսանդրիացի մի վաճառական, որը ճանապարհորդություն է կատարել դեպի Արևելք, իսկ հետագայում դարձել է վանական՝ Կոսմա Ինդիկոպլեվստը, որ Ռուսիայում կոչվում էր Ինդիկոպլով (այսինքն Հնդկաչու—ճանապարհորդ), Ռուսիայում մեծ ժողովրդականություն էր վայելում։ Ինքը, Կոսման, Հնդկաստանում չի եղել։ Նա այդ երկիրը նկարագրում է ուրիշների խոսքերի հիման վրա, հաղորդելով տեղեկություններ Հնդկաստանի և Ցեյլոնի մի քանի կենդանիների ու բույսերի մասին։ Այդ աշխատության գլխավոր նպատակն է՝ հերքել երկրի գնդաձև լինելու մասին պտղոմեոսյան ուսմունքը և հաստատել, որ երկիրն անշարժ է, ունի բարձրացած հարթության ձև։ Այստեղ դրա հետ միասին հաղորդվում են նաև աշխարհագրական, պատմական, հնագիտական և նույնիսկ տնտեսական բնույթի բազմաթիվ տեղեկություններ, ինչպես նաև առասպելական զրույցներ։ «Տեղագրությունը» զարդարված է մանրանկարներով, որոնք պատկերում են գրքի բովանդակությունը։

Կոսմա Ինդիկոպլովի աշխատությունը Ռուսիայում երևան է եկել XI դարի վերջերին կամ XII դ. սկզբներին։ Մեզ հասել են նրա բազմաթիվ ռուս գրչագրությունները, որոնցից ամենավաղ ընդօրինակը՝ XV դարին է պատկանում։ Քրիստոնեական «Տեղագրության» տված տեղեկություններից օգտվում էին հին ռուս մատենագիրները մինչև XVI դարը։ «Տեղագրության» հատվածներից շատերը մտել են ինքնուրույն ժողովածուների մեջ։

Բարոյագիտական-փիլիսոփայական ասացվածքների ժողովածուներ

Հին ռուս հեղինակները իրենց մտքերը հիմնավորելու համար հաճախ օգտվում էին հին ժամանակակից հեղինակավոր գրողների, փիլիսոփաների և գիտնականների ասացվածքներից, որոնք ի մի էին հավաքված հատուկ ժողովածուների մեջ։ Ասացվածքների այդ օրինակ ժողովածուներ գիտեր դեռևս հին Հունաստանը, դրանք տարածված էին նաև Բյուզանդիայում, իսկ XI դարից մի շարք ժողովածուներ անցան Կիևյան Ռուսիայի գրականության մեջ։ 1076 թ. Կիևյան մատենագրի կազմած „Изборник Святослава„ («Սվյատոսլավի ժողովածու») աշխատությունն իր մեջ պահպանել է բարոյական ասացվածքների գլխավոր աղբյուրներից մեկը՝ Սիրաքի որդի՝ Հիսուսի գերիմաստությունների գիրքը, որը պահպանվել է նաև դասական հայերեն թարգմանությամբ։

Սակայն ամենամեծ ժողովրդականությունը վայելում էր 1220 թվից ոչ ուշ թարգմանված «Մեղուն» („Пчела“), որը հակիրճ խրատական ասացվածքների, աֆորիզմների, պատմվածքների և առակների մի ժողովածու է։

«Մեղուն» կազմված է երկու մասից. առաջին մասում զետեղված են Աստվածաշնչից, եկեղեցական գրողներից բերված ցիտատներ, որոնք դասավորված են ըստ իրենց հեղինակավորության և հաճախ կրում են բարոյախոսական բնույթ. երկրորդում՝ անտիկ և ավելի ուշ շրջանի զանազան գրողներից և փիլիսոփաներից հատվածներ, որոնք կապված լինելով մարդու իրական կյանքի հետ, ծանոթացնում են պատմական ու կեղծ պատմական հետաքրքիր իրադարձություններին, սրամիտ պատասխանների, անցյալի մեծ մարդկանց կյանքից վերցրած ծիծաղաշարժ դեպքերի հետ և այլն։

«Մեղուի» նյութը ժամանակի ընթացքում լրացվում է ինչպես ռուս մատենագրությունից քաղած ասացվածքներով և առածներով (օրինակ Տարագիր Դանիելի աղերսանքը—„Моление Данила Заточника“), այնպես էլ ռուս ժողովրդական ստեղծագործության հարուստ գանձերով։ «Մեղուի» մի շարք աֆորիզմներն ու առածներն իրենց հերթին անցան ֆոլկլորին։

Նման ժողովածուներ կազմված են եղել նաև հին միջնադարյան գրականության մեջ։ Դրանց մեջ առանձնապես աչքի են ընկնում բիբլիական և մանավանդ հին հունական փիլիսո-

փաների (Սոկրատես, Պղատոն, Արիստոտել, Պյութագորաս և այլն) ասույթները, իմաստալից խոսքերը, ինչպես և նրանց կյանքի վերաբերյալ փոքրիկ զրույցներ։

Պատրիստիկ (խրատական) գրականություն

Այս պայմանական տերմինը համախմբում է եկեղեցական գրականության մի շարք ժանրեր, այն է՝ III—XI դարերի հունական եկեղեցական գործիչների, այսինքն՝ եկեղեցու հայրերի երկասիրությունները (այստեղից էլ գալիս է պատրիստիկ անունը—πατήρ—հայր բառից), աստվածաբանական-ջատագովական տրակտատ, թուղթ, քարոզ և զրույց։ Եկեղեցական հայրերի այդ երկերի նպատակն է՝ պաշտպանել և հիմնավորել քրիստոնեական դավանանքը, պայքարել հերետիկոսների դեմ և քարոզել քրիստոնեական բարոյագիտությունը։

Պատրիստիկ գրականությունը հատվածաբար կամ ամբողջությամբ հունարենից սլավոներեն էր թարգմանվել դեռևս IX—X *դարում, իսկ* XI *դարում Կիևյան գրականությունն իր ծանոթությունն է հաստատում նշանավոր եկեղեցական հայրերի մեծամասնության երկերի հետ։ Վերջիններիս շարքին են պատկանում՝ Հովհան Ոսկեբերանը, Բարսեղ Կեսարացին, Հովհաննես Դամասկացին և այլք։ Սրանց երկասիրությունների մեծագույն մասը* V *դարում հայերեն էին թարգմանել հայ գիր ու գրականության հիմնադիրներ՝ Սահակ Պարթևի և Մեսրոպ Մաշտոցի անմիջական մասնակցությամբ և ղեկավարությամբ, ավագ թարգմանիչները։*

Հույն եկեղեցական գրողների աշխատությունները տարածվում էին ռուս միջավայրում մեկ կամ մի քանի հեղինակների կազմած ժողովածուների միջոցով։

Արտագրությունների պրոցեսում նրանք հաճախ հիմնովին վերամշակվում էին և միացվում նույնանման այլ ժողովածուների հետ։

Այսպես, մեծ իշխան Սվյատոսլավ Յարոսլավիչի համար Իոանն անունով մի դպիր կազմել էր երկու ժողովածու՝ այսպես կոչված Изборники Святослава *(1073 և 1076 թ. թ.), որոնց մեջ տեղ են գտել եկեղեցական մի շարք հայրերի աշխատությունները։ Այդ ժողովածուները պահվում էին մեծ իշխանի գրադարանում։*

4. ՎԻՊԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Թարգմանական գրականության մեջ աննշան տեղ էին գրավում աշխարհիկ երկերը, որոնք պատմում էին աշխարհիկ հերոսի կյանքի, արկածների, սխրագործությունների և եկեղեցու հետ անմիջականորեն չկապված դեպքերի մասին։ Սակայն այդ երկերն էլ մեծ մասամբ կրում էին դաստիարակչական, խրատական բնույթ, տոգորված էին կրոնական տենդենցներով և հարմարեցված քրիստոնեությունը դավանելու և քարոզելու նպատակներին։ Վիպական պատմությունների թվին են պատկանում՝ «Ալեքսանդր Մակեդոնացու պատմությունը», որը հայտնի է «Ալեքսանդրիա» վերտառությամբ, Հովսեպոս Փլաբիոսի (Иосиф Флавий) «Հրեական պատերազմի պատմությունը», «Տրոյայի զրույցը» «Դևգենիոսի սխրագործությունների պատմությունը» („Девгениево деяние“), «Բարղաամի և Յովասափի պատմությունը» («Повесть о Варлааме и Иосафе») և այլն։

«Ալեքսանդրիան», որ միջնադարի ամենաժողովրդական գրքերից մեկն է, իր մեջ պարունակում է հին աշխարհի նշանավոր զորավար և հերոս Ալեքսանդր Մակեդոնացու կյանքի առասպելախառն պատմությունը՝ նրա ծննդից մինչև վաղաժամ մահը (մեռավ 323 թ. մեր թ. ա.)։ Պետք է ենթադրել, որ Ալեքսանդրի մահից անմիջապես հետո նրա մասին սկսեցին հյուսել բազմաթիվ զրույցներ, իսկ դրանց հիման վրա մեր թ. II—III դարերում գրվեց մի պատմություն։ Վերջինս թյուրիմացաբար վերագրվում էր Արիստոտելի ազգական Կալիսթենեսին, որը մեռել էր Ալեքսանդրից առաջ։ Կեղծ-Կալիսթենեսի «Ալեքսանդրիան» մեծ ժողովրդականություն էր վայելում և բազմիցս վերամշակության է ենթարկվել։ Այսպես՝ IV դարում այդ պատմությունը լատիներեն թարգմանել և վերամշակել է Հուլիոս Վալերիոսը, V դարում կրտսեր թարգմանիչներից մեկը թարգմանել է հայերեն։ Հայկական հին թարգմանությունը հետագայում վերամշակվել է, տեղ-տեղ էլ վերածվել ոտանավորի։ X դարում պատմվածքի առաջին խմբագրության և լատինական վերամշակման հիման վրա կազմվել է լատինական նոր խմբագրություն, որից և առաջացան այդ պատմվածքի միջնադարյան եվրոպական բոլոր վերամշակությունները։ XIII—XIV դարերի ընթացքում Բյուզանդիայում կատարվել էր կեղծ-Կալիսթենեսյան «Ալեքսանդրիայի» երեք վերամշակում և նրանցից մեկը՝ չափածո։

Ռուսիայում «Ալեքսանդրիան» հրապարակ է եկել XI—XII դարերում (առաջին խմբագրության մեզ հասած ամենահին գրչագիրը XV—XVI դարերից է)։ Թարգմանությունը, հավանաբար, կատարված է անմիջականորեն հունարենից, թեև «Ալեքսանդրիայի» ռուսական վերսիան ճշգրտորեն չի համընկնում հունական և ոչ մի խմբագրության հետ։ Ռուսական հողի վրա «Ալեքսանդրիան» լրացվեց Գեորգի Ամարտոլայի քրոնիկոնից քաղած մի հատվածով, որը պատմում է Ալեքսանդրի Երուսաղեմ գնալու մասին։ Ավելի ուշ շրջանում, XIII դարում, երևան եկավ «Ալեքսանդրիայի» երկրորդ խմբագրությունը։ Ռուս խմբագիրը պատմվածքի մեջ մտցրել է մի շարք հրաշքներ, որ Ալեքսանդրը տեսել է իր արշավանքի ժամանակ և կատարել է մի շարք ոճաբանական փոփոխություններ։ XV դարում Սերբիայից մուտք է գործում «Ալեքսանդրիայի» մի նոր, այսպես կոչված «սերբական» խմբագրությունը, որը տարածվեց հարյուրավոր առանձին ձեռագիր օրինակներով և հրապարակից վանեց երկրորդ կեղծ-կալիսթենեսյան խմբագրությունը։ Ռուսիայում «Ալեքսանդրիան» ունեցել է ընդամենը հինգ խմբագրություն, և այդ երկի վերաբերմամբ ցուցաբերած այդ օրինակ ուշադրությունը բացատրվում է հին ռուս ընթերցողին խորապես հետաքրքրող նրա բովանդակությամբ, նրա հերոսով, նրա արտասովոր ճակատագրով, բացառիկ արկածների և հրաշքների առատությամբ։

Ալեքսանդր Մակեդոնացին նկարագրված է որպես մի մարդ, որն ունի արտասովոր ֆիզիկական և հոգեկան հատկություններ։ Դա մի տաղանդավոր զորավար է, խիզախ և անվեհեր, որն ունի ուժեղ կամք և իր հեղինակությանն է ենթարկում ոչ միայն զորքը, այլ և իր ծնողներին։ Նա օժտված է մեծ խելքով և իմաստությամբ։ Նա անհամար արշավանքների է ելնում ոչ միայն սխրագործությունների և փառքի ծարավից դրդված, այլ գիտության և հարցասիրության ծարավը հագեցնելու, աշխարհը ճանաչելու նպատակով։ Այսպես օրինակ՝ հաղթելով հնդկական թագավոր Պորին, նա ճանապարհ է ընկնում «մերկ իմաստունների» (բրահմինների) մոտ, որոնք ապրում են տաղավարներում և քարայրներում։ Ռախմանները լսելով Ալեքսանդրի մոտենալու մասին, նրան դիմավորելու են ուղարկում ամենածեր իմաստունին՝ մի հրովարտակով, որի մեջ գրում են, որ եթե Ալեքսանդրը կռվի է գալիս, ապա ոչինչ չի շահի,

որովհետև իրենք ոչինչ չունեն, իսկ եթե նա ուզում է վերցնել այն, ինչ որ իրենք ունեն, ապա հարկավոր չէ պատերազմել իրենց դեմ, այլ բավական է աղոթքով դիմել ոչ թե իրենց, այլ «վերին նախախնամությանը»: Ալեքսանդրը խաղաղությամբ իջնում է ռախմանների երկիրը, որը լի է ամեն տեսակ պտուղներով և նրա բնակիչ «իմաստասերների» հետ փիլիսոփայական մի զրույց է սկսում, որի ժամանակ ռախմանները նրա հետ վարվում են ոչ թե որպես թագավորի, այլ որպես իրենց հավասարի: Ալեքսանդրի այն առաջարկությանը, թե «Խնդրեցեք ինձնից, ինչ որ ուզում եք, և ես կտամ ձեզ»՝ բոլորը միասին գոչեցին՝ «Տուր մեզ անմահություն»: Ալեքսանդրը պատասխանում է, որ ինքն անզոր է այդ անելու, քանի որ ինքն էլ մահկանացու է: «Իսկ ինչու դու մահկանացու լինելով հանդերձ՝ այդքան պատերազմներ ես մղում, որ ամեն ինչ ինքդ զավթես: Ի՞նչ պիտի անես այդ բոլորը, արդյոք այդ ամենը ուրիշների բաժին չի՞ դառնա»: Ի պատասխան այդ հարցին Ալեքսանդրը բացատրում է, որ յուրաքանչյուր մարդու մի բախտ է տրված, և ինքը մարդը ի վիճակի չէ տնօրինելու իր բախտը: Նա մեծ ուրախությամբ կհրաժարվեր ռազմական գործերից, սակայն նրան դեպի այդ գործերն է մղում իր բնավորությունը: Եթե բոլորը նույն բնավորությունն ունենային, աշխարհում ոչ մի շարժում չէր լինի—մարդիկ ծովագնաց չէին լինի, երկիրը չէին մշակի, երեխաներ չէին ծնի: Հրաժեշտ տալով ռախմաններին, Ալեքսանդրը նրանց ավագին՝ Դանդամիսին նվիրում է ոսկի, հաց, գինի և յուղ և խնդրում է այդ բոլորը ընդունել որպես հիշատակ իր մասին: Դանդամիսը ծիծաղելով ասում է, որ դրանցից և ոչ մեկը իրենց հարկավոր չէ, բայց որպեսզի Ալեքսանդրը նրանց գոռոզ մարդկանց տեղ չդնի, վերցնում է նրա ձեռքից յուղը և Ալեքսանդրի աչքի առաջ թափում կրակի վրա:

Աշխարհը տեսնելու և ճանաչելու նպատակով Ալեքսանդրը ճանապարհ է ընկնում դեպի Հնդկաստան: Այստեղ նա տեսնում է մարդու նման խոսող երկու ծառ: Սրանցից Ալեքսանդրը լսում է, որ ինքը, մայրը և կինը պիտի մեռնեն Բաբելոնում: Այստեղից անցնում է Պարսկաստան և հանդիպում ամազոններին, ապա գնում է դեպի Սև ծովը և հանդիպում շնագլուխ մարդկանց, որոնց աչքերը և բերանը կրծքի վրա են գտնվում, տեսնում է վեց ձեռանի մարդկանց և այլն:

Կյանքում ամեն ինչ փորձելով և կյանքից ստանալով

ամեն ինչ՝ Ալեքսանդր Մակեդոնացին հանգում է այն մտքին, որ «ունայնություն ունայնութեանց և ամենայն ինչ ընդունայն է» («Եկկլեսիաստես» է):

Մարդկային բոլոր լավագույն հատկություններով օժտված իդեալական հերոսն անզոր է ճակատագրի առաջ, այն բանի հանդեպ, ինչ որ նրան կանխանշված է վերուստ: Ամբողջ պատմվածքի միջով անցնում է նախասահմանվածության, մարդկային ջանքերի և մարդկային կյանքի ունայնության մոտիվը: Այդ հրեական-քրիստոնեական գաղափարը իր կնիքն է դրել ամբողջ պատմության վրա: Ինքը հերոսը՝ Ալեքսանդրը, ներկայացված է որպես երկրպագու անտեսանելի մի աստծու: Նա հաճախ է աստծուն հիշում, երդվում է նրանով, և նրան զոհ է մատուցում Երուսաղեմի տաճարում: Հերոսի այդ քրիստոնեացումը ուժեղանում է ավելի ուշ ժամանակվա խմբագրություններում և հատկապես XV դարի սերբական խմբագրության մեջ:

XI դարում հունարենից անմիջականորեն ռուսերենի է թարգմանվում համաշխարհային գրականության մի այլ նշանավոր երկ՝ Հովսեփոս Փլավիոսի («Иосиф Флавий») «Երուսաղեմի ավերման պատմությունը», որ նկարագրում է հրեա ժողովրդի կյանքում տեղի ունեցած պատմական դեպքերը սկսած 167 թվականից (մ. թ. ա.), երբ Երուսաղեմը նվաճեց Սելևկյան թագավոր Անտիոքը, մինչև 72 թ. (մ. թ.), երբ հռոմայեցիները հիմնովին կործանեցին Հրեաստանը:

Հովսեփոս Փլավիոսը մասնակցել է այն մեծ ապստամբությանը, որ բռնկվել էր Հրեաստանում ընդդեմ Հռոմի (66 թվ.-70 թ. մ. թ.): Նա իր պատմությունը սկսում է այնտեղից, որտեղ կանգ էր առել Աստվածաշունչը:

Այդ պատմական ժամանակաշրջանը՝ մոտ 2 1/2 դար, մեծ նշանակություն ուներ քրիստոնեության համար: Ահա այդ ժամանակ էր, որ սաղմնավորվեց և հաստատվեց քրիստոնեությունը, ավերվեց և կործանվեց հրեական թագավորությունը: Հովսեփոս Փլավիոսի այս երկը եկեղեցուն ընձեռեց մի շարք ապացույցներ այն մասին, որ հրեական կրոնն ախտավոր է, իսկ քրիստոնեականը՝ ճշմարիտ: Դա միաժամանակ հրեական ժողովրդի հետ բիբլիական շրջանի պատմության միակ սկզբնաղբյուրն է: Այդ երկի ժողովրդականությունը բացատրվում էր նաև նրա աչքի ընկնող գրական հատկություններով, այն է՝ մեծ հռետորական արվեստով և իսկական դրամատիզմով,

հատկապես այն հատվածներում, որտեղ նկարագրված են Գալիլիայի պատերազմը և Երուսաղեմի պաշարումն ու ավերումը։

Հրեական պատերազմի մասին մեզ հասած ամենահին ռուս ձեռագիրը տարբերվում է հունականից մի քանի առանձնահատկություններով։ Ռուս տեքստի մեջ կան մի քանի կրճատումներ և հավելումներ. պատահում են ռիթմիկ չափի վերածված հատվածներ, սակայն գլխավորն այն է, որ վեպը ենթարկվել է ռուսականացման։ Նրա մեջ տեղ են գտել հասկացություններ, տերմիններ և արտահայտություններ, որոնք բնորոշ են ֆեոդալական-դրուժինային, Ռուսիայի գաղափարական և կենցաղային կյանքի համար, և որոնք համապատասխանորեն առկա են ռուս օրիգինալ գրական հուշարձաններում, մասնավորապես տարեգրություններում։

Հին ռուս գրականության մեջ հայտնի էին մի շարք թարգմանական երկեր Տրոյայի պատերազմի մասին։ Դրանց ամենահին վերսիան Ռուսիա մտավ Հովհան Մալալայի քրոնիկոնի միջոցով, և այդ հատվածը կրում էր «Տրոյական ժամանակների մասին» վերտառությունը։ Առկա էին նաև ավելի ուշ կատարված մի քանի թարգմանություններ, որոնց թվում XIII դարի իտալական հեղինակ Գվիդո-դե-Կոլումնի վեպը Տրոյայի մասին։

Կիևյան Ռուսիայում հայտնի էր նաև բյուզանդական X դարի հռչակավոր պոեմը Վասիլի Դիգենիս Ակրիտի մասին։ Այստեղ պատմվում է մուսուլմանների դեմ հույների մղած պայքարի մասին, մի անվանի հույն աղջկա առևանգումը սարակինոսների թագավոր Ամիրի կողմից, որը քրիստոնեություն ընդունեց և ամուսնացավ այդ աղջկա հետ, նրանց որդի Դիգենիս Ակրիտի (Դիգենիս—երկազգի—ծնված սարակինոսից և քրիստոնյայից, Ակրիտ–սահմանապահ) սխրագործությունները և սիրային արկածները։

Ռուս հողի վրա այդ վեպը կոչվեց «Դևգենիոսի սխրագործությունները» («Девгениево Деяние»)։ Ռուս թարգմանությունը կատարվել է ուղղակի հույն բնագրից XII դարի վերջերին կամ XIII դարի սկզբներին, ընդ որում թարգմանիչը մտցրել է վեպի մեջ ռուս բանավոր ստեղծագործության և գրական տրադիցիայից որոշ տարրեր։

Հնագույն թարգմանական վիպական պատմվածքների թվին է պատկանում նաև «Վարլաամի և Իոսաֆի պատմու-

նիրը նրան թույլ է տալիս դուրս գալ պալատի պարիսպներից։ Միաժամանակ թագավորը հրամայում է, որ որդուն հեռու պահեն այնպիսի տեսարաններից, որոնք կարող են վիշտ պատճառել նրան և մռայլ խորհրդածությունների առիթ տալ։ Չնայած ծառաների ջանքերին, Իոսաֆը, այնուամենայնիվ, իմանում է, որ երկրի վրա գոյություն ունի ծերություն, հիվանդություն և մահ, և նա սկսում է խորհել երկրային կյանքի ունայնության մասին։

Սենաարի անապատի ճգնավոր Վարլամը վերուստ ստացած հայտնությամբ՝ իմանում է այդ մասին և, վաճառականի տեսք ընդունած, գալիս է Հնդկաստան, որպեսզի լուսավորի Իոսաֆին։ Վարլամը հաղորդում է Իոսաֆի դաստիարակին, որ ուզում է արքայազնին վաճառել մի այնպիսի թանկարժեք քար, որը ճշմարտության լույսով լուսավորի մարդկանց սրտերը։ Իոսաֆը հանդիպում է Վարլամին։ Վերջինս մի շարք առակների միջոցով նրան համոզում է, որ քրիստոնեությունը բարձր է հեթանոսությունից։ Իոսաֆը ընդունում է քրիստոնեական ուսմունքը և մկրտվում է։ Իոսաֆը ցանկանում է Վարլամի հետ միասին անապատ գնալ, սակայն սա համոզում է նրան առայժմ տանը մնալ։

Ավենիրն իմանում է, որ իր որդին քրիստոնեություն է ընդունել և փորձում է փոխել նրա համոզմունքը, սակայն ապարդյուն։ Տեղի է ունենում հակառակը՝ թագավորն է համոզվում, որ քրիստոնեությունը գերազանց է կռապաշտությունից, մկրտվում է, ապա իր որդուն է հանձնում ամբողջ թագավորությունը։

Հոր մահից հետո Իոսաֆը, չնայած ժողովրդի թախանձանքին, առանձնանում է անապատում, որտեղ նա ամեն տեսակի զրկանքներ է կրում և ենթարկվում զանազան փորձությունների, որ սատանան անընդհատ ուղարկում է նրա վրա։ Որոշ ժամանակ անցնելուց հետո նա գտնում է Վարլամին, նրա հետ միասին բնակվում մի քարայրի մեջ և իր ճգնակեցությամբ գերազանցում իր ուսուցչին։ Շուտով Վարլամը մեռնում է։ Իոսաֆը ևս 35 տարի ապրում է անապատում։ Իոսաֆի մահվան ժամին վերին հայտնությամբ այնտեղ է գալիս մի ճգնավոր, թաղում նրան և մեկնում Հնդկաստան՝ հայտնելու Իոսաֆի մահը։ Վարլամի և Իոսաֆի անուշահոտ մարմինները հանդիսա-

վոր կերպով փոխադրում են Հնդկաստան։ Նրանց դերեզմանների վրա հրաշքներ են կատարվում։

Այս պատմությունը հետաքրքրում էր ռուս հին ընթերցողին իր առակներով և այլաբանություններով։ Այստեղ վառ կերպով հակադրված են հեթանոս ու քրիստոնյա հերոսները, ընդ որում ընդգծվում է վերջիններիս գերազանցությունը, իսկ այդ հանգամանքն իր հերթին հիշեցնում էր քրիստոնեության հաղթանակը Ռուսիայում և հեթանոսության մնացորդների դեմ պայքար ծավալելու անհրաժեշտությունը։

Մինչև XV դարը այդ պատմությունն ապրում էր ռուս միջավայրում, առանց որևէ փոփոխության կրելու, սակայն XV դարի կեսերին նա վերամշակման է ենթարկվում այն իմաստով, որ հոգևոր իշխանությունը գերազանց է աշխարհիկ իշխանությունից։ XVII դարում այդ պատմությունը երկու տպագրություն է ունեցել, հրապարակ էին եկել նրա առանձին մոտիվների չափածո վերամշակություններ, որոնք կյանքի կոչեցին մի շարք բանավոր հոգևոր երգեր արքայազն Իոասաֆի և սքանչելի Մայր-անապատի մասին։

* * *

Բացի վերոհիշյալ վիպական պատմություններից, ռուս հին գրականությանը ծանոթ էին նաև այլ նմանօրինակ երկեր, սակայն նրանց քանակն այնքան էլ մեծ չէր, եկեղեցին էլ իր հերթին շահագրգռված չէր նրանց տարածման և պահպանման խնդրով։ Այդ պատճառով ռուս հին գրականությանը անծանոթ մնացին զուտ աշխարհիկ բնույթ կրող թարգմանական-բյուզանդական երկերը, մասնավորապես սիրային վեպերը։

Ռուս հողի վրա թարգմանական վիպական պատմությունները բարդ ճակատագիր են ունեցել։ Դրանք փոփոխության են ենթարկվել, խմբագրվել և տարբեր ժամանակների գաղափարական պահանջներին համապատասխան՝ ռուսականացվել։

Թարգմանական գրականության երկերը, ինչպես մենք այդ տեսանք վերևում, մեծ մասամբ լրացվել են տեղական նյութով, իրենց վրա կրել են ինքնուրույն գրականության գեղարվեստական ձևի ամենաուժեղ ազդեցությունը, որը և մեզ իրավունք է տվել համարելու նրանց ոչ այնքան թարգմանական երկեր, որքան ինքնուրույն գրականության մի մասը։ Սակայն չնչին բացառությամբ (օրինակ՝ ապոկրիֆները) այդ գրականու-

թյունը հանդիսացել է ֆեոդալական հասարակության վերնախավերի գաղափարախոսության արտահայտությունը, եղել է նրանց գաղափարների հաղորդիչը։ Այսպես կոչված «թարգմանական գրականության» երկերի թարգմանության, ռուսական պայմաններին հարմարեցնելու, նրանց ժողովրդականացնելու գործում շահագրգռված է եղել տիրապետող դասակարգը,

Ռուսի և Կիևյան Ռուսիայի ինքնուրույն գրականության երկերի համեմատությամբ, որոնք առաջացել են կյանքի կենսական հարցերին պատասխան տալու պահանջով, ժողովրդի այսպես կոչված «թարգմանական գրականությունը» կանգնած է եղել անչափ ցածր մակարդակի վրա թե գաղափարական և թե գեղարվեստական տեսակետից։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Հեղինակների կողմից. 3
Ներածություն. 5
Կիևյան Ռուսիայի ինքնուրույն գրականությունը. .

I. Խրատական գրականություն.

ա) Դիդակտիկական խրատներ. . . . .
բ) Հանդիսավոր խրատներ. . . . .
գ) Վլադիմիր Մոնոմախի խրատը. . . . .

II. Վարքաբանական-վկայաբանական գրականություն. . . 53

1. Պատմություն չարչարանաց և գովաբանություն Բորիսի ու Գլեբի. 55
2. Կիև-Պեչորյան պատերիկ. 62
ա) Պեչորյան Աստվածածնի եկեղեցու հիմնադիր Շիմոնը. 64
բ) Պեչորյան վանքում գտնվող «սուրբ» կրոնավորների մասին. Ագապիտ բժիշկը և հայը. 66
գ) Պատկերագիր-կրոնավոր Ալիմպին. 70
3. Կիևպեչորցի աբեղա Գրիգոր հրաշագործը. 70
4. Անձավափոր Մարկոսը, ... 71
5. Պրոխոր-Թայլակեր կրոնավորը 72

III. Ուխտագնացություն կամ ուղևորություններ. 78

IV. Հին Ռուսական տարեգրություններ 82

1. «Անցած տարիների պատմության» առաջին մասը.
ա. Կիյ, Շչեկ, Խորիվ և նրանց քույր Լիբեդը. . . . 92
բ. Ռյուրիկը և նրա եղբայրները. 94
գ. Օլեգ. 95

դ. Իգորի պատմությունը. 96
ե. Օլգա. 97
զ. Սվյատոսլավ. 98
է. Պատմություն Վլադիմիրի մասին: Կոժեմյակայի մենամարտը պեչենեգ հսկայի հետ: Բելգորոդյան «կիսելի» մասին: Խնջույքներ Վլադիմիր իշխանի մոտ. 105
ը. Զրույց քրիստոնեությունն ընդունելու մասին: «Կորսունի Լեգենդը». 109
2. «Անցած տարիների պատմության» երկրորդ մասը. 111

V. «Սոք Իգորի արշավանքի» մասին.

Ներածություն. 118
1. «Սոք»-ի գրության ժամանակը: Հեղինակի հարցը. 119
2. «Սոք»-ի հայտնագործումը և առաջին տպագիր հրատարակությունը. 121
3. «Սոք»-ի պատմական հիմքը և պոլովցիների դեմ Իգորի մղած արշավանքի տարեգրային նկարագրությունը. 122
4. «Սոք»-ի բովանդակությունը. 131
5. «Սոք»-ի գլխավոր հերոսները. 148
6. «Սոք»-ի հայրենասիրական գաղափարը. 152
7. Բանաստեղծական կերպավորման հնարները. . . 156
8. «Սոք»-ի ժանրը: . . . .

VI. Կիևյան շրջանի թարգմանական գրականությունը.
1. Ապոկրիֆներ. 166
2. Վարքագրական գրականություն. 178
3. Պատմական, «Բնագիտական», պատերական գրականություն: Բարոյա-փիլիսոփայական ասացվածքների ժողովածուներ. 185
4. Վիպական պատմություններ. 194

ՎՐԻՊԱԿ

Էջ	Տող	Տպված է	Պետք է լինի
66	4 ներք.	черноризуах	черноризцах
71	15 վեր.	(О марке могильщине)	(О Марке могильщике)
79	2 »	сватую	святую

музыка

музыка

Պատ. խմբագիր՝ Վ. ՕՐԴՈՅԱՆ
Տեխն. խմբագիր՝ Վ. ԱԼԵՔՅԱՆ
Կոնտրոլ սրբագրիչ՝ Ա. ԼԱԼԱՅԱՆ։

ՎՖ 01642։ Պատվեր 64։ Տիրաժ 1500։ 12,5 տպագր. մամուլ։ 8,75 հաշվ. հեղ. մամուլ։ Ֆորմատ 60×92։
Հանձնված է արտադրության 1949 թ. փետրվարի 25-ին
Ստորագրված է տպագրության 1949 թ. ապրիլի 21-ին

Հայկ. ՍՍՌ Պետ. Հեռակա Մանկավարժական ինստիտուտի տպարան,
Երևան, Տերյան № 127

A 11/26260